

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՎԱՀԵ ԳԱԳԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՏԻՈՔԻ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(1098-1268 թթ.)

**Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Գիտական ղեկավար՝ պատմ. Գիտ. թեկնածու,  
դոցենտ՝ Գ. Ս. Հարությունյան

ԵՐԵՎԱՆ 2016

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|                                                                                                                           |     |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....                                                                                                         | 3   |
| ԳԼՈՒԽ Ա. ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ XI – XII ԴԴ. ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ. ԽԱՉԱԿՐԱՅ<br>ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ                              |     |
| 1. Բյուզանդական, հայկական, լատինական և մահմեդական պետաիրավական<br>համակարգերի առանձնահատկությունները.....                 | 18  |
| 2. Պայքար Դաշտային Կիլիկիայի համար.....                                                                                   | 46  |
| 3. Կիլիկիայում և Անտիոքում գերակայությունը վերականգնելու Բյուզանդիայի<br>փորձերը.....                                     | 65  |
| ԳԼՈՒԽ Բ. ԱՆՏԻՈՔ - ԿԻԼԻԿԻԱ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԲԵՆ III-Ի ԵՎ<br>ԼԵՎՈՆ II-Ի ՕՐՈՔ                                        |     |
| 1. Ռուբինյանների ամրապնդումը Դաշտային Կիլիկիայում և Անտիոքը միացնելու<br>նախադրյալները.....                               | 82  |
| 2. Անտիոքի համար մղված ռազմաքաղաքական և դիվանագիտական պայքարը 1198-<br>1219 թթ.....                                       | 95  |
| 3. Լատինական եկեղեցու դիրքորոշումը կիլիկիա-անտիոքյան հակամարտության<br>հարցում.....                                       | 106 |
| ԳԼՈՒԽ Գ. ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԲԱՐԴ ԸՆԹԱՑՔԸ                                                                        |     |
| 1. Անտիոքի հավակնությունները հայոց գահի նկատմամբ և նոր<br>աշխարհաքաղաքական իրադրության ձևավորումը Մերձավոր Արևելքում..... | 120 |
| 2. Դաշնակցային համագործակցության կարճատև փուլը դքսության ակնման<br>նախաշեմին.....                                         | 138 |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....                                                                                                       | 156 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....                                                                                        | 161 |



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Թեմայի կարևորությունն ու արդիականությունը:* Խաչակրաց արշավանքների, Բյուզանդիայի, Կիլիկիայի ու Մերձավոր Արևելքի պատմության անցուդարձերը մշտապես եղել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի պատմաբանների ուշադրության կենտրոնում: Խաչակրաց ժամանակաշրջանի հետազոտությունն առանձնահատուկ դեր է զբաղեցնում միջնադարի պատմության շրջանակներում: Հանդես գալով որպես Եվրոպայի, Բյուզանդիայի և Արևելքի պատմության հանգուցակետ՝ դրանք դարակազմիկ բնույթ են ձեռք բերում տարբեր ժողովուրդների կյանքում: Անտիոքի դքսության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններին առնչվող հսկայական նյութի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հասկանալու ոչ միայն տվյալ երկրների, այլև ողջ տարածաշրջանի պատմության մի շարք կնճռոտ հարցեր, պարզելու Արևմտյան ավատական արժեհամակարգերի ու Արևելյան ավանդույթների առճակատման հետևանքով լատին պետություններում, Կիլիկիայում ստեղծված նոր միջավայրի որոշ բաղադրատարրեր:

XI – XIII դդ. արևելյան Միջերկրածովի տարբեր երկրների միջև ծավալված բարդ պետաիրավական, ռազմաքաղաքական փոխհարաբերությունների նկարագրությունն առավելապես կարելի է բացահայտել հենց խաչակրաց պետությունների ուսումնասիրության պարագայում, քանի որ խնդրո առարկա ժամանակաշրջանում տեղի ունեցած գործընթացներին անդրադառնում են թե՛ լատինական, թե՛ արևելյան (բյուզանդական, հայկական, ասորական, արաբական) աղբյուրները: Կարելի է ասել, որ մինչ այդ հիմնականում մեկուսի զարգացող հետհռոմեական, հունական, հայկական հասարակությունները խաչակրաց արշավանքների արդյունքում դուրս եկան իրենց բնական սահմաններից, միահյուսվեցին՝ ձևավորելով միանգամայն նոր, ուրույն քաղաքական իրողություն: Մերձավոր Արևելքը դարձավ այդ փոխակերպումների հիմնական թատերաբեմը: Խաչակիրների կողմից Արևելքում ստեղծված Եդեսիայի ու Տրիպոլիի կոմսություններում, Անտիոքի դքսությունում և Երուսաղեմի թագավորությունում տարբեր մշակույթների համատեղ կեցությունը վերաճեց ոչ միայն կողմերի ընկալումները միմյանց մասին, այլև ազդեց նրանցից յուրաքանչյուրի հետագա զարգացման վրա: Ուստի օրինաչափ պետք է համարել այսպես կոչված

«Ասիզների»՝ օրենսգրքերի ու դատաստանագրքերի ժողովածուների ի հայտ գալը Երուսաղեմի թագավորությունում և Անտիոքի դքսությունում, ապա Կիպրոսում, որոնք վաղուց հետազոտողների կողմից դիտարկվում են որպես «միջնադարի ավատատիրական հասարակարգի առավել դասական արտահայտություններ»:

Անտիոքի ասիզների առկայությունն ընդգծում է Անտիոքում կազմավորված պետական միավորի առանձնահատուկ դիրքը մյուս խաչակրաց պետությունների շարքում: Իրավաբանորեն Արևելքի բոլոր լատինական երկրները միավորված էին Երուսաղեմի թագավորության կազմում, սակայն փաստացի, ինչպես կտեսնենք, Անտիոքի դքսությունը վարում էր անկախ քաղաքականություն: Նույնիսկ հիերարխիկ աստիճանակարգով Անտիոքի կառավարիչներն ունեին ընդգծված առավելություն՝ կրելով իրենց հատուկ պրինցի կոչում, որը ցածր էր միայն թագավորական կարգից: Բյուզանդական ավատական համակարգում պրինցը համապատասխանում էր դքսի կարգավիճակին, որով էլ հունական աղբյուրները հիշատակում են նրանց: Հայ պատմագրության մեջ Անտիոքի խաչակրաց պետությունը նույնպես ավելի հաճախ անվանվում է «դքսություն», բայց կարելի է հանդիպել նաև իշխանություն կամ իշխանապետություն տարբերակներին, ինչպես ռուսերենում (князь-княжество):

Թեև Անտիոքի դքսության և Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական փոխհարաբերությունները հանդիսանում են խաչակրաց Արևելքի պատմության բաղկացուցիչ մաս, այնուամենայնիվ, ունեն որոշակի առանձնահատկություններ:

Ի տարբերություն Եդեսիայում, Տրիպոլիում և Երուսաղեմում հաստատված ֆրանսախոս արքունիքների, Անտիոքում իշխանությունը պատկանում էր հարավիտալական նորմաններին: Կիլիկիան ու Անտիոքը եղել են սահմանակից՝ մշտապես ունենալով ընդհանուր շփման գիծ: Սրանով պայմանավորված՝ նրանց գոյության գրեթե ողջ ժամանակահատվածը բնորոշվում է սահմանային վեճերով, որոնք անխուսափելիորեն առաջ էին բերում զինված բախումներ ու ամեն կերպ միմյանց վրա գերակայություն տարածելու փորձեր: Մյուս կողմից, Անտիոքի և Դաշտային Կիլիկիայի խոշոր քաղաքներում ամուր դիրքեր պահպանած հունական համայնքները, Եվրոպայից Արևելք տանող ցամաքային ու ծովային ճանապարհների խաչմերուկում գտնվելը, այդ տարածքները կայսերական վարչակարգի ներքո

միավորելու Բյուզանդիայի չմարող հույսերն իրենց յուրօրինակ կնիքն էին դնում Անտիոքի և Կիլիկիայի ռազմավարության վրա:

Չնայած Ասորիքում ու Պաղեստինում գոյություն ունեցած լատինական պետությունների պատմությունը հեռավոր անցյալում է, սակայն արևմտաեվրոպացիների հետ արևելքի ժողովուրդների շփման հետևանքով առաջացած հասկացությունների, երևույթների մենք առնչվում ենք նաև այսօր: Մասնավորապես հայերիս մեջ կիրառելի է «ֆրանկ» եզրույթը, որը ժամանակի ընթացքում վերահիմաստավորվելով, «եվրոպացի», «խաչակիր» նշանակությունից բացի, ձեռք է բերել կաթոլիկ եկեղեցու հետևորդ հայերի բնութագրիչ հատկություն: Նույն հայ – խաչակրաց կապերի արդյունքում կազմավորվեց Սիրիայում, Լիբանանում, Ծոցի երկրներում, Ամերիկայում, Եվրոպայում և Հայաստանում այժմ գործող Հայ Կաթողիկե Եկեղեցին, ընդ որում, Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումը լատինական ծիսակարգով ուներ հեռագնա նպատակ. հայոց պետականությանը միավորել Անտիոքի դքսությունը:

Աշխարհի տարբեր անկյուններում պահպանված բազմաթիվ գաղտնի կազմակերպությունների գործունեությունը սկիզբ է առնում Արևելքում հիմնադրված հոգևորասպետական միաբանությունների ներքին կանոնադրություններից: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ ինչպես ժամանակակիցների, այնպես էլ ներկայիս հետազոտողների մոտ ընդգծված հետաքրքրություն է ներկայացնում Տաճարական (Տամպլիերների օրդեն) միաբանության անցյալի պարզաբանումը և ներգրավվածությունը խաչակրության գործընթացներում: Վերջիններս տիրելով Կիլիկիայի ու Անտիոքի դքսության սահմանագլխին գտնվող մի քանի ռազմավարական նշանակության բերդերի՝ XII - XIII դդ. ընթացքում լուրջ ազդեցություն են ունեցել այս երկրների փոխհարաբերությունների վրա: Որոշ աղբյուրների համաձայն հայոց իշխանների շարքում նույնպես եղել են միաբանության անդամներ:

Մերձավոր Արևելքում եվրոպացիների ներկայության արդյունքում ի հայտ եկած հասարակաքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի տարբեր ոլորտների ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում հատկապես այնտեղ տիրող քաղաքական անկայունության պայմաններում: Տարածաշրջանը,

հանդիսանալով գերտերությունների աշխարհաքաղաքական շահերի բախման կենտրոններից մեկը, մինչ օրս շարունակում է աչքի ընկնել պատերազմական գործողություններով և պայքարի չմարող օջախների գոյությամբ: Հենվելով պատմական իրավահաջորդության գաղափարին՝ գերտերությունները հարյուրամյակներ անց փորձել ու փորձում են Արևելյան հարցում հասնել հաջողության՝ հավակնություններ ցուցաբերելով բյուզանդական և լատինական ժառանգության համար: Վերջին տարիներին Սիրիայում արձանագրվող իրադարձությունները հրատապ են դարձնում Լատին Արևելքի մասին վկայող պատմամշակութային արժեքների պահպանությունը: Կիլիկյան Հայաստանի ու Անտիոքի դքսության գոյության ընթացքում քրիստոնյա բնակչությանը մահմեդականների կողմից սպառնացող մարտահրավերները շատ անգամ հիշեցնում են մերօրյա իրականությունը: Թյուրքական ցեղերի և ֆունդամենտալ իսլամիստների դեմ Արևելք - Արևմուտք հարաբերությունների հետնախորքի վրա անցյալում հաղթահարված խնդիրների, թվաքանակով մի քանի անգամ նրանց զիջող հայերի, ասորիների, հույների, կաթոլիկ համայնքների ինքնակազմակերպման պատմության լուսաբանումը հնարավորություն կտա օբյեկտիվորեն վերլուծել Մերձավոր Արևելքում առկա բազմաթիվ խճճված թնջուկների սկզբնավորման պատճառները:

Փաստորեն, զուտ պատմական բնույթի այնպիսի հարցերից բացի, ինչպիսիք են՝ ա) հայ իշխանների դիրքորոշումը Անտիոքի դքսության հակաբյուզանդական ձեռնարկներում, բ) XII դ. 40-60-ական թթ. Կիլիկիայում և Անտիոքում մասամբ վերականգնված Բյուզանդիայի գերակայության ազդեցությունը երկու երկրների փոխհարաբերությունների վրա, գ) Անտիոքի ինքնիշխանության խնդիրը հայկական հզոր թագավորության հաստատումից հետո, դ) Սսի ու Անտիոքի արքունիքների միջև պետահրավական և ռազմաքաղաքական հարաբերությունների բնույթը պատմական տարբեր ժամանակահատվածներում, թեման աղերսներ ունի Մերձավոր Արևելքի ներկայիս բազմաթիվ հակամարտությունների ակունքների հետ, որն էլ աշխատանքը դարձնում է արդիական:

*Աշխատանքի նպատակն է XI-XIII դդ. ընթացքում Մերձավոր Արևելքում ծավալված իրադարձությունների համատեքստում առանձնացնել Անտիոքի և*

Կիլիկիայի փոխհարաբերությունների զարգացման ընթացքը՝ համակողմանիորեն ուսումնասիրելով երկու երկրների միջև տեղի ունեցած ռազմաքաղաքական բախումներն ու համագործակցության դեպքերը, գտնել դրանց պատճառահետևանքային կապը:

Ելնելով այս ըմբռնումից՝ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել Մերձավոր Արևելքում, մասնավորապես արևելյան Միջերկրածովում և հյուսիսային Ասորիքում, XI – XII դդ. սահմանագծում տիրող միջազգային իրավիճակը, խաչակիրների հետ հայերի հաստատած հարաբերությունների առանձնահատկությունները:

- Սկզբնաղբյուրների նորովի վերլուծությամբ ներկայացնել Անտիոքի դքսության, Բյուզանդիայի ու Կիլիկյան Հայաստանի միջև Դաշտային Կիլիկիայի համար ծավալված պայքարի ընթացքը:

- Հետազոտել ներքին և արտաքին զարգացումների նախադրյալները, ուղղությունները, որոնց արդյունքում Անտիոքի դքսության սկզբնական ավագությունը հայկական պետության նկատմամբ վերափոխվեց Կիլիկիայի թագավորության առավելության:

- Ուսումնասիրել նորաստեղծ լատինական պետությունների հարաբերությունները կարգավորող իրավաքաղաքական մեխանիզմները: Այս համատեքստում բացահայտել հայերի, հույների, մահմեդականների և տեղացի այլ ժողովուրդների կարգավիճակը, դերը լատինական միավորներում:

- Դիտարկել աշխարհաքաղաքական փոփոխությունները տարածաշրջանում՝ խաչակրաց ու վաչկատուն ժողովուրդների արշավանքների ակտիվ հետնախորքի վրա: Ըստ այդմ վերլուծել զարգացումների այն միտումները, որոնք Անտիոքի ու Կիլիկիայի հետագա գոյության համար առաջնահերթ էին դարձնում միասնական պետաիրավական համակարգի ստեղծումը:

*Աշխատանքի ժամանակագրական սահմաններն* ընդգրկում են 1098-1268 թթ.: 1098 թ. Անտիոքում խաչակրաց դքսության հաստատումը նոր իրողության առաջ կանգնեցրեց հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում բնակվող ժողովուրդներին: Նորմանների կողմից հիմնված պետությունը հարևանների մշտական հարվածների

ներքո աստիճանաբար անկում ապրեց և 1268 թ. վերջնականապես հեռացավ պատմության ասպարեզից: Անտիոքի դքսության գոյությամբ պայմանավորված ժամանակագրական ընտրությունն ունի որոշ շեղումներ ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող դեպքերի առումով, որոնք բխում են մի շարք իրադարձություններ ավելի ամբողջական տեսքով ներկայացնելու անհրաժեշտությունից:

*Մերթդաքանական հիմքը:* Ատենախոսությունը շարադրված է տարաբնույթ սկզբնաղբյուրների, ուսումնասիրությունների ու գիտական հոդվածների հաղորդած տեղեկությունների համալիր քննության հիման վրա՝ ներկայացված պատմաքննական, պատմահամեմատական վերլուծությունների և տիպականացման եղանակներով: Հաճախ դիմել ենք նաև տվյալների համակցության սկզբունքին, որով հնարավոր է դառնում ավելի ստույգ գնահատել ու վերլուծել Անտիոքի դքսության և Կիլիկյան հայկական պետություն փոխհարաբերությունների մասին աղբյուրների հաղորդումները: Եզրահանգումները կատարվել են առկա փաստական նյութի ուսումնասիրության արդյունքում:

*Ատենախոսության գիտական նորույթը:* Չնայած բյուզանդագիտության, խաչակրաց արշավանքների ու Կիլիկյան Հայաստանի պատմության շրջանակներում հայ և օտարազգի բազմաթիվ գիտնականներ անդրադարձել են հայ-անտիոքյան ռազմաքաղաքական փոխհարաբերությունների առանցքային հարցերին, այնուամենայնիվ, ատենախոսության թեման համալիր ուսումնասիրված չէ: Նրանց հետազոտություններն առավելապես վերաբերվում են հարցի առանձին դրվագների և փոխհարաբերությունները դիտարկված են XI-XIII դդ. իրադարձությունների հոլովույթում՝ կրելով միջադեպային բնույթ: Աշխատանքում փորձ է կատարվել համակարգված ուսումնասիրության ենթարկել հայ-անտիոքյան հարաբերությունները սկզբնավորումից մինչև ավարտ, ինչպես նաև գիտական շրջանառության մեջ դնել մի շարք իրադարձությունների զարգացման նոր տեսակետներ ու թվագրություն: Նման մոտեցումը թույլ է տվել XI-XIII դդ. աշխարհաքաղաքական գործընթացներում առանձնացնել, արժևորել Անտիոքի ու Կիլիկիայի ներգրավվածության աստիճանը:

*Աղբյուրների և գրականության տեսություն:* Աշխատանքի համար հիմք են ծառայել բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնք ըստ լեզվական պատկանելության,

բաժանվել են հայկական, ասորական, բյուզանդական, լատինական և արաբական խմբերի<sup>1</sup>:

Ժամանակի դեպքերի ու գործիչների մասին հայկական տարեգրությունների արժանահավատությունը երբեմն գերազանցում է լատինական աղբյուրներին<sup>2</sup>: Այս առումով շահեկանորեն ընգծվում է երեք մասից բաղկացած Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը»<sup>3</sup>: Այն անդրադառնում է Առաջավոր Ասիայում 952 թ. մինչև 1130-ական թվականների կեսերը կատարված տեղաշարժերին: Առանձնակի կարևորություն են այստեղ ձեռք բերում Ուռհայեցու տվյալները խաչակրաց արշավանքների, լատին պետությունների մասին: Նրա պատմությունը շարունակել է Գրիգոր Երեցը<sup>4</sup> հասցնելով մինչև 1162/3 թ.: 960-1270 թթ. մասին եզակի տվյալներ է պարունակում Սմբատ Սպարապետի «Տարեգրությունը»<sup>5</sup>, որի ավարտական հատվածը գրված է դեպքերի մասնակցի դիտանկյունից:

Ֆրանկների ու հայերի փոխհարաբերությունները արտացոլվածած են նաև Կիրակոս Գանձակեցու<sup>6</sup>, Մխիթար Այրիվանեցու<sup>7</sup>, Սամուել Անեցու<sup>8</sup>, Վարդան Արևելցու<sup>9</sup>, Վահրամ Եդեսացու<sup>10</sup>, պատմությունները: Բարեբախտաբար մեզ են հասել

<sup>1</sup> Նման բաժանումը ամրագրվեց 1841-1906 թթ. Փարիզում լույս տեսած Recueil des historiens des croisades (այսուհետ՝ RHC), հավաքածույում: URL://<http://www.gallica.bnf.fr/Search?ArianeWireIndex=index&p=1&lang=EN&q=Recueil+des+historiens+des+croisades&x=0&y=0>, (03.11.2013).

<sup>2</sup> Заборов М. А., К вопросу о значении известий восточных современников крестовых походов, (այսուհետ՝ ՊԲՀ), № 3 (1968), էջ 158-159:

<sup>3</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը Մ. Մելիք-Ադամյանի և Մ. Տեր-Միքայելյանի, աշխարհաբ. թարգմ., ծանոթություններ Հ. Մ., Բարթիկյանի, Երևան, 1991:

<sup>4</sup> Գրիգորի Երիցոյ շարունակութիւն, (Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրության ընդարձակ հրատարակությունը, որն ընդգրկում է նաև Հ. Մ. Բարթիկյանի աշխարհ. թարգմանությունը, Երևան, 1991, էջ 406-479):

<sup>5</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, Смбат Спарамет, Летопис, пер. Галстян А. Г., Ереван, 1974, La Chronique attribuée au connétable Smbat, par. Dédéyan G., Paris, 1980.

<sup>6</sup> Կիրակոսի Գանձակեցույ, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

<sup>7</sup> Մխիթարոյ Այրիվանեցիոյ, Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860 հմմտ. Մխիթարոյ Այրիվանեցիոյ, Պատմութիւն Հայոց, Հայկական համաբարբառ, (9), Ա. Ս. Ղարիբջանի ընդհանուր ղեկավարությամբ, Երևան, 1975:

<sup>8</sup> Սամուելի քահանայի Անեցույ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս Գիտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս, յառաջաբանով, համեմատութեամբ, յավելումներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքէլեան, Վաղարշապատ, 1893:

<sup>9</sup> Վարդանայ Վարդապետ, Հաւաքմուն պատմութեան, Վենետիկ, 1862, (զետեղված է Գ. Բ. Թոսունյանի ղեկավարությամբ լույս տեսած Վարդան Արևելցի, Տիեզերական Պատմություն, գրքում), Երևան, 2001, De Vardan le Grand, L'histoire universelle, RHC, Doc. arméniens, t. 1, Paris, 1869, pp. 431-443.

<sup>10</sup> Vahram D'Edesse, Chronique rimée, des rois de la Petite Arménie, RHC, Doc. arméniens, t. 1, Paris, 1869. pp, 491-535.

բազմաբնույթ այլ մանր ժամանակագրություններ ու հիշատակարաններ<sup>11</sup>: Հայկական աղբյուրների ցանկում են ընդգրկվում նաև որոշ լատիներեն ու հին ֆրանսերեն տարեգրություններ, որոնցից հատկապես ընգծելի է «Գործք Կիպրացոցը»<sup>12</sup>:

Քաղաքական դիրքորոշմամբ հայկական մատենագիրներին բավական մոտ են ասորական հեղինակները: Նրանք, հաճախ լիարժեք պատկերացում չունենալով արևմտաեվրոպական իրականության մասին, փորձում էին դրանք փոխադրել Արևելյան քրիստոնեական համակարգ<sup>13</sup>: XI-XIII դարերի ասորական սկզբնաղբյուրներից խաչակրաց թեմային առնչվող մանրամասներ պարունակում են Միքայել Ասորու պատմությունը<sup>14</sup>, Բար Հեբրեոսի ժամանակագրությունը<sup>15</sup> և Անանուն Ասորացու երկը<sup>16</sup>: Հատկանշական է, որ և՛ Միքայել Ասորու, և՛ Բար Հեբրեոսի պատմությունները կրել են «Տիեզերական» անվանումը<sup>17</sup>:

Բյուզանդական աղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ ունի արքայադուստր Աննա Կոմնենոսի «Ալեքսիադան»<sup>18</sup>, որը գրված է դեպքերի անմիջական մասնակիցների հուշերի ու արքունական փաստաթղթերի հիման վրա: Կայսրեր Հովհաննես II (1118-1143 թթ.) և Մանուել I (1143-1180 թթ.) Կոմնենոսների քաղաքականությունը լուսաբանող կարևոր աղբյուրներ են Հովհաննես Կիննամոսի

---

<sup>11</sup> ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (այսուհետ՝ ՀԶՀ), կազմ. Մաթևոսյան Ա. Ս., Երևան, 1984, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Խաչիկյան Լ. Ս., Երևան, 1950, Մանր ժամանակագրություններ (այսուհետ՝ ՄԺ) XIII-XVIII դդ., հ. 1, կազմ. Հակոբյան Վ. Ա., Երևան, 1951, հ. 2, կազմ. Հակոբյան Վ. Ա., Երևան, 1956:

<sup>12</sup> Les Gestes des Chiprois, Recueil des histoires croisades, Doc. arméniens, t. 2, Paris, 1906, pp. 651-872.

<sup>13</sup> Дмитриев Г. А., Людерс А., Крестовые походы в оценке сирийских и армянских источников, ՊԲՀ, № 3 (1966), էջ 283-284:

<sup>14</sup> Михаил Сириец, Хроника, пер. Гусейнов Р. А., Письменные памятники Востока 1973, Москва, 1979, Письменные памятники Востока 1974, Москва, 1981, Письменные памятники Востока 1975, Москва, 1982, Письменные памятники Востока 1976-77, Москва, 1984, Письменные памятники Востока 1978-79, Москва, 1987, ([URL://http://www.vostlit.info/Texts/rus4/Mychel\\_Syr/frametext1.htm](http://www.vostlit.info/Texts/rus4/Mychel_Syr/frametext1.htm)), (14.02.2014), Michel Le Syrien, La chronique, RHC, Doc. arméniens, t. 1, Paris, 1869, p. 309-409, Միխայել Ասորի, Ժամանագրութիւն, Երուսաղէմ, 1871:

<sup>15</sup> Bar Hebraeus, The chronology of Gregory Abu'l Faraj, trans. Wallis Budge A., Oxford, 1932, reprint New Jersey, 2003.

<sup>16</sup> Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, թարգ. և ծանոթություններ Տեր-Պետրոսյան Լ. Հ., Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 12, Ասորական աղբյուրներ, գիրք Բ, Երևան, 1982:

<sup>17</sup> Ասորական աղբյուրների մասին տե՛ս Whitby M., Byzantines and crusaders in non-greek sources 1025-1204, New York, 2007, p. 253-269.

<sup>18</sup> Анна Комнина, Алексиада, под ред. Любарской Я. Н., Москва, 1965.



«Համառոտ պատմությունը»<sup>19</sup> և Նիկիտաս Հոնիատեսի «Պատմությունը»<sup>20</sup>: Ընդհանուր առմամբ, այս գործերը ներկայացնում են 1080-1206 թթ. անցուդարձերը, սակայն գրված են բյուզանդական պատմագիտական դպրոցի ավանդույթներով՝ հիշեցնելով Կոմենենոսների կայսերական հարստությանը նվիրված ներբողների:

Լատինական կամ ֆրանկյան աղբյուրների շարքում անփոխարինելի դեր ունի Գիյոմ (Ուիլիամ) Տուրացու տարեգրությունը<sup>21</sup>, որը ներկայացնում է 1095-1184 թթ. դեպքերը: Առաջին խաչակիրների մասին կարևոր տվյալներ պահպանվել են նաև Ռայմունդ Ածիլացու<sup>22</sup>, Ֆուլխերի Շարտրացու<sup>23</sup>, Ռաուլ Կանեցու<sup>24</sup>, Գվիբերտ Նոթանացու<sup>25</sup>, Ալբերտ դ'Աքսացու<sup>26</sup>, Վալտեր Զանցլերի<sup>27</sup> աշխատություններում:

Խաչակրաց պետությունների երկրորդ շրջանի պատմությունը նկարագրող հիմնական աղբյուրը Գիյոմ Տուրացու շարունակությունն է: «Հերակլեսի պատմություն» անունը ստացած այդ տեքստը, պահպանվել է բազմաթիվ ձեռագրերով, որոնք ավելի հաճախ վերագրվում են Էռնուլին կամ Բեռնար Գանձապահին: Բովանդակային առումով իրարից գրեթե չտարբերվող այդ ժամանակագրությունների հեղինակության հարցը ցայսօր բանավեճի առարկա է<sup>28</sup>: Ուստի տարբեր թվականների

---

<sup>19</sup> Иоанн Киннам, Краткое обозрение царствования Иоанна и Мануила Комнинов, под ред. Карпова В. Н., СПб, 1859.

<sup>20</sup> Никита Хониат, История, т. 1, под ред. Долоцкого В. И., СПб, 1860, т. 2, под ред. Чельцова Н. В., СПб, 1862.

<sup>21</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. 1, Paris, 1844, URL://<http://www.thelatinlibrary.com/williamtyre.html>, (07.07.2014).

<sup>22</sup> Raimundi de Aguilers, canonici Podiensis, historia Francorum qui ceperunt Iherusalem, RHC, Hist. occidentaux, t. 3, Paris, 1866, p. 231-310.

<sup>23</sup> Foulcher de Chartres, l'Historia Hierosolymitana, par. Guizot M. F., Paris, 1825, URL://<http://www.templiers.net/foulcher-de-chartres/>, (21.09.2013).

<sup>24</sup> Raoul De Caen, Faits et gestes du Prince Tancrede, par. Guizot M., t. 23, Paris, 1825, Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensi, ejus familiari, RHC, Hist. occidentaux, t. 3, Paris, 1866, pp. 587-716.

<sup>25</sup> Historia quae dicitur Gesta Dei per Francos, edita a venerabili Domno Guiberto, abbate monasterii Sanctae Mariae Novigenti, RHC, Hist. occidentaux, t. 4, Paris, 1879, pp. 113-264.

<sup>26</sup> Albert D'Aix, Histoire des faits et gestes dans les régions d'Outre Mer, par. Guizot M. F., t. 21, Paris, 1824, Alberti Aquensis, Historia Hierosolymitana, RHC, roisades, Hist. occidentaux, t. 4, Paris, 1879, pp. 265-714.

<sup>27</sup> Galterii, cancellarii Antiocheni, Bella Antiochena, 1114-1119, RHC, Hist. occidentaux, t. 5, Paris, 1895.

<sup>28</sup> Մանրամասներ տե՛ս Горохов Ф. С., К вопросу о структуре “Хроники Эрнуля”, (այսուհետ՝ АДСВ), ЕКБ, 2003, вып 34, с. 297-304, Степаненко В. П., Византия в международных отношениях на Ближнем востоке (1071-1176), с. 14-15.

հրատարակություններում այն մեզ հանդիպում է և՛ որպես էռնուլի, և՛ որպես Բեռնար Գանձապահի, և՛ որպես նրանց համատեղ գրչին պատկանող աշխատություն<sup>29</sup>:

Անտիոքի դքսության ու Կիլիկիայի փոխհարաբերությունների ավարտական փուլի մասին հետաքրքիր տեղեկություններ գտնում ենք Ժոֆրուա դե Վիլլհարդուէնի<sup>30</sup> և Ժան դե Ժունվիլի<sup>31</sup> հանրահայտ պատմություններում:

Արաբերեն ձեռագրերը թեև չեն ցուցաբերում Անտիոքին ու Կիլիկիային վերաբերվող համակարգված մոտեցումներ, բայց նրանց հարաբերությունների մասին տվյալներ նրանցում ևս գտնում ենք<sup>32</sup>: Այս տեսակետից ամենահայտնի պատմություններից մեկն Իբն ալ-Կալանիսիի «Դամասկոսյան տարեգրությունն» է<sup>33</sup>: Աշխատությունը, լուսաբանելով 1097-1160 թթ. իրադարձությունները, կարևոր տվյալներ է ներկայացնում Հալեպի էմիրների, Դամասկոսի աթաբեկների, Անտիոքի դքսության և Երուսաղեմի թագավորության վերաբերյալ: Հաջորդ արաբ խոշոր պատմիչն Իբն ալ-Ասիրն է, որի գրչին պատկանում է «Լիակատար պատմությունը»<sup>34</sup>: Նրանում տեղ են գտել չպահպանված ավելի վաղ շրջանի արաբական մատենագրություններից քաղվածքներ, որոնք մանրամասներ են պարունակում Մոսուլի, Հալեպի, Ռումի սուլթանության, հայկական իշխանությունների, խաչակրաց պետությունների, և մասամբ Բյուզանդիայի, փոխհարաբերությունների մասին: Հիշարժան են նաև Ուսամա իբն Մունկիզի «Խրատական գիրքը»<sup>35</sup>, Կամալ ադ-Դինի «Հալեպի պատմությունը»<sup>36</sup>, Աբու-Լ-Ֆիդայի «Ժամանակագրությունը»<sup>37</sup>, Սալլահ ադ-

<sup>29</sup> Bernard le Trésorier. Continuation de Guillaume de Tyr, par. Guizot M. F., Paris, 1824, URL://<http://www.remacl.org/bloodwolf/historiens/bernardtresorier/continuation.htm>, (08.04.2013), L'estoire de Eracles empereur, RHC, Hist. occidentaux, t. 2, Paris, 1859, Chronique d'Ernoult et de Bernard le Trésorier, par. Mas-Latrie de L., Paris, 1871, La continuation de Guillaume de Tyr (1184-1197), par. Morgan M. R., Paris, 1982.

<sup>30</sup> Жоффра де Виллардуэн, История завоевания Константинополя, пер. Полоцка И. Е., Москва, 2008.

<sup>31</sup> Жан де Жуанвиль, Жизнь Людовика Святого, пер. Полоцка И. Е., Москва, 2008.

<sup>32</sup> Մանրամասներ տե՛ս Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940, pp. 33-95 հմմտ. Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, խմբ. Բոգոյան Ա. Ա, Երևան, 2016, էջ 85-287:

<sup>33</sup> Ибн-Каланиси, Дамасские хроники крестоносцев, пер. Гибб Г., Москва, 2009.

<sup>34</sup> Իբն Ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատված. թարգ. և ծանոթություններ Տեր-Ղևոնդյան Ա. Ն., Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, Արաբական աղբյուրներ, գիրք Բ, Երևան, 1981, Ibn-Alatyr, Extract de la chronique Kamel-Altevarykh, RHC, Hist. orientaux, t. 1, Paris, 1872.

<sup>35</sup> Усама ибн Мункиз, Книга назидания, под. ред. Крачковского И., Москва, 1958.

<sup>36</sup> Kamal ad-Din, Extracts de la chronique d'Alep, RHC, Hist. orientaux, t. 3, Paris, 1884, pp. 577-694.

<sup>37</sup> Աբու-Լ-Ֆիդա, Ժամանակագրություն, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմ. Նալբանդյան Հ. Թ., Երևան, 1965, էջ 211-291:

Դինի կենսագրությունը պատմող Ալ-Կադի Բահաեդդինի նկարագրությունը<sup>38</sup>: Արաբական մյուս աղբյուրներն անհամեմատ ավելի քիչ տեղեկություններ են պարունակում Լատին Արևելքի և Կիլիկյան Հայաստանի մասին:

Աշխատանքում օգտագործված աղբյուրներն իրենց ծագմամբ ու արժանահավատության աստիճանով տարբեր են, ուստի պետք է ոչ թե հակադրել դրանք իրար, այլ համադրել<sup>39</sup>, տեղեկություններին վերաբերվել քննական մոտեցմամբ, որը թույլ կտա որոշակիորեն լուծել առաջադրված խնդիրները:

Խաչակրաց արշավանքների նկատմամբ ֆրանսիական պատմագիտության առանձնակի վերաբերմունքը<sup>40</sup> ձևավորվել է դեռևս Դոմինիկ Ժուանի<sup>41</sup> ու Ժոզեֆ Միշոյի աշխատություններից<sup>42</sup>, որոնց հետևեցին Էդուարդ Դյուրրիեյի<sup>43</sup> և Վիկտոր Լանգլուայի<sup>44</sup> հետազոտությունները: Դեռևս 1893 թ. Ֆրանսիայում լույս է տեսնում «Revue de l'Orient latin» պարբերականը<sup>45</sup>: Շարունակելով թեմայի ուսումնասիրումը՝ Գաստոն Դոդյուն<sup>46</sup>, Վերներ Դոնատը<sup>47</sup> և Ֆրանսուա Տուրնեբիզն<sup>48</sup> իրենց գործերում անդրադառնում են խաչակրաց պետությունների ու Կիլիկիայի պատմությանը, դրանցում ստեղծված պետական, եկեղեցական կառույցներին: XI-XII դդ. Բյուզանդիայի լուսաբանման հարցերում եզակի է Ֆերդինանդ Շալանդոնի ուսումնասիրությունը<sup>49</sup>,

---

<sup>38</sup> Ալ-Կադի Բահաեդդին իրն Շադդադ, Այուբյան Սալահադդինի կենսագրությունը, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմ. Նաբանդյան Հ. Թ., Երևան, 1965, էջ 292-300:

<sup>39</sup> Дмитриев Г. А., О западных и восточных источниках по истории крестовых походов, ՊԲՀ, № 3 (1971), էջ 138-139:

<sup>40</sup> Խաչակրաց արշավանքների պատմագրության մասին տե՛ս Angeliki E. Laiou, The Crusades from the Perspective of Byzantium and the Muslim World, Washington, 2001, pp. 1-22.

<sup>41</sup> Jauna D., Histoire générale des royaumes de Chypre, de Jérusalem, d'Arménie et d'Égypte, Leyde, 1747.

<sup>42</sup> Мишо Г., История крестовых походов, пер. с фр. Клячко С. Л., Москва, 2003.

<sup>43</sup> RHC, Documents arméniens, t. 1, par. Duleurier Édouard, Paris, 1869.

<sup>44</sup> Le trésor des chartes d'Arménie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, pub. par. Langlois V., Venise, 1863.

<sup>45</sup> Mas Latrie de L., Les patriarches latins d'Antioche, Revue de l'Orient latin (այսնիստ՝ ROL), Paris, № 2 (1894), pp. 192-206, Rey E., Résumé chronologique de l'histoire des princes d'Antioche, ROL, Paris, № 4 (1896), pp. 321-407, Rey E., Les dignitaires de la principauté d'Antioche, ROL, Paris, № 8 (1900—1901), pp. 116-157.

<sup>46</sup> Додю Г., История монархических учреждений в Латино-Иерусалимском королевствѣ, СПб, 1897.

<sup>47</sup> Vernier D. R. P., Histoire du Patriarcat arménien catholique, Paris, 1891.

<sup>48</sup> Tournèbize F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1910.

<sup>49</sup> Chalandon F., Essai sur le règne d'Alexis Ier Comnène (1081-1118), Paris, 1900, Chalandon F., Les Comnène, Études sur l'empire Byzantin au XI et au XII siècles, Jean II Comnène (1118-1143), et Manuel I Comnène, (1143-1180), Paris, 1912, *հայրված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 143-191:*

սակայն հայերի հետ խաչակիրների առնչություններն իրական գիտական քննարկման առարկա դարձան Ռենե Գրուսեի<sup>50</sup> և Կլոդ Կաէնի<sup>51</sup> շնորհիվ: Վերջին շրջանում աճել է հետաքրքրությունը Կիլիկյան Հայաստանի և Լատին պետությունների միջև ձևավորված հասարակական կապերի նկատմամբ: Ժան Ռիշարը<sup>52</sup>, Պյեր Վիյմարը<sup>53</sup>, Ռեմոն Պերնուն<sup>54</sup> ուշադրություն են հրավիրում խաչակիրների ու տեղաբնակ ժողովուրդների հարաբերություններին, իսկ Մարի-Աննա Շեվալիեի հետազոտությունները<sup>55</sup> նվիրված են հոգևորասպետական միաբանությունների գործունեությանը: Հայ իշխանների դերակատարությունը նորովի քննվում է Ժերար Դեդեյանի<sup>56</sup>, Կլոդ Մուֆաֆյանի<sup>57</sup> աշխատություններում:

<sup>50</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 1, Paris, 1934, t. 2, Paris, 1935, t. 3, Paris, 1936, (հավրված. թարգմ. և լրացումներ տե՛ս Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, Հանդես Ամսօրեայ (այսուհետ՝ ՀԱ), **Վիեննա, 1960, 1961, 1962, 1963, 1964, 1965, 1966 թթ** հրապարակություններում, և Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 195-327), Grousset R., L'Empire du Levant: Histoire de la Question d'Orient, Paris, 1949. հավրված. թարգմ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 332-360:

<sup>51</sup> Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940, Cahen C., Un document concernant les Melkites et les Latin d'Antioche au temps des Croisades, Revue des études Byzantines, (պարբերականը տե՛ս URL://http://www.persee.fr/web/revues/home/prescript/revue/rebyz կայքում (10.08.2012), Paris, 1971, t. 29, pp. 285-292, Cahen C., La diplomatie orientale de Byzance face à lapoussée seljukide, Byzantion. Revue Internationale des Études Byzantines (այսուհետ՝ Byzantion), Bruxelles, N° 35 (1965), pp. 10-15.

<sup>52</sup> Ришар Ж., Латинско-Иерусалимское королевство, перев. с фр. Карачинского А. Ю., СПб, 2002, Richard J., La Papauté et missions d'Orient au Moyen Age (XIII-XV siècle), Collection de l'Ecole de Rome 33, Rome, 1977.

<sup>53</sup> Виймар П., Крестовые походы, перев. с фр. Журавлевой Д. А., СПб, 2006.

<sup>54</sup> Перну Р., Алиенора Аквитанская, перев. с фр. Васильковой А. С., СПб, 2001, Перну Р., Крестonosцы, перев. с фр. Карачинского А. Ю., СПб, 2001.

<sup>55</sup> Շեվալիե Մարի-Աննա, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Երևան, 2007, Chevalier Marie-Anna, Les ordres religieux-militaires en Arménie cilicienne-Templiers, hospitaliers, teutoniques et Arméniens à l'époque des croisades, Paris, 2009, Chevalier Marie-Anna, Les réactions des ordres religieux-militaires face aux invasions mongoles au Proche-Orient d'après les sources chrétiennes, Le Bilād al-Sām face aux mondes extérieurs, Beyrouth, 2012, pp. 399-425, Chevalier Marie-Anna, L'ordre de l'Hôpital en Arménie Cilicienne du début du XII siècle à la fin du règne de Het'om I-er: Aspects généraux de la Question, L'Église arménienne entre Grecs et Latins fin XI milieu XV siècle, dir. Mahé Jean-Pierre, Paris, 2009, pp. 79-106.

<sup>56</sup> Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), Thèse pour le Doctorat, t. 1-4, Paris, 1990, Dédéyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés: étude sur les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1150), t. 1, 2, Lisbonne, 2003, Dédéyan G., L'immigration arménienne en Cappadoce au XI siècle, Byzantion, 45 (1975), pp. 41-117, La Chronique attribuée au connétable Smbat, par. Dédéyan G., Paris, 1980, Dédéyan G., (dir.), Histoire du peuple arménien, Toulouse, 2007.

<sup>57</sup> Մուֆաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, Mutaftian Cloude, L'Arménie du Levant (XIe – XIVe siècle), 2 vol., Paris, 2012, Мутафян К. З., Последнее королевство Армении, Москва, 2009, Мутафян К. З., Королевы Иерусалима, стат. опуб. 5.11.2007, URL://http://www.aniv.ru/archive/2/korolevy-ierusalima-klod-mutaftjan/, (25.06.2013).

Ամերիկյան ու բրիտանական պատմաբանների գործերն ավելի հաճախ կենտրոնացած են խաչակիրների ռազմաքաղաքական կառույցների վրա: Այս առումով նշանակալի են Լա Մոնտեի<sup>58</sup>, Բերնարդ Համիլտոնի<sup>59</sup>, Ջոն Ֆրանսի<sup>60</sup>, Էլեն Նիկոլսոնի<sup>61</sup>, Սթիվեն Ռանսիմանի<sup>62</sup> ու Քեննեթ Սեթոնի<sup>63</sup>, Սիրարփի Տեր-Ներսիսյանի<sup>64</sup> ուսումնասիրությունները:

Ռուսաստանում Լատին Արևելքի խնդիրներն առաջին անգամ տեղ գտան Ֆեոդոր Ուսպենսկու<sup>65</sup>, Ալեքսանդր Վասիլևի<sup>66</sup> մենագրություններում, ապա 1894 թ. հրատարակվող «Византийский Временник»- ում: XX դդ. 60-70-ական թթ. Ալեքսանդր Զաբորովի կողմից լույս աշխատանք կատարվեց այդ հատուկ ենտ գործերը համալրելու ուղղությամբ<sup>67</sup>, բայց բյուզանդագիտությունը Ռուսաստանում շարունակում է մնալ առաջնային: Կարևոր են հատկապես Ալեքսանդր Կաժդանի<sup>68</sup>, Վալերի Ստեպանենկոյի<sup>69</sup>, Վիադա Հարությունովա-Ֆիդանյանի<sup>70</sup> գործերը:

---

<sup>58</sup> La Monte J. L., Feudal Monarchy in the Latin Kingdom of Jerusalem: 1100—1291, Cambridge, The Medieval academy of America, 1932.

<sup>59</sup> Hamilton B., Ralph of Domfront, patriarch of Antioch (1135—1140), Univer. of Nottingham, № 28 (1984), pp. 1-22.

<sup>60</sup> France J., Victory in the East: A Military History of the First Crusade, New York, Cambridge University, 1994.

<sup>61</sup> Nicholson Helen J., God's Warriors: Knights Templar, Saracens and the battle for Jerusalem, New York, 2005.

<sup>62</sup> Runciman S., A history of the Crusades, London-New York, t. 1, 1951, t. 2, 1952, t. 3, 1954.

<sup>63</sup> Setton Kenneth M., A History of the Crusades, t. 2, The Later Crusades 1189-1311, Wisconsin, 1969.

<sup>64</sup> Տեր-Ներսիսյան Ս. Մ., Կիլիկյան Հայաստանի թագավորությունը, հ. 2, Լոնդոն, 1969, հատված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 381-411:

<sup>65</sup> Успенский Ф. И., История Византийской империи XI-XV вв., Восточный вопрос, Москва, 1997, Успенский Ф. И., История крестовых походов, Москва, 2001.

<sup>66</sup> Васильев А. А., Латинское владычество на Востоке. Эпоха Никейской и Латинской империй (1204-1261 гг.), Петроград, 1923, Васильев А. А., История Византийской империи, т. 2, СПб, 2000, Васильев А. А., Византия и крестоносцы: Эпоха Комнинов (1081-1185) и Ангелов (1185-1204), Петроград, 1923.

<sup>67</sup> Заборов М. А., Введение в историографию крестовых походов (латинская хронография XI-XIII вв.), Москва, 1966, Заборов М. А., История крестовых походов в документах и материалах, Москва, 1977, Заборов М. А., Крестоносцы на Востоке, Москва, 1980.

<sup>68</sup> Каждан А. П., Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975.

<sup>69</sup> Степаненко В. П., Византия в международных отношениях на Ближнем востоке (1071-1176), Свердловск, 1988, Степаненко В. П., Из истории международных отношений на Ближнем востоке в XII в., Княжество Васила Гоха и Византия, АДСВ, Свердловск, 1980, вып. 17, с. 34-44, Степаненко В. П., Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., Византийский Временник (այսուհետ՝ ВВ), Москва, 1991, т. 52, с. 127-135, Степаненко В. П., Мараш и графство Эдесское в Девольском договоре 1108 г., ВВ, Москва, 1987, т. 48, с. 53-63, Степаненко В. П., Равнинная Киликия во взаимоотношениях Антиохийского княжества и княжество Рубинидов в 10-40-х годах XII в., ВВ,

Հայրենական պատմագրության մեջ հայերի ու խաչակիրների փոխհարաբերություններն առաջին անգամ շոշափվել է Վենետիկյան միաբանության հայր Միքայել Չամչյանի «Հայոց Պատմություն»-ում<sup>71</sup>: Աշխատության երրորդ գրքում ամբողջությամբ ներկայացվում է 1080-1375 թվականներին Կիլիկիայում ստեղծված հայկական պետության պատմությունը և նրա արտաքին քաղաքականությունը: Մ. Չամչյանի գործի հետ եզակի դարձան նաև Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանի կոթողային «Սիսուան: Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ»<sup>72</sup>, և Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Ազգապատում»<sup>73</sup> աշխատությունները:

Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրությունը հատկապես մեծ վերելք ապրեց XX դ. 50-ական թթ. սկսած: Ընդ որում, եթե Գրիգոր Միքայելյանի<sup>74</sup>, Ալեքսեյ Այուքիասյանի<sup>75</sup>, Հարություն Տեր-Ղազարյանի<sup>76</sup> և Սարգիս Բոռնազյանի<sup>77</sup> հետազոտություններն առավելապես նվիրված են Հայոց պետականությանն ու տիրող սոցիալ-տնտեսական միջավայրի լուսաբանմանը, ապա Երվանդ Քասանու<sup>78</sup>, Մանվել Զուլալյանի<sup>79</sup> աշխատություններն ավելի շատ միտված են Կիլիկիայի վարած արտաքին քաղաքականությունը ներկայացնելուն: Այստեղ անուրանալի են նաև Հրաչ

---

Москва, 1988, т. 49, с. 119-126, Степаненко В. П., Шорохов А. В., К хронологии византийско-антиохийской борьбы за Равнинную Киликию. 1098-1108, АДСВ, Свердловск, 1983, вып. 20, с. 139-147.

<sup>70</sup>Арутюнова-Фиданян В. А., Армяне-Халкидониты на восточных границах Византийской империи (XI вв.), Ереван, 1980, Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), Москва, 1994.

<sup>71</sup>Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784 ըստ աւադելոյ ալլելայլ, հ. Գ, Վենետիկ, 1786, (օգտագործվել է 1984 թ. Երևանի վերահրատարակությունը):

<sup>72</sup>Ալիշան Ղ., Սիսուան: Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ: Հաւաքեալ ի Հ. Ղևոնդեայ Վ. Մ. Ալիշան Յովստէն Մխիթարայ, Վենետիկ-Ս. Ղազար, 1885:

<sup>73</sup>Օրմանեան Մաղաքիա, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը, հ. Ա մաս Գ, Պէյրութ, 1959, հ. Բ, մաս Ա, Պէյրութ, 1960:

<sup>74</sup>Микаелян Г. Г., История Киликийского Армянского государства, Ереван, 1952.

<sup>75</sup>Сукиасян А. Г., История Киликийского армянского государства и права (XI-XIV), Ереван, 1969.

<sup>76</sup>Տեր-Ղազարեան Յ., Հայկական Կիլիկիա. տեղագրութիւն, Անթիլիաս, 1966:

<sup>77</sup>Բոռնազյան Ս. Վ., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դդ., Երևան, 1973, Բոռնազյան Ս. Վ., Խաչակիր Օրդենների և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական առնչությունների պատմությունից, ՊԲՀ, Երևան, № 3 (1963), էջ 175-184:

<sup>78</sup>Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձատուր Արևելեքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), Պէյրութ 1974, Քասունի Ե. Հ., Ռութէն Գ. Իշխանապետ և իր կտակը, Պէյրութ, 1987:

<sup>79</sup>Զուլալյան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, /գիրք Ա/, Երևան, 1990:

Բարթիկյանի<sup>80</sup>, Ազատ Բոգոյանի<sup>81</sup>, Վահան Տեր-Ղևոնդյանի<sup>82</sup> գործերը, իսկ Լատին Արևելքի հետ Կիլիկյան Հայաստանի ունեցած իրավական, քաղաքական, առևտրային հարաբերությունների բազմաթիվ կողմերը բացահայտելու հարցում ուրույն տեղ ունեն Լևոն Տեր-Պետրոսյանի<sup>83</sup>, Գագիկ Հարությունյանի<sup>84</sup> և Զոհրաբ Գևորգյանի<sup>85</sup> ուսումնասիրությունները:

---

<sup>80</sup>Բարթիկյան Հ. Մ, Առաջին երեք Բագրատունի թագավորների այսպես կոչված «Բյուզանդական» թագի մասին, ՊԲՀ, № 3 (2001), էջ 142-171, Բարթիկյան Հ. Մ, Գվիդոն Լուսինյանը Բյուզանդիայում և Կիլիկյան Հայաստանում, «Աշտանակ» տաեգիրք, Երևան, 1998, հ. Բ, էջ 134-144, Բարթիկյան Հ. Մ., «Ղաշանց թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, ՊԲՀ, № 3 (2004), էջ 65-116, Բարթիկյան Հ. Մ., Միքայել Իտալիկոսի «Ներքողյանը» և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորների խնդիրը, ՊԲՀ, № 1 (1984), էջ 216-229, Բարթիկյան Հ. Մ., Նոր նյութեր Կիլիկյան հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, Բանբեր Մատենադարանի (այսուհետ՝ ԲՄ), Երևան, № 4 (1958), էջ 285-295: Բարթիկյանի աշխատությունների ամբողջական շարքը տե՛ս Բարթիկյան Հ. Մ., Հայ-Բյուզանդական հետազոտություններ, (այսուհետ՝ ՀԲհ), հ. Ա և Բ, Երևան, 2002, հ. Գ, Երևան, 2006:

<sup>81</sup>Բոգոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թթ., Երևան, 1988, Բոգոյան Ա. Ա., Հայ միջնադարյան իրավունքի պատմության հուշարձանները, Էջմիածին, № Է-Ը, (2006), էջ 90-108, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, խմբ. Բոգոյան Ա. Ա., Երևան, 2016:

<sup>82</sup>Տեր-Ղևոնդյան Վ. Ա., Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., Երևան, 1994, Տեր-Ղևոնդյան Վ. Ա., Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դ-ի վերջին, ՊԲՀ, Երևան, № 1 (2010), էջ 114-128, Տեր-Ղևոնդյան Վ. Ա., Կիլիկյան Հայաստանն ու Սիրիան XII դարի 40-70-ական թթ., ՊԲՀ, № 2 (1986), էջ 122-129:

<sup>83</sup>Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ուսումնասիրություն և թարգմանություններ, Երևան, 2005, հ. Բ, Պատմա-քաղաքական հետազոտություն, Երևան, 2007:

<sup>84</sup>Հարությունյան Գ. Ս., Ակրայի 1263 թ. ժողովի հարցի շուրջ, Պատմության հարցեր, Պրակ-2, Երևան, 1989, ԵՊՀ, էջ 5-22, Հարությունյան Գ. Ս., Դիտողություններ Կիլիկիայում հայկական պետականության առաջացման հարցի շուրջ, Հայոց Պատմության Հարցեր, №6, Երևան, 2005, էջ 216-247, Հարությունյան Գ. Ս., Եկեղեցական աթոռների գահերեցության խնդիրը Աքքայի ժողովում (1263 թ.), ՊԲՀ, Երևան 1999, № 2-3, էջ 250-261, Հարությունյան Գ. Ս., Կիլիկյան Հայաստան-Ֆրանսիա. (զուգահեռներ կենտրոնական կառավարման համակարգերի միջև), «Պատմություն և կրթություն» գիտատեսական և մեթոդաբանական հանդես, Երևան, 2005, էջ 79-95:

<sup>85</sup>Գևորգյան Զ. Հ., Կիլիկիայի հայկական պետությունը միջերկրածովյան առևտրի համակարգում XIII-XIV դդ, Երևան, 2015:

***§ 1. Բյուզանդական, հայկական, լատինական և մահմեդական պետաիրավական համակարգերի առանձնահատկությունները***

Կիլիկիան հայերին ծանոթ էր վաղ շրջանից, դեռևս մ.թ.ա. 83 թ. Հայոց թագավոր Տիգրան II Մեծը (մ.թ.ա. 95-55 թթ.) բազմեց Սելևկյանների գահին Անտիոքում, ապա գրավեց նաև հյուսիսային Ասորիքը, Փյունիկիայի հեղինիստական քաղաքները և Դաշտային Կիլիկիայի մեծ մասը՝ նպատակ հետապնդելով դուրս գալ Միջերկրական ծով<sup>86</sup>։ Սակայն դեպի Կիլիկիա և Բյուզանդական կայսրության արևելյան նահանգներ հայերի արտագաղթը հիմնականում սկսվեց VII-IX դարերում, որն ավելի շատ հետևանք էր արաբական խալիֆայության քաղաքականության։ Բյուզանդիան ևս բռնի ներգաղթեցնում էր հայերին կայսրության տարածքներ։ Նման մասսայական տեղահանումներ ձեռնարկեց Հովաննես Չմշկիկ (Յիմիսխի) կայսրը (969-976 թթ.), երբ բազմաթիվ աղանդավորների Պոնտոսից և հայկական տարածքներից տեղահանեց Թրակիա՝ Ֆիլիպպոպոլիս քաղաք<sup>87</sup>։ Միևնույն ժամանակ հայ ազնվականությունը նույնպես չէր դադարում անցնել Բյուզանդիայի սահմանները։ Նրանց հոսքը Կիլիկիա հատկապես ակտիվացավ X-XI դարերում՝ կապված Բյուզանդիայի հետ Բագրատունիների ունեցած քաղաքական փոխհարաբերություններով։ 974 թ. Հովաննես Չմշկիկի և Աշոտ III Բագրատունու (953-977 թթ.) պայմանավորվածության համաձայն Միջագետք էին տեղափոխվել մոտ 10 հազար հայ զինվորներ, որոնց օգնությամբ կայսրը մեծ հաղթանակներ տարավ Պաղեստինում, Փյունիկիայում, Ասորիքում։ Փաստորեն ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքարը<sup>88</sup> նպաստում էր

<sup>86</sup> Плутарх, Сравнительные жизнеописания, т.1, Москва, 1994, гл. Лукулл, հմմտ. Флавий Иосиф, Иудейские древности, т. 2, Москва, 2002, книга XIII.

<sup>87</sup> Анна Комнина, указ. соч., с. 395.

<sup>88</sup> Մատթեոս Ուրհայեցի, նշվ. աշխ., էջ 22-34, Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), с. 19-20.



դեպի Բյուզանդիա հայերի արտագաղթին և մեծացնում հայերի ներկայությունը կայսրության իշխանական դասում<sup>89</sup>:

XI դ. սկզբից Բյուզանդիան արդեն դեմ չէր ամբողջ երկրամասերի հայ բնակչությանը տեղափոխելուն: Այսպես, Վասպուրականի Սենեքերիմ (1003-1021 թթ.) թագավորը օղուզներին դիմադրելու անկարողությունից դիմում է կայսր Բարսեղ (Վասիլի) II-ին (976-1025 թթ.) և 1021-1022 թվականներին իր ենթականերով հանդերձ տեղափոխվում Սեբաստիա: Նրա հետ Կիլիկիա են անցնում շուրջ 14 հազար հայեր, չհաշված կանանց ու երեխաներին. հետագա տասնամյակներում Վասպուրականից գաղթած հայերի թիվը գնալով միայն մեծանում է<sup>90</sup>: Բյուզանդիան, իր արևելյան սահմանները փորձում էր կարգավորել հայկական մանր քաղաքական միավորներով, որոնք կոչված էին ամրապնդելու VIII-IX դդ. անհետացած պաշտպանական գիծը<sup>91</sup>:

Հայերի նոր գաղթի թափը կապված էր Շիրակի (1045 թ.) և Վանանդի (1065 թ.) Բյուզանդական նվաճումների հետ, որը մեծ ծավալների հասավ սելջուկ-թյուրքական ասպատակությունների հետևանքով: Ընդ որում, Փոքր Ասիայում սելջուկների առաջխաղացմանը զուգահեռ, Բյուզանդիայի սահմանային գոտիներում հաստատված հայերը ստիպված էին իջնել Կիլիկիա, Միջագետք և Ասորիք<sup>92</sup>:

1045 թ. գաղթականի կարգավիճակում հայտնվեց նաև Հայոց թագավոր Գագիկ II Բագրատունին (1042-1045 թթ.): Նա բնակություն հաստատեց Կիլիկիայի Պիզու քաղաքում: Սելջուկյան արշավանքների ճնշման տակ Գագիկ II-ին հետևեցին բազմաթիվ իշխանական տներ. 1065 թ. Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը, 1073 թ. Արցախի իշխաններից Օշինը և ուրիշներ: Հայ իշխանները և թագավորները ստանում էին տարաբնույթ արտոնություններ, կիսանկախ կարգավիճակ, որը հիշեցնում էր կայսեր «բարեկամի» կարգավիճակ: Այդ կառավարիչները բյուզանդական արքայի՝ «վասիլևսի», գլխավորությամբ կազմում էին մի համակարգի մաս, որտեղ «եղբայր»,

<sup>89</sup> Կիլիկիայում հայկական տարրի վերաբնակության մասին տե՛ս Микаелян Г. Г., указ. соч., с. 54-80, Бартикан Г. М., Миграция армян в XI в. Причины и последствия, ՀՔԻ, հ. Բ, էջ 251-270, Dndnyan G., L'immigration arménienne en Cappadoce au XI siècle, Byzantion, pp. 41-117, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, 1960 թ., № 7-9, էջ 393, Mutaflan Cloude, L'Arménie du Levant (XIe – XVe siècle), 1 vol., pp. 49-54.

<sup>90</sup> Бартикан Г. М., Миграция армян, ՀՔԻ, հ. Բ, էջ 254-255:

<sup>91</sup> Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), с. 14.

<sup>92</sup> Бартикан Г. М., Миграция армян, ՀՔԻ, հ. Բ, էջ 255-256:

«որդի», «ընկեր» հասկացություններն ունեին տիտղոսի կարգավիճակ և որոշում էին տվյալ իշխանի զբաղեցրած դիրքը կայսերական ընտանիքում: Որոշակի դիրք ապահովում էր նաև բյուզանդական վարչական սանը, որը շնորհվում էր նրանց ցմահ: Երկու համակարգն էլ կրում էին իրավական բնույթ՝ որոշելով Բյուզանդիայի քաղաքականությունը հարևանների ու թշնամիների հետ<sup>93</sup>: Նման մոտեցմամբ Կոստանդնուպոլիսն ի ցույց էր դնում հռոմեական կայսրության նախկին սահմաններում ու քրիստոնյա աշխարհում կայսեր գերագույն սյուզերենության գաղափարը: Նույնիսկ կայսեր գերիշխանությունը չճանաչող երկրների պարագայում իրավիճակը դիտվում էր որպես ժամանակավոր երևույթ, որոնցում օրինականության վերականգնումն առաջնային էր համարվում: Աշխարհում միակ գերտերությունը լինելու Բյուզանդիայի ինքնագիտակցումը բխում էր Հռոմի իրավահաջորդության և Կոստանդնուպոլսի պատրիարքության նախաթոռության պատկերացումներից:

Այսպիսով, Բյուզանդիայում ձևավորված ֆեոդալական կարգերը մի շարք առանձնահատկություններ ունեին Արևմուտքի համեմատությամբ:

- Բոլոր ավատատերերն, անկախ զբաղեցրած դիրքից, կախված էին կենտրոնական իշխանությունից, չունեին սեփական զինվորական միավորներ, ենթականերին հողեր պարգևելու իրավունք:

- Հողերը բաժանված էին կայսերական դոմենի ու պետական մասնաբաժնի միջև, որոնց գերագույն սեփականատերը համարվում էր կայսրը: Տարածված էր ռազմական ծառայությունների դիմաց հողային հատկացումների ավանդույթը, սակայն դրանց մեծ մասը տրվում էր առանց ժառանգության իրավունքի:

- Արևմուտքում ավատատերը ֆեոդին տիրում էր իմունիտետի՝ դատական ու վարչական արտոնություններով: Բյուզանդիայում դա բացառվում էր. նրանք հողը ստանում էին հիմնականում հարկահանության իրավունքով:

- Քաղաքները Բյուզանդիայում մշտապես գտնվել են կայսեր վերահսկողության ներքո և երբեք չեն պատկանել որևէ ֆեոդալի ինչպես Եվրոպայում:

---

<sup>93</sup> Степаненко В. П., Византия в международных отношениях на Ближнем востоке, с. 28-30, Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), с. 21 հմմտ. Հարությունյան Գ. Ս., Կիլիկյան Հայաստան-Ֆրանսիա. (զուգահեռներ կենտրոնական կառավարման համակարգերի միջև), էջ 80-81:

- Սաներն ու տիտղոսները շնորհվում էին ցմահ, ժառանգական բնույթ չէին կրում: Շնորհումների բացառիկ իրավունքը ազնվական դասում անձի կարգավիճակը որոշող յուրօրինակ միջոց էր կայսեր ձեռքում<sup>94</sup>: Ստեղծված իրավիճակը մի կողմից առաջ էր բերում խոշոր ավատատերերի ապստամբություններ, մյուս կողմից նպաստում էր կայսեր գերագահության պահպանմանը բյուզանդական աշխարհում:

Քննվող խնդրի առումով հետաքրքրական է մասնավորապես կայսրության կորցրած տարածքներում բյուզանդական իրավունքի վերականգման քաղաքականությունը: Մասնավորապես հայերով բնակեցված հարավ-արևելյան շրջաններում հասարակական հարաբերությունները կարգավորելու համար օրենսդրական նախաձեռնությամբ ավանդաբար հանդես էին գալիս կայսրերը, որոնք մի շարք նովելներով փորձում էին ձևափոխել ժառանգական և ամուսնական փոխհարաբերությունները՝ դրանք հարմարեցնելով բյուզանդական օրենքներին: Հաջողության պատճառը հայկական աշխարհիկ օրենսգրքերի բացակայությունն էր մինչև XIII դ.: Այդ շրջանում Կիլիկիայում հիմնականում գործածական էր հռոմեական ու բյուզանդական իրավունքի մի շարք թարգմանված հուշարձաններ<sup>95</sup>:

Կիլիկիայի հայկական իշխանություններում բյուզանդական իրավունքի գերակայության մասին են վկայում նաև «Էկլոգա պրիվատայի» և նրա հավելվածների (քաղաքացիական, դատական, զինվորական) թարգմանությունը: Բյուզանդիայի դիրքերի թուլացումն աստիճանաբար արդիական դարձրեցին լատին օրենսգրքերի կիրառությունը, որի ցայտուն օրինակը Կիլիկյան Հայոց թագավորի օժման ծեսի, Հռոմի պապի և արևմտյան տերությունների հետ հարաբերությունները կարգավորող նորմերի ժողովածու «Լատին Մաշտոցին» է<sup>96</sup>: Ավելի ուշ կթարգմանվեն «Անտիոքի ասիզները», որի մասին կխոսվի ստորև:

Ինչ վերաբերվում է Կիլիկիայից հարավ և արևելք ընկած նախկին բյուզանդական տարածքներին, ապա Ալեքսիոս Կոմնենոսը Կոստանդնուպոլսում հարկադրեց խաչակրաց առաջնորդներին պարտավորություն ստանձնել ազատագրման դեպքում դրանք Բյուզանդիային վերադարձնելու և վասալական երդում

<sup>94</sup> Ст'ю Прудников М. Н., История государства и права зарубежных стран, Москва, 2013, с. 313-326.

<sup>95</sup> Բոգդյան Ա. Ա., Հայ միջնադարյան իրավունքի պատմության հուշարձանները, էջ 97, 100-102:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 102-104:

տալու մասին<sup>97</sup>: Բացառությամբ փոքրաթիվ նորմանական ջոկատի, որի մեջ էր Անտիոքի ապագա դուքս Բոհեմունդի զարմիկը՝ (հավանաբար քրոջ որդի)<sup>98</sup> Տանկրեդը, բոլորն ընդունեցին պայմանը, բայց դա էական նշանակություն չունեւ, քանի որ Տանկրեդի գերակա Բոհեմունդը կայսեր սյուզերենությունը ճանաչել էր<sup>99</sup>: Հետագայում վկայակոչելով այդ պայմանագիրը՝ Կոմենենոսները բազմիցս փորձեցին պարտադրել իրենց գերիշխանությունը խաչակիրներին: Ընդ որում, ի տարբերություն Կիլիկյան Հայաստանի, նրանք լատին պետություններում չէին հավակնում նշանակելու անմիջական ներկայացուցիչներ: Կայսրությունը Կիլիկիան դիտարկում էր որպես իր տարածքի անբաժանելի մաս, իսկ լատին պետությունների դեպքում պատրաստ էր բավարարվելու անվանական գերակայության ճանաչմամբ:

Բյուզանդիայի հավակնությունները բխում էին գլխավորապես X-XI դդ. հաղթանակներից, երբ կայսրությունը վերանվաճեց Կիպրոս և Կրետե կղզիները, իսկ արևելքում նրա սահմանները նորից անցան Տավրոսի լեռներն ու Եփրատը: Կոստանդնուպոլսի տիրապետությունն աստիճանաբար տարածվեց Հյուսիսային Ասորիքի, Եդեսիայի և Միջագետքի քաղաքների վրա՝ իր մեջ առնելով նաև Մեծ Հայքի հողերի զգալի մասը: Փաթիմյան դինաստիայի նկատմամբ տարված հաղթանակների և կնքված համաձայնության արդյունքում Բյուզանդիան իրավունք ստացավ ազդելու հարևան մահմեդական միավորների վրա ու վերահսկողություն իրականացնել Սրբազան վայրերում<sup>100</sup>:

Սակայն իրավիճակը կտրուկ փոխվում է XI դ. երկրորդ կեսից՝ կապված թյուրքական ասպատակությունների հետ: 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի կրած պարտությունից հետո նրա արևելյան տարածքները հայտնվեցին թյուրքական ցեղերի ձեռքում: Բյուզանդիայի պարտությունները հունական աշխարհի սահմանները նկատելիորեն սեղմեցին դեպի արևմուտք: Կայսրության նախկին ազդեցության մասին այլևս վկայում էին հիմնականում Ասորիքի, Պաղեստինի, Կիլիկիայի խոշոր քաղաքներում կենտրոնացած հունական համայնքները և հույն

<sup>97</sup> Ст'ю Анна Комнина, указ. соч., с. 287-289, Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 272-274.

<sup>98</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 271-272, 292, Доманин А. А., Крестовые походы под сенью креста, Москва, 2005, с. 122, Rey E., Résumé chronologique de l'histoire des princes d'Antioche ROL, N° 4 (1896), p. 324.

<sup>99</sup> Анна Комнина, указ. соч., с. 291-292.

<sup>100</sup> Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 177.

ուղղափառ եկեղեցու համակարգում ներգրավված քրիստոնեական պատրիարքությունները: Ընդ որում, խոսելով ժամանակի հույն բնակչության մասին, նշենք, որ նրանք ոչ այնքան ներկայանում էին որպես էթնիկ հույներ, այլ ավելի շատ հանդիսանում էին հելլենականացված, ուղղափառ դավանանքի հետևորդ հայկական, ասորական, մասամբ վրացական ու արաբական տարրեր: Միաժամանակ բյուզանդական կայսրության վարած քաղաքականության հետևանքով տարածաշրջանում պահպանվել էին հունադավան հայ կառավարիչների կողմից ղեկավարվող մի շարք հունամետ քաղաքական միավորներ: Նման կերպ էին հանդես գալիս Մարաշի, Մելիտինեի, Եդեսիայի ու Անտիոքի կառավարիչ Փիլարտոս Վարաժնունին (1170-ականներ-1186 թթ.), ապա նրա իշխանության տարբեր մասերում հաստատված հայազգի բազմաթիվ ավատներ<sup>101</sup>: Հայկական դավանանքը պահպանած Ռուբինյաններն այդ շրջանում նույնպես ճանաչում էին Բյուզանդիայի գերագահությունը, թեև ձգտում էին թոթափել վասալական կախվածությունը Կոստանդնուպոլսից և համախմբել հայկական բնակչությանը<sup>102</sup>: Ուստի նրանք սկզբից ևեթ սերտ հարաբերությունների մեջ մտան խաչակիրների հետ, որոնք Նիկեայի գրավումից հետո բացահայտ բռնել էին անկախ պետություններ ստեղծելու ուղին:

Թյուրքական արշավանքների հաջողության պատճառներից մեկը Բյուզանդիայի վարած սխալ մարտավարությունն էր, որի էությունը կայանում էր սահմանամերձ շրջանների բնակչության արտագաղթի և բերդերի ամրացման մեջ: Դրանով թուլացվում էր շփման գոտու սոցիալ-տնտեսական համակարգը, բայց քոչվորական հեծելազորը հեշտությամբ հաղթահարում էր նման արգելքը՝ հենակետերը վերցնելով օղակի մեջ: Նրանց արագաշարժ հեծյալների դեմ, ծանրազեն կայսերական հեծելազորն անօգնական էր դառնում մարտի դաշտում: Արդյունքում Կոստանդին Մոնամախի կառավարման տարիներին (1059-1067 թթ.) կայսերական բանակը վերջնականապես կորցրեց իր հզորությունը՝ ստիպելով Բյուզանդիային իսլամական արևելքի նկատմամբ որդեգրել առավելապես պաշտպանական քաղաքականություն:

<sup>101</sup> Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), с. 21-23 հմմտ. Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 186-188, 190-191.

<sup>102</sup> Կրիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, էջ 17-19:

Ասորիքի, Պաղեստինի նվաճումից հետո թյուրքերը սպառնում էին հունական տարածքներին նաև հարավից:

Բացի այդ, բյուզանդական գահի դեմ ապստամբած ազնվականներն իրենց երկպառակտչական պատերազմներում սկսեցին դիմել վարձկան թյուրքական ջոկատների ծառայություններին: Վերջին հանգամանքը թյուրքական տարրը դարձրեց նաև կայսրության ներքին գործերը շատ բաներով որոշող գործոն<sup>103</sup>:

Թյուրքական առաջխաղացման գործում գլխավոր դերակատարությունը ստանձնեցին սելջուկները: Մինչև 1055 թ. նրանք Տուղրիլ-բեկի գլխավորությամբ նվաճեցին Խորեզմը, Իրանը, Միջագետքը, Բաղդադը և հասան Փոքր Ասիայի արևելյան նահանգներին: Աբասյան խալիֆ ալ-Կաիմը (1031-1075 թթ.) ստիպված նրան հռչակեց Սուլթան՝ խալիֆի փոխանորդ: Ալ-Կաիմը ձևականորեն պահպանեց բոլոր մահմեդականների հոգևոր առաջնորդի հեղինակությունը: 1064 թ., նվաճվեց Հայաստանը, իսկ 1071 թ. Մանազկերտի մոտ թյուրքերը հաղթանակ տարան Բյուզանդիայի նկատմամբ, ապա գրավեցին Երուսաղեմը: Առաջ գնալով՝ Մելիք-շահ I (1072-1092 թթ.) սուլթանը զբաղեցրեց Վրաստանը, Անտիոքը, Սեբաստիան, Հալեպը, Դամասկոսը: Չնայած թյուրքերը դավանաբանորեն պատկանում էին մահմեդական աշխարհին, արաբների ու միջինասիական քոչվորների մեջ ընդհանրությունները քիչ էին: Նրանց հայտնվելը միայն խորացրեց արաբական խալիֆայության քայքայումից հետո պահպանված տարաբնույթ իսլամական միավորների միջև առկա անջրպետը, տարածաշրջանում առաջացան բազմաթիվ նոր մանր ամիրայություններ: Գահակալական կոիվները պառակտեցին անգամ իրենց՝ թյուրքերին: Այսպես, արդեն Մելիք-շահի կառավարման ընթացքում ուժգնացան անջատողական ձգտումները քոչվորական զինվորական վերնախավի մոտ՝ արտահայտվելով մի քանի կիսանկախ սուլթանությունների կազմավորմամբ: Դրանցից առավել հզոր էին Իրանի տարածքում գոյացած Քերմանիների սուլթանությունը, Փոքր Ասիայում հաստատված Իկոնիայի սուլթանությունը և 1094 թ. անկախություն վայելող Ասորիքի սուլթանությունը<sup>104</sup>:

<sup>103</sup>Степаненко В. П., Византия в международных отношениях на Ближнем востоке (1071-1176), с. 27-31.

<sup>104</sup> Թյուրքական նվաճումների հետևանքով ստեղծված իսլամական նոր միջավայրի մասին տե՛ս Литвинов Г. М., Туркмены на Ближнем Востоке (XIV.), URL://<http://www.deusvult.ru/113-turkmeny-na-blizhnem-vostoke-xi-v.html>, (01.12.2013), Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 178, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 14-18:

Փոփոխությունների ենթարկվեցին նաև նրանց ռազմական, կենցաղավարման, սոցիալական համակարգերը՝ ազդվելով բյուզանդական, արաբական, տեղաբնիկ այլ ժողովուրդների մշակույթներից, թեև երկար ժամանակ քոչվորական վերնախավը պահպանում էր զարգացման բավական ցածր մակարդակը: Այդ պատճառով վարչարարական համակարգում արաբները զգալի կշիռ էին կազմում՝ զբաղեցնելով դիվանի, կադիների ու ռայաների պաշտոնները, որոնք կարգավորում էին համայնքների սոցիալ-տնտեսական կյանքը ու հավաքագրում աշխարհագրայիններ: Թյուրքերը նվաճված հողերում զբաղվում էին զինվորական ծառայությամբ, ավարառությամբ՝ ի ճիշդ դարձնելով կենտրոնացված իշխանության ստեղծումը: Նրանց երբեմնի միասնության խափանումն առաջնային էր դարձնում ռազմական թողտվությունը սուլթանից վասալական կախվածության փոխարինելու գործընթացը: Այս առումով նրանք ընդօրինակեցին հողերի բաշխման արաբական փորձը (իկթա), որոնք սելջուկների մոտ սկզբնապես ժառանգորեն փոխանցվող ամբողջ շրջաններ էին: Իկթայի տերերը պարտավորվում էին զինել իրենց զինվորական ջոկատները և կատարել սուլթանի հրամանները<sup>105</sup>: Այսպիսով, թյուրքական ասպատակությունների հիմնական արդյունքները, կարելի է հանգեցնել հետևյալին.

- Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում հաստատվեցին տեղաբնիկների համար օտար՝ թյուրքալեզու, տարաբնույթ ցեղեր.

- նրանք փոխակերպման ենթարկեցին ջիհադի՝ իսլամի հետևորդների համար սրբազան պատերազմի գաղափարը: Եթե մինչ այդ ջիհադ հայտարարելը և գլխավորելը բացառապես խալիֆի մենաշնորհն էր, ապա այժմ դրա նախաձեռնությունն անցնում էր մահմեդական զինվորականությանն ու սուլթանին.

- թյուրքական արշավանքների արդյունքում Մերձավոր Արևելքի տարածքը ամբողջությամբ ծածկվեց ռազմական ամրոցներով, ընկան քաղաքների նշանակությունը.

- միանգամայն այլ հարթություն էր տեղափոխվում դեռևս արաբական նվաճումների ժամանակներից ձևավորված քրիստոնյա-մահմեդական հարաբերությունները՝ երկուստեք սրելով անհանդուրժողականության մթնոլորտը.

---

<sup>105</sup>Гордилевский В. А., Государство Сельджукидов Малой Азии, Избранные сочинения, т. 1, Москва, 1960, с. 74-75.

Հայ բնակչության կուտակումը Կիլիկիայում նախապայմաններ ստեղծեցին հայկական իշխանությունների կազմավորման համար: Մանազկերտի ճակատամարտից հետո Մարաշի, Մելիտիների, Եդեսիայի ու Անտիոքի կառավարիչ Փիլարտոս Վարաժնունին (1170-ականներ-1186 թթ.) սկսեց վարել կիսանկախ քաղաքականություն<sup>106</sup>: Նա նույնիսկ մահմեդականություն ընդունեց ու թլապատվեց, բայց ի վերջո պարտություն կրեց թյուրքերից<sup>107</sup>: Փիլարտոսից հետո Ամանոսյան լեռներից արևելք ընկած տարածքների իշխան դարձավ Պահլավունիների և Բագրատունիների պահպանված զորաջոկատների հրամանատար Գող Վասիլը<sup>108</sup>: Նկատենք, Բյուզանդիայում հաստատված հայկական տարրը միասնական համայնք չէր. կայսրության արևելյան մասի հայ իշխանների մեծ մասը քաղքեղոնականներ էին, որը մեծ ազդեցություն ուներ քաղաքական միջավայրի վերաձևավորման վրա<sup>109</sup>:

Նման պայմաններում ստեղծվեց նաև Բագրատունիներից և Արծրունիներից ծագող Ռուբեն I-ի (1080-1095 թթ.), իշխանությունը<sup>110</sup>: Ապավինելով Բարձրբերդի, Կոպիտառի և Կոռոմոզլի հայությանը՝ նա 1080 թ. հիմնեց իր իշխանությունը: Ռուբինյանները Կիլիկիայում հաստատված հայ ավատական տներից միակն էին, որ ամբողջությամբ պահպանել էին հայկական ուսմունքը և աշխատում էին Կիլիկիայում վերականգնել հայոց պետականությունը<sup>111</sup>: Այդ իշխանության կայացման ժամանակահատվածը համընկավ խաչակրաց առաջին արշավանքին: Արդեն Ռուբեն I-

<sup>106</sup> Փիլարտոսի իշխանության մասին ամենածավալուն հետազոտությունը պատկանում է Ժ. Դեդեյանին, տե՛ս Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 1, pp. 42-177, 256-275, 303-321 հմմտ. Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), с. 41-43, 86-91, Арутюнова-Фиданян В. А., Армяне-Халкидониты на восточных границах Византийской империи (XI вв.), с. 152-169.

<sup>107</sup> Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 236, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեւրի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 18-20, էջ 22-33:

<sup>108</sup> Անանուն Եդեսացի, նշվ. աշխ., էջ 40, Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), с. 23-24, Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 4, pp. 932-965.

<sup>109</sup> Մանրամասներ տե՛ս Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), с. 56-92, Арутюнова-Фиданян В. А., Армяне-Халкидониты на восточных границах Византийской империи (XI вв.), с. 106-152 հմմտ. Հարությունյան Գ. Ս., Կիլիկյան Հայաստան-Ֆրանսիա. (զուգահեռներ կենտրոնական կառավարման համակարգերի միջև), էջ 82:

<sup>110</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 276, 290, Микаелян Г. Г., указ. соч., с. 81-87, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեւրի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 18-20, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 63-75:

<sup>111</sup> Арутюнова-Фиданян В. А., Армяно-Византийская контактная зона, результаты взаимодействия культур (X-XI вв.), с. 89, 90 հմմտ. Հարությունյան Գ. Ս., Դիտողություններ Կիլիկիայում հայկական պետականության առաջացման հարցի շուրջ, էջ 227:



ի որդի Կոստանդին I-ը (1095-1100 թթ.) խաչակիրների հետ մասնակցում է արշավանքին, նրան շնորհվում են կոմսի, բարոնի տիտղոսներ, խնամիական կապեր է հաստատում խաչակիրների հետ. Կոստանդինի դուստրը կնության տրվեց Եդեսիայի ապագա կոմս Ժոսլեն դե Կուրտենեին<sup>112</sup>:

Հայերի հետ համագործակցությունը կարծում ենք պայմանավորված էր մի շարք գործոններով.

ա. Խաչակրաց արշավանքների նախօրյակին Կիլիկիայի, Հյուսիսային Ասորիքի և Միջագետքի բնակչության մեջ հայերը մեծ թիվ էին կազմում ու լուրջ կշիռ ունեին, որի մասին վկայում են բազմաթիվ հայազգի կառավարիչների անունները:

բ. Հայերը համեմատաբար պահպանել էին քաղաքական, սոցիալական, գինվորական կառույցները, ուստի ավելի կազմակերպված էին քան մյուս տեղաբնիկ քրիստոնյաները: Խաչակիրների հետ փոխհարաբերությունները կարգավորվում էին հայ համայնքի առանձին ներկայացուցիչների միջոցով:

գ. Հայերը կազմելով Բյուզանդական կայսրության գինվորական համակարգի մաս՝ քիչ թե շատ ծանոթ էին արևմտաեվրոպական ասպետների, վարձկան ֆրանկների ու նորմանների հետ: Կոստանդինուպոլիսն իր բանակներում ոչ միայն ուներ եվրոպական ծագման տարբեր ջոկատներ, այլ հաճախ պատերազմում էր նրանց դեմ կայսրության արևմտյան հողերում<sup>113</sup>:

դ. Հաշվի առնելով նախկին հայ-բյուզանդական բարդ հարաբերությունները՝ կարելի էր հուսալ հայերի օգնությանը: Նրանք ի դեմս հռոմեական եկեղեցու փորձում էին թոթափել իրենց «միաբնակ հերձվածողի» կարգավիճակը<sup>114</sup>, չնայած սելջուկ-թյուրքական արշավանքները որոշակիորեն փոխել էին Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և կայսրությունն իր շնորհներով հայ նախարարներից շատերին

<sup>112</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 278-280: Մանրամասներ տե՛ս Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 2, pp. 346-374, Мутафян К. З., Последнее королевство Армении, с. 25, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 52-56, 87-91, Chalandon F., Les Comnènes, հատված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 154, Grousset R., L'Empire du Levant: Histoire de la Question d'Orient, p. 407.

<sup>113</sup> Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 190-191.

<sup>114</sup> Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, էջ 22-24, 31-32:

ընդգրկել էր երկրի կառավարման համակարգում՝ հնարավորություն ստանալով պահպանել ազդեցությունը Կիլիկիայում<sup>115</sup>:

Առաջ անցնելով ասենք, որ այս միասնությունն արագ պետք է փոխարինվեր խաչակիրների հետ մրցակցությամբ: Տավրոսի լեռների մի խումբ բերդերում ամրացած իշխանությունը չէր կարող հավակնել ողջ Կիլիկիայում համահայկական ուժ դառնալուն, եթե դուրս չգար իր սկզբնական սահմաններից: Արդեն Կոստանդին I-ի ժամանակ իշխանությունն իր մեջ առավ Վահկա ամրոցը<sup>116</sup>, սակայն ցանկացած հաջողություն դատապարտված էր, եթե չէր նպաստում դեպի Դաշտային Կիլիկիա տարածվելուն: Այս առումով հատկանշական է 1139 թ. մոտերքին Կոստանդնուպոլսում գերության մեջ գտնվող Լևոն I-ի (1129-1137 թթ.) և նրա որդի Թորոսի միջև տեղի ունեցած դեպքը, երբ Թորոսի երազում տեսած հացն ու ձուկը հայրը մեկնում է կորցրած հողերը հետ բերելու և ապագայում Կիլիկիայի ծովային տարածքներին տիրելու գաղափարով<sup>117</sup>:

Այսպիսով կարելի է փաստել, որ Դաշտային Կիլիկիայի համար պայքարը Բյուզանդիայի և Անտիոքի դքսության հետ կանխորոշված էր, քանի որ Ա՛ կայսրությունը, Ա՛ նորաստեղծ դքսությունը նույնպես ձգտում էին իրենց ձեռքում պահել Կիլիկիայի առանցքային հանգույցները:

Այս ընթացքում Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցող խմորումները նախադրյալներ էին ստեղծում ապագա խաչակրաց արշավանքների համար, որոնց հիմնաքարը հանդիսացավ 1095 թ. նոյեմբերին Կլեմոն քաղաքում Հռոմի պապ Ուրբանոս II-ի (1088-1099 թթ.) կոչը: Մոտ մեկ շաբաթ տևած եկեղեցաժողովի վերջին օրը պապը հավաքված բազմությանը ներկայացրեց Սուրբ Երկրում տիրող ծանր իրադրությունը՝ կոչ անելով փրկել հավատակիցներին: Պապի ելույթում ասվում էր. «Աստծո որդիներ, ...կա կարևոր առաքելություն, որին դուք պետք է ուղղեք ձեր քաջությունն ու կորովը: Անհրաժեշտ է անհապաղ օգնության հասնել ձեր արևելյան եղբայրներին, որը բազում անգամ նրանք խնդրել են... Թուրքերն ավելի ու ավելի շատ

<sup>115</sup> Մանրամասներ տե՛ս Арутюнова-Фиданян В. А., Армяне-Халкидониты на восточных границах Византийской империи (XI вв.), с. 169-187 հմմտ. Հարությունյան Գ. Ս., Դիտողություններ Կիլիկիայում հայկական պետականության առաջացման հարցի շուրջ, էջ 218, 220:

<sup>116</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 290:

<sup>117</sup> Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 62:

են գրավում քրիստոնեական սրբավայրերը..., և եթե դուք անգործության մատնվեք, նրանք կշարունակեն տառապել: Եվ ահա խնդրում եմ, ոչ թե ես, այլ Աստված..., որ բոլորը՝ հարուստ թե աղքատ, ողջ հնարավորությամբ աջակցեք քրիստոնյաներին ու դուրս վնդեք այդ ցեղին ... Եթե մեկն այդ ճանապարհին զոհվի նրա մեղքերը ներված կլինեն, քանզի դա Աստծու ողորմածությունն է: ...Թող Քրիստոսի զինվորներ դառնան նախկին գողերը, եղբայրասպանները..., ով այստեղ ողբում և մուրում է, այնտեղ կլինի երջանիկ, Աստծո թշնամիներն այնտեղ կդառնան նրա բարեկամները...»<sup>118</sup>:

Ինչպես տեսնում ենք պապն իր ուղերձը հղում էր բոլոր դասակարգերին՝ նրանց շահագրգռելով նյութական կամ հոգևոր կարիքների բավարարմամբ: Հետագայում կազմակերպված արշավանքներն արդեն հետապնդում էին ավելի որոշակի նպատակ՝ անընդհատ մեծացնելով նյութական բաղկացուցիչ կարևորությունը: Գիտական գրականության մեջ գտնում ենք արշավանքների բոլոր հնարավոր պատճառների, մասնակիցների շահերի, կազմակերպիչների մղումների մասին մանրակրկիտ բացատրություններ<sup>119</sup>, որոնցից հետևում է, որ հոգևոր նախադրյալներն ընդհանուր էին բոլոր դասակարգերի համար: Եվրոպայի բնակչության պատկերացումներում Երուսաղեմը և Պաղեստինի սրբավայրերը նույնացվում էին Քրիստոսի թագավորության հետ, ուստի այն պետք է ազատագրվեր մահմեդականներից: Այս ընկալումը նոր մակարդակի էր բարձրացնում սրբազան պատերազմի գաղափարը. Տիրոջ Գերեզմանի փրկությանը գումարվում էր նաև արևելյան հավատակիցներին անհավատների լծից ազատելու և ուխտագնացներին սպառնացող վտանգը չեզոքացնելու նվիրական պոռթկումները:

Այս տրամադրությունների ամրապնդմանը նպաստում էին Կոստանդնուպոլսից եկող օգնության խնդրանքները, որոնք պարբերական էին դարձել Մանազկերտի ճակատամարտից հետո: Պարտությունը ստիպեց Միքայել VII Դուկասին (1071-1078 թթ.) դիմել պապ Գրիգորիոս VII-ի (1073-1085 թթ.) օգնությանը, իսկ 1087 թ. Ալեքսիոս I Կոմենենոսն ուղտագնացության նպատակով Արևելքում գտնվող Ռոբերտ Ֆլանդրացու

<sup>118</sup> Foulcher de Chartres, l'Historia Hierosolymitana, par. Guizot M. F., Paris, 1825, URL://http://www.templiers.net/foulcher-de-chartres/, (21.09.2013), Заборов М. А., История крестовых походов в документах и материалах, с. 47- 54, Sydney Jones J., The Crusades Primary Sources, Michigan, 2004, pp. 70-71, Кацир Я., Иерусалим – столица государства крестоносцев, Иерусалим в веках, Тель-Авив, № 6 (1997), с. 19-25.

<sup>119</sup> Տեսակետների վերլուծություններ տե՛ս Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 12-28:

միջոցով հիշեցրեց Հռոմի պապին այդ մասին: Ավելի նշանակալի էր 1095 թ. գարնանը Պյաչենցայի եկեղեցաժողով ուղարկված պատվիրակության գործունեությունը: Սա, պետք է կարծել, ունեցավ անմիջական ազդեցություն արևմուտքում խաչակրաց բանակներ հավաքագրելու գաղափարի վրա: Մեզ հայտնի չեն ժողովում քննարկված առաջարկները, բայց արդեն մի քանի ամիս անց Կլերմոնում հնչած պապի կոչը վկայում է Պիաչենցայում հարցին լրջորեն անդրադառնալու մասին<sup>120</sup>: Իհարկե թյուրքերի դեմ Ալեքսիոս կայսեր վերջին հաղթանակները փոփոխել էին խնդրագրերի բնույթը՝ շեշտելով լավ զինված ասպետական զորքի, այլ ոչ թե անկանոն արևմտյան զանգվածների անհրաժեշտությունը: Կոստանդնուպոլիսը նպատակադրված էր գլխավորելու խաչակրաց արշավանքները և չարակամորեն էր վերաբերվում կայսրության առաջնությունը կասկածի տակ դնող ցանկացած ձեռնարկի:

Պակաս կարևոր չէին միջնադարյան մարդուն հատուկ միստիցիզմը, որն արտահայտվում էր հավիտենական մեղքը քավելու մշտական ձգտման մեջ: Մեղքից մաքրվելու միջոցներից ավելի արդյունավետ էր համարվում անմիջապես Տիրոջ Գերեզմանի վրա ապաշխարիությունը: Պատահական չէ, որ արշավանքները բացառապես կրում էին ճանապարհորդություն, ուխտագնացություն անունները:

Նյութական դրդապատճառներն ըստ դասակարգերի ունեն որոշակի առանձնահատկություններ.

ա. գյուղացիության մեծ մասը XI դ. վերջին կանգնել էր հողագրկության և կալվածատիրոջից անձնական կախվածության առջև: Ընչազրկությունը, աղքատությունը, հաճախակի կրկնվող համաճարակները, ֆեոդալական տարբեր պարիսկների ճիրաններում հայտնված գյուղացիությունը ներկայացնում էր որպես Աստծո պատիժ, որից ազատվելու ինչ որ մեծ իրադարձության սպասումը համակել էր բոլորին:

բ. ասպետությունը նորմանական, հունգարական, իսպանական պատերազմներից հետո տենչում էր նոր գործողությունների: Իրենց ռազմատենչությանը նրանք ստիպված հագուրդ էին տալիս միմյանց դեմ կռիվներում, քանզի ասպետական պատվի սկզբունքներով բացի զենք բանեցնելուց անհարիր էր

<sup>120</sup> Доманин А. А., указ. соч., с. 62-65, Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 198-199.

որևէ զբաղմունք: Հիմնականում ընտանիքների կրտսեր անդամներից համալրվող ասպետական դասի ունեզրկմանը նպաստում էր նաև «մայորատի» կարգը՝ ավատի ժառանգ դարձնելով միայն ավագ որդիներին: Զինական ուժի առկայությունը, համեմատական դադարի պայմաններում, ասպետության շրջանում կրոնական նոր պատերազմների ու նյութական բարիքների տիրելու ներքին հզոր պատրաստակամություն էին ապահովում: Սա էր պատճառը, որ ազնվականության բարձր խավը պակաս եռանդով էր մասնակցում առաջին խաչակրաց արշավանքին:

գ. Կաթոլիկ եկեղեցու հայրերը 1054 թ. բաժանումից հետո պատեհ առիթի էին սպասում արևելյան քրիստոնյաներին Հռոմի գերակայությունը պարտադրելու համար: Դրա իրագործումը պահանջում էր ինչ որ աննախադեպ գործողություն, որը պապին կներկայացներ քրիստոնեական աշխարհի փրկչի լուսապսակով: Երուսաղեմի և արևելյան քրիստոնյաների ազատագրումը այս տեսակետից ընձեռում էր կատարյալ հնարավորություն: Մյուս կողմից, պապականությունը հենվելով Գրիգորիոս VII պապի (1073-1085 թթ.) «Դիկտատի» վրա, ցանկանում էր վերջնականապես ամրագրել եկեղեցու առաջնությունն աշխարհիկ իշխանության նկատմամբ, եկեղեցին հայտարարել ուխտավորների ունեցվածքի պաշտպան և գլխավորել արշավանքները:

1096 թ. գարնանը սկսվեց 60-70 հազարանոց չքավորների անկանոն շարժը դեպի Արևելք, որոնց Աննա Կոմենոսն անվանում է «...անզեն, ազահ... բարբարոսների ամբոխ...»<sup>121</sup>: 1096 թ. աշնանը արշավանքի դուրս եկան կոմսեր, բարոններ և դքսեր: Նրանց մեջ առանձնանում էին Գոդֆրիդ Բուլոնացին՝ իր 70 հազար ասպետներով, Ֆրանսիայի Ֆիլիպ I (1060-1108 թթ.) թագավորի եղբայր Հյուգո Դե Վերմանդուան, Նորմանդիայի դուքս Ռոբերտը, Թուլուզի կոմս Ռայմունդ Սեն Ժիլը, Ֆլանդրիայի կոմս Ռոբերտը, Բլուայի և Շարտրի կոմս Ստեֆանը և բազմաթիվ այլ հայտնի անուններ: Մեզ առավել հետաքրքիր է Իտալական Տարենտիայի իշխան Բոհեմունդը և նրա զարմիկ Տանկրեդը, որոնք իրենց հարավիտալական նորմանական զորաջոկատներով միացան խաչակրաց բանակներին: Վերջիններս խաչակիրների շարքերում մտցրեցին նոր հատկանիշ՝ թշնամություն Բյուզանդիայի նկատմամբ. Բոհեմունդը Դալմաթիայի առիթով վաղուց համարվում էր կայսրության

<sup>121</sup> Анна Комнина, указ. соч., с. 275-276.

ամենավտանգավոր հակառակորդը, իսկ նրա քաջությունը հիացմունք էր ներշնչում նույնիսկ բյուզանդական արքունիքում<sup>122</sup>:

Չնայած Ալեքսիոս կայսեր ներկայացուցիչ Տատիսը (Տատիկիոս), ուղեկցում էր խաչակիրներին և զգալի կշիռ ունեւ տեղի ուղղափառ քրիստոնյաների վրա<sup>123</sup>, Նիկեայի գրավումից հետո խաչակիրների շարքերում սկսեցին ուժեղանալ հակաբյուզանդական նկրտումները, իսկ Բոհեմունդն ընդհանրապես մի կողմ դնելով կայսերը տված վասալական երդումը<sup>124</sup> մտադիր էր ամեն գնով Մերձավոր Արևելքում ստեղծել սեփական իշխանություն:

Նիկեայից խաչակիրների մի մասը շարժվեց Հերակլեայից հյուսիս-արևելք, մյուս մասը Բալդուին Բուրգուն և Տանկրեդի ղեկավարությամբ իջավ Կիլիկիա<sup>125</sup> Դաշտային Կիլիկիայի խոշոր քաղաքներին տիրելու հարցը վերածելով Բալդուինի ու Տանկրեդի ներքին հակասությունների: Մասնավորապես Տարսոն քաղաքի հայ և հույն բնակիչները տրամադրված էին ընդունել Տանկրեդի գերակայությունը, սակայն Բալդուինի ուժային առավելությունը ստիպեց Տանկրեդին հեռանալ: Հայերի օգնությամբ նա մտավ նաև Ադանա և Մամիստիա, անցավ Անարզաբայով<sup>126</sup>, Մարաշով, որը դարձավ խաչակիրների կողմից ինքնակամ Բյուզանդիային հանձնված վերջին քաղաքը<sup>127</sup>: Ապա Բալդուինը Եդեսիայի կառավարիչ Թորոսի օգնությամբ 1098 թ. սկզբին մտավ Եդեսիա, հռչակվեց նրա ժառանգորդ, սակայն մի քանի օր անց մասնակցեց քաղաքում բարձրացված ապստամբությանը ու Թորոսի սպանությանը<sup>128</sup>:

<sup>122</sup>Նույն տեղում, էջ 362-363:

<sup>123</sup>Успенский Ф. И., История крестовых походов, с. 336-339.

<sup>124</sup>Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 272-274, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 127-128.

<sup>125</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 139-144, France J., op. cit., pp. 118-130, 167-169.

<sup>126</sup>Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 276-278, Каждан А. П., указ. соч., с. 131. Կիլիկիայով խաչակիրների անցման մանրամասեր տե՛ս Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 63-78, Стасюлевич М. М., История средних веков. Крестовые походы (1096-1291), 3-е изд., Москва, 2001, с. 138-152, Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 3, pp. 617-629.

<sup>127</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 292 հմմտ. Степаненко В. П., Шорохов А. В., К хронологии византийско-антиохийской борьбы за Равнинную Киликию. 1098-1108, АДСВ, 1983, вып. 20, с. 139-147.

<sup>128</sup>Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 278-282, Historia quae dicitur Gesta Dei per Francos, op. cit., p. 165, Alberti Aquensis, op. cit., pp. 354-355, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 156-159. Ապստամբությանը Բալդուինի մասնակցության մասին տե՛ս Степаненко В. П., “Совет двенадцати ишханов” и Бодуэн Фландрский. К сущности переворота в Эдессе (март 1098 г.), АДСВ, Свердловск, 1985, вып. 22, с. 82-92, Каждан А. П., указ. соч., с. 128-129, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 67-78:

Հաջորդ օրն իսկ Բալդուինը խախտելով Բյուզանդիային տրված երդումը՝ հիմնեց առաջին խաչակրաց պետությունն Արևելքում:

Խաչակիրները 1097 թ. հոկտեմբերին արդեն պաշարեցին Անտիոքը: Երկարաձգվող գործողությունների ժամանակ ասպետները ստանում էին տեղի հայերի և հույների օժանդակությունը<sup>129</sup>, որոնք որպես միջնորդներ մասնակցում էին նաև ֆրանկների ու Անտիոքի էմիրների միջև ծավալված բանակցություններին<sup>130</sup>:

Անտիոքի նշանակությունը խաչակիրների համար հսկայական էր. այստեղ էր առաջացել «Քրիստոնյա» բառը, որտեղ անձամբ քարոզչությամբ զբաղվել էր սուրբ Պետրոսն ու հիմնել եպիսկոպոսական առաջին աթոռը<sup>131</sup>: Թեև Եգիպտոսից օգնություն ստանալու անհնարինությունը, պարտությունները Բոհեմունդի և հույների զորաջոկատներից դժվարին կացության մեջ էին գցել Անտիոքի կառավարիչ Բագի-Սիանին<sup>132</sup>, այնուամենայնիվ, խաչակիրները մինչև 1098 թ. ամառը նկատելի հաջողության չհասան: Քաղաքին մոտեցած ավելի քան 70 հազար ձիերից այդ ժամանակ ողջ էին մնացել հազիվ 2 հազարը, հաճախակի էին դարձել փախուստների դեպքերը<sup>133</sup>: Հենց այս պայմաններում էլ Բոհեմունդն իրեն դրսևորեց որպես փայլուն դիվանագետ. Անտիոքում սեփական իշխանություն հիմնելը վաղուց դարձել էր նրա հիմնական նպատակը, որի իրականացմանը խանգարում էր Ալեքսիոս կայսեր զորավար Տատիսի ներկայությունը: Կեղծ մեղադրանքներով Բոհեմունդը Տատիսին հեռացրեց բանակից, ապա օգտագործելով Անտիոք շտապող ահռելի թյուրքական բանակի մոտենալու լուրը, կարողացավ համոզել խաչակրաց մյուս առաջնորդներին իրեն կարգել միացյալ բանակի հրամանատար ու Անտիոքի ապագա իշխան<sup>134</sup>:

<sup>129</sup>Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 278, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 102-103, Mutaftian Cloude, L'Arménie du Levant (XIe – XVe siècle), 1 vol., p. 59.

<sup>130</sup>Կարազյոզյան Գ. Լ., Հայաստանը և հայերը ֆրանսիական գրականության մեջ (XI-XIV դդ.), ՊԲՀ, № 1 (1982), էջ 117:

<sup>131</sup>Քասունի Ե. Հ., Խաչակիրները Անտիոքի դիմաց, Հայկազեան Հայագիտական հանդես (այսուհետ՝ ՀՀՀ), Պէյրուֆ, 1970, էջ 61:

<sup>132</sup>Մահմեդական աշխարհի մասնատվածությունը դյուրացնում էր ֆրանկների նվաճումները: Եգիպտոսի Ֆաթիմյանները ոչ միայն չէին օգնում Անտիոքի էմիրին, այլ պատրաստվում էին դաշինք կնքել խաչակիրների հետ, սակայն Երուսաղեմի նկատմամբ երկուստեք հավակնություններն ի չիք դարձրեցին այդ նախաձեռնությունը: Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., p. 205 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 102:

<sup>133</sup>Քասունի Ե. Հ., Խաչակիրները Անտիոքի դիմաց, ՀՀՀ, Պէյրուֆ, 1970, էջ 64, 65, Sydney Jones J., op. cit., pp. 11-15.

<sup>134</sup>Анна Комнина, указ. соч., с. 300-301, 574, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 213-215.

Բոհեմունդն ավելի վաղ պայմանավորվածության մեջ էր մտել Անտիոքի պարիսպներից մեկի հրամանատար իսլամադավան հայ Ֆիրուզի (Սմբատ Սպարապետի մոտ Գևորգ) հետ<sup>135</sup>: Վերջինիս օգնությամբ էլ Բոհեմունդի ջոկատը 1098 թ. հունիսի 2-ի գիշերը մտնում է քաղաք: Հաջորդ օրն Անտիոքին մոտենում է Քերբոդայի թյուրքական 300 հազարանոց բանակը, բայց խաչակիրները հունիսի 28-ին տեղի ունեցած ճակատամարտում ջարդում են մի քանի անգամ թվապես գերազանցող հակառակորդին<sup>136</sup>: Նման հանգամանքներում էլ Բուհեմունդը մյուս առաջնորդներին համոզում է իրեն հանձնել Անտիոքի կառավարումը:

Ասպետների միջև առկա տարաձայնությունները հարթելու համար 1098 թ. հոկտեմբեր-նոյեմբերին տեղի ունեցավ նոր խորհուրդ: Հետագա գործողությունների քննարկումից զատ, ժողովը որոշեց Անտիոքը թողնել Բոհեմունդի տնօրինությանը: Դրանից հետո Անտիոքի դուքսը շարժվում է հյուսիս և առանց որևէ դիմադրության նվաճում Տարսոնը, Մամեստիան, Ադանան, Անարզաբան ու Դաշտային Կիլիկիայի մյուս շրջանները, որտեղ նշանակվեցին Բոհեմունդին հավատարիմ ծառայողներ<sup>137</sup>: Այս հաղորդումը վկայում է այդ քաղաքների Անտիոքի տիրապետությանը խաղաղ ճանապարհով անցելու մասին<sup>138</sup>:

Բոհեմունդի հաջորդ խնդիրը դարձավ հարավային ուղղությամբ իր պետությանը սպառնացող որևէ իշխանության կազմավորումը թույլ չտալը: Այդ պատճառով նա Կիլիկիայից իջնում է հարավ և 1098 թ. դեկտեմբերին փորձում Ռայմունդ Թուլուզացուց խլել Անտիոքի ու Տրիպոլիի միջև գտնվող Մարի ամրոցը<sup>139</sup>, իսկ Բոհեմունդին աջակցող

---

<sup>135</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 106: Իբն-Կալանիսին նրան հիշատակում է Նայրուս անունով (Ибн-Каланиси, указ. соч., с. 35), իսկ 1098 թ. սեպտեմբերին պապ Ուրբանոս II-ին գրված նամակում նա ներկայացվում է որպես թյուրք (Доманин А. А., указ. соч., с. 387-390), որն ըստ էության կապված է նրա դավանանքի հետ, քանզի հավատափոխ հայերի մեջ մեծ թիվ էին կազմում հենց թյուրքական իսլամի հետևորդները, տե՛ս *Гордилевский В. А., Государство Сельджукидов Малой Азии, Избранные сочинения, т. 1, Москва, 1960, с. 198-199, 210*. Նրա մասին տե՛ս նաև Dédéyan G., *Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144)*, t. 3, pp. 765-778.

<sup>136</sup> Անտիոքի գրավման մանրամասներ տե՛ս Raimundi de Aguilers, *canonici Podiensis*, op. cit., pp. 253-257, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 227-229, 231-233, Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 282-286, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 108, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 74, Աբու-Լ-Ֆիդա, նշվ. աշխ., էջ 217-218, Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 230, Стасюлевич М. М., указ. соч., с. 153-172, Доманин А. А., указ. соч., с. 148-161, France J., op. cit., pp. 267-296.

<sup>137</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 279-280.

<sup>138</sup> Степаненко В. П., Шорохов А. В., К хронологии византийско-антиохийской борьбы за Равнинную Киликию. 1098-1108, АДСВ, 1983, вып. 20, с. 141.

<sup>139</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 292-293, 309-310.



Տանկրեդն ամեն ինչ անում էր Տրիպոլիի գրավումը Ռայմունդի կողմից կանխելու համար: Ավելին, Լաոդիկեան Ռայմունդ Թուլուզացու կողմից 1099 թ. սկզբին հանձնվել էր Անդրոնիկոս Յինցիլուկոսին, բայց Փոքր Ասիա հասած պիզանցիների ուժերով Բոհեմունդին հաջողվեց մինչև 1099 թ. սեպտեմբեր հաղթահարել հունական կայազորի դիմադրությունը քաղաքում<sup>140</sup>: Ռայմունդը ստիպված էր 1099 թ. մայիսին թողնել Տրիպոլիի մատույցները և մասնակցել Երուսաղեմի ազատագրմանը:

Երուսաղեմը գրավվեց 40 օրվա պաշարումից հետո՝ 1099 թ. հուլիսի 15-ին: Ըստ Մատթեոս Ուռհայեցու սպանվածների թիվն անցնում էր 65 հազարից<sup>141</sup>: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ այդ հաջողությունները խաղաղություն չէին բերելու արևելյան քրիստոնյաներին և այն միայն թեժ պայքարի սկիզբն էր: Մահմեդականներին դիմակայելու համար օրակարգ բարձրացավ ազատագրված վայրերում ամուր պետական միավորներ կազմակերպելու խնդիրը: Խաչակրաց միավորները նեղ շերտով տարածվում էին Եփրատի ակունքներից մինչև Սինայի թեարկղզի՝ զբաղեցնելով արևելյան Միջերկրածովի ողջ ծովեզերքը: Նրանք իրարից տարբերվում էին էթնո-սոցիալական կազմով, պետական կառուցվածքով, ունեին բարդ պետաիրավական փոխհարաբերությունների համակարգ:

Բալդուին Բուրգցու կողմից 1098 թ. մարտին հիմնված Եդեսիայի կոմսության գլխավոր յուրահատկությունն իշխանության մեջ տեղաբնիկ քրիստոնյաների լայն ներգրավվածությունն էր: Պետությունը հաճախ անվանում են ֆրանկո – հայկական, քանի որ երկրամասի բնակչության հիմնական մասը հայեր էին: Ասվածի ցայտուն արտահայտությունը ֆրանկ կոմսերի ու հայ իշխանադուստրերի մի շարք ամուսնություններն են<sup>142</sup>: Հայ ավատները երկար ժամանակ պահպանեցին իրենց

<sup>140</sup> Анна Комнина, указ. соч., с. 308-309, 314-317, 578-579, 580 հմմտ. Успенский Ф. И., История крестовых походов, с. 346, Lilie Ralph-Johannes, Byzantium and the Crusader States 1096-1204, New York, 1993, pp. 259-274.

<sup>141</sup> Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 286-288 հմմտ. Սմբատյա Սպարապետի Տարեգիրք, էջ 110-111: Մանրամասներ տե՛ս Стасюлевич М. М., указ. соч., с. 172-208, Кацир Я., указ. соч., с. 34-44, France J., op. cit., pp. 325-366.

<sup>142</sup> Բալդուինն ամուսնացավ հայ իշխանուհի Արդայի հետ, որի ծագումը աղբյուրներից ոչ մեկում նշված չէ: Այսօր ավելի հավանական է համարվում Արդայի Սամոսատի իշխան Դավթուկի դուստրը լինելու տարբերակը: Արդայի մասին տե՛ս Мутафян К. З., Королевы Иерусалима, стат. 5.11.2007, URL: <http://www.aniv.ru/archive/2/korolevy-ierusalima-klod-mutafjan/>, (25.06.2013), Dédéyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, t. 2, pp. 1036-1041, 1210-1217, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 1-4 (1961 թ.), էջ 83:

գորաջոկատները, որոնց օգնությունը ստանալու համար նրանց սիրաշահում էին և՛ Եդեսիայի կոմսերը, և՛ Անտիոքի դքսերը: Այնուամենայնիվ, հայկական իշխանությունների մեծ մասն աստիճանաբար միավորվեցին կոմսությանը: Դրա հետևանքով պետության սահմաններն ընդլայնվեցին, 1130-ական թթ. հյուսիսում իր մեջ առնելով Մալաթիան (Մելիտինե), արևելքում Մարաշի ողջ շրջանը: Հարավում կոմսության սահմանները հարելով Խարրանին՝ ձգվում էին Ազազի բերդից մինչև Մարդին ամրոց, իսկ արևմուտքում դրանք հարում էին Ամիդ քաղաքին:

Կարևոր հանգամանք էր նաև Երուսաղեմի թագավորների հետ Եդեսիայի առաջին կառավարիչների արյունակցական կապը: Մեկ ընտանիքի ձեռքում երկու պետությունների ղեկավարման կենտրոնացումը հնարավորություն էր տալիս ճնշում գործադրել ընդդիմադիր իշխանների վրա: Այդ մասին են վկայում Անտիոքի դքսության դեմ կայացված որոշումներն ու Երուսաղեմի թագավորական գահը Եդեսիայի կոմսերին հաջորդաբար փոխանցվելու փաստերը: Անտիոքի հետ հակասություններն ի վերջո վերաճեցին թշնամության: Արդյունքում, Եդեսիան չստանալով անհրաժեշտ օգնություն, 1144 թ. ընկավ Մոսուլի աթաբեկի հարվածներից<sup>143</sup>:

Անտիոքի գրավումից հետո առաջնային դարձավ Կոստանդնուպոլսի հետ իրավական հարաբերությունների կարգավորումը: 1098 թ. հուլիսի սկզբին տեղի ունեցավ խոշոր բարոնների ժողով, որում Ռայմունդ Թուլուզացին պահանջում էր քաղաքը հանձնել Բյուզանդիային՝ Ալեքսիոս կայսերը տրված երդմանը համապատասխան: Պայմանավորվածություն ձեռք բերելու նպատակով Կոստանդնուպոլիս են ուղարկվում Հյուգո Վերմանդուան, ապա Ստեֆան Բլուան, բայց անհայտ պատճառներով նրանք հետ չեն վերադառնում, իսկ կայսրը հրաժարվում է միանալ լատինական բանակին<sup>144</sup>: Նման պայմաններում Բոհեմունդ Տարենտացին հռչակվեց Անտիոքի պրինց: Հայկական աղբյուրները ևս Անտիոքի իշխաններին առավելապես հիշատակում են «պրինձ-բրինձ» ձևով, սակայն բյուզանդական աղբյուրները նրանց «դուքս» տիտղոսով են նշում: Այստեղից էլ ժամանակակից հայ և օտարալեզու պատմագրությունում խաչակրաց այդ միավորն անվանվում է դքսություն,

<sup>143</sup>Եդեսիայի կոմսության մասին տե՛ս Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 36-54:

<sup>144</sup> France J., op. cit., pp. 297-300, Riley-Smith J., The First Crusade and the idea of crusading, London-New York, 2003, p. 125.

թեև օգտագործվում են իշխանություն ու իշխանապետություն տարբերակները ևս: Վերջիններս համապատասխանում են ռուսերեն «княжество-իշխանություն» հասկացությանը: Ինչպես տեսնում ենք, բացի պրինցից մյուսները փոխառություններ են, և քանի որ «պրինցիպատ» ուղիղ ձևը գործածական չէ, մենք նախընտրում ենք «դքսություն» ձևը՝ լայնորեն կիրառելով նաև «իշխանություն» տարբերակը:

Համադրելով տեղեկությունները՝ մենք հիմք ենք ստանում պնդելու, որ դքսության խոշոր քաղաքներում, հատկապես Անտիոքում, բնակչության հիմնական մասն ուղղափառ հույներ ու հայեր էին: Հունական ազդեցությունը պահպանվեց պետության գոյության ողջ ընթացքում, որի մասին վկայում են XII դ. վերջին և XIII դ. սկզբին Անտիոքում քաղաքագլխի պաշտոնը հույն Թեոդորոսի ձեռքում գտնվելու փաստը և հույն ուղղափառ պատրիարքական աթոռի շուրջ պարբերաբար ծավալվող իրադարձությունները<sup>145</sup>: Նախ Բոհեմունդը մոտ երկու տարի չհամարձակվեց այն փոխարինել լատինական աթոռով, որն ըստ էության Անտիոքի հույների ըմբոստությունից խուսափելու նկատառումով էր արվում. մյուս վայրերում հունական եկեղեցու իրավունքներն անհապաղ հանձնվում էին կաթոլիկներին՝ գործընթացը վերածելով խաչակրաց առաջնորդների ներքին մրցակցության: Օրինակ, Երուսաղեմում Բոհեմունդը հասավ նրան, որ 1099 թ. դեկտեմբերի 21-ին լատին պատրիարք կարգվի իրեն հավատարիմ Դագոբերտը<sup>146</sup>:

Ուղղափառ եկեղեցու իրավունքների սահմանափակման հետ Բյուզանդիայում երբեք չհամակերպվեցին: Դեպի Արևելք կատարված բոլոր հունական արշավանքները պարտադիր հետապնդում էին դրանց վերականգնման հստակ ծրագիր, քանզի կայսրության համար Արևելքում հաջողության միակ գրավականը համարվում էր Անտիոքի հնազանդեցումն ու հունական ծիսակարգի վերականգնումը: Նույնիսկ Բյուզանդիայի թուլացումից և XII դ. 70-ական թթ. տարածաշրջանից հեռանալուց հետո, Անտիոքի հույն համայնքը տարբեր միջոցներով կարողացավ վերականգնել իր եկեղեցու արտոնությունները: Անտիոքը Մերձավոր Արևելքում Կոստանդնուպոլսի ազդեցություն խորհրդանշել էր համարվում, ուստի հատկապես այնտեղ կայսրության

<sup>145</sup> Усама ибн Мункиз, указ. соч., с. 217. Հույների ազդեցության մասին տե՛ս Cheynet Jan-C., *Le sceau de Thierry de Barneville, duc d'Antioche, Revue numismatique, 6-e série, t. 26, Paris, 1984, p. 227.*

<sup>146</sup> Доманин А. А., указ. соч., с. 181-182, Кацир Я., указ. соч., с. 60-62, Попов А., Латинская Иерусалимская патриархия эпохи крестоносцев, ч. 2, СПб, 1903, с. 3-5.

կարգավիճակն ու պատրիարքական աթոռի պատկանելության հարցերը դարձան Լատին Արևելքի հետ Բյուզանդիայի փոխհարաբերությունների մշտական փորձաքարը:

Անտիոքի հայկական ու ասորական համայնքները հակակշիռ էին հանդիսանում հույներին: Այդ գործոնը փորձում էին բանեցնել արդեն առաջին կառավարիչները, սակայն դա լրջագույն հանգամանքի վերածվեց Կիլիկյան Հայաստանի հզորացման և նրա կողմից Անտիոքի նկատմամբ հավակնություններ ցուցաբերելու ընթացքում: XII դ. վերջին և XIII դ. սկզբին Անտիոքի ժառանգության համար պայքարում հայերն ու ասորիները միանշանակ կողմնորոշվեցին դեպի Կիլիկիա՝ ակնկալելով լայն իրավունքների ձեռքբերումներ: Մերձքաղաքային շրջաններում պահպանվում էին նաև մահմեդական բնակավայրեր, որոնց մեջ կային և՛ սունի, և՛ շիա, և՛ տարաբնույթ իսլամական աղանդավորական համայնքներ: Ամեն անգամ կողմնորոշվելով դեպի այս կամ այն ուժը՝ դրանք որոշակի բեկում էին դեպքերի զարգացումները:

Անտիոքի լատին բնակչության կազմը նույնպես խայտաբղետ էր: Դքսության հիմնադիրները հարավիտալական նորմաններն էին, սակայն արդեն XII դ. 30-ական թթ. արքունիքն արագորեն ֆրանսիականացվում է: Այս միտումը կապված էր պետական գործերում Տաճարական ու Հիվանդախնամ միաբանների դերի մեծացման հետ, որոնց շարքերը համալրված էին մեծամասամբ ֆրանսիացի ասպետներով: Միջերկրածովում իտալական վաճառականների ակտիվացնամը զուգահեռ, աճում է նաև ջենովացիների, վենետիկցիների և պիզացիների թիվը<sup>147</sup>:

Նման հակոտնյա էթնիկական խճանկարի վերահսկողության անհրաժեշտությունը խթանեց հասարակական հարաբերությունները կարգավորող նորմատիվային բազայի՝ «Անտիոքի ասիզների», ի հայտ գալուն: Ասիզները բաղկացած էին երկու գլխից: Առաջին գլուխը ներկայացնում էր 17 հոդված և կոչվում էր «սենյորի ու վասալների մասին»: Նրանցում առավելապես խոսվում էր սենյորի հանդեպ ստորականների պարտավորությունների մասին: Առկա էին նաև վասալների անձնական վեճերը լուծող դրույթներ: Դատարանի դերում հանդես էր գալիս սենյորի գլխավորությամբ հրավիրված խորհուրդը<sup>148</sup>:

<sup>147</sup> Grousset R., L'Empire du Levant: Histoire de la Question d'Orient, p. 301-311.

<sup>148</sup> Ассизы Антиохийские, пер. Паповяна А., РУ, Еրևան, 1958, № 4, էջ 331-352.

Երկրորդ բաժինը կրում էր «քաղաքացիների ասիզներ» անվանումը՝ կարգավորելով երրորդ դասի հարաբերությունները: Հատկանշական է, որ այն սկսվում էր «Անտիոքի քաղաքացիների ասիզներ, որոնցից նրանք օգտվում են համաձայն իրենց ավանդույթների» նախադասությամբ և տարանջատում չէր կատարվում ըստ կրոնական կամ էթնիկական սկզբունքի<sup>149</sup>: Իհարկե պատժամիջոցներից, չափ ու կշռի միավորներից, կարելի է եզրակացնել, որ ասիզներն ազդված էին արևմտյան ֆեոդալական իրավունքից, որը դժվարեցնում էր դրանց կիրառությունը Արևելքում:

«Անտիոքի ասիզների» առկայությունն ընգծում էր դքսության կիսանկախ կարգավիճակը, քանի որ այնտեղ գործածական չէին թագավորության գլխավոր օրենքները՝ «Երուսաղեմի ասիզները»: Ճիշտ է, Անտիոքի ասիզները գրվել են XIII դ. 20-ական թթ. ոչ շուտ, սակայն մինչ այդ էլ դքսությունն օժտված էր ներքին ու արտաքին ինքնավարությամբ: Իրերի նման դասավորությունը թույլ է տալիս պնդելու, որ ըստ տիպի Անտիոքի դքսությունն աշխարհիկ և հոգևոր մեծատունների խորհուրդ ունեցող ֆեոդալական միապետություն էր: Գերագույն իշխանությունը պատկանում էր դքսին, սակայն կարևորագույն հարցերում էական նշանակություն ուներ խորհրդի դիրքորոշումը: Կրոնական գործերը վարում էր լատին պատրիարքը, որը ենթակա էր Հռոմի կուրիային: Լատին եկեղեցու արտոնյալ կարգավիճակն, այնուամենայնիվ, թույլ չի տալիս դքսությունը համարել թեոկրատական պետություն, քանի որ ասիզները քաղաքացիական, այլ ոչ թե կրոնական նորմերի ժողովածու էր:

Արևմուտքի հետ փոխհարաբերությունները Անտիոքն իրականացնում էր Լաթակիայի (Լաոդիկեան) և Ալեքսանդրեթ նավահանգիստների վրայով: Այս քաղաքների միջև ընկած Միջերկրականի ափն էլ կազմում էր դքսության արևմտյան սահմանը: Ալեքսանդրեթի պատկանելությունը XII դ. 90-ական թթ. վիճարկում էր նաև Կիլիկյան Հայաստանը՝ մեծացնելով Լաթակիայի կարևորությունը: Այն հսկայական դեր ուներ ոչ միայն Անտիոքի, այլև Տրիպոլիի կոմսության համար, ուստի Անտիոքի անկման նախօրյակին դքսության կառավարիչները գերադասեցին կորցնել երկրի մայրաքաղաքը, բայց պահպանել Լաթակիան: Արևելյան կողմում դքսության սահմաններն ավելի անհանգիստ էին ու մշտապես ենթարկվել են փոփոխությունների:

---

<sup>149</sup> Նույն տեղում, էջ 354:

Մինչև XII դ. 80-ական թթ. դրանք գլխավորապես ձգվում էին Ամանոսի լեռների երկայնքով: Հյուսիս-արևելքում այն սկզբնավորվում էր Օրոնտ գետի ափին գտնվող Ինաբ ամրոցից, ապա իջնելով հարավ, անցնում էր Հալեպից մոտ 40-50 կմ. հեռավորությամբ՝ հասնելով Մաարատ Ալ-Նուման բերդ: Իր մեջ ներառելով Կաֆարթաբ և Ապամեա ամրոցները՝ մահմեդական Շեյզարի, Մասյաֆի հարևանությամբ իշխանության արևելյան գոտին ավարտվում էր:

Հարավում Անտիոքը բավական նեղ գծով սահմանակից էր Տրիպոլիի կոմսությանը, որը վերահսկում էր նշանավոր Մարգատ ամրոցը: Խաչակրաց մեկ այլ պետության՝ Եդեսիայի կոմսության հետ, դքսությունը հյուսիս-արևելքում (Ճկերի լեռների հատվածում) նույնպես ուներ շփման գիծ, սակայն երկուստեք հավակնությունները Մարաշի շրջանի նկատմամբ թույլ չէին տալիս թյուրքերի դեմ ընդհանուր պաշտպանական ճակատ ստեղծել:

Կիլիկիան Անտիոքին կապող հյուսիսային և հյուսիս-արևմտյան ուղղությունները դարձան երկու երկրների միջև լուրջ տարաձայնությունների պատճառ: Այստեղ դքսությունն իր նկրտումներում բախվում էր Բյուզանդիայի ու հայկական իշխանությունների դիմադրությանը: Դաշտային Կիլիկիայի համար ծավալված եռակողմ պայքարը փոփոխակի հաջողություններով շարունակվեց մոտ հարյուր տարի՝ ավարտվելով վիճելի տարածքների վրա հայկական իշխանության հաստատմամբ: Այնուհետև հակամարտություն ծավալվեց Սև լեռների և Կիլիկյան դռների շրջանում առկա բերդերի՝ Դարպասակի, Բաղրասի, Ռոշե Գիյոմի համար: Մի կողմից դրանք հանդիսանում էին Անտիոքի հյուսիսային վահանը, մյուս կողմից՝ հնարավորություն ընձեռում դեպի Կիլիկիա տարածվելուն: Խնդիրը մինչև վերջ մնաց անլուծելի, որը Անտիոքի վերջնական թուլացումից հետո շարունակվեց դքսության դաշնակից Տաճարական միաբանների հետ<sup>150</sup>: Մի շարք դեպքերում պատերազմի վտանգը կանխվեց միայն Հռոմի պապերի ու Երուսաղեմի թագավորների միջնորդությամբ:

Երուսաղեմի գրավմանը հաջորդած երկար քննարկումների արդյունքում որոշվեց Սուրբ քաղաքի թագավոր կարգել Գոդֆրիդ Բուլոնացուն, որը հռչակվեց «Տիրոջ

<sup>150</sup> Անտիոքի դքսության աշխարհագրության մասին մանրամասներ տե՛ս Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 127-176, Deschamps P., Les Châteaux des Croisés en Terre Sainte, t. 3, La Défense du comté de Tripoli et la principauté d'Antioche, Paris, 1973.

գերեզմանի պահապան»՝ չցանկանալով թագադրվել մի վայրում, ուր Քրիստոսն արդեն կրել էր փշե պսակ<sup>151</sup>: Գահի հանձնման նման եղանակը հետագայում առիթ տվեց խոշոր բարոններին վիճարկել թագի ժառանգական փոխանցման կարգը, որը սրվում էր գահակալի անժառանգության դեպքերում<sup>152</sup>: Գոդֆրիդը մահացավ մեկ տարի անց և Երուսաղեմի գահը հանձնվեց նրա եղբորը՝ Եդեսիայի կոմս Բալդուին I-ին (1100-1118): Ընդունելով արդեն «թագավորի» տիտղոս՝ նա մեծ նվաճումների հասավ: Բալդուինը հյուսիսում գրավեց Ակրան, Սիդոնը, Բեյրութը, հարավում ու հարավ-արևելքում ամրապնդեց դիրքերը Գալիլեայի, ապա անդրհորդանանի շրջանում: Նշանակալի հաջողություններ գրանցվեցին խաչակրաց պետությունների վրա Երուսաղեմի գերիշխանությունը ապահովելու ուղղությամբ: Այսպես, կանխվեց Գալիլեայում ևս մեկ անջատ իշխանություն կազմակերպելու Տանկրեդի փորձերը: 1100 թ. նրան հանձնվեց Անտիոքի ժամանակավոր կառավարումը Բոհեմունդի գերության ընթացքում:

Հյուսիսում թագավորությունը սահմանակից էր Տրիպոլիի կոմսությանը, իսկ արևելքում առավելապես ձգվում էր Հորդանան գետի երկայնքով մինչև Ակաբայի ծոց: Անդրհորդանանում լատինական թագավորությունը ներկայացված էր Գալիլեյան (Տիվերիադա) լճի ու Մեռյալ ծովից արևելք ընկած պաշտպանական բերդամրոցներով, որոնցից նշանավոր էին Կորսին, Բեյսանը, Կրակը, Մոներեալը, Պետրան:

1187 թ. Երուսաղեմը նորից հայտնվեց մահմեդականների հսկողության տակ, որից հետո թագավորության մայրաքաղաքը տեղափոխվեց Ակրա: 1224 թ. Սրբազան Հռոմեական Կայսրության կայսր Ֆրիդրիխ II-ը (1220-1250 թթ.) կարճ ժամանակահատվածով (մինչև 1244 թ.) Սուրբ քաղաքը վերադարձրեց քրիստոնյաներին: Ցավոք դա չնպաստեց Արևելքում լատինական միավորների պառակտվածության հաղթահարմանը և 1291 թ. Ակրայի անկումը վերջ դրեց խաչակրաց թագավորության գոյությանը:

Երկրի ներքին դրության ամենամտահոգիչ հարցը ժողովրդագրական իրավիճակն էր: Ֆրանկների թվաքանակը տարածքի համեմատությամբ այստեղ ավելի սակավ էր, քան մյուս պետություններում: Եվրոպացիների շարժը դեպի արևելք շահագրգռելու նպատակով անըդիատ ընդլայնվում էին վաճառական քաղաքների

<sup>151</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 367-370, Ришар Ж., указ. соч., с. 81-87.

<sup>152</sup> Додю Г., указ. соч., с. 101-112.

ներկայացուցիչների արտոնությունները, նրանց շնորհվում էին ամբողջ թաղամասեր, որի հետևանքով առաջացավ քաղաքացիների առանձին դասակարգ: Վերջիններս ազատված էին զինվորական պարտականություններից և քիչ էին նպաստում խնդրի լուծմանը<sup>153</sup>: Նրանց մասին Ֆուլխերի Շարտրը գրում է. «Մենք, Արևմուտքի բնակիչներս վերածվել ենք Արևելքի բնակիչների: Հռոմեացին, ֆրանկն այստեղ դարձել են գալիլեացի ու պաղեստինցի, Ռեյմսի, Շարտրի ապրողն իրեն տեսնում է որպես Ակրայի կամ Անտիոքի քաղաքացի»<sup>154</sup>:

Երուսաղեմի թագավորության գյուղական բնակչությունը գրեթե ամբողջությամբ կազմված էր մահմեդականներից ու փոքրաթիվ արաբ քրիստոնյաներից: Այդ պատճառով գյուղատնտեսության մեջ իկթայի համակարգը մնաց հողաբաժանման հիմնական եղանակը: Մահմեդականների, հրեաների, մասամբ նույնիսկ տեղացի ուղղափառ քրիստոնյաների իրավունքները սահմանափակվում էին քաղաքներում, իսկ գյուղերում նրանք պահպանեցին նախկին կարգավիճակը, սեփական դատական ավանդույթները՝ ճիշտ է, համայնքի ղեկավարները դարձան թագավորի վասալներ<sup>155</sup>: Լատին բարոնների մեծ մասը, թեև անվանապես տիրում էր ընդարձակ հողերի, սակայն նախընտրում էր ապրել Երուսաղեմում և մեծ քաղաքներում, քանի որ շահութաբեր գյուղատնտեսության համար պայմաններ չկային: Դա լրջագույն դժվարությունների էր հանգեցնում բանակի համալրման ոլորտում, որը դրդում էր արքունիքին անըդիստ խստացնելու պատժամիջոցներն ավատատերերի նկատմամբ: Ավատներին կցված գլխավոր պարտականությունը զինվորական ծառայությունն էր, ուստի դրանք փոխանցվում էին ընտանիքի ավագ որդիներին, մյուս դեպքերում (վաճառք, անժառանգության հետևանքով կանանց կտակելը, նվիրատվություն, որպես ամուսնական օժիտ հանձնելը) պարտադիր էր թագավորի համաձայնությունը: Որոշակիորեն զինվորագրման աղբյուր էին հանդիսանում Արևմուտքից եկած ասպետները, ուղտավորները, որոնց հոսքը ժամանակի ընթացքում աստիճանաբար քչացավ՝ էլ ավելի սրելով իրավիճակը<sup>156</sup>: Դա ստիպում էր Երուսաղեմի թագավորներին

<sup>153</sup> Ришар Ж., указ. соч., с. 140-149, Додю Г., указ. соч., с. 257-273.

<sup>154</sup> Foulcher de Chartres, op. cit., URL://<http://www.templiers.net/foulcher-de-chartres/>, (21.09.2013).

<sup>155</sup> Ришар Ж., указ. соч., с. 150-160 հմմտ. Ассизы Иерусалимского королевства, Стасюлевич М. М., указ. соч., с. 566-567.

<sup>156</sup> Додю Г., указ. соч., с. 175-189, Ришар Ж., указ. соч., с. 89-93, 103-114.



երբեմն դիմելու անհավանական միջոցների. դեռևս Բալդուին I-ը փորձեց Երուսաղեմում վերաբնակեցնել արևելյան քրիստոնյաներ Անդրիորդանանից, ավելի ուշ՝ 1167 թ., Ամորի I-ը (1162-1173 թթ.) բանակցություններ էր վարում Կիլիկիայի Թորոս II իշխանի հետ (1145-1169 թթ.) 30 հազար հայերի Կիլիկիայից Պաղեստին գաղթեցնելու վերաբերյալ, բայց առաջարկվող պայմանները Թորոսին չեն գոհացնում և նա հրաժարվում է այդ ծրագրից<sup>157</sup>: Զինական ուժի պակասը լրացնում էին նաև հոգևորասպետական միաբանությունների անդամները, որոնք պարզևների դիմաց պատրաստ էին հեռավոր վայրերում ծառայություն մատուցել: Սակայն նրանք ենթարկվում էին պապին ու վասալական կախվածություն չունեին թագավորից, ուստի զորքի համալրումը մինչև վերջ մնաց թագավորության օրակարգում:

Խոշոր ավատատերերի կենտրոնացումը Երուսաղեմում մեծացնում էր նրանց անմիջական ազդեցությունը թագավորական արքունիքի վրա: Նրանք եպիսկոպոսների և միաբանությունների մագիստրոսների հետ կազմում էին երկրի Բարձրագույն Խորհուրդը, որի նախագահին ու գլխավոր դատավորը թագավորն էր: Այն կայացնում էր գահակալի ընտրությունը, որոշում հարկային, զինվորական և այլ կարևոր հարցեր<sup>158</sup>: Բնակչության շրջանում օրինականություն հաստատելու նպատակով գործում էր նաև թագավորի կողմից նշանակվող Քաղաքացիների Պալատ<sup>159</sup>: Նման ժողովներ կաին նաև Անտիոքում, Եդեսիայում, Տրիպոլիում:

Դեպքերի նկարագրությունից պարզ է դառնում, որ առաջին խաչակրաց առաջնորդներից միայն Ռայմունդ Սեն Ժիլն արշավանքի ավարտին չկարողացավ Արևելքում հիմնել սեփական իշխանությունը: Այդ գիտակցումն ի վերջո հաղթեց Կոստանդնուպոլսի երդմանը հավատարիմ մնալու ձգտումներին և արդեն 1104 թ. նա ձեռնամուխ եղավ նոր միավորի կազմակերպմանը՝ նախապես հավակնելով իր հսկողության տակ գտնվող Տարտուսի ու Ջիբեյլի միջև ընկած տարածքին: Երկրամասի գլխավոր նավահանգիստ Տրիպոլիում իշխում էր արաբ Աբու Ալի Ամմարին (1099-1108 թթ.): Իսլամական էմիրություններից Տրիպոլի եկող օգնությունը կանխելու համար Ռայմունդը քաղաքից մոտ 3 կմ. արևելք ընկած լեռան վրա, որն անվանվեց

<sup>157</sup> Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, p. 27-30.

<sup>158</sup> Ассизы Иерусалимского королевства, Стасюлевич М. М., указ. соч., с. 564-573.

<sup>159</sup> Նույն տեղում, էջ 574-577:

Ուխտավորների սար, կառուցում է ամրոց: Չնայած նախապատրաստական աշխատանքներին, նա չհասցրեց գրավել Տրիպոլին. Ռայմունդը զոհվեց 1105 թ. սկզբին տեղի ունեցած գրոհներից մեկում:

Դա առիթ հանդիսացավ Ռայմունդի զարմիկ Գիյոմ Ժուրդենի ու նրա որդի Բերտրանի միջև գահակալական կռիվների ծավալման համար: Տանկրեդը պաշտպանում էր Ժուրդենի թեկնածությունը՝ հուսալով ազդեցություն տարածել Անտիոքի հարավում ստեղծվող խաչակրաց պետության վրա: Բերտրանը ստիպված էր վասալական երդում տալ Բալդուին I-ին և նրա աջակցությամբ ստանալ հոր ժառանգության մեծ մասը: Նրան հանձնվեց նաև 1109 թ. հուլիսին գրավված Տրիպոլին, իսկ Ժուրդենի անսպասելի մահը վերացրեց երկրի մասնատման վտանգը<sup>160</sup>:

Քաղաքական կայունությունը հնարավորություն տվեց ընդարձակել կոմսության տարածքը: Հուսիս-արևելքում սահմանը մոտեցավ Համային, արևելքում Հոմսին, որտեղից Բաալբեկի էմիրության արևմտյան շրջանների հարևանությամբ միանում էր Երուսաղեմի թագավորությանը: Այս գծի պաշտպանության նպատակով սահմանը պատվեց այնպիսի նշանավոր ամրոցների ամբողջ ցանցով, ինչպիսիք էին Մոնֆերանը (Բարրի), Կրակ դե Շեվալյեն, Լակումը, Մոնտանեն, Մոնտրեն:

Հյուսիսային հարևան Անտիոքի դքսության հետ սկզբնական տարածայնությունները հարթելով՝ Տրիպոլիի կոմսերը փորձեցին թոթափել վասալական կախվածությունը Երուսաղեմից: Կոմս Պոնսը (1112-1137 թթ.) նույնիսկ մտադիր էր դաշինքի գնալ Անտիոքի հետ՝ ճանաչելով Անտիոքի լատին պատրիարքի իրավունքներն իր իշխանության կրոնական գործերում, բայց Երուսաղեմի թագավորների դիմադրությունը թույլ չտվեց դա անել: Երուսաղեմի անկումից շատ չանցած, անժառանգ կոմս Ռայմունդ III-ը (1152-1187 թթ.) գահը հանձնեց Անտիոքի խնամակալությանը: Հետագայում Տրիպոլին Անտիոքի դքսերի համար ձեռք բերեց մեծ կարևորություն՝ Անտիոքի կորստից հետո դառնալով նրանց նստավայր: Քաղաքը վերջնականապես ընկավ 1289 թ. Եգիպտոսի սուլթանության հարվածների նորքո:

Խաչակրաց թագավորության ամենափոքր միավորը համեմատաբար ուներ ավելի խիտ բերդամրոցների համակարգ իր լատինական կայազորով: Այն կապված էր

<sup>160</sup>Տրիպոլիի կոմսության մասին տե՛ս Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 98-113:

ոչ միայն կոմսության չափերի, այլ իտալական քաղաքների ու հոգևորասպետական միաբանությունների չափազանց ակտիվ գործունեության հետ: Տրիպոլիի գրավմանը մասնակցելու համար, քաղաքային հողերի 1/4 մասը տրվեց ջենովացիներին, շնորհներ ստացան նաև Պրովանսի վաճառականները: Ավելի ուշ թաղամասեր հատկացվեցին նրանց հակառակորդ քաղաքներին: Ինչ վերաբերվում է ասպետական միաբանություններին, ապա արդեն XII դ. կեսերին կոմսության ամրոցների մեծ մասին տիրում էին Հիվանդախնամներն ու Տաճարականները: Մի կողմից նրանք ապահովում էին երկրի անվտանգությունը, մյուս կողմից՝ բերդերի պատկանելության շուրջ մշտապես աճող հակասությունները խարխլում էին միասնության գաղափարը: Այս առումով հատկանշական է կոսության գոյության վերջին շրջանը, երբ մամելուքների չմարող ասպատակությունների պայմաններում իշխանության ներսում ծավալվել էր քաղաքացիական պատերազմ նրանց միջև:

Մարդկային ռեսուրսների պակասը փոխհատուցվում էր ընդհանուր շահի վրա հիմնված փոխօգնության շնորհիվ: Այն առավել ցայտուն դրսևորվեց Երուսաղեմի ու Տրիպոլիի կոմսության փոխհարաբերություններում՝ պայմանավորված Երուսաղեմի հետ անմիջական հարևանությամբ և Բալդուին I-ին կոմս Բերտրանի տված վասալական երդմամբ: Անտիոքի դքսության, Եդեսիայի կոմսության պարագայում լատին թագավորները նմանվում էին քրիստոնեական դաշնության պրեզիդենտի. նրանց հասցված օգնությունը, ռեզենտության (խնամակալության) մի քանի դեպքերը, աղբյուրներում անվանվում է «հայրական խնամք», այլ ոչ սյուզերենի պարտավորությունների կատարում: Այս երեք իշխաններն ավելի շատ «հավատարիմներ» էին, քան «վասալներ», Անտիոքի ու Եդեսիայի կառավարիչներն իրավական տեսանկյունից ընդհանրապես ենթակա չէին թագավորին, իրենց պետություններում իրականացնում էին գերագույն սյուզերենի գործառույթներ: Նրանք ունեին սեփական արքունիք, կարևոր հարցերը որոշող ազնվականների և հոգևորականների խորհուրդ, Անտիոքում կիրառվում էին «Անտիոքի ասիզները», որն ավելի մեծ իրավունքներ էր վերապահում դքսին, քան «Երուսաղեմի ասիզները»

թագավորին<sup>161</sup>: Այնուամենայնիվ, թագավորական տիտղոսը, Երուսաղեմի առաջնության ընկալումն ու մշտական աջակցությունը թույլ տվեցին թագավորի գլխավորությամբ կառուցել հիերարխիկ համակարգ<sup>162</sup>, որն ավելի շոշոփելի էր թագավորության առաջին շրջանում (1099-1187 թթ.), երբ թագավորի ինստիտուտի հեղինակությունը մեծ էր: Այսպես, 1109 թ. հունիսին Տրիպոլիի մոտ տեղի ունեցած ժողովում Բալդուին I-ինը հաշտեցրեց իրար դեմ պատերազմող Անտիոքի ու Եդեսիայի իշխաններին, գահակալական պայքարի մեջ ներքաշված Տրիպոլիի բարոններին, և ընդհանուր ուժերով նրանք գրավեցին Տրիպոլին<sup>163</sup>:

Այսպիսով, X-XI դդ. Մերձավորարևելյան միջավայրը ներկայանում էր որպես բազմալեզու, տարակրոն ժողովուրդների տարածաշրջան, որին հատուկ էր իրադարձությունների զարգացման աննախադեպ արագությունն ու հակասականությունը: 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդական կայսրության պարտությունից հետո նրա արևելյան տարածքները վերածվեցին թյուրքական ասպատակությունների թատերաբեմի: Ասորիքում և Կիլիկիայում ապրող քրիստոնյա բնակչությունը, հայտնվելով այլադավան նվաճողների տիրապետության տակ, ստիպված էր կա՛մ լքել հայրենիքը կա՛մ հարմարվել եկվորների կեցությանը՝ սպասելով դրանից ազատվելու հարմար պահի: Նման հույսեր արթնացրեցին Արևելք կազմակերպված խաչակրաց արշավանքները, սակայն նվաճված հողերի հետագա ճակատագրի վերաբերյալ նրանց շարքերում առկա տարածայնություններն ի վերջո փոխեցին խաչակրության առաքելության իրական նպատակը՝ առաջնային դարձնելով անկախ լատինական պետություններ հիմնելու գաղափարը:

## **§ 2. Պայքար Դաշտային Կիլիկիայի համար**

1097-1098 թթ. Տանկրեդի ու Բոհեմունդի հաջողությունները նորմաններին դարձրին Տարսունի, Ադանայի, Մամեստիայի, Անարզաբայի միակ տերը: Այդ

<sup>161</sup>Ассизы Антиохийские, էջ 338-352 հտտ. Ассизы Иерусалимского королевства, Стасюлевич М. М., указ. соч., с. 569-573.

<sup>162</sup>Ришар Ж., указ. соч., с. 103, Додю Г., указ. соч., с. 70-80.

<sup>163</sup>Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 465-467.

տարածքները Բոհեմունդի կողմից իր իշխանության հիմնադրումից ի վեր նրանք դիտում էին որպես Անտիոքի դքսության անխզելի մաս: Բյուզանդիայի դիրքերը վերականգնելու համար կայսերական զորքերը Վուտումիտոսի և Մոնաստրոսի գլխավորությամբ անցնում են հարձակման: «Վուտումիտոսը, - գրում է Աննա Կոմնենոսը, - տեսնելով, որ հայերը համաձայնության են եկել Տանկրեդի հետ, շրջանցեց նրանց հողերը և գրավեց Մարաշը... Միաժամանակ Կուրիկ և Սելևկիա է ուղարկվում ներքինի Եվստաֆիոսը՝ հանձնարարություն ունենալով շուտափույթ զբաղեցնել Կուրիկն ու վերանորոգել այն Սելևկիայի հետ»<sup>164</sup>:

Վուտումիտոսի արշավանքի տարեթիվը և նվաճումների հստակ շրջանակն անհայտ է: Դատելով Աննա Կոմնենոսի տեղեկությունից՝ խոսքը 1100 - 1101 թթ. մասին է, երբ գերված Բոհեմունդին Անտիոքում փոխարինել էր Գալիլեայից եկած Տանկրեդն<sup>165</sup>, իսկ Դաշտային Կիլիկիայի հողերը շրջանցելու մասին հաղորդումը ենթադրում է դրանց լատինական կարգավիճակի պահպանումը: Հարցին անդրադարձած գիտնականների մեծ մասի (Կ.Կաէն, Ռ.Գրուսսե, Յա. Լյուբարսկի, Վ. Ստեպանենկո)<sup>166</sup> համոզմամբ Աննա Կոմնենոսը շփոթում է 1099-1100 և 1103-1104 թթ. իրադարձությունները դրանց համանմանության պատճառով, քանի որ 1104 թ. մոտերին տեղի ունեցած երկրորդ բյուզանդական արշավանքը նա տեղադրում է 1099 թ. սեպտեմբերին Բոհեմունդի կողմից Լաոդիկեան պաշարելուց հետո<sup>167</sup>:

Մարաշի գրավումը 1100 թ. սկզբով թվագրելու օգտին խոսում է նաև Մ. Ուռհայեցու տեղեկությունն, ըստ որի 1100 թ. տակ Բոհեմունդն իր հորեղբորորդի Ռիչարդ Սալերնացու (Պրինչիպատո) հետ շարժվել է Մարաշի վրա: Նրանք քաղաքի բյուզանդահպատակ կառավարիչ Թաթուլից պահանջում են հանձնել քաղաքը, բայց հանդիպում են դիմադրության<sup>168</sup>: Տարեգիրը ցավոք չի նշում Թաթուլի Մարաշի

<sup>164</sup> Анна Комнина, указ. соч., с. 313-315.

<sup>165</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensi, p. 706.

<sup>166</sup> Любарский Я. Н., Замечания к хронологии XI книги “Алексиады” Анна Комненой, ВВ, т. 23, Москва, 1963, с. 47-56 և Анна Комнина, указ. соч., с. 580, 584-586, Cahen C., La Syrie du nord à l’époque des croisades et la principauté franque d’Antioche, p. 240, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 1, p. 400, Степаненко В. П., Шорохов А. В., К хронологии византийско-антиохийской борьбы за Равнинную Киликию. 1098-1108, АДСВ, 1983, вып. 20, с. 141-143.

<sup>167</sup> Анна Комнина, указ. соч., с. 318.

<sup>168</sup> Մատթէոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 292, Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 4, pp. 822-826.

կառավարիչ նշանակվելու ժամանակը և կապը Վուտումիտոսի ու Մոնաստրոսի հետ, սակայն Բոհեմունդի և Ռիչարդի հարձակումն անկասկած տեղի է ունեցել մինչև օգոստոսի 15-ը, երբ նրանք գերվեցին մահմեդականների կողմից:

Այս հանգամանքները ստիպում են Վուտումիտոսի և Մոնաստրոսի արշավանքը թվագրել 1100 թ. առաջին կեսով, որտեղ միակ անհամապատասխանությունը Տանկրեդի անվան հիշատակումն է, բայց «նրա հետ հայերի համաձայնությունը» կարելի է հասկանալ նաև նախկինում եղած համագործակցության տեսակետից, որը չի նշանակում Տանկրեդի անմիջական ներկայություն Կիլիկիայում:

Մարաշի պաշարման ամենաթեժ պահին Բոհեմունդի ճամբար է ժամանում Միլիտինեի հայ իշխան Գաբրիելի սուրհանդակը, որը Բոհեմունդից օգնություն էր խնդրում Սեբաստիայի էմիր Դանիշմենդ Մելիք-Ղազիի դեմ պայքարում: Փոխարենը խոստանում էր Անտիոքի դքսին հանձնել հարուստ և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Մելիտինեն<sup>169</sup>:

Գաբրիելին օգնության շտապելը բացատրվում նաև հետևյալ պատճառներով.

- Բոհեմունդը կարևորելով հայկական գործոնը տարածաշրջանում՝ իր կողքին մշտապես պահում էր Անտիոքի և Մարաշի հայ եպիսկոպոսներ Կիպրիանոսին ու Գրիգորեսին<sup>170</sup>: Հավանաբար նրանց խորհրդով էլ որոշում է շարժվել Մելիտինե:

- Դանիշմաններն այդ ժամանակ լուրջ ուժ էին իրենցից ներկայացնում և Բոհեմունդի համար խոչընդոտներ ստեղծում դքսության հյուսիսային մասում: Նրանց դեմ պայքարում Բոհեմունդը ստիպված էր որոնել դաշնակիցներ:

Այս իրավիճակում Բոհեմունդն ու Ռիչարդը մոտ 5 հարյուր ասպետներով<sup>171</sup>, 1100 թ. հուլիս-օգոստոսին շարժվում են հյուսիս, սակայն օգոստոսի 15-ին<sup>172</sup> ընկնում են Դանիշմանի ծուղակը և գերվում<sup>173</sup>: Միքայել Ասորին Բոհեմունդի գերության մեջ մեղադրում է Գաբրիելին՝ որպես հնարավոր շարժառիթ նշելով նրա հունական

<sup>169</sup>Նույն տեղում, էջ 293-295 հմմտ. Սմբատյայ Սպարապետի Տարեգիրք, էջ 114:

<sup>170</sup>Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 294, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 5-9 (1961 թ.), էջ 283:

<sup>171</sup> Alberti Aquensis, op. cit., p. 524. *Ըստ Ալ-Ասիրի 5000 ասպետով, որը բացահայտ չափազանցություն է, քան իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 231:*

<sup>172</sup> Gravelle Y., Le problème des prisonniers de guerre pendant les croisades orientales (1095-1192), Sherbrooke, 1999, p. 139.

<sup>173</sup>Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 292-294:

դավանանքը<sup>174</sup>: Ալբերտ դ'Աքսացին (Աախենացի), հավանաբար սա նկատի ունենալով, երկրամասի քրիստոնյաներին որակում է «նենգ ու վատ»<sup>175</sup>: Իրականում Կիլիկիայի և Վերին Եփրատի հայ իշխանները գիտակցում էին, որ Հյուսիսային Ասորիքի գրավումից հետո Անտիոքը հեշտությամբ ձեռք կգցեր իրենց տիրույթները ևս:

Եդեսիայի կոմս Բալդուինը գերվաճեներին ազատելու համար ուղղվում է Մելիտինե, բայց վախենալով մատնությունից՝ վերադառնում է Եդեսիա: Մելիտինեում նա ստանում է Գաբրիելի վասալական երդումը և 50 ասպետ թողնում այնտեղ<sup>176</sup>:

Անտիոքում խաչակիրները որոշում են Բոհեմունդի բացակայության ընթացքում քաղաքը հանձնել Տանկրեդին, որը Գալիլեայի իր հողերը հանձնելով Երուսաղեմի նոր թագավոր Բալդուին I-ին (1100-1118 թթ.)՝ ուղղվում է Անտիոք<sup>177</sup>:

Խաչակրաց առաջնորդները ոգեշնչված Պասկալիոս II պապի (1099-1118 թթ.) հորդորներից, 1101 թ. հունիսին Բոհեմունդին ազատելու նոր անհաջող փորձ են ձեռնարկում: Նրանց մի մասն անցնում է Անտիոք՝ հայտնվելով Տանկրեդի ենթակայության տակ<sup>178</sup>, որը պատրաստվում էր վերջնականապես ամրապնդել Դաշտային Կիլիկիայում: Նա գրավեց Տարսոնը, Ադանան, Մամեստիան, ապա պաշարեց Լաոդիկեան: Մոտավորապես 1103 թ. սկզբին, Անտիոքի ասպետները տիրում են նավահանգստին<sup>179</sup>: Տանկրեդը վերացնում է նաև Անտիոքի հունական պատրիարքությունն ու աթոռը հանձնում լատին պատրիարք Բեռնարդոս Վալանսիացուն<sup>180</sup>: Լաոդիկեային, Մամեստիային, Ադանային ներքին գործերը

<sup>174</sup> Михаил Сириец, Хроника, Письменные памятники Востока 1973, с. 35, Каждан А. П., указ. соч., с. 129-130, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 5-9 (1961 թ.), էջ 283:

<sup>175</sup> Alberti Aquensis, op. cit., p. 526.

<sup>176</sup> Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 5-9 (1961 թ.), էջ 284-285, Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 294, Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 4, pp. 846-857.

<sup>177</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensi, p. 706.

<sup>178</sup> Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 231, Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 308-310 հմմտ. Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 108:

<sup>179</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensi, p. 706-709, Виймар П., указ. соч., с. 148.

<sup>180</sup> Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 5-9 (1961 թ.), էջ 292, Բեռնարդոսի մասին տե՛ս Mas Latrie de L., Les patriarches latins d'Antioche, pp. 192-193, Rey E., Les dignitaires de la principauté d'Antioche, ROL, 1900—1901, № 8, p. 131-133.

տնօրինելու հարցում թողնվում է մասնակի ինքնավարության իրավունք, բայց դրվում է ծանր հարկեր ու ռազմական օգնության ցույց տալու պահանջ<sup>181</sup>:

Տանկրեդի վերջին հաղթանակները հերթական անգամ փակուղի են տանում Դաշտային Կիլիկիայի Բյուզանդական վերանվաճման հարցը: Պնդումը, որ դրանք բյուզանդականացվել են մինչև 1100 թ. ամառը<sup>182</sup>, կասկածելի է թվում, եթե հիշենք, որ Վուտումիտոսի ու Եֆստաֆիոսի ձեռքբերումներում Աննա Կոմնենոսը դրանք չի հիշատակում: Ըստ այլ վարկածի, Դաշտային Կիլիկիան կայսրությունը կարող էր վերադարձնել Բոհեմունդի գերությունից անմիջապես հետո՝ 1100 թ. երկրորդ կեսից մինչև 1101 թ. գարուն<sup>183</sup>, որը հենվում է 1101 թ. սեպտեմբերին Տարսոնը, Մամեստիան, Ադանան բյուզանդական ներկայացնելու Ռաուլ Կաենցու տեղեկություն վրա<sup>184</sup>: Սակայն ավելի հավանական է, որ բյուզանդական վերանվաճում չի եղել այդ ընթացքում և Ռաուլ Կաենցին Սելևկիայի ու Կուրիկի կողմից դեպի Տարսոն, Ադանա, Մամեստիա առաջացող կայսերական զորքի շարժման ընդամենը կասեցումը մատուցել որպես առանձին հաղթանակներ՝ Լաոդիկեայի գրավումը բազմապատկելու պատրվակով:

Անտիոքում դիրքերը վերականգնելու համար՝ բյուզանդական արքունիքը 260 հազար բյուզանդով Բոհեմունդին գնելու առաջարկ արեց Մելիք-Ղազիին, բայց նա Իկոնիայի սուլթան Քիլիշ-Արսլան I-ի (1092-1107 թթ.) հետ համաձայնության չեկան փրկագնի բաժանման հարցում<sup>185</sup>, ավելի շատ հավատացին ողջ Առաջավոր Ասիան թյուրքերին զիջելու Բոհեմունդի խոստմանը<sup>186</sup>: Բյուզանդիայի ներկայացուցիչ Գրիգորի Տարոնիտոսը չկարողացավ կայսերը ժամանակին տեղեկացնել անբարենպաստ փոփոխությունների մասին<sup>187</sup> և Դանիշմանը Բոհեմունդի ազատման հարցով դիմաց խաչակիրներին՝ պահանջեցով 100 հազար դինար<sup>188</sup>: Պատրիարք Բեռնարդոսը, Եդեսիայի կոմս Բալդուին II Բուրգաքին (1100-1118 թթ.) տվեցին անհրաժեշտ գումարի

<sup>181</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensis, p. 709.

<sup>182</sup> Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 230.

<sup>183</sup> Степаненко В. П., Шорохов А. В., К хронологии византийско-антиохийской борьбы за Равнинную Киликию. 1098-1108, АДСВ, 1983, вып. 20, с. 143.

<sup>184</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensis, p. 706.

<sup>185</sup> Стасюлевич М. М., указ. соч., с. 234 հմմտ. Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 114:

<sup>186</sup> Alberti Aquensis, op. cit., pp. 610-616, Стасюлевич М. М., указ. соч., с. 238-239.

<sup>187</sup> Успенский Ф. И., История крестовых походов, с. 348.

<sup>188</sup> Rey E., Résumé chronologique de l'histoire des princes d'Antioche ROL, 1896, N 4, p. 331, Успенский Ф. И., История крестовых походов, с. 348.



միայն մի մասը: Պակասը տվեց Գող Վասիլը, որը հավաքված փրկագինը հանձնեց Մելիք-Ղազին ու 1103 թ. մայիսին ազատված դքսին ուղեկցեց Անտիոք<sup>189</sup>: Ռիչարդ Սալերնացին հանձնվեց Ալեքսիոս կայսերը<sup>190</sup>:

Բոհեմունդին հայ իշխանների ցույց տված օգնությունը կարելի է բացատրել այն մտահոգությամբ, որ գլխավոր մրցակցից ազատված Եդեսիայի կոմսությունը հնարավորություն էր ստացել իրեն ենթարկել մերձեփրատի մանր քրիստոնեական իշխանություններն: Այդ պատճառով Անտիոքի ու Եդեսիայի հակամարտության ընթացքում հայ իշխանները հաճախ խուսանալով էին կողմերի միջև՝ ստեղծելով յուրօրինակ հավասարակշռություն:

Անտիոք վերադարձած Բոհեմունդը Եդեսիայի կոմս Բալդուին II-ի հետ հանդես է գալիս Խարրանի թյուրքերի դեմ: Ծրագիրը պաշտպանում են Անտիոքի պատրիարք Բեռնարդոս Վալանսացին, Եդեսիայի արքեպիսկոպոս Բենեդիկտոսն ու Երուսաղեմի նախկին պատրիարք Դագոբերտը<sup>191</sup>: 1104 թ. գարնանը սկսված արշավանքին Եդեսիայի կոմսի հետ մասնակցում էին նաև հայկական զորագնդեր<sup>192</sup>: Խարրանի մահմեդականներն օգնություն են ստանում Մոսուլի և Հիսն Քայֆայի էմիրներ Ջեկերմիշից (1102-1107 թթ.) ու Սուգմանից (1098-1105 թթ.), որոնք մայիսի 7-ին գերում են Բալդուինին, նրա վասալ Ժոսլեն դե Կուրտենեին ու Եդեսիայի արքեպիսկոպոսին<sup>193</sup>: Բոհեմունդը ծանր կորուստներով քաշվում է Եդեսիա: 1104 թ. մայիս-հունիսին Բոհեմունդը Տանկրեդին վստահելով Եդեսիայի պաշտպանությունն՝ անցնում է Անտիոք<sup>194</sup>: Տանկրեդը հենվելով հայկական տարրի անձնագոհության վրա հաղթում է թյուրքերին<sup>195</sup>, որոնց ջարդը շարունակում է օգնության հասած Բոհեմունդը<sup>196</sup>:

<sup>189</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 318-320 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 121-122: Գիյոմ Սուրացին նկարագրում է այն ուրախությունը, որով Անտիոքի բնակիչները դիմավորում են նրան: St'g Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 438, Стасюлевич М. М., указ. соч., с. 240.

<sup>190</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 320:

<sup>191</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., p. 444.

<sup>192</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 320:

<sup>193</sup> Alberti Aquensis, op. cit., p. 615, Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 322, Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensi, p. 710-711, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեյի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 116-117, Gravelle Y., op. cit., p. 139.

<sup>194</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensi, pp. 711-712.

<sup>195</sup> Նույն տեղում, էջ 711-712:

<sup>196</sup> Alberti Aquensis, op. cit., pp. 617-618.

Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ 1104 թ. կեսերին Մոնաստրոսի հրամանատարությամբ գործող բանակն ըստ Աննա Կոմնենոսի «...գրավում է Լոնգինիադա (Անարզաբայի մոտ), Ադանա, Տարսոն և Մամեստիա քաղաքները ու նույնիսկ ողջ Կիլիկիան»<sup>197</sup>: Կայսրությունը հետ է վերցնում նաև Լաոդիկեան<sup>198</sup>: Ռաուլ Կանենցին նշում է, որ կիլիկիացիները հրճվանքով էին դիմավորում ֆրանկների պարտությունը և ինքնական երեք քաղաքները (Ադանան, Մամեստիան, Տարսոնը) ընդունում են հույներին<sup>199</sup>: Հնարավոր է Մելիտինեն նույնպես հայերի գործակցությամբ է հայտնվել Դանիշմանների ձեռքում<sup>200</sup>: Արդյունքում Բոհեմունդը կորցրեց երբեմնի ռազմավարական նախաձեռնությունը և Եվրոպայից օգնություն ստանալու ակնկալիքով 1104 թ. վերջերին նավարկեց Իտալիա<sup>201</sup>: Այնտեղ նա ստացավ պապ Պասկալիոս II-ի աջակցությունը, ամուսնացավ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ I-ի դուստր Կոնստանցիայի հետ, իսկ Տանկրեդի համար խնդրեց նրա քույր Սեսիլիայի (Ցեցիլիա) ձեռքը<sup>202</sup>:

Այդ ընթացքում Տանկրեդը ձեռնամուխ է լինում Արտախ ամրոցի գրվմանը, որը հայերը ինքնական հանձնել էին Հալեպի էմիր Ռիդվանին (1095-1113 թթ.)<sup>203</sup>: 1105 թ. ապրիլի վերջին Տանկրեդը գրավում է Արտախը, Ապամեան, Կաֆարթաբը՝ հասնելով Հալեպի արվարձաններին<sup>204</sup>: Ասորիքի վերանվաճումը նա ավարտում է Շեյզարի հպատակեցմամբ, ապա փորձում վերջնականապես գրավել Լաոդիկեան<sup>205</sup>: 1108 թ. կեսերն պիզանցիների օգնությամբ դա նրան հաջողվեց անել<sup>206</sup>:

<sup>197</sup> Анна Комнина, указ. соч., с. 318, 586.

<sup>198</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensis, p. 712.

<sup>199</sup> Raoul De Caen, op. cit., p. 283, Albert D'Aix, op. cit., p. 145 հմմտ. Mutaftian Cloude, L'Arménie du Levant (XIe – XIVe siècle), 1 vol., p. 64.

<sup>200</sup> Մուրաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 377:

<sup>201</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensis, pp. 712-714, Анна Комнина, указ. соч., с. 318-319, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 124:

<sup>202</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 450-451.

<sup>203</sup> Kamal ad-Din, op. cit., p. 593, Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 328-330, Виймар П., указ. соч., с. 149, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, 1961 թ., N 5-9, էջ 302-303:

<sup>204</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensis, pp. 714-715 հմմտ. Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 332, Ибн-Каланиси, указ. соч., с. 52, Kamal ad-Din, op. cit., p. 595.

<sup>205</sup> Gesta Tancredi in expeditione Hierosolymitana, auctore Rudolfo Cadomensis, pp. 715-716, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 435-436.

<sup>206</sup> Heyd W., Histoire du commerce du Levant au moyen-âge, Leipzig, 1885, pp. 145-146, (URL://<https://www.archive.org/details/histoiredumme00parigoog>), (11.03.2013), Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 1, p. 428.

Տանկրեդի առաջխաղացմանը նպաստում էր Բոհեմունդի կողմից Բյուզանդիայի դեմ 1107 թ. աշնանից սանձագերծած պատերազմը, որը ստիպել էր կայսրությանը Կանտակուզինոսին Լաոդիկեայից, իսկ Մոնաստրոսին Տարսոնից տեղափոխել Արևմուտք<sup>207</sup>: Աննա Կոմնենոսը նշում է նաև. «Տանկրեդի զորքի մի մասը ցամաքով հարձակվում է Մոպսոսի քաղաքների վրա, իսկ մյուս մասը... Պիրամոս գետով նավարկում է Մամեստիա, որտեղ Մոնաստրոսին փոխարինած Ասպիետը (հավանական է Օշին), վախկոտ պահվածք է դրսևորում»<sup>208</sup>: Նա չի խոսում հարձակման արդյունքների մասին, բայց Ասպիետի պահվածքի նկարագրության պատճառ կարող է լինել միայն նրան վստահված տարածքների կորուստը: Տարսոնից Բյուզանդիայի ներկայացուցչին հեռացնելն Ալ-Կալանիսին թվագրում է 1109 թ. հուլիսից 1110 թ. հուլիս հատվածով<sup>209</sup>, որը հավանաբար մեկ տարվա սխալ է պարունակում, քանզի 1108 թ. սեպտեմբերին կնքված Դեաբոլի պայմանագրով Բյուզանդիան պահանջում էր այն հետ վերադարձնել: Այդ նվաճումներին երբեմն ավելացվում է Կուրիկը՝ հիմք ընդունելով 1134 թ. բարոն Գոտյե Սուրդեվալի կողմից Հիվանդախնամներին գրված մի փաստաթուղթ<sup>210</sup>:

Անկախ Դաշտային Կիլիկիայի վերանվաճման վերաբերյալ աղբյուրներում եղած տարակարծությանը՝ կարելի է փաստել, որ երկրամասը Տանկրեդը գրավել է բյուզանդական զորքի հետ քաշումից՝ 1107 թ. աշուն, մինչև 1108 թ. սեպտեմբեր, երբ Բոհեմունդը պարտություն կրեց կայսր Ալեքսիոսից և Դեաբոլում կնքեց մի պայմանագիր<sup>211</sup>, որի մեզ հետաքրքրող հատվածները հոչակում էին.

- Բոհեմունդն ընդունում էր վասալական կախվածություն Ալեքսիոս Կոմնենոսից և նրա գահաժառանգ Հովհաննես II-ից:

- Կայսրը նրան շնորհում էր Անտիոքն ու Հալեպը, եթե վերջինս գրավվեր:

<sup>207</sup> Анна Комнина, указ. соч., с. 321.

<sup>208</sup> Анна Комнина, указ. соч., с. 322-323. Նրա մասին տե՛ս Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 3, pp. 642-653.

<sup>209</sup> Ибн-Каланиси, указ. соч., с. 72.

<sup>210</sup> Степаненко В. П., Равнинная Киликия во взаимоотношениях Антиохийского княжества и Княжество Рубинидов в 10-40-х годах XII в., ВВ, 1988, т. 49, с. 120.

<sup>211</sup> Анна Комнина, указ. соч., с. 365-372. Պայմանագրի կետերի և աշխարհագրական տեղայնացումների մասին մանրամասներ տե՛ս Степаненко В. П., Мараш и графство Эдесское в Девольтском договоре 1108 г., ВВ, 1987, т. 48, с. 53-63, Runciman S., A history of the Crusades, t. 1, p. 33-52, Բոգոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 72-74:

- Անտիոքը հրաժարվում էր Լաոդիկեայից, Դաշտային Կիլիկիայում ձեռք բերած բոլոր տիրույթներից և ընդհանրապես նրա նկատմամբ ունեցած որևէ հավակնություններից:

- Բոհեմունդը պարտավորվում էր իրենից հետո Անտիոքի դքսությունը հանձնել Բյուզանդիային, որի կազմի մեջ այսուհետ մտնելու էին Արտախը, Սևքարը, Բաղրասը (Գասստոն)<sup>212</sup> և դրանց ստորոտում գտնվող ամբողջ հարթավայրը բացի կայսեր վասալներ Լևոն և Թորոս Ռուբինյանների տիրույթներից:

- Դաշտային Կիլիկիայի մեծ մասը՝ Տարսոն, Ադանա, Մամեստիա և Անարզաբա քաղաքներով, անցնում էր Բյուզանդիային:

- Բոհեմունդը զինվորական ծառայության էր անցնում բյուզանդական բանակում՝ պարտավորվելով նաև չհամգործակցել կայսրության հանդեպ թշնամական վերաբերմունք ունցող ուժերի հետ:

- Պարտադրել Տանկրեդին ճանաչելու նախատեսված պայմանները:

- Հայերի ու Անտիոքի հետագա համագործակցությունը կանխելու համար հստակ նշվում էր, որ այն հայաբնակ հողերը (նկատի էր առնվում մերձեփրատի տարածքը), որտեղ կիշխի Բոհեմունդը, համարվելու են կայսրության նվիրատվություն, իսկ եթե ծառայության նպատակով նրա մոտ գան հայեր, ապա Բոհեմունդը նրանց չի ընդունելու կամ կընդունի որպես կայսեր հպատակներ:

Թորոսին I-ին (1100-1129 թթ.) և Լևոնին կայսեր վասալներ համարելու հիմքում ընկած է ոչ թե նրանց բյուզանդական կոչումներն ու պայմանագրում որպես հպատակ հիշատակելն, այլ կայսերական զինվորական ներկայությունը վերջիններիս ամրոցներում<sup>213</sup>: Հայերի ու Բոհեմունդի միությունը խափանելու նպատակով արված

<sup>212</sup> Բաղրասի և Գաստոնի (Գաստուն, Կաստիմ, Գաստ) նույնականացման հարցը գիտական շրջանակներում լայն քննարկման առարկա է: Մ. Ճեվահիրճյանը դեռևս 1975 թ. (*Ճեվահիրճյան Մ. Հ., Կիլիկյան Գաստուն բնակավայրը, ՊԲՀ, № 4 (1975), էջ 142*) գրել է այդ ամրոցների տարբերության և դրանց նույնացման անթույլատրելիության մասին, որը մինչ այդ կատարվել էին տարբեր հետազոտություններում՝ հենվելով միջնադարյան աղբյուրների տեղեկությունների վրա (*Նալբանդյան Հ., Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 38, 279, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jerusalem, t. 2, pp. 146, 252, 333-334, 568, 830-831*): Այնուամենայնիվ, հետագայում հրատարակված աշխատություններում ևս դրանք համարժեք անվանումներ են համարվում (*Քասաբ Ջ., Կազ. սոս., с. 104, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 275, 284, 290, հ. Բ, էջ 171, 652, 659*), որոնք համոզիչ են թվում:

<sup>213</sup> Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, էջ 40-43 հմմտ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 95-96:

հատուկ շեշտումը պատահական չէր, քանզի Բյուզանդիայի դեմ հետագա պայքարը հավանական էր դարձնում Ռուբինյանների կողմնորոշումը դեպի Անտիոք, ինչը նկատելի էր նաև նախկինում<sup>214</sup>: Ուշագրավ է նաև Թորոսի ու Լևոնի անունների առանձին հիշատակությունը: Մատթեոս Ուռհայեցու խոսքերով նրանք Կոստանդին I-ի տիրույթները բաժանել էին իրար մեջ որպես սեփական «երկիր» և յուրաքանչյուրը համարվում էր «Հայոց իշխան» կամ «Հայոց մեծ իշխան»<sup>215</sup>, ըստ որում Թորոսն ավագության կարգով ժառանգել էր իշխանության բուն տարածքը՝ Վահկա ամրոցով<sup>216</sup>, իսկ Լևոնին բաժին էր հասել Մարաշի ու Ամանոսյան դռների միջև ընկած Լեռնային Կիլիկիայի արևելյան մասը<sup>217</sup>: Նման պայմանները կարծում ենք Լևոնին թույլ էին տալիս երբեմն վարել անկախ քաղաքականություն, որը և հաշվի էր առնվում կայսրության կողմից: Պատահական չէ, որ հետագայում Թորոսը դաշինքի մեջ կմտնի Եդեսիայի կոմսերի, իսկ Լևոնը նրանց հակառակորդ Անտիոքի դքսերի հետ:

Դեաբուլի պայմանագրում Անարզաբան կայսրությանը վերադարձնելու պահանջը, ենթադրում է քաղաքի Անտիոքյան պատկանելությունը: Անարզաբայի գրավումը Բոհեմունդի կողմից, ինչպես տեսանք, տեղի ունեցավ 1098 թ., սակայն Մատթեոս Ուռհայեցու տեղեկություններից հետևում է, որ և՛ 1107-1108 թթ., և՛ Դեաբուլի պայմանագրից հետո Անարզաբայի շրջանը մտնում էր Թորոսի տիրապետության տակ<sup>218</sup>: Այնուամենայնիվ, փաստերի մեծ մասը վկայում են, որ Անարզաբայի անցումը Թորոսին տեղի է ունեցել 1111-1114 թթ. և կարող էր կազմակերպված լինել Բյուզանդիայի կողմից կամ նրա թողտվությամբ՝ Տանկրեդի հետ չմարող պայքարում նրա գոնե չեզոքությունը ստանալու համար<sup>219</sup>: Նկատենք, սակայն, որ Բոհեմունդը և Տանկրեդը նույնպես կարող էին իրենց գերակայության պայմանով Անարզաբան

<sup>214</sup> Степаненко В. П., Из истории международных отношений на Ближнем востоке в XII в., Княжество Васила Гоха и Византия, АДСВ, 1980, вып. 17, с. 41.

<sup>215</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 332, 344, 346, 348, 354, 366, 368, 374:

<sup>216</sup> Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 92, 94 հմմտ. Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 332:

<sup>217</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 50:

<sup>218</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 332, 344, 364, 368:

<sup>219</sup> Степаненко В. П., Шорохов А. В., К хронологии византийско-антиохийской борьбы за Равнинную Киликию. 1098-1108, АДСВ, 1983, вып. 20, с. 145, Степаненко В. П., Равнинная Киликия во взаимоотношениях Антиохийского княжества и Княжество Рубинидов в 10-40-х годах XII в., с. 122 հմմտ Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հողվոյթին մեջ (1080-1137), էջ 103-104, Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 2, pp. 392-395.

թողնել Ռուբինյաններին կայսրության դեմ պայքարում վերջիններիս հետ միությունն ամրապնդելու համար, որի պատճառով էլ պայմանագիրը հատուկ շեշտում էր կայսրության նախկին վասալների հետ այլևս ռազմաքաղաքական դաշինքներ չկազմելու մասին: Նման միջոցով 1108 թ. երկրորդ կեսին Տանկրեդը փորձում էր ստանալ նաև Բերտրան Թուլուզացու աջակցությունը՝ շահարկելով նրա հոր նվաճումները վերադարձնելու հարցը<sup>220</sup>: Ինչևիցե, Դեաբոլի պայմանագիրը մնաց միայն թղթի վրա<sup>221</sup>, քանի որ Բոհեմունդը վերադարձավ հայրենի Տարենտ և մահացավ 1111 թ. մարտին<sup>222</sup>, իսկ Տանկրեդին այն պարտադրել Ալեքսիոս կայսերը չհաջողվեց:

Ամրապնդվելով Դաշտային Կիլիկիայում, ապա գերված Բալդուինի և Ժոսլենի փոխարեն հաստատվելով Եդեսիայում՝ Տանկրեդը սկսում է հավակնություններ ցուցաբերել Գոդ Վասիլի հողերի նկատմամբ: Տարածաշրջանում Անտիոքի դիրքերի ուժեղացման մասին վկայում է այն փաստը, որ կոմսությունն օրինական տերերին վերադարձնելու դիմաց Տանկրեդը պահանջում էր ընդունել իր գերիշխանությունը<sup>223</sup>: Գոդ Վասիլը ստիպված էր վերանայել հարաբերություններն Անտիոքի հետ, միջամտել Բալդուինի և Ժոսլենի ազատագրմանը ու ընդդեմ Տանկրեդի դաշինքի գնալ նրանց հետ: Հայ իշխանը Բալդուինին տրամադրում է 3 հազար մարտիկներ, որոնցից 1000-ը հավատափոխ հայեր էին<sup>224</sup>, և Մամեստիայի պեչենեգներից կազմված հունական կայազորը<sup>225</sup>: 1108 թ. աշնանը Տանկրեդը հաղթանակ է տանում Բալդուինի նկատմամբ, բայց մահմեդականների հետ նոր բախումների վտանգը ստիպում է նրան հետ քաշվել<sup>226</sup>: Եդեսիայի հայությունը հիմք ընդունելով կոմսի մահվան մասին կեղծ

<sup>220</sup> Alberti Aquensis, op. cit., p. 665 հմմտ. Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 465-466.

<sup>221</sup> Chalandon F., Essai sur le règne d'Alexis Ier Comnène (1081-1118), pp. 249-253, Բոզոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 72:

<sup>222</sup> Rey E., Résumé chronologique de l'histoire des princes d'Antioche ROL, № 4 (1896), p. 321.

<sup>223</sup> Михаил Сириец, Хроника, Письменные памятники Востока 1973, с. 37-38 հմմտ. Bar Hebraeus, op. cit., p. 242, Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 237, Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 334-336, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 464-465, Степаненко В. П., Мараш и графство Эдесское в Девольском договоре 1108 г., ВВ, 1987, т. 48, с. 62.

<sup>224</sup> Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 237:

<sup>225</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 334-336: Բյուզանդական կայսրության զորքերի առկայությունը չի բացառվում Գոդ Վասիլի տիրույթներում: Մանրամասներ տե՛ս Степаненко В., Из истории международных отношений на Ближнем востоке в XII в., Княжество Васила Гоха и Византия, АДСВ, 1980, вып. 17, с. 34, Պապիկեան Ա., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 5-8 (1962 թ.), էջ 204:

<sup>226</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 336, Պապիկեան Ա., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 5-8 (1962 թ.), էջ 205, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեան քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 129:

լուրերը՝ դիմում է լատին արքեպիսկոպոս Պապիոսին առաջարկով կառավարիչ նշանակել տեղացիներից որևէ մեկին: Քաղաք վերադարձած Բալդուինն ու Ժոսլենը արյան մեջ խեղդում են ընդվզում<sup>227</sup>: Այս իրադարձությունները առժամանակ թուլացնում են Անտիոքի ու Եդեսիայի հակամարտությունը՝ հայ իշխաններին նորից դատապարտելով կողմերի միջև խուսանավելու քաղաքականությանը:

Մերձեփրատի հայկական իշխանությունների թուլացմանը զուգահեռ աճում էր Թորոս Ռուբինյանի հզորությունը: Ռուբինյանների արագ բարձրացմանը խանգարում էին բազմաթիվ հայ իշխանների հետ մրցակցությունը և հարևանների մշտական սպառնալիքները. հյուսիսից նրանց անհանգստացնում էին սելջուկ ու դանիշման տիրակալները, արևելքում Եդեսիայի կոմսությունն, իսկ արևմուտքից և հարավից նրանց հիմնական ախոյանները Բյուզանդիան ու Անտիոքի դքսությունն էին: Շահերի բախման կիզակետում գտնվելը ստիպում էր Ռուբինյաններին խուսանավել այդ ուժերի միջև: Այնուամենայնիվ, արդեն Անարզաբային տիրելուց հետո, Թորոսը դառնում է հայ իշխաններից ամենաազդեցիկը: 1111 կամ 1112 թ. նրան հաջողվում է գրավել նաև Կիզիստրա (հուն. Կնդոսկավա) ամրոցը<sup>228</sup>: Որոշ տեղեկությունների համաձայն Թորոսը տիրել է նաև Դաշտային Կիլիկիայի մի հատվածին<sup>229</sup>: Սակայն ինչպես տեսանք, Մամեստիան, Տարսոնը և Ադանան 1104-1108 թթ. նվաճվել էր Անտիոքի կողմից: Դրանք Տանկրեդից վերցնելն անհավանական է, իսկ նրա հաջորդ Ռոժեր Սալերնացու կառավարման շրջանում (1112-1119 թթ.) Անտիոքի հարաբերությունները Ռուբինյանների հետ առավելապես կրում էին դաշնակցային բնույթ (չբացառելով իհարկե, որ Լևոնն ու Թորոսը կարող էին վարել տարբեր արտաքին քաղաքականություն)<sup>230</sup>: Ուստի Դաշտային Կիլիկիային տիրելու Թորոսի փորձերն անհաջող պետք է համարվեն:

<sup>227</sup> Մատթեոս Ուտիայեցի, նշվ. աշխ., էջ 336, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 131:

<sup>228</sup> Մատթեոս Ուտիայեցի, նշվ. աշխ., էջ 346-350 հմմտ. Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 100:

<sup>229</sup> Vahram D'Edesse, op. cit., p. 287, Усама ибн Мункиз, указ. соч., с. 297 հմմտ. Микаелян Г. Г., указ. соч., с. 96.

<sup>230</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 50 հմմտ. Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեւքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 141, Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 2, pp. 438-446, Mutafian Cloude, L'Arménie du Levant (XIe – XIVe siècle), 1 vol., pp. 66-67.

Թորոսի առաջխաղացումը կարելի է կապել 1110-1111 թթ. Եդեսիայի ու Անտիոքի խաչակիրների դժվարությունների հետ: Այդ ընթացքում Եդեսիայի կոմսությունը մի քանի անգամ հարձակման ենթարկվեց Մոսուլի էմիր Մավդուդի<sup>231</sup>, իսկ Անտիոքը Ռիդվանի ելուզականների կողմից<sup>232</sup>: Մահմեդականների դեմ պայքարում Անտիոքին կրկին օժանդակում էին բազմաթիվ հայ իշխաններ (Լևոն Ռուբինյան, Գող Վասիլ և նրա եղբայր Բագրատ, Օշին, Պիրի իշխան Ապլդարիբ)<sup>233</sup>, բայց դա չէր բավարարում Տանկրեդի նկրտումները: 1112 թ. նա հարձակվում է Գող Վասիլի տիրույթների վրա, գրավում Ռապանը, առաջանում Քեսուն ու Թիլ: Հայ իշխանը մոտ 5 հազար զորականներով հակահարված է տալիս և զբաղեցնում Հարսն Մսիրի գավառը, Թորերը, Փերսին ծածքը, Ուրեմը, Ռազտիպը, Հարթանը: Մի քանի օր անց նրանք համաձայնության եկան. Տանկրեդը Գող Վասիլին վերադարձնում է Ռապանը, իսկ վերջինս նրան հանձնում է զավթած ամրոցները<sup>234</sup>:

Գող Վասիլի մահից (1112 թ. հոկտեմբեր) հետո, Բարսեղ կաթողիկոսը (1081-1113 թթ.) Անտիոքի երիտասարդ կոմսուհի Սեսիլիային, նվիրում է Վասիլի այրու թագը<sup>235</sup>, փորձելով կանխել Տանկրեդին, բայց վերահաս արշավանքը դադարեցվում է միայն 1112 թ. վերջերին Տանկրեդի անսպասելի մահվան հետևանքով, որում երբեմն կասկածվում է պատրիարք Բեռնարդոսը<sup>236</sup>: Դքսության գահը հանձնվում է Ա՛ մայրական, Ա՛ հայրական գծով Տանկրեդի ազգական Ռոժեր դե Պրինչիպատին<sup>237</sup>:

<sup>231</sup> Մանրամասներ տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 340-344, Alberti Aquensis, op. cit., p. 675, Kamal ad-Din, op. cit., p. 596, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, № ՀԱ, 5-8 (1962 թ.), էջ 208:

<sup>232</sup> Kamal ad-Din, op. cit., pp. 596-598 հմմտ. Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 239:

<sup>233</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 342, Alberti Aquensis, op. cit., pp. 682-683, Каздан А. П., указ. соч., с. 131, Микаелян Г. Г., указ. соч., с. 79, Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 4, pp. 997-1010.

<sup>234</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 352:

<sup>235</sup> Նույն տեղում, էջ 354 հմմտ. Mahé Jean-Pierre et Anne Mahé, Histoire du l'Arménie des origines à nos jours, Paris 2012, p. 191.

<sup>236</sup> Սամուէլի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 123, Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 110, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 9-12 (1962 թ.), էջ 390. Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 139:

<sup>237</sup> Նրա հայրը՝ Ռիչարդը Սալերնացին, ծագում էր նորմանական Հոտվիլներից ինչպես Բոհեմունդն ու Տանկրեդի մայր Էմման, իսկ մայրը՝ հավանաբար Ալտրուդա, Տանկրեդի քույրն էր: *St'u Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 483-484, Հեթում պապմիջի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. II, էջ 108-109, Ibn-Alatyr, op. cit., p. 287, Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 354, Աբու-Լ-Ֆիդա, նշվ. աշխ., էջ 218, Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 241:*



Անտիոքի նոր տիրակալը վերսկսում է արշավանքները թյուրքերի դեմ և 1115-1118 թթ. ընթացքում խոշոր հաղթանակներ տանում նրանց նկատմամբ<sup>238</sup>: Ռոմերի կառավարման տարիներին նկատելիորեն մերձենում են հարաբերությունները Լևոն Ռուբինյանի հետ: Հալեպի ճանապարհը փակող Ազազ ամրոցի առումը 1118 թ., դրա ապացույցն է. մոտ մեկամսյա պաշարումից հետո ամրոցի գրավումը Ռոմերը վստահում է Լևոնին, որը շուտով հաղթանակ է տանում՝ ստիպելով քաղաքի բնակիչներն հպատակություն հայտնել Ռոմերին<sup>239</sup>:

1119 թ. Հալեպի էմիրի եմ դուրս եկած անտիոքյան բանակի կազմում ևս առկա էր 500 հեծյալից ու 400 հետևակից բաղկացած հայկական զորագունդ<sup>240</sup>, որը Ռոմերի հետ միասին, Սարմադի (Թերեպ) ճակատամարտում 1119 թ. հունիսի 28-ին ընկավ<sup>241</sup>: Անտիոքի խնամակալությունը ստանձնեց Երուսաղեմի թագավոր Բալդուին II-ը (1118-1143 թթ.), որը ըստ Մ. Ուոհայեցու «...թագավորեց Անտիոքի, համայն Կիլիկիայի, Երուսաղեմի և նրա ամբողջ գավառի վրա՝ ընդհուպ մինչև Եգիպտոս»<sup>242</sup>: Այս բնորոշումը չափազանցություն չպետք է համարել, եթե նկատենք, որ Բալդուինը դեռ Եդեսիայի կոմս եղած ժամանակ իրեն էր ենթարկել մերձեփրատյան գրեթե բոլոր հայկական իշխանություններն, իսկ այժմ հանդիսանում էր նաև Երուսաղեմի թագավոր ու Անտիոքի դքսության խնամակալ<sup>243</sup>, որի կազմի մեջ Տանկրեդի նվաճումներից ի վեր մտնում էր Դաշտային Կիլիկիայի մեծ մասը:

Մինչև 1126 թ. Անտիոքը մնում էր Երուսաղեմի թագավորի տրիապետության ներքո: Անտիոքի օրինական դուքսը՝ Բոհեմունդ Տարենտացու մոտ 20-ամյա որդի

<sup>238</sup> Усама ибн Мункиз, указ. соч., с. 135, 138-139, Ibn-Alatyr, op. cit., pp. 296-298 հմմտ. Մատթեոս Ուոհայեցի, նշվ. աշխ., էջ 366-368, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 144, Bar Hebraeus, op. cit., p. 248, Galterii, cancellarii Antiocheni, op. cit., pp. 85-89, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 145.

<sup>239</sup> Մատթեոս Ուոհայեցի, նշվ. աշխ., էջ 372-374:

<sup>240</sup> Մատթեոս Ուոհայեցի, նշվ. աշխ., էջ 374-376 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 148.

<sup>241</sup> Foulcher de Chartres, op. cit., URL://<http://www.templiers.net/foulcher-de-chartres/>, (21.09.2013), Galterii, cancellarii Antiocheni, op. cit., pp. 100-109, Bar Hebraeus, op. cit., p. 249, Ibn-Alatyr, op. cit., pp. 308-319, 323-325, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 523-530, Մատթեոս Ուոհայեցի, նշվ. աշխ., էջ 376, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 149-154:

<sup>242</sup> Մատթեոս Ուոհայեցի, նշվ. աշխ., էջ 378:

<sup>243</sup> Բալդուինի անտիոքյան ձեռնարկների մասին մանրամասներ տե՛ս Mayer Hans Eberhard, Jérusalem et Antioche au temps de Baudoin II, Comptes-rendus des séances de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, 124-e année, N 4, Paris, 1980, pp. 717-734.

Բոհեմունդը, միայն 1126 թ. ուղղվում Անտիոք<sup>244</sup>, որտեղ Բալդուին II-ը նրան տալիս է «Անտիոքի ու համայն Կիլիկիայի գահը»<sup>245</sup>, ամուսնացնում իր դուստ Ալիսայի հետ՝ խոստանալով հետագայում նրան հանձնել նաև Երուսաղեմը:

Բոհեմունդ II-ը (1126-1130 թթ.) մտադիր էր Անտիոքի ազդեցության շրջանակները մեծացնել ի հաշիվ Եդեսիայի և Դաշտային Կիլիկիայի: Նոր նվաճումների համար առիթ հանդիսացավ Թորոսի մահից հետո (1129 թ.) Լևոնի (1129-1137 թթ.) կողմից Անարզաբայի բռնազավթումը<sup>246</sup>: Սակայն երկպառակությունների փոխարեն Լևոնը միավորեց երկու եղբայրների ոստաններն ու հզորացրեց Ռուբինյան իշխանությունը: 1130 թ. Բոհեմունդ II-ը շարժվեց Անարզաբայի վրա: Պատերազմի պատճառ կարող էին ծառայել նաև անձնական խնդիրները<sup>247</sup>, բայց և՛ Դանիշմենդ Ղազի ամիրայի, և՛ Բոհեմունդի հարձակումն Անարզաբայի շրջան, բերում է այն կարծիքին, որ նրանք պարզապես շտապում էին օգտվել իրավիճակից: Անարզաբայի դաշտավայրում թյուրքերը շրջապատում են Բոհեմունդի ջոկատն ու կոտորում բոլորին: Լևոնը նույնպես հարձակվում է Անտիոքին ենթակա տարածքների վրա և մեծ վնաս հասցնում ֆրանկներին<sup>248</sup>:

Դատելով Միքայել Ասորու տեղեկություններից՝ Լևոնին հաջողվել է կարճ ժամանակով տիրել Մամեստիայի, Ադանային և որպես ամուսնական նվեր դրանք հանձնել կայսր Հովհաննես II-ի եղբայր Իսահակ Կոմնենոսի որդուն, բայց գժտվելով վերջինիս հետ՝ հույներից հետ է գրավել ամրոցները<sup>249</sup>: 1132 թ. Մամեստիայի, Ադանայի և Տարսոնի նվաճման ու դրան հետևած խաչակիրների պատժիչ արշավանքի մասին վկայում է նաև Սմբատ Սպարապետը<sup>250</sup>:

<sup>244</sup> Foulcher de Chartres, op. cit., URL://<http://www.templiers.net/foulcher-de-chartres/>, (21.09.2013).

<sup>245</sup> Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 400:

<sup>246</sup> Vahram D'Edesse, op. cit., p. 500, Հերոմ պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 100, Mahé Jean-P. et Anne Mahé, Histoire du l'Arménie des origines à nos jours, p. 194.

<sup>247</sup> Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 179:

<sup>248</sup> Михаил Сириец, Хроника, Письменные памятники Востока 1974, с. 14-15, Ibn-Alatyr, op. cit., p. 391, Անանուն Եդեսացի, նշվ. աշխ., էջ 74, Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 2, pp. 451-453, 494-498.

<sup>249</sup> Михаил Сириец, Хроника, Письменные памятники Востока 1974, с. 16, *յո՛ւ նաև Բոզոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 60-66 հմմտ. Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 183-184:*

<sup>250</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 159:

Այդ ընթացքում Բոհեմունդի այրի Ալիսան ցանկանում էր դքսի դուստր Կոնստանցիային դարձնել միանձնուհի և բռնագրավել գահը: Նա նույնիսկ օնություն է խնդրում Մոսուլի աթաբեկ Զենգիից (1127-1146 թթ.), սակայն Անտիոքի ազնվականությունը քաղաքը Բալդուին II-ի համաձայնությամբ հանձնում է Ժուսլեն I-ին Եդեսացուն (1119-1131 թթ.)<sup>251</sup>: 1131 թ. Անտիոքում հաստատվելու Ալիսայի նոր փորձերը կանխում է Երուսաղեմի թագավոր Ֆուկ Անժուացին (1131-1143 թթ.)<sup>252</sup>: Ամուր իշխանությունը ստեղծելու անհրաժեշտությամբ՝ դքսության ավագանին որոշում է Կոնստանցիային ամուսնացնել Աքվիտանիայի դուքս Գիյոմ IX-ի որդու՝ Ռայմունդ Պուատյեի հետ: Մամեստիայի եպիսկոպոս Ռաուլ Դոմֆրոնտացին, որը չսպասելով Հռոմի նշանակմանը 1135 թ. ինքնակամ զբաղեցրել էր Անտիոքի պատրիարքական աթոռը, 1136 թ. պսակադրում է Ռայմունդին և մանուկ Կոնստանցիային<sup>253</sup>:

Ալիսայի հեղինակության անկման պատճառներից մեկն էր նաև Հովհաննես Կոմնենոս II-ի որդի Մանուելի հետ Կոնստանցիային ամուսնացնելու համար վարվող բանակցությունների լուրերը<sup>254</sup>: Այս հանգամանքը, ստեղծված պատմական իրադրությունում ամենաանընդունելին էր լատին բարոնների համար:

Անտիոքում տիրող խառնակ վիճակից առավելություններ էր քաղում հատկապես Լևոն I-ը: Բացի Դաշտային Կիլիկիայի վրա հաստատվելու փորձերից, նա իր զարմիկ Ժուսլեն II-ի (1131-1150 թթ.) հետ 1135 թ. կարողանում է Անարզաբայի տիրապետությունը տարածել Անտիոքի դքսությանը պատկանող Սարվանդիքար ամրոցի վրա<sup>255</sup>: 1136 թ. Լևոնն ընդհարվում է Անտիոքի դաշնակից Բալդուին Մարաշացու հետ<sup>256</sup>: Ռուբինյանների դեմ պայքարում Ռայմունդ Պուատյեին իրենց աջակցությունն են հայտնում նաև Երուսաղեմի թագավորը և թյուրքական մանր

<sup>251</sup> Михаил Сириец, Хроника, Письменные памятники Востока 1974, с. 16-17 հմմտ. Bar Hebraeus, op. cit., pp. 255-256, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 598-601, Rey E., Résumé chronologique de l'histoire des princes d'Antioche ROL, 4 (1896), pp. 356-357. Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 181-182.

<sup>252</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 611-615.

<sup>253</sup> Նույն տեղում, էջ 619-620 և 635-637, Иоанн Киннам, указ. соч., с. 16.

<sup>254</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 15, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելեքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 196:

<sup>255</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 159-160:

<sup>256</sup> Նույն տեղում, էջ 89-90:

իշխանությունները<sup>257</sup>: Անկարող գտնվելով զենքի ուժով հնազանդեցնել Լևոնին՝ Անտիոքի խաչակիրները սկսում են այլ ճանապարհներ որոնել: Բալդուին Մարաշացու հետ նրա հակասությունից երեք ամիս անց Ռայմունդ Պուատյեն գերում է Լևոնին և շղթայակապ բերում Անտիոք<sup>258</sup>:

Աղբյուրներում Լևոնի և Ռայմունդի բախման մասին տեղեկությունների բացակայությունը հիմք է հանդիսացել այն խարդախության համարելու համար<sup>259</sup>: Այդ տեսակետի համաձայն՝ Բալդուին Մարաշացին Լևոնին հրավիրել է միասին բանակցելու Ռայմունդի հետ ու նրան ծուղակ գցելով՝ հանձնել Անտիոքի դքսին: Հայոց իշխանի բանակցություններին մասնակցելու շարժառիթը Ե. Քասունին ներկայացնում է այսպես. «...Լևոնը՝ խուսափելու համար իր սահմանների մեջ նոր պատերազմ սկսելուց, համաձայնում է խոսակցության նստել Ռայմունդի հետ, որը Լևոնի համառության պատճառով ձերբակալում է նրան»<sup>260</sup>: Կարելի ենթադրել, որ Լևոնը բանակցություններին չմասնակցելու հնարավորություն չի էլ ունեցել:

Լևոնին ազատելու համար նրա որդիները պատանդ ուղարկվեցին Անտիոք, Ռայմունդին հանձնվեցին Ադանան, Մամեստիան, Սարվանդիքարն ու վճարվեց 60 հազար դահեկան փրկագին<sup>261</sup>: Թեև Տարսոնը չի նշվում այս քաղաքների հետ, բայց 1137 թ. նրա Անտիոքյան պատկանելության մասին գրում է Գիյոմ Տուրացին<sup>262</sup>: Ընդ որում, չպետք է բացառել, որ Լևոնի գերության ընթացքում Ռայմունդը նոր հարձակում է իրականացրել դեպի Դաշտային Կիլիկիա, գերել Լևոնի զավակներին, ապա ներկայացրել հայ իշխանին ազատելու պահանջները<sup>263</sup>: Կարծիքը, որ ազատվելուց հետո Լևոնը հետ է բերել կորցրածը և ստիպել Ռայմունդին պատանդներ ուղարկել

<sup>257</sup> Смбат Спарамет, указ. соч., с. 89-90, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 160:

<sup>258</sup> Անանուն Եղեսացի, նշվ. աշխ., էջ 80, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 160: Մանրամասներ տե՛ս Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 2, pp 499-517, 530-531.

<sup>259</sup> Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 51, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, T. 2, p. 52, Микаелян Г. Г., указ. соч., с. 101, Տեր-Ներսեսյան Ս. Մ., նշվ. աշխ., հատված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 387, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 107:

<sup>260</sup> Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 199-200:

<sup>261</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 160, Սամուէլի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 128-129:

<sup>262</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., p. 642, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 201:

<sup>263</sup> Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 202:

հայոց արքունիք<sup>264</sup> համոզիչ չէ<sup>265</sup>: Անտիոքի և Կիլիկիայի հաշտեցման գործում միջնորդությամբ հանդես եկավ Եդեսիայի կոմս Ժուլեն II-ը<sup>266</sup>, բայց նոր բախումներն անխուսափելի կլինեին, եթե նրանք չմիավորվեին Հովհաննես II-ի դեմ: Կայսրը 1137 թ. արշավանք էր ձեռնարկել Կիլիկիայի և Անտիոքի վրա, որոնց չդադարող պայքարն ակտիվացրել էր հարևան մահմեդականներին<sup>267</sup>:

Այսպիսով, Դաշտային Կիլիկիայի համար պայքարը մինչև 1137 թ. փոփոխակի հաջողություններով հիմնականում ընթանում էր Բյուզանդիայի և Անտիոքի դքսության միջև, որին միջամտում էին նաև Ռուբինյանները: Սակայն հաստատվել այնտեղ նրանց չի հաջողվել: Չբացառելով Մամեստիայի, Ադանայի և Տարսոնի ձեռքից-ձեռք անցնելու վարկածը<sup>268</sup>, մի շարք փաստեր հաստատում են Դաշտային Կիլիկիայի վրա 1100-1137 թվականներին Անտիոքի ազդեցությունը.

- 1100 թ. բյուզանդական նվաճումներում Աննա Կոմնենոսը նշում է միայն Մարաշը:

- Դաշտային Կիլիկիան Բյուզանդիայից 1101-1103 թթ. գրավելու Ռաուլ Կաենցու հիշատակությունը չափազանցված է: Այդ տարածքները Տանկրեդը ոչ թե գրավել, այլ պաշտպանել է բյուզանդական նոր հարձակումից:

- 1104 թ. Բյուզանդիան վերահպատակեցրել է Ադանան, Մամեստիան ու Տարսոնը, սակայն մինչև 1108 թ. Դեաբոլի պայմանագրի կնքումը Անտիոքի ասպետները դրանք հետ են վերցրել:

<sup>264</sup> Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 51, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 2, p. 52, Микаелян Г. Г., указ. соч., с. 101.

<sup>265</sup> Chalandon F., Les Comnènes, Հատված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 157, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հողովոյթին մեջ (1080-1137), էջ 201:

<sup>266</sup> Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 51, Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 2, pp. 518-523.

<sup>267</sup> Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 249, Մխիթարոյ Այրիվանեցիոյ, Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, էջ 62 հմմտ. Մխիթարոյ Այրիվանեցիոյ, Պատմութիւն Հայոց, Հայկական համաբարբառ, № 9, էջ 208, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 161:

<sup>268</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 1, p. 51 հմմտ. Chalandon F., Essai sur le règne d'Alexis Ier Comnène (1081-1118), p. 235, Les Comnène, Études sur l'empire Byzantin au XI et au XII siècles, Jean II Comnène (1118-1143), et Manuel I Comnène, (1143-1180), p. 108-109, Микаелян Г. Г., указ. соч., с. 95, 100-101.

- 1111 թ. Տանկրեդի հրամանով հավաքված վասալների շարքում նշված են Տարսոնի և Մամեստիայի տեր Վիդո Կոռնեոլիսը (Գի դե Շեվրի), Տարսոնի եպիսկոպոս Ռոգերիուսը, Լևոն Ռուբինյանը, Գող Վասիլն ու իշխան Օշինը<sup>269</sup>:

- 1112-1119 թթ. Դաշտային Կիլիկիա ներթափանցելու Թորոս I-ի գործողություններն անհաջող են եղել և ուժերի դասավորությունը չեն փոխել:

- 1114 և 1126 թթ. Ռոժեր Անտիոքացին, ապա նրա այրին, որը Տարսոնը ստացել էր որպես օժիտ, սուրբ Աստվածածնի վանքին նվիրատվություններ են կատարել Մամեստիայի շրջանում<sup>270</sup>:

- Մամեստիա քաղաքի եպիսկոպոսը մինչև 1135 թ. Անտիոքի ապագա պատրիարք Ռաուլ Դոմֆրոնտացին էր<sup>271</sup>:

- 1132 թ. Հռոմի պապի կոնդակներից մեկն Անտիոքի աթոռի ավագությունը տարածում է Անարզաբայի, նրա 9 եպիսկոպոսների, Սելևկիայի ու նրա 24 եպիսկոպոսների վրա ևս<sup>272</sup>:

- Ֆրանկների կողմից 1132 թ. Կիլիկիա կազմակերպված արշավանքի, ապա Լևոնի գերության տրամաբանական պատճառն Անտիոքի հսկողությունից Դաշտային Կիլիկիայի դուրս գալն էր, բայց մինչև 1137 թ. Ռայմունդ Պուատյեն վերականգնեց իր իշխանությունն այդ տարածքների վրա:

Հանրագումարի բերելով նշված տվյալները՝ կարելի է պնդել.

ա. Անտիոքի դքսության սահմանները 1108 թ. մինչև 1137 թ. հիմնականում անցել են Մարաշով, որն ամրակցվել էր դքսությանը Դեաբոլի պայմանագրով, Ջահան գետով մինչև Անարզաբայի մոտակայքի ակունքներն, այնուհետև Տավրոսի նախալեռներով մինչև Կիլիկյան Դռները վերահսկող ամրոցներ:

բ. Ռուբինյաններին պատկանել է Լեոնային Կիլիկիան և Անարզաբայի շրջանը:

<sup>269</sup> Alberti Aquensis, op. cit., pp. 682-683, Galterii, cancellarii Antiocheni, op. cit., p. 93.

<sup>270</sup> Ռոժերի այրու ու նվիրատվությունների մասին մանրամասներ տե՛ս Степаненко В., Равнинная Киликия во взаимоотношениях Антиохийского княжества и Княжество Рубинидов в 10-40-х годах XII в, ВВ, 1988, т. 49, с. 120-121, Степаненко В. П., Цицилия, “Дама Тарса и сестра Короля”, ВВ, Москва, 1991, т. 51, с. 119-123, Cahen C., La Syrie du nord à l’époque des croisades et la principauté franque d’Antioche, pp. 260, 345.

<sup>271</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., p. 619. Ռաուլ Դոմֆրոնտացու մասին տե՛ս Mas Latrie de L., *Les patriarches latins d’Antioche*, p. 193, Rey E., *Les dignitaires de la principauté d’Antioche*, ROL, N° 8 (1900—1901), pp. 133-135, Hamilton B., op. cit., pp. 1-22.

<sup>272</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 623-624.

### **§ 3. Կիլիկիայում և Անտիոքում գերակայությունը վերականգնելու Բյուզանդիայի փորձերը**

Հովհաննես II Կոմնենոսի արևելյան արշավանքի մասին Կիլիկիայում և Անտիոքում հավանաբար տեղյակ էին: Պատահական չէ, որ Կիննամոսը Լևոնի ազատագրումը կապում է Անտիոքի և Կիլիկիայի գլխին կախված վտանգի հետ: Լևոնը բարեկամության երդում է տալիս Ռայմունդին և համաձայնվում Բյուզանդիայի դեմ պայքարում միանալ նրան: Լևոնի ու Ռայմունդի դաշնակցությունը կոչված էր կասեցնելու կայսեր առաջխաղացումը դեպի Կիլիկիա և Անտիոք, որի նպատակով էլ 1136/37 թ. Լևոնը պաշարում է Բյուզանդական Սելևկիան<sup>273</sup>:

Հովհաննես II-ը Կոստանդնուպոլսից դուրս է գալիս 1136 թ. աշնանը և 1137 թ. գարնանը մտնում Կիլիկիա: Կայսրը շատ արագ վերանվաճում է Ադանան, Մամեստիան, Տարսոնն ու Անարզաբան, հնազանդեցվում է Թիլ Համտունը, որի բնակիչները տաղափոխվում են Կիպրոս: Բաղրասի և Ալեքսանդրեթի վերանվաճումից հետո՝ 1137 թ. օգոստոսի վերջերին բյուզանդական բանակը հասնում է Անտիոքի մատույցներին<sup>274</sup>: Հովհաննես Կոմնենոսը Ռայմունդից պահանջում է իրեն հանձնել քաղաքը՝ մատնանշելով Անտիոքը միայն կայսեր անունից կառավարելու Բոհեմունդ I-ի համաձայնությունը: Ռայմունդը Ֆուկ Երուսաղեմցուց ստանալով կայսեր պահանջների օրինավորության հաստատումը՝ շարժվում է կայսերական ճամբար ու կնքում նոր պայմանագիր<sup>275</sup>, ըստ որի.

- Դուքսը կայսրին հավատարմության երդում է տալիս:
- Անտիոքում ու Կիլիկիայի քաղաքներում վերականգնվում էր ուղղափառ պատրիարքությունները:
- Քաղաքի միջնաբերդին ամրացվում էր կայսերական զինադրոշմը:

<sup>273</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 14-15, Никита Хониат, История, т. 1, с. 28-29.

<sup>274</sup> Ибн-Каланиси, указ. соч., с. 170, Ibn-Alatyr, op. cit., pp. 423-425, Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 406, Иоанн Киннам, указ. соч., с. 15, 17, Никита Хониат, История, т. 1, с. 29-35.

<sup>275</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 641-655, Ибн-Каланиси, указ. соч., с. 173, Иоанн Киннам, указ. соч., с. 18-19, Васильев А. А., История Византийской империи, т. 2, с. 107-108, Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մեջ (1080-1137), էջ 208-211, Lilie Ralph-Johannes, op. cit., pp. 298-308.

- Ռայմունդը պարտավորվում էր ռազմական օժանդակություն ցույց տալ Բյուզանդիային:

- Կայսրը խոստանում էր պահպանել Ռայմունդի զինական ուժն ու գարնանն արշավանք կազմակերպել մահմեդականների դեմ՝ դքսության կորցրած տարածքները վերականգնելու համար:

- Հովհաննես II-ը չեղյալ է հայտարարում Ռայմունդին մահապատժի ենթարկելու որոշումը<sup>276</sup>:

Այնուհետև կայսրը Կիլիկյան Դռներով վերադառնում է Տարսոն և գրավում այն բոլոր ամրոցները, որոնք դեռևս մնում էին Ռուբինյանների ձեռքում<sup>277</sup>: Վերջին նշանակալի բախումը տեղի ունեցավ Վահկայում. Լևոնը մերժելով հաշտության առաջարկը, Կոստանդին զորավարի գլխավորությամբ կազմակերպում է պաշտպանություն<sup>278</sup>: Բայց 1138 թ. սկզբին հայ իշխանը որդիներ Թորոսի ու Ռուբենի հետ հանձնվում է Հովհաննես II-ի ողորմածությանը և շղթայակապ բերվում Կոստանդնուպոլիս: Լևոնի վրա կայսեր զայրույթի հիմնական պատճառը նրա անկախ քաղաքականությունն էր վարելու ու Դաշտային Կիլիկիայում հաստատվելու փորձերն էին: Նա իրեն ինքնահռչակել էր թագավոր՝ հանդգնելով նույնիսկ կապել թագի ապարոշ<sup>279</sup>:

Հովհաննես II-ի և Ռայմունդ Պուատյեի կնքած պայմանագրի համաձայն 1138 թ. սկզբին արշավանք է կազմակերպվում Հալեպի ու Մոսուլի աթաբեկ Իմադ ադ-Դին Ջենգիի դեմ: 1138 թ. ապրիլին Անտիոքի շրջանում կայսրը հսկայական ուժեր է կենտրոնացնում, որին բացի Ռայմունդից միանում է նաև Եդեսիայի կոմս Ժուսեն II-ը: Ապրիլի վերջերին նրանք պաշարում են Շեյզարը, բայց կողմերի միջև եղած հակասությունները, հնարավորություն չտվեցին վերցնել քաղաքը<sup>280</sup>: Հովհաննես II-ը բավարարվելով Կոստանդնուպոլիսին հարկատու դառնալու Շեյզարի կառավարչի

<sup>276</sup> Բարթիկյան Հ. Մ., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորների խնդիրը, ՊԲՀ, № 1 (1984), էջ 225-226:

<sup>277</sup> Ибн-Каланиси, указ. соч., с. 170, Иоанн Киннам, указ. соч., с. 20, Никита Хониат, История, т. 1, с. 35.

<sup>278</sup> Никита Хониат, История, т. 1, с. 30-32.

<sup>279</sup> Բարթիկյան Հ. Մ., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորների խնդիրը, ՊԲՀ, № 1 (1984), էջ 218-219.

<sup>280</sup> Ибн-Каланиси, указ. соч., с. 175-177, Bar Hebraeus, op. cit., pp. 264, Ibn-Alatyr, op. cit., pp. 425-428, Иоанн Киннам, указ. соч., с. 19. Ըստ Ա. Բոգոյանի արշավաքի դադարեցումը կապված է Իկոնիայի թյուրքերի կողմից Ադանայի պաշարման լուրերի հետ, տե՛ս Բոգոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 117-118:



երդումով՝ հունիսին վերադարձավ Անտիոք: Քաղաքում կայսրը հայտարարում է, որ մահմեդականների դեմ վերջնական հաղթանակի համար նպատակահարմար է Անտիոքի ուղղակի ենթարկումը Բյուզանդիային, որը դյուրին կդարձներ հույների հետ հաղորդակցությունն ու կամրապնդեր կապը Կիլիկիայի նավահանգիստների հետ: Դա ժուլեն II-ի կողմից մատուցվում է որպես կաթոլիկներին Անտիոքից վտարելու մտադրություն՝ ստիպելով կայսերը հրաժարվել այդ մտքից և հեռանալ Բյուզանդիա<sup>281</sup>:

Միքայել Իտալիկոսն Անտիոքը խաչակիրներին թողնելը վերագրում է Հովհաննես II կայսեր մեծահոգությանը<sup>282</sup>: Իրականում միայն բյուզանդական ուժերով հպատակեցնել և՛ խաչակիրներին, և՛ հայերին, և՛ մահմեդականներին դժվար իրագործելի խնդիր էր, ուստի ֆրանկների հետ համաձայնությունը պետք է համարել շահավետ գործարք, որը կայսեր մեկնումից հետո ո՛չ Անտիոքում, ո՛չ էլ Կիլիկիայում չէին պահպանում: Մասնավորապես հույն հոգևորականությունը ոչ միայն հրավիրված չէր 1139/40 թ. նոյեմբերին Ալբերիխ Բովեզացու գլխավորությամբ Անտիոքում գումարված ժողովին, (դրան ներկա էին կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունին (1113-1166 թթ.) ու Ներսես Շնորհալին<sup>283</sup>, այլ հակառակ առկա պայմանագրին՝ Անտիոքի պատրիարք է կարգվում Էմերի Լիմոժացին (1141-1196 թթ.)<sup>284</sup>:

1142 թ. Հովհաննես II-ը նոր արշավանք է կազմակերպում արևելք՝ նպատակադրվելով կանխել Ռայմունդի ապստամբությունը: Այդ պատճառով կայսրը որոշել էր Կիլիկիան և Անտիոքը, Ատալիայի ու Կիպրոսի հետ միասին հանձնել իր որդի

<sup>281</sup> Никита Хониат, История, т. 1, с. 35-41, Норвич Д., История Византии, Москва, 2010, с. 382-383, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 656-665.

<sup>282</sup> Բարթիկյան Հ. Մ., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորների խնդիրը, ՊԲՀ, № 1 (1984), էջ 227-228 հմմտ. Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, էջ 43-48:

<sup>283</sup> Կիրակոսի Գանձակեցույ, նշվ. աշխ., էջ 117-118:

<sup>284</sup> Ալբերիխի, Անտիոքի սինոդներին հայերի մասնակցության և Էմերի Լիմոժացու մասին տե՛ս Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 674-688, Սամուէլի քահանայի Անեցույ, նշվ. աշխ. էջ 123-124, Կիրակոսի Գանձակեցույ, նշվ. աշխ., էջ 117-118, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 161-162, Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Ա, մաս Գ, էջ 1365-1366, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 1-3 (1963), էջ 78-84, Rey E., Les dignitaires de la principauté d'Antioche, ROL, 1900—1901, № 8, pp. 135-137, Dédéyan G., (dir.), Histoire du peuple arménien, p. 352, Halfer Peter, L'Église arménienne entre la Papauté et les Byzantins aux XII et, XIII siècles, L'Église arménienne entre Grecs et Latins fin XI milieu XV siècle, pp. 63-65.

Մանուելին<sup>285</sup>, կարգավորել Կիլիկյան Հայաստանի հարցը և Անտիոքը միացնել Կոստանդնուպոլսին<sup>286</sup>:

Հովհաննես II-ը արագ անցավ Կիլիկիայով, հասավ Եդեսիայի կոմսության սահմանագլխին գտնվող Տուրբեսել ամրոց և պատանդ վերցնելով ժուլեն II-ի դուստր Իզաբելլային՝ ուղղվեց Բաղրաս: Սեպտեմբերի 21-ին նա Ռայմունդ Պուատյեին Անտիոքը հանձնելու պահանջագիր ներկայացրեց, բայց բավարար ուժեր չունենալով, աննպաստ համարեց Անտիոքի պաշարումն ու քաշվեց Կիլիկիա<sup>287</sup>: Այնտեղ 1143 թ. մարտին կայսրը որսի ժամանակ պատահաբար խոցվում է թունավոր նետով և մահանում: Հույները արքայազն Մանուելի առաջնորդությամբ, որին մահվանից առաջ Հովհաննես II-ը հանձնել էր իր թագը, վերադառնում են Կոստանդնուպոլիս<sup>288</sup>:

Մանուելի նահանջն առիթ տվեց Ռայմունդ Պուատյեին մտնելու Կիլիկիա: Նրա դեմ կայսրը հանեց զորքեր՝ Պրոսուխի, Անդրոնիկոս ու Հովհաննես Կոնտոստեփանոսների և ծովակալ Դեմետրիոս Վրանասի գլխավորությամբ: Ռայմունդը կատարյալ պարտություն է կրում: Չնայած բյուզանդացիները չմտան Անտիոք, սակայն վերականգնեցին հունական ներկայությունը Կիլիկիայում և ստիպեցին Ռայմունդին արդեն Կոստանդնուպոլսում վասալական երդում տալ Մանուելին<sup>289</sup>: Ընդունված է համարել, որ Պրոսուխի արշավանքը տեղի է ունեցել 1144 թ., իսկ Ռայմունդը Կոստանդնուպոլսում եղել է 1145 թ.<sup>290</sup>:

1144 թ. հետո Ռայմունդի գլխավոր հակառակորդը դառնում է Մոսուլի և Հալեպի աթաբեկ Իմադ ադ-Դին Ջենգին, որը նույն թվականի դեկտեմբերին գրավել էր Եդեսիան<sup>291</sup>: 1146 թ. սպանված Ջենգիին<sup>292</sup> փոխարինած Նուր ադ-Դինը (1146-1174 թթ.) զարգացնում է հոր հաջողությունները: Ռումի սուլթան Մասուդ I-ի հետ

<sup>285</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 23.

<sup>286</sup> Никита Хониат, История, т. 1, с. 50.

<sup>287</sup> Никита Хониат, История, т. 1, с. 50-51, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 688-692, Норвич Д., указ. соч., с. 385-386, Ibn-Alatyr, op. cit., pp. 440-441.

<sup>288</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 24-32, Никита Хониат, История, т. 1, с. 51-62, Անանուն Եդեսացի, նշվ. աշխ., էջ 85, Ибн-Каланиси, указ. соч., с. 187, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 693-696, Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 408:

<sup>289</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 34-37, Никита Хониат, История, т. 1, с. 68-69.

<sup>290</sup> Բոզոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 143-145:

<sup>291</sup> Ибн-Каланиси, указ. соч., с. 187-190, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 710-711, Ibn-Alatyr, op. cit., pp. 441-445, Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 252-254, 354-357:

<sup>292</sup> Ибн-Каланиси, указ. соч., с. 191-192.

համագործակցելով՝ նա ամրապնդվում է Եդեսիայում<sup>293</sup>, ապա մինչև 1151 թ. գրավում կոմսության վերջին մնացորդները: Մահմեդականների առաջխաղացումը խաչակիրները կարողացան կանխել միայն Բյուզանդիային արված զիջումների գնով<sup>294</sup>, որն այդ ժամանակ լուրջ հաջողությունների էր հասել Մասուդի դեմ պայքարում գրավելով նույնիսկ Իկոնիան<sup>295</sup>:

Եդեսիայի անկումը Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VII-ի (1137-1180 թթ.) և Գերմանիայի կայսր Կոնրադ III-ի (1138-1152 թթ.) ղեկավարությամբ նոր խաչակրաց արշավանքի հանգեցրեց: 1148 թ. գարնանը, պարտություններ կրելով Փոքր Ասիայում, Կոնրադը նավարկում է Երուսաղեմ՝ չմիանալով Անտիոքում գտնվող Լյուդովիկոսին: Ռայմունդ Պուատյեն նպատակ էր հետապնդում ստանալ Երուսաղեմ շտապող Լյուդովիկոսի համաձայնությունը Հալեպի ու Համայի վրա հարձակվելու և Եդեսիան հետ բերելու համար, բայց նրան աջակցություն է հայտնում Ռայմունդ Պուատյեի զարմուհի՝ թագուհի Էլեոնորա Աքվիտանացին: Նման դիրքորոշումը Ռայմունդի ու Էլեանորայի սիրային փոխհարաբերությունների մասին լուրերի տարածման առիթ են դառնում՝ դրդելով Լյուդովիկոսին գաղտնի հեռանալ Տյուրոս: Սակայն դա ավելի շուտ թագուհու անխոհեմ վարքի վրա հիմնված երևակայության հետևանք է, քանի որ Անտիոքի դուքսն ամենայն հավանականությամբ զարմուհու վրա ունեցած ազդեցության միջոցով փորձել է Լյուդովիկոսի բանակը պահել Անտիոքում, որը Երուսաղեմի թագուհի Մելիսինդայի հորդորներով շտապում էր միավորվել Կոնրադ III-ին<sup>296</sup>: Դեպքերի ընթացքն ապացուցեց Ռայմունդի ճշմարտացիությունը. Կոնրադ III-ը Երուսաղեմի թագավոր Բալդուին III-ի (1143-1162 թթ.) խորհրդով բանակը շարժում է Դամասկոսի էմիրության դեմ ու պարտություն կրում: 1149 թ. նրան հետևում է նաև Լյուդովիկոսը<sup>297</sup>: Ստեղծված պայմաններում Ռայմունդ Պուատյեի միակ

<sup>293</sup> Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 412, Dédéyan G., Les pouvoirs arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1144), t. 4, pp. 1107-1119, 1132-1138.

<sup>294</sup> Ibn-Alatyr, op. cit., pp. 457-458, 480-482, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 728-732 և 775-789. Եդեսիայի կոմսության անկման մասին մանրամասն տե՛ս Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 1-3 (1964 թ.), էջ 59-80, 4-6 (1964 թ.), էջ 207-222, № 7-9 (1964 թ.), էջ 365-375:

<sup>295</sup> Ալիշան Լ., նշվ. աշխ., էջ 392:

<sup>296</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 751-753, 769-771, Duby G., Dames du XII siècle, t. 1, Paris, 1995, p. 21-25 հմմտ. Перну Р., Алиенора Аквитанская, с. 75, 79-80.

<sup>297</sup> Երկրորդ խաչակրաց արշավանքի ընթացքն ամբողջությամբ տե՛ս Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 734-770.

դաշնակիցը դառնում է ահաբեկիչ ասսասինների պարագլուխ Ալի իբն-Վաֆան: 1149 թ. գարնանը Նուր ադ-Դինը պաշարում է Օրոնտի արևելյան մասում Անտիոքի դքսությանը պատկանող միակ կետը՝ Ինաբ (Էննեհ) ամրոցը: Ռայմունդը դուրս է գալիս նրա դեմ, բայց Մուրադի (Մարրաթայի) ակունքների մոտ ընկնում է շրջապատման մեջ և 1149 թ. հունիսի 29-ին սրախողխող է լինում: Անտիոքի պաշտպանության գործն իրենց վրա են վերցնում պարիրարք Էմերին ու Ռայմունդի այրի Կոնստանցիան: Օգնության է հասնում նաև Բալդուին III-ը: Նուր ադ-Դինի բանակը, պատրաստ չլինելով երկարատև դիրքային պատերազմ մղել՝ հեռանում է<sup>298</sup>: Անտիոքում իշխանությունն անցնում է Կոնստանցիայի ձեռքը:

XII դ. 30-40 ական թթ. իրադարձությունները վտանգի տակ էին առել Ռուբինյանների գոյությունը, սակայն Կոստանդնուպոլսի գերությունից փրկված Թորոսը վերադառնում Կիլիկիա, որի մասին տեղեկություններն այսպիսին են.

- Միքայել Ասորու վկայությամբ<sup>299</sup> Թորոսը Կիլիկիայում ապաստանել է ասորի մետրոպոլիտ Աթանասիոսի մոտ, ապա անցել Ամուդա, որի բնակիչները բռնել են հույներին և ամրոցը հանձնել հայերին: Նրան հաջողվել է տիրել նաև այլ վայրերի ու իր շուրջը հավաքել շատ հայերի, ասորիների ու ֆրանկների:

- Ըստ հայկական աղբյուրների<sup>300</sup>, Թորոսին ազատ է արձակել անձամբ Հովհաննես Կոմնենոսը և նրան մասնակից դարձրել 1142 թ. արշավանքին, իսկ կայսեր մահվանից հետո նա մնացել է Կիլիկիայում: Նշվում է նաև, որ Թորոսը, հնարավոր է, չի եղել կայսեր հետ, այլ Անտիոքի վրայով է հասել Կիլիկիա, որտեղ Ստափանե եղբոր հետ տիրել է Ռուբինյանների ամրոցներին:

Հայոց պատմության մեջ Թորոսի կողմից իշխանության վերականգնումն ընդունված է համարել 1145 կամ 1148 թ.<sup>301</sup>: Անկախ իրարամերժ տվյալներից կարելի է փաստել, որ Թորոսը ողջ մնացած եղբայրներ Ստեփանեի ու Մլեհի հետ վերագրավում

<sup>298</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 771-775, Михаил Сириец, Хроника, Письменные памятники Востока 1975, с. 27, Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 436, Иоанн Киннам, указ. соч., с. 134-135, Ibn-Alatyr, op. cit., pp. 476, Успенский Ф. И., История крестовых походов, с. 367.

<sup>299</sup> Michel Le Syrien, op. cit., pp. 341.

<sup>300</sup> Vahram D'Edesse, op. cit., pp. 503 հմմտ. Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 100-101, Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 61:

<sup>301</sup> Տե՛ս Տեր-Ղևոնդյան Վ. Ա., Կիլիկյան Հայաստանն ու Սիրիան XII դարի 40-70-ական թթ., ՊԲՀ, № 2 (1986), էջ 123, Բոգոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 173-185:

է հայրենական ժառանգությունը, համագործակցության հաստատում բյուզանդական սպառնալիքը թոթափել ցանկացող խաչակիրների հետ<sup>302</sup>, առանց թյուրքերի հետ բախումների մտնում Անարզաբա, մինչև 1151 թ. հույներից հետ վերցնում Վահկան, Թիլը, Մամեստիան<sup>303</sup> պահպանելով 1150 թ. ժուլեն II-ի կին Բեատրիսի կողմից Գրիգոր Գ կաթողիկոսին շնորհված Հռոմկլան<sup>304</sup>:

Մանուել Կոմենենոսը չհաշտվելով Կիլիկիայում ունեցած դիրքերի կորստի հետ՝ Թորոսի դեմ է ուղարկում իր հորեղբորորդի Անդրոնիկոսին: Վերջինիս միանում են կայսեր վասալներ Օշին Լամբրոնացին, Պապերոնի տեր Սմբատը, Բարձրբերդի իշխան Վասիլն իր եղբայր Տիգրանի հետ (հավանաբար Նաթանայելյաններ) և Դերենը<sup>305</sup>: Գրիգոր Երեցը գրում է, որ հայերն ահ տածելով դեպի հունաց կայսրը, աղաչում էին խաղաղ ճանապարհով նրան հպատակ մնալ, բայց Անդրոնիկոսը 1152 թ. պաշարում է Մամեստիան: Սակայն Թորոսը գիշերային գրոհով պարտության է մատնում հույներին՝ ստիպելով Անդրոնիկոսին փախչել Անտիոք<sup>306</sup>:

Մանուել I-ը ցանկանում էր միջամտել նաև Անտիոքի գահաժառանգության հարցին, առավել ևս, որ Կոնստանցիան պատրաստվում էր դքսության գործերը վստահել նրան<sup>307</sup>: Սակայն Ռայմունդի օրոք և Լյուդովիկոսի արշավանքից հետո դքսությունում հաստատված ֆրանսիացի ասպետներն այլ ծրագիր ունեին. Շամպայնի ազնվական տներից մեկի ներկայացուցիչ Ռենո (Ռայնալդ, Ռենադտ) դե Շատիյոնը, որը հիշատակվում է դեռևս 1149 թ. ճակատամարտում<sup>308</sup>, 1153 թ. գարնանն ամուսնանում է Կոնստանցիայի հետ և մանուկ Բոհեմունդի անչափահասության ընթացքում հռչակվում Անտիոքի ռեգենտ (խնամակալ)<sup>309</sup>:

<sup>302</sup> Успенский Ф. И., История Византийской империи XI-XV вв., Восточный вопрос, с. 214.

<sup>303</sup> Սամուէլի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 129, 131, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 170:

<sup>304</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 168, Michel Le Syrien, op. cit., pp. 342-343.

<sup>305</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 170-171 հմմտ. Каждан А. П., указ. соч., с. 132.

<sup>306</sup> Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 442-444 հմմտ. Иоанн Киннам, указ. соч., с. 133, 135-136, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 102, Տէր-Ղազարեան Յ., նշվ. աշխ., էջ 265:

<sup>307</sup> Կայսրն առաջարկում էր Կոնստանցիային ամուսնանալ իր մահացած քրոջ ամուսնու՝ տարեց Հովհաննես Կեսարի հետ: *Տէս Иоанн Киннам, указ. соч., с. 133, 135, 196, Chalandon F., Les Comnènes, Հատված. թարգմ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 170:*

<sup>308</sup> Ibn-Alatyr, op. cit., p. 476.

<sup>309</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., p. 802.

Այդ տարիներին Կիլիկիայի ու Անտիոքի ընդհանուր խնդիրը Ռումի սուլթանությունն էր: Սուլթան Մասուդը 1153-1154 թթ. Բյուզանդիայի դրդմամբ մի քանի անգամ ասպատակում է Կիլիկիայի հյուսիսն, իսկ 1154 թ. գարնանն իր որդի Յաղուբի գլխավորությամբ 3 հազարանոց զորագունդ ուղարկում Անտիոքի դեմ: Անտիոքի Դռնակ կոչվող վայրում նա բախվում է Բաղրասի Տաճարականների հետ, որոնց օգնում էր Թորոսի եղբայր Ստեփաննի հայկական զորախումբը: Թուրքերը ջախջախվում են և ցիրուցան լինում<sup>310</sup>: Անտիոքին տիրելու մեկ այլ փորձ արդեն Մասուդի որդի Ղլիճ-Արսլան II-ի (1156-1192 թթ.) կողմից կատարվում է 1157 թ.<sup>311</sup>:

Հայ-անտիոքյան հետագա մերձեցումը կանխելու նպատակով Բյուզանդիան սկսում է ուշադրություն դարձնել Ռենոյի վրա: Կառավարելով հիմնականում հույներով ու հայերով բնակեցված Անտիոքում՝ նա չէր կարողացել թոթափել նախկին դքսերից ժառանգած վասալությունը Մանուել Կոմենենոսից և միջոցների բացակայությունը լրացնում էր Անտիոքի պատրիարքի ու հոգևորականության վրա գործադրած ճնշումներով<sup>312</sup>: Կայսրը Ռենոյին Թորոսի դեմ տրամադրելու համար հորդորում է (ավելի ստույգ հրամայում է) հավաքել անտիոքյան ասպետներին, ներխուժել իրեն անվանապես պատկանող Կիլիկիա ու պատժել ըմբոստացած իշխանին: Դրա դիմաց Մանուելը խոստանում էր արշավանքի ծախսերը վերցնել իր վրա: 1155/6 թ. Ռենոն ուղղվում է դեպի Կիլիկյան Հայաստան: Բացի այդ, Ռենոյի և Թորոսի միջև ևս առկա էին տարաձայնություններ Բաղրասի, Դարպասակի և Համայի պատկանելության շուրջ<sup>313</sup>: Ռենոյին մտահոգում էր նախկինում ֆրանկներին պատկանած բերդերը Տաճարականներին հանձնելու հարցը, որոնք վերահպատակեցվել էին Հովհաննես II-ի կողմից, ապա գրավվել Թորոսի կողմից<sup>314</sup>: Հայկական աղբյուրներում չարձանագրված այս բախումը տեղի է ունեցել Ալեքսանդրեթի ու Բաղրասի հատվածում: Գիյոմ Տուրացին և Բար Հեբրեոսը հաղթող են հռչակում ֆրանկներին<sup>315</sup>, մինչդեռ Միքայել Ասորու հայերեն թարգմանության մեջ գրված է, որ բազմաթիվ զոհեր տալով՝ Ռենոն

<sup>310</sup> Tournebize F., op. cit., p. 177, Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 446-448:

<sup>311</sup> Ибн-Каланиси, указ. соч., с. 240.

<sup>312</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 816-817, Иоанн Киннам, указ. соч., с. 200.

<sup>313</sup> Deschamps P., op. cit., pp. 65-71, Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, pp. 141, 144, 149.

<sup>314</sup> Michel Le Syrien, op. cit., pp. 349.

<sup>315</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 834-835, Bar Hebraeus, op. cit., pp. 282-283.

Անտիոք է վերադարձել ամոթով: Սա կասկածելի է թվում, քանի որ ըստ նույն հեղինակի հայերը պայմանագիր են կնքում և Տաճարականներին հանձնում խնդրո առարկա բերդերը, ճիշտ է, վերջիններս երդվում են ցանկացած կարիքի ժամանակ օգնել նրանց<sup>316</sup>: Արդյունքում միաբանությունը հիմնվել է Հյուսիսային Ասորիքի ու Կիլիկիայի սահմաններին<sup>317</sup>:

Ռենոյի հարձակումը բոլոր ուսումնասիրություններում<sup>318</sup> թվագրվում է 1155/56 թ.: Մյուս կողմից, Յաղուբի դեմ Ստեփանեի և Տաճարականների համագործակցությունը կարելի է դիտարկել նաև որպես հայ-անտիոքյան դաշինքով նախատեսված պարտավորությունների կատարում, որի պարագայում Ռենոյի ու Թորոսի բախումը պետք է նախորդեր 1154 թ. սելջուկների հետ տեղի ունեցած դեպքերին<sup>319</sup>: Սա տրամաբանական է հաշտության պայմանների տեսանկյունից, բայց նկատենք, որ նրանք մինչև սեփական հարաբերությունների պարզաբանումն էլ կարող էին մահմեդականների դեմ համատեղ հանդես գալ:

Սակայն Ռենոն շուտով զենքն ուղղում է հենց բյուզանդիայի դեմ, որի պատճառը, հավանաբար, Մանուել կայսեր կողմից տրված խոստումի դրժումն էր. «... երբ կայսրը չէր ընդունում Ռենոյի խնդրագրերը..., նա անհրաժեշտ գումարն այլ կերպ որոշեց վերցնել...»<sup>320</sup>: Չպետք է բացառել նաև, որ Ռենոյին կայսեր դեմ տրամադրում էր Թորոսը՝ հրապուրելով նրան Կիպրոսի հարստությամբ: Այսպես, Ռենոն 1156 թ. հարձակվում է Կիպրոսի վրա: Այս իրադարձությունը մանրամասն նկարագրող մի շարք պատմիչներ չեն հիշատակում Թորոսի անունը<sup>321</sup>, մինչդեռ հայկական աղբյուրներն ու Միքայել Ասորին գրում են, որ Ռենոն այդ արշավանքը կատարել է ոչ միայն նրա սաղրանքով, այլ Թորոսը ևս նրա հետ նավարկել է Կիպրոս<sup>322</sup>: Թվում է,

<sup>316</sup> Michel Le Syrien, op. cit., pp. 349.

<sup>317</sup> Շեվալիե Մարի-Աննա, նշվ. աշխ., էջ 91:

<sup>318</sup> Schlumberger Gustave, Renaud De Chatillon, Paris, 1898, p. 63-64, Chalandon F., Les Comnènes, թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 176-177, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 2, pp. 334-335.

<sup>319</sup> Степаненко В. П., Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., ВВ, 1991, т. 52, с. 129. 131.

<sup>320</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 196.

<sup>321</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 834-835, Иоанн Киннам, указ. соч., с. 196-197 հմմտ. Bar Hebraeus, op. cit., p. 284.

<sup>322</sup> Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 464 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 176, Michel Le Syrien, op. cit., p. 350.

հայկական օգնություն Ռենոյին այնուամենայնիվ եղել է, սակայն Թորոսի անձնական ներկայությունը կասկածելի է: 1157 թ. աշնանը Թորոսն ընդհառաջ գնաց նաև Շեյզարի վրա հարձակվելու Երուսաղեմի թագավորի հրավերին ու իր զինվորներով մեկնեց Անտիոք, սակայն արշավանքն ի վերջո անհաջողության մատնվեց<sup>323</sup>:

Չնայած տարածաշրջանում Բյուզանդիայի դիրքերի թուլացմանը՝ Հալեպն ու Դամասկոսը միավորած Նուր ադ-Դինի ճնշումը ստիպեց Բալդուին III-ին փնտրել Բյուզանդիայի հովանավորությունը, որն ամրապնդվեց Բալդուինի և Մանուել I-ի ազգական Թեոդորայի ամուսնությամբ<sup>324</sup>: Մանուելը նրան օգնելու պատրվակով 1158 թ. շարժվում է Արևելք՝ իրականում նպատակ հետապնդելով վերահպատակեցնել Թորոսին և Ռենոյին<sup>325</sup>:

Բյուզանդական բանակն Ատալիայի ու Սելևկիայի վրայով առաջանում է դեպի Կիլիկիա և 1158 թ. աշնանը վերագրավվում Լոնգինիադան, Թիլը, Անարզաբան, Տարսոնը, Մամեստիան, Ադանան: Կայսրը մտադիր էր Մամեստիայում ձմեռելուց հետո իջնել Անտիոք ու հաշվեհարդար տեսնել Ռենո դե Շատիյոնի հետ: Վերջինս շտապում է հանձնվել կայսեր ողորմածությանը<sup>326</sup>՝ պարտավորվելով.

- Մանուել I-ին ճանաչել Անտիոքի տիրակալ:
- Կայսեր պահանջով զորք տրամադրել Բյուզանդիային:
- Անտիոքի լատին պատրիարքին փոխարինել հունականով:

Կայսրը Բալդուին III-ի, Ռենոյի, Տաճարականների և այլ ասպետական միաբանների բարեխոսությամբ ընդունում է նաև Թորոսին<sup>327</sup>: Արդյունքում նա.

- Ճանաչում է Մանուել I-ի գերիշխանությունը:
- Հրաժարվում Կիլիկիայի վրա ունեցած իր հավակնություններից:
- Մանուելը Թորոսին շնորհում է սեբաստոսի տիտղոս:

<sup>323</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 847-851.

<sup>324</sup> Նույն տեղում էջ 845-846, 857-859:

<sup>325</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 192, 195-196, Vahram D'Edesse, op. cit., p. 504, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 102, Բոգոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 205:

<sup>326</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 198-201, Никита Хониат, История, т. 1, с. 130-131, Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 464, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 859-863, Chalandon F., Les Comnènes, թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 183:

<sup>327</sup> Vahram D'Edesse, op. cit., p. 505, Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 464-466, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 102, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 178-179, Иоанн Киннам, указ. соч., с. 206.



1159 թ. գարնանը Մանուել I-ը մտնում է Անտիոք<sup>328</sup>, որտեղ Տաճարականների, Ռենո դե Շատիյոնի ու Թորոս II-ի մասնակցությամբ հունա-լատինական մեծ արշավանք է նախապատրաստվում Նուր ադ-Դինի դեմ, սակայն Կոստանդնուպոլսից ստացված գրությունը պահանջում է կայսեր արագ վերադարձը մայրաքաղաք: 1159 թ. մայիսին Մանուել I-ը համաձայնության գալով Նուր ադ-Դինի հետ՝ Կիլիկիայով և Փոքր Ասիայով վերադառնում է Կոստանդնուպոլիս<sup>329</sup>: Կասկածից վեր է, որ կայսեր հիմնական նպատակը Կիլիկիայի ու Անտիոքի հպատակեցումն էր<sup>330</sup>: Հալեպի գրավումից հետո հեռավոր Կոստանդնուպոլսից հնազանդություն պահանջել ֆրանկներից իրական չէր:

Բյուզանդական բանակի հետ Թորոսը վերադառնում է Անարզաբա և այնտեղից անցնում Վահկա<sup>331</sup>: Բյուզանդիան իր ուշադրությունը չէր շեղում Արևելյան գործերից: Մանուել I-ը 1160 թ. վերջերին Պաղեստին է ուղարկում Հովհաննես Կոնտոստեփանոսին, հանձնարարելով նրան, Ռումի դեմ պայքարում ներգրավել Բալդուին III-ին, Ռենոյին ու կիլիկյան ուժերը՝ Թորոսի, Տիգրանի, Քրիստափորի և Կոկովասիլ եղբայրների գլխավորությամբ, որոնք հաջորդ տարի ջարդում են թյուրքական 22 հազարանոց զորքը<sup>332</sup>:

Թորոսի և Ռենոյի համագործակցությունն ավարտվում է շատ անսպասելի. տեղեկանալով, որ Մարաշի, Տլուքի ու Եդեսիայի միջև ընկած գյուղերը բավական անպաշտպան են, Ռենոն շտապում է թալանել այդ հողերը: Հետ դարձի ճանապարհին՝ 1160 կամ 1161 թ. նոյեմբերին, նա բախվում է Նուր ադ-Դինի ազգական Մեջդ Էդ-դին իբն Դայեին և գերի ընկնում<sup>333</sup>:

<sup>328</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 207, Никита Хониат, История, т. 1, с. 137-139.

<sup>329</sup> Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 466-470, Иоанн Киннам, указ. соч., с. 210-211, Никита Хониат, История, т. 1, с. 139, Ибн-Каланиси, указ. соч., с. 251-252, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 863-864. *Բյուզանդիայի համար այդ պայմանագիրը նպաստավոր էր այնքանով, որ Մանուել I-ին հաջողվեց Նուր ադ-Դինին դուրս բերել կայսրության ամենավրանգավոր թշնամիներից մեկի՝ Ռումի սուլթանության դեմ: Տե՛ս Տեր-Ղևոնդյան Վ. Ա., Կիլիկյան Հայաստանն ու Սիրիան XII դարի 40-70-ական թթ., ՊԲՀ, № 2 (1986), էջ 124:*

<sup>330</sup> Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 468, Chalandon F., Les Comnène, Études sur l'empire Byzantin au XI et au XII siècles, Jean II Comnène (1118-1143), et Manuel I Comnène, (1143-1180), pp. 454-455, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, № 10-12 (1964 թ.), էջ 537-538:

<sup>331</sup> Vahram D'Edesse, op. cit., p. 505, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 102:

<sup>332</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 218-220.

<sup>333</sup> Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 476 հմմտ. Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 868-869.

Ռենոյի գերության ավելի տրամաբանական տարեթիվը կարելի է համարել 1161 թ. նոյեմբերը, քանի որ հենց այդ ժամանակ է Մանուել I Կոմնենոսը վերանայում Տրիպոլի կոմս Ռայմունդ II-ի (1137-1152 թթ.) դստեր հետ ամուսնանալու որոշումն ու խնդրում Ռայմունդ Պուտյեի և Կոնստանցիայի դուստր Մարիա Անտիոքացու ձեռքը<sup>334</sup>։ Բանն այն է, որ Ռենոյի գերության հետևանքով Անտիոքի գահը մնացել էր թափուր և դքսությունը կայսրությանը ենթարկելու պատեհ առիթ ընձեռել, առավել ևս որ Կոնստանցիան քաղաքը կառավարելու դիմաց հպատակվելու պատրաստակամություն հայտնեց Մանուելին։ Գահաժառանգության խնդիրն ըստ ասորական աղբյուրների<sup>335</sup>, լուծվում է միայն Թորոսի II-ի ակտիվ միջամտությամբ, որը դքսության գահին հաստատում է Բոհեմունդ III-ին (1163-1201 թթ.)։

Ամենայն հավանականությամբ սա չափազանցություն է, քանի որ դրան անտեղյակ են հայ հեղինակներն, իսկ լատին աղբյուրներն Անտիոքի փրկիչ են անվանում Բալդուին III-ին<sup>336</sup>։ Ուստի հավանական է, որ ֆրանկները մերժել են օտար միջամտության դիմող Կոնստանցիային ու անցել Բոհեմունդ III-ին պաշտպանող Բալդուինի ճամբար, իսկ Թորոսը և հունական զորքը, հասնելով Անտիոք, բախվել են քաղաքում տիրող տրամադրություններին և ճիշտ գնահատելով Նուր ադ-Դինի սպառնալիքը՝ նույնպես հարել Բոհեմունդին։

Բյուզանդական գերիշխանությունը թոթափելու հնարավորություն Թորոս II-ի համար ստեղծվում է, երբ հույն կառավարիչ Անդրոնիկոս Ֆերբենոսի կողմից 1162 կամ 1165 թ. սպանվում է Թորոսի եղբայր Ստեփանեն<sup>337</sup>։ Չնայած Անդրոնիկոսը Երուսաղեմի թագավոր Ամորի I-ի (1162-1173 թթ.) բարեխոսության հաշվին կանգնեցնում է Դաշտային Կիլիկիա մտած Թորոսին<sup>338</sup>, այնուամենայնիվ Մանուել Կոմնենոսն Անդրոնիկոսին փոխարինում է Կոստանդին Կալամանոսով<sup>339</sup>։

<sup>334</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 872-876, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, pp. 17-18, Иоанн Киннам, указ. соч., с. 229-233, Никита Хониат, История, т. 1, с. 147.

<sup>335</sup> Michel Le Syrien, op. cit., p. 358, Bar Hebraeus, op. cit., pp. 287-288.

<sup>336</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 872.

<sup>337</sup> Գրիգորի Երիցոյ, նշվ. աշխ., էջ 478 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 186: *Չպետք է բացառել, որ Ստեփանենի սպանությունը եղել է նրա վարած նվաճողական քաղաքականությունը կանխելու փորձ: Տե՛ս Иоанн Киннам, указ. соч., с. 251, Մուրաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 392:*

<sup>338</sup> Michel Le Syrien, op. cit., p. 356.

<sup>339</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 237-238, 318.

XII դ-ի 60-ական թվականների մերձեցումը խաչակիրների ու Ռուբինյանների միջև, թելադրված էր Նուր ադ-Դինին դիմակայելու հետ, որը 1162 թ. նոր թափով էր գրոհում Տրիպոլիի կոմսության ու Անտիոքի սահմանները<sup>340</sup>: 1163 թ. նա հարձակվում է Հարիմ ամրոցի վրա: Բոհեմունդ III-ին օգնության են շտապում Տրիպոլիի կոմս Ռայմունդ III-ը (1152-1187 թթ.), Կիլիկիայի հայկական և հունական զորքերը Թորոսի, նրա եղբայր Մլեհի ու Կալամանոսի առաջնորդությամբ: Իրենց կարգապահությամբ հայտնի այս ուժերի առկայությունն էլ սկզբում ստիպեց Նուր ադ-Դինին նահանջել Արտախ: Ֆրանկները և հույները որոշում են հետապնդել թշնամուն, որը Թորոսը սխալ է համարում և հայկական իր միավորով չի մասնակցում դրան: Նուր ադ-Դինը հույն-խաչակրաց միացյալ բանակը Հարիմի տակ գցում է ծուղակը ու 1164 թ. օգոստոսի 11-ին կոտորում նրանց զորքը, գերում Բոհեմունդին, Տրիպոլիի կոմս Ռայմունդին, Կալամանոսին և շատ այլ ասպետների<sup>341</sup>:

Կիննամոսն այս արշավանքն անվանում է «հոռմեացիների գործ», որի գլխավոր հերոս ներկայացվող Կալամանոսի մեկ սխալի հետևանքով էլ պայմանավորում է պարտությունը: Ըստ նրա Թորոսը նույնպես պարտություն է կրել, իսկ անպաշտպան Անտիոքի վրա չհարձակվելու Նուր ադ-Դինի որոշումը բացատրում է հույներից հասցված հարվածի ու քաղաքին սպառնացող վտանգի դիմաց Մանուել I-ի արագ հակահարված տալու մտադրությամբ<sup>342</sup>, որը շատ հավանական է թվում:

Նուր ադ-Դինի առաջխաղացումը կասկածի տակ էր դնում խաչակրաց պետությունների գոյությունն ընդհանրապես, ուստի Թորոսն ու Մլեհը հարձակվում են Մարաշի վրա, գերում մոտ 400 մահմեդականների և ստիպում Հալեպի ամիրային գնալ մի շարք զիջումների<sup>343</sup>:

<sup>340</sup> Մանրամասներ տե՛ս Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 894-895, Al-Dahabi, Les dynasties de l'Islam, extraits (1055-1317), trad. Nègre A., Damas, 1979, p. 134, Michel Le Syrien, op. cit., p. 358.

<sup>341</sup> Ibn-Alatyr, op. cit., pp. 537-540, Michel Le Syrien, op. cit., p. 359, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 895-897, Անանուն Եղեսացի, նշվ. աշխ., էջ 122-123, Տեր-Ղևոնդյան Վ. Ա., Կիլիկյան Հայաստանն ու Սիրիան XII դարի 40-70-ական թթ., ՊԲՀ, № 2 (1986), էջ 125:

<sup>342</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 237-238, Ibn-Alatyr, op. cit., pp. 540.

<sup>343</sup> Տեր-Ղազարեան Յ., նշվ. աշխ., էջ 266, Տեր-Ղևոնդյան Վ. Ա., Կիլիկյան Հայաստանն ու Սիրիան XII դարի 40-70-ական թթ., ՊԲՀ, № 2 (1986), էջ 125:

Ֆրանկները գերության մեջ մնացին բավական երկար: Համեմատաբար շուտ՝ մոտ մեկ տարի անց, ազատվեց Անտիոքի դուքսը<sup>344</sup>: Բոհեմունդի ազատումը կարելի է մեկնաբանել երկու կարևոր պատճառով.

- Դա բյուզանդական միջամտության արդյունք էր, քանի որ Բոհեմունդը Մանուելի աներծագն էր: Պատահական չէ, որ գերադարձ Բոհեմունդը մեկնում է Կոստանդնուպոլիս, Անտիոքում վերականգնում պատրիարք Աթանասի (Աֆանասի) Մանասեսի ուղղափառ ամբիոնը<sup>345</sup>: (Լատին պատրիարք Էմերի Լիմոժացին բանադրում է դքսին և հեռանում Երուսաղեմ<sup>346</sup>:

- Արձակելով դքսին՝ Նուր ադ-Դինը փորձում էր Անտիոքում նորից տեսնել երիտասարդ ու անփորձ Բոհեմունդին, քան թագավոր Ամորի I-ին:

Վերջին դեպքերը Կիլիկիայում և Անտիոքում հաստատվելու նոր հնարավորություն են տալիս Մանուել I-ին: 1166 թ. նա կրկին Կիլիկիա և Կիպրոս է ուղարկում Անդրոնիկոս Կոմենենոսին, որը Թորոսից պարտություն է կրում, թողնում Տարսոնն ու իջնում Անտիոք՝ կապերի մեջ մտնելով Ռայմունդ Պուատյեի դուստր Ֆիլիպպայի հետ: Հուսախաբ կայսրը Ֆիլիպպային կնության վերցնելու առաքելությամբ արևելք է ուղարկում Կոստանդին Կալամանոսին: Զորավարը ոչ միայն ձախողում է, այլ ընկնում Թորոսի ձեռքը և ազատվում փրկագնի դիմաց: Անդրոնիկոսն, իր հերթին, թողնում է Ֆիլիպպային, 1167 թ. անցնում Երուսաղեմ ու Բալդուին III-ի այրի Թեդորայի հետ փախչում մահմեդականների մոտ<sup>347</sup>: Փաստորեն, իրավիճակն այնքան էր փոխվել, որ Մանուել I-ը Թորոսին փրկագին էր վճարում, իսկ Բոհեմունդն ընդունում էր նրա պատժից խուսափող Անդրոնիկոսին:

Կյանքի վերջին տարիներին Թորոսը գժտվում է Մլեհի հետ, որը ապաստան է գտնում Նուր ադ-Դինի մոտ<sup>348</sup>: Աթաբեկը, նրան վստահում է իր հյուսիսային

<sup>344</sup> Ibn-Alatyr, op. cit., p. 540.

<sup>345</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 900-901, Bar Hebraeus, op. cit., p. 289.

<sup>346</sup> Michel Le Syrien, op. cit., pp. 360, 371. *Աթանասի Մանասեսի մասին մանրամասներ տե՛ս Failler A., Le patriarche d'Antioche Athanase ler Manassès (1157-1170), Revue des Études byzantines (այսուհետ՝ RĒB), Paris, 1993, t. 51, pp. 63-75.*

<sup>347</sup> Никита Хониат, История, т. 1, с. 176-182, Иоанн Киннам, указ. соч., с. 277-278, Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., p. 943, Բոզոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 210-214: *Այնուանենայնիվ, Եգիպտոսի դեմ համադեղ պայքարի հողի վրա 1165-1177 թթ. ընթացքում պահպանվում էր հույն-խաչակրաց մերձեցումը: St'ou Lilie Ralph-Johannes, op. cit., pp. 309-320.*

<sup>348</sup> La Chronique attribuée au connétable Smbat, p. 49.

տիրույթների կառավարումը, իսկ Թորոսի մահից հետո (մոտ 1169 թ.), օգնում նրան մտնելու Կիլիկիա և պայքար սկսել Թորոսի մանկահասակ որդի Ռուբենի դեմ: Մլեհի արշավանքը վերջացավ գահի բռնագրավմամբ, իսկ նրա խնամակալ ֆրանկ Թումասը փախավ Անտիոք<sup>349</sup>:

Այնուհետև Մլեհը Նուր ադ-Դինի հովանու ներքո զինված պայքար է սկսում հույն և ֆրանկ իշխանների դեմ: Նա մահմեդական ուժերի օգնությամբ նախ հաղթում է Միքայել Վրանոսին, Անդրոնիկոս Ֆերբենոսին ու մի քանի այլ նշանավոր բյուզանդական հրամանատարների, ապա Կոստանդին Կալամանոսին<sup>350</sup>: Այդ հաջողությունները թույլ տվեցին Մլեհին 1172 թ. դեկտեմբերին 1173 թ. հունվարին տիրել Ադանային, Մամեստիային, Տարսոնին<sup>351</sup>, սակայն Դաշտային Կիլիկիայի վերջնական միացումը Ռուբինյան իշխանությանը տեղի ունեցավ ավելի ուշ:

Մլեհը դուրս է գալիս նաև իր նախկին դաշնակիցների՝ Տաճարական միաբանների դեմ, որոնք տիրում էին Դարպսակ և Բաղրաս ամրոցներին: Նա զրկում է Տաճարականներին Կիլիկիայում ունեցած բոլոր կալվածքներից՝ առաջացնելով Անտիոքի դքսի դժգոհությունը: Մլեհը վիրավորում է նաև Ամորի I-ին, երբ Մամեստիայի մոտ 1171 թ. ձերբակալում է Անտիոքից Կոստանդնուպոլիս անցնող Ստեֆան Սանսերացուն: Թագավորն Անտիոքից մի քանի անգամ պատգամավորներ է ուղարկում Մլեհի մոտ, բայց անընդհատ ձգձգվող տեսակցությունը ստիպում է Բոհեմունդին ու Ամորիին դիմել ուժի, որն անկասկած հետպնդում էր ոչ թե իրենց դաշնակից Բյուզանդիայի, այլ Անտիոքի շահերի պաշտպանությունը: Մլեհին փրկում է Նուր ադ-Դինի զորքերի կողմից անդրհորդանանի կարևոր ամրություններից մեկի՝ Կրակի (Կրակ դե Մոաբ) պաշարումը<sup>352</sup>: Սակայն Երուսաղեմ վերադառնալուց առաջ,

<sup>349</sup> Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 102, Bar Hebraeus, op. cit., p. 291, La Chronique attribue au connntable Smbat, p. 54, Michel Le Syrien, op. cit., p. 362.

<sup>350</sup> Иоанн Киннам, указ. соч., с. 317-318, 320.

<sup>351</sup> Ibn-Alatyr, op. cit., p. 587, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 103, Իբն Ալ-Աթիր, Լիակատար պատմություն, էջ 263, Спепаненко В., Киликийский вопрос в международных отнош. в 50-70-х годах XII в., ВВ, 1991, т. 52, с. 132-135, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 57.

<sup>352</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 988-993. Տաճարականներին Կիլիկիայից վարարելու մասին Գիյոմ Տուրացու տեղեկություններում նշված չեն ամրոցների կոնկրետ անվանումները, սակայն Բաղրասի հարցով հետազայում նրանց մեջ առաջացած նոր հակամարտությունը և Լևոն II-ի կողմից այդ ամրոցի յուրացումը հիմնավորելու նպատակով Մլեհի սույն ձեռնարկի վկայակոչումը (Cahen C., La Syrie du nord l'epoque des croisades et la principautn franque d'Antioche, p. 600, Շեվալիե Մարի-Աննա, նշվ. աշխ., էջ 11) փաստում է, որ խոսքն առաջին հերթին Բաղրասի և նրա շրջակայքի մասին է:

ըստ ասորական աղբյուրների, նա հասցնում է հնազանդության բերել Մլեհին<sup>353</sup>։ Դժվար է սրա հետ համաձայնվել, քանի որ նա դրանից հետո էլ շարունակեց դաշնակցել Նուր ադ-Դինի հետ։

Ամորի I-ի և Բոհեմունդի հարձակումը տատանվում է 1169-1173 թթ. միջև<sup>354</sup>, քանզի Մուաբն այս ընթացքում Նուր ադ-Դինի բանակների կողմից պաշարվել է երեք անգամ<sup>355</sup> 1170 թ. ապրիլ-մայիսին, 1171 թ. աշնանը և 1173 թ. ամռանը։

Նշենք մի քանի հանգամանքներ, որոնք Գիյոմ Տուրացու նկարագրած արշավանքի ավելի հավանական տարեթիվ են դարձնում 1173 թ. առաջին կեսը։

- Ամորիի և Բոհեմունդի հարձակումը հեղինակի մոտ հետևում է Ամորի I-ի կոստանդնուպոլսյան այցելությանը (1171 թ. մարտից մինչև հուլիսի կեսերը)<sup>356</sup>։

- 1171 թ. աշնանը աթաբեկը զբաղված էր Ռումի դեմ պայքարով ու իր վասալներին, այդ թվում և Մլեհին, ուղարկել էր Ղլիճ Արսլան II-ի դեմ<sup>357</sup>։

- Ֆրակներն անցել են ծաղկած արտերով, որը բացառում է 1171 թ. աշունը։

- Չնայած Նուր ադ-Դինն անձամբ մասնակցել է միայն 1170 թ. ձեռնարկին, բայց այդ մասին Տուրացին կարող էր և չիմանալ։

Հակառակորդների շրջապատում հայտնված Անտիոքի դքսությանը մնում էր խորացնել հարաբերությունները Բյուզանդիայի հետ։ Դրան պետք է նպաստեին ամուսնությունների շարքը և Անտիոքի մասնակցությունը կայսրության ձեռնարկումներին<sup>358</sup>։ Բայց ֆրանկների ու հույների հակամեծիյան դաշինքը կյանքի

<sup>353</sup> Michel Le Syrien, op. cit., p. 363, Bar Hebraeus, op. cit., pp. 295 հմմտ. Տեր-Ներսեսյան Ս. Մ., նշվ. աշխ., հատված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 393-394։

<sup>354</sup> Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 414, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 2, pp. 581-583, Տեր-Ներսեսյան Ս. Մ., նշվ. աշխ., հատված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 393-394 հմմտ. Степаненко В. П., Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., ВВ, 1991, т. 52, с. 131-133.

<sup>355</sup> Ibn-Alatyr, op. cit., pp. 570-571, 581-582, 592-593.

<sup>356</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 980-988.

<sup>357</sup> Michel Le Syrien, op. cit., pp. 373-374.

<sup>358</sup> Բոհեմունդը 1174/75 թ. իր երկրորդ ամուսնությամբ կապվում է Մանուելի ազգական Թեոդորա Կոմնենոսի հետ (*Հերում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 109*)։ Մինչ այդ նրա քույրը՝ Ագնեսան, Կոստանդնուպոլսում մոտ 1170 թ. ամուսնացել էր Հունգարիայի ապագա թագավոր Բելլա (Ալեքսեյ) III-ի (1172-1196 թթ.) հետ։ Բոհեմունդ III-ի եղբայր Բալդուինը քրոջը Բյուզանդիա ուղեկցելուց հետո հավանաբար ծառայության է անցնում Մանուելի արքունիքում, քանի որ նրան որպես կայսերական բանակի աջ թևի հրամանատար 1176 թ. տեսնում ենք Միրիոկեֆալոնի ճակատամարտում, ուր ընկնում է հերոսի մահով։ *Տե՛ս Никита Хоният, История, т. 1, с. 219, 232-233.*

չկոչվեց երկու պատճառով. նախ Մլեհի քաղաքականությունը ազնվականության շրջանում հարուցեց դժգոհություն ու նա իր հովանավորյալ Նուր ադ-Դինի մահից շատ չանցած՝ 1175 թ., սպանվեց Սիս քաղաքում, ապա 1176 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Միրիոկեֆալոնի ճակատամարտում Ռումի սուլթան Դիհ Արսլան II-ը պարտության մատնեց Բյուզանդիային<sup>359</sup>՝ խորտակելով Արևելքում ամրանալու կայսրության բոլոր հույսերը:

Ամփոփելով 1137-1176 թվականների զարգացումները՝ նշենք.

ա. Հովհաննես II-ի և Մանուել I-ի հաղթանակներն Անտիոքում ու Կիլիկիայում ի վերջո կայսրությանը չբերեցին ցանկալի արդյունք, իսկ Միրիոկեֆալոնի պարտությունից հետո Բյուզանդիան վերջնականապես հեռացավ երկրամասից:

բ. Թորոս իշխանի և լատինական պետությունների համագործակցությունը հիմնականում կազմված էր Բյուզանդիայի ու Հալեպի մահմեդականների դեմ հանդես գալու առանձին օրինակներից, փոխադարձ հավակնություններն անհնար էին դարձնում որևէ երկարատև միություն:

գ. Քրիստոնյաների անհաշտության և մահմեդականների դեմ ոչ վճռական գործողությունները թույլ տվեցին Նուր ադ-Դինի ռազմիկ Սալահ ադ-Դինին 1169 թ. իրեն ենթարկել Կահիրեն ու 1171 թ. հիմնել նոր՝ Այուբյան հարստությունը: Սալահ ադ-Դինը 1174 թ. գրավեց նաև Դամասկոսը, Հոմսը, Համան և Հալեպը<sup>360</sup>, որով մեկ կառավարչի ձեռքում հայտնվեց Եգիպտոսն ու մահմեդական Ասորիքը:

դ. Ստեղծված պատկերը փոխեց իրերի դասավորությունը Կիլիկյան Հայաստանի ու Անտիոքի փոխհարաբերություններում: Ռուբինյանները, խուսանավելով տարբեր ուժերի միջև, կարողացան աստիճանաբար դուրս գալ Բյուզանդիայի ստորակայի կարգավիճակից, ապա օգտվելով լատին պետությունների դժվարություններից, հավակնություններ հանդես բերեցին հարևան դքսության նկատմամբ: Դա այլևս չէր կարող նախկին վիճակին վերադարձնել Անտիոքի և Սսի փոխհարաբերությունները, որոնք XII դ. 80-ական թթ. որակական այլ հարթություն են տեղափոխվում:

<sup>359</sup> Մանրամասներ տե՛ս Никита Хониат, История, т. 1, с. 225-256, Սամուէլի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 138:

<sup>360</sup> Անանուն Եղեսացի, նշվ. աշխ., էջ 151, Michel Le Syrien, op. cit., p. 380.

**§ 1. Ռուբինյանների ամրապնդումը Դաշտային Կիլիկիայում և Անտիոքը  
միացնելու նախադրյալները**

Մլեհից հետո հայ ավատները Ստեփանեի որդի Ռուբեն III-ի իշխանությամբ<sup>361</sup> (1175-1187 թթ.) փորձում են վերականգնել հարաբերությունները ֆրանկների հետ: Առաջին քայլը կատարվում է 1177 թ. դեկտեմբերին, երբ Բոհեմունդ III-ը Ռուբեն III-ի օգնությամբ<sup>362</sup> պաշարում է Հարիմ ամրոցը<sup>363</sup>, սակայն երկարատև պաշարումը ստիպեց Բոհեմունդին ընդունելու Հալեպի աթաբեկ Մելիք Սալեհի առաջարկը և խոշոր գումարի դիմաց 1178 թ. մարտին քաշվեց Անտիոք<sup>364</sup>: Այս միջադեպը կարելի է համարել XII դ. գրանցված վերջին գործողությունը, որտեղ Անտիոքի դուքսն ու Ռուբինյան իշխանը հանդես են գալիս համատեղ: Դրանից հետո Բոհեմունդը տրվում է դավադրություններին, վեճի բռնվում լատին հոգևորականության հետ՝ ստիպելով բազմաթիվ ասպետների ծառայության անցնել Ռուբենի մոտ<sup>365</sup>:

Բյուզանդիայի անհաջողությունները Ռուբինյաններին Դաշտային Կիլիկիայում վերջնականապես հաստատվելու հնարավորություններ են ընձեռում: 1182/3 թ. Ռուբենը գերում է դեռևս 1174/5 թ. Կիլիկիա ուղարկված Իսահակ Կոմնենոսին, գրավում Ադանան, Տարսոնը, Մամեստիան<sup>366</sup>: Իսահակ Կոմնենոսը հանձնվում է Տաճարականներին և ազատվում միայն Անդրոնիկոս I-ի (1182/3-1185 թթ.)

<sup>361</sup> Michel Le Syrien, op. cit., p. 380, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 192, Հերթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 102-103:

<sup>362</sup> Անանուն Եդեսացի, նշվ. աշխ., էջ 145-146 հմմտ. Michel Le Syrien, op. cit., pp. 380-382, 386-388.

<sup>363</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 1036-1037.

<sup>364</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 1047-1048 հմմտ. Անանուն Եդեսացի, նշվ. աշխ., էջ 146-147: Մանրամասներ տե՛ս Քասունի Ե. Հ., Ռուբեն Գ. Իշխանապետ և իր կրակը, էջ 26-33:

<sup>365</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 1069-1075.

<sup>366</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 192, Vahram D'Edesse, op. cit., p. 509, Հերթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 103: Այդ քաղաքների գրավման թվագրման շուրջ տե՛ս Քասունի Ե. Հ., Ռուբեն Գ. Իշխանապետ և իր կրակը, էջ 67-68:



օրոք<sup>367</sup>: Մեկ այլ վարկածի համաձայն, Իսահակը կնության է առել Թորոս II-ի դստերն ու անցել Անտիոք: Դա կարող է բացատրվել կիլիկյան ու անտիոքյան ուժերի հետ Իսահակ Կոմնենոսի համաձայնության գալու ցանկությամբ<sup>368</sup>:

Ազատվելով Կոստանդնուպոլսի ներկայացուցիչներից՝ Անտիոքն ու Կիլիկիան ներքաշվում են նոր հակասությունների մեջ, որի առիթ են դառնում.

- Կիլիկիայի ներքաղաքական հարցերում Բոհեմունդի միջամտությունը, որն օգնում էր Լամբրոնի Հեթումյաններին<sup>369</sup>:

- Տարսոնի պատկանելության հարցը, որը Բոհեմունդ III-ը ստիպված վաճառել էր Ռուբենին<sup>370</sup>: Այն վերադարձնելու նպատակով Բոհեմունդը 1185 թ. Անտիոք է հրավիրում Ռուբենին ու ձերբակալում նրան<sup>371</sup>: (Սմբատ Սպարապետը Ռուբենի այցը կապում է սեռական տենչանքների հետ<sup>372</sup>):

Հայկական աղբյուրների համաձայն Բոհեմունդն արշավում է դեպի Կիլիկիա, բայց Թիլ ամրոցից չի առաջանում՝ տեղեկանալով Ռուբենի եղբայր Լևոնի խնամակալությամբ Կիլիկիայում ամուր իշխանության հաստատվելու մասին<sup>373</sup>: Ասորական տարեգրությունների հաղորդմամբ, Բոհեմունդը մտել է Դաշտային Կիլիկիա, համառ մարտերի բռնվել Լևոնի հետ և պարտություն կրել<sup>374</sup>:

Դատելով դեպքերի հետագա ընթացքից՝ հայերը շոշափելի առավելության չեն հասել, քանի որ Ռուբենն ազատվում է հետևյալ պայմաններով.

- Անտիոքին է զիջվում Թիլը, Ճկերը և Սարվանդիքարը: Վճարվում է 1000 ոսկի դահեկան փրկագին (Սամուել Անեցու մոտ այն հասնում է անգամ 100 հազարի<sup>375</sup>):

---

<sup>367</sup> Никита Хониат, История, т. 1, с. 37.

<sup>368</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., p. 161, Мутафян К. З., Последнее королевство Армении, с. 35-38, Քասունի Ե. Հ., Ռուբեն Գ. Իշխանապետ և իր կտակը, էջ 49, 53-60, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 57-58:

<sup>369</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 193 հմմտ. Ճաշոց Հեթմոյ Արքայորդիոյ, ՀՁՀ, ԺԳ դ., էջ 586, Քասունի Ե. Հ., Ռուբեն Գ. Իշխանապետ և իր կտակը, էջ 70:

<sup>370</sup> Willermi Tyrensis Archiepiscopi, op. cit., pp. 1113-1114.

<sup>371</sup> Vahram D'Edesse, op. cit., pp. 509-510, Ճաշոց Հեթմոյ Արքայորդիոյ, ՀՁՀ, ԺԳ դ., էջ 586:

<sup>372</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 194, Смбат Спарамет, указ. соч., с. 107.

<sup>373</sup> Vahram D'Edesse, op. cit., p. 510, Ճաշոց Հեթմոյ Արքայորդիոյ, ՀՁՀ, ԺԳ դ., էջ 586, Սամուելի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 140-141:

<sup>374</sup> Michel Le Syrien, op. cit., p. 393, Bar Hebraeus, op. cit., pp. 319-320.

<sup>375</sup> Սամուելի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 140-141:

Որպես գրավական Ռուբենի քեռի Բակուրյանը պարտավորվում է Անտիոք ուղարկել Ռուբենի մայր Ռիտային ու այլ ազգականների<sup>376</sup>:

- Անտիոքին հանձնվեցին նաև Մամեստիան, Ադանան և Թոփրակկալեն<sup>377</sup>.

Ըստ ամենայնի, Ռուբենը նաև վասալական երդում է տվել Բոհեմունդին, որը հետագայում տարածվել է Լևոն II իշխանի վրա: Կարծիքը հենվում է Լևոնի Անտիոք գնալու, Բոհեմունդի կողմից ասպետ կարգվելու ու նրա մոտ ծառայության անցելու մասին եղած հաղորդման վրա<sup>378</sup>, քանի որ ավելի ուշ Լևոնը և Կիլիկիան Անտիոքի կողմից չեն հպատակեցվել:

Անտիոքին հանձնված ամրոցներից իրականում միայն Թիլը, Ճկերը և Սարվանդիքարը կարող էին վերահսկվել դքսության կողմից, ուստի ազատվելուց հետո Ռուբենին հաջողվում է հետ բերել դրանց մի մասը՝ սրելով Անտիոքի հետ եղած հակասությունները<sup>379</sup>: 1187 թ. Ռուբենն իշխանությունը հանձնում է Լևոնին և մտնում վանք, որտեղ շուտով մահանում է<sup>380</sup>: Այդ նույն ժամանակ՝ 1187 թ. հուլիսի 4-ին, Սալահ ադ-Դինը Հատտինում ջարդում է խաչակրաց բանակները, վերցնում Երուսաղեմն, այնուհետև մտնում Անտիոքի դքսության սահմաններ ու գրավում Ջաբալա, Շուղր, Լաոդիկեա, Բալատոնուս, Սահյուն, Ֆիհա, Բակաս և այլ ամրոցներ<sup>381</sup>: 1188 թ. Բաղրաս ու Դարպասակ բերդերի գրավումով<sup>382</sup> Սալահ ադ-Դինը կանգնում է Կիլիկիայի սահմանագլխին:

<sup>376</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 194, Vahram D'Edesse, op. cit., p. 510.

<sup>377</sup> Bar Hebraeus, op. cit., pp. 319-320, Միխայել Ասորի, նշվ. աշխ., էջ 492:

<sup>378</sup> Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 160-163:

<sup>379</sup> Bar Hebraeus, op. cit., pp. 319-320, Michel Le Syrien, op. cit., p. 394, Ճաշոց Հեթմոյ Արքայորդիոյ, ՀԶՀ, ԺԳ դ., էջ 586, Սամուէլի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 140-141:

<sup>380</sup> Vahram D'Edesse, op. cit., p. 510 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 194:

<sup>381</sup> Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիր. Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1972, էջ 309-310, Միխայել Ասորի, նշվ. աշխ., էջ 497: *Խաչակրաց պետությունների դեմ Սալահ ադ-Դինի հաղթանակների մանրամասներ տե՛ս L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 45-110, Смасюлевиш М. М., указ. соч., с. 339-373, Пувар Ж., указ. соч., с. 161-179, Nicholson H. J., op. cit., pp. 53-85, Какур Я., указ. соч., с. 128-133, Baldwin M. W., Raymond III of Tripoli and the Fall of Jerusalem (1140—1187), Princeton university press, 1936, pp. 105-135.*

<sup>382</sup> Ըստ Ալ-Ասիրի, Սալահ ադ-Դինը ուժով չի կարողացել տիրել Բաղրասին, բայց շրջապատման մեջ հայտնված Տաճարականները սուլթանի կողմից երաշխիքներ ստանալով՝ թողնում են բերդը, որի աշտարակին բարձրացվում է մահմեդական դրոշմը: *Տե՛ս Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 272-273, հմմտ. L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 136, Michel Le Syrien, op. cit., p. 400.*

Բոհեմունդ III-ը կարողացավ պահպանել Տրիպոլիի կոմսությունը, որը Ռայմունդ III-ի անժառանգության պատճառով վստահվել էր նրա որդի Ռայմունդին<sup>383</sup>, իսկ նրա գլխավորած անտիոքյան բանակը դարձավ Ռենո Սիդոնցու, Բալիան դ'Իբելինի և Տրիպոլիի իշխան Ռայմունդ III-ի ջոկատների հետ Հատտինի աղետից փրկված բացառիկ միավորներից<sup>384</sup>: Դա հնարավորություն էր տալիս, Անտիոքին վարել ինքնուրույն քաղաքականություն: Պատահական չէ, որ Լևոն II-ը 1188 թ. կնության առավ Անտիոքի դքսուհի Սիբիլլայի զարմուհի Իզաբելլային<sup>385</sup>, իսկ Սալահ ադ-Դինը Բաղդասից իջնելով Անտիոք՝ ուժ չունեցավ այն վերցնել և Բոհեմունդի հետ ուրա ամսվա չհարձակման պայմանագիր կնքեց 1188 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1189 թ. մայիսի վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար<sup>386</sup>:

Անտիոքի թուլացումը ճանապարհ էր հարթում Կիլիկիայի անվանական կախվածությունը չեզոքացնելու համար: Դրան նպաստեց երրորդ խաչակրաց արշավանքը, որը ղեկավարում էին Ֆրանսիայի արքա Ֆիլիպ II Օգոստոսը (1180-1223 թթ.), Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասիրտը (1189-1199 թթ.) և Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ I Շիկամորուսը (1152-1190 թթ.): Վերջինս 1189 թ. մայիսին հասնում է Բյուզանդիայի սահմաններին ու ստիպում Իսահակ II Անգելոսին (1185-1195/1203-1204 թթ.) բավարարելու իր պահանջները: Կայսրության տարածքում գերմանացիների դաշնակիցներ էին դարձել միաբնակ հայերը<sup>387</sup>, որոնց համագործակցությունը կապված էր ոչ թե դավանաբանական նմանությունների հետ ինչպես ներկայացնում է Նիկիտա Հոնիատեսը<sup>388</sup>, այլ հալածանքները թողափելու ցանկությամբ<sup>389</sup>: Սալահ ադ-Դինի ու խաչակիրների հետ Լևոնը նուրբ դիվանագիտական խաղ է սկսում, որում ներգրավված էին կաթողիկոս

<sup>383</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 72.

<sup>384</sup> Ришар Ж., указ. соч., с. 171, 184, 235.

<sup>385</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 201: Ֆ. Ուպենսկին *Իզաբելլային համարում է Բոհեմունդ III-ի աղջիկը: Տե՛ս Успенский Ф. И., История крестовых походов, с. 418.*

<sup>386</sup> Իբն Ալ-Աթիր, Պատմություն, էջ 273-274: 1289 թ. *Բոհեմունդը ուժ է ունեցել նույնիսկ հարձակվել Հարիմի վրա: Տե՛ս Bar Hebraeus, op. cit., p. 328.*

<sup>387</sup> Никита Хониат, История, т. 2, с. 64, 72-74, 82-83. *Բյուզանդիայով խաչակիրների անցման մասին տե՛ս Brand Charles M., Byzantium confronts the West: 1180—1204, Cambridge, Mass.: Harvard University Press, 1968, pp. 177-185.*

<sup>388</sup> Никита Хониат, История, т. 2, с. 64.

<sup>389</sup> Բարթիկյան Հ. Մ., Նոր նյութեր Կիլիկյան հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, ԲՄ, 1958, № 4, էջ 287:

Գրիգոր Դ Տղան (1173-1193 թթ.) և Տարսունի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին<sup>390</sup>:

Ռումի սուլթանությունում գերմանացիների կրած դժվարությունները հրատապ դարձրեցին օգնության անհրաժեշտությունը: Ֆրիդրիխ Շիկամորուսը երեք պատվիրակություն է ուղարկում Լևոնի մոտ՝ նյութական և ռազմական աջակցության դիմաց խոստանալով արքայական թագ պարգևել նրան: Լևոնը պատասխան պատվիրակություն է ուղարկում Ֆրիդրիխին ընդառաջ<sup>391</sup> կաթողիկոս Գրիգորի միջոցով տեղեկացնելով կայսերը Մամեստիայում սպասող հայերի մասին: Ֆրիդրիխը հայտնում է կաթողիկոսին Հայոց հողերով անցնելու ու Լևոնին թագավոր օծելու մասին: Միևնույն ժամանակ ավելացնում էր, որ դա հնարավոր է Անտիոք հասնելու և անձամբ Գրիգորին հանդիպելու պարագայում<sup>392</sup>: Սա դիվանագիտական հնարք էր, քանզի գերմանացիների մոտ թագի առկայությունը չի փաստվում աղբյուրներով: Ինչևիցէ, Գրիգորին վիճակված չէր հանդիպելու կայսերը, քանի որ վերջինս՝ 1190 թ. հունիսին<sup>393</sup> Սելևկիայի գետերից մեկում խեղդվում է<sup>394</sup>:

Ի տարբերություն գերմանացիների, անգլիացիներն ու ֆրանսիացիները ընտրել էին Պաղեստին հասնելու ծովային ուղին: Ընդ որում, եթե Ֆիլիպ II Օգոստոսը Ակրայի մատույցներին հասավ առանց դժվարությունների, ապա Ռիչարդ Առյուծասիրտը մինչև Ակրա նավարկելը զբաղված էր Կիպրոսի հարցով: Լևոնի մասնակցությամբ նա 1191 թ. գարնանը գրավեց կղզին տխրահռչակ Իսահակ Կոմնենոսից և հանձնեց Երուսաղեմի թագավոր Գի դե Լուզինյանին<sup>395</sup>:

---

<sup>390</sup> Խոսքը Սալահ ադ-Դինին գրած կաթողիկոսի երկու նամակների մասին է, որոնցում նկարագրվում է Ֆրիդրիխի հետ Լևոնի բանակցությունների ու գերմանական խաչակրությանը ծանր դրության մանրամասներ: *Տե՛ս Ալ-Կադի Բահաեդդին իբն Շադդադ, նշվ. աշխ., էջ 294-297, 299-300*: Ժամանակին այդ նամակների իսկությունը կասկածի տակ էր առնվում (*Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 447, Tournebize F., op. cit., p. 185, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 15-16*), սակայն այսօր դրա վավերականությունը որևէ կասկած չի հարուցում: *Մանրամասներ տե՛ս Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 447-449, Տեր-Ղևոնդյան Վ. Ա., Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դ-ի վերջին, ՊԲՀ, № 1 (2010), էջ 119-123, 126, Mutafian Cloude, L'Arménie du Levant (XIe – XIVe si.), 1 vol., p. 95.*

<sup>391</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 447:

<sup>392</sup> De Vardan le Grand, op. cit., pp. 440-441 հմմտ. L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 136-138.

<sup>393</sup> Успенский Ф. И., История крестовых походов, с. 381.

<sup>394</sup> Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 77, De Vardan le Grand, op. cit., p. 441, Bernard le Trnsorier, op. cit., pp. 157.

<sup>395</sup> Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 77, Bernard le Trnsorier, op. cit., p. 200, Успенский Ф. И., История крестовых походов, с. 374-383, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 449:

Շիկամորուսից հետո նրա բանակը կայսեր որդի Ֆրիդրիխ Շվաբացու գլխավորությամբ բաժանվում է երեք մասի ու շարժվում Անտիոք: Առաջին մասը իջնում է Բաղրասով՝ ստիպելով Սալահ ադ-Դինին թողնել ամրոցը<sup>396</sup>: Լևոնն իր զարմիկ Ֆուկ Բույոնացու օգնությամբ տիրում է Բաղրասին և քսան տարի վերահսկում այդ կարևոր հանգույցը<sup>397</sup>: Բոհեմունդն ապարդյուն պահանջում էր ամրոցը վերադարձնել Տաճարականներին: Միաբանները դիմեցին նաև պապի միջնորդությանը<sup>398</sup>:

Բոհեմունդ III-ին պակաս դժվարություններ չբերեցին նաև Ֆրիդրիխ Շվաբացու ջոկատները. Անտիոքի մատույցների մոտ հայտնված գերմանացիների ամբոխից նա շտապեց ազատվել՝ արագացնելով վերջիններիս երթը դեպի Ակրա ու Տրիպոլի<sup>399</sup>: 1192 թ. Անտիոքը նորից հայտնվեց Սալահ ադ-Դինի զորքերի սպառնալիքի առաջ և միայն Բոհեմունդի անձնական հեղինակության հաշվին հնարավոր եղավ սուլթանի հետ համաձայնության գալ<sup>400</sup>: Սակայն Կիլիկիայում կորցրած դիրքերը ռազմական ճանապարհով այլևս հետ բերելու գիտակցումը ոչ մի այլ հույս չէր թողնում, քան իր «վասալին» դավադրությամբ պատժելու մասին խորհելը<sup>401</sup>: Լևոնի նկատմամբ ունեցած իր ծրագրերի մասին Բոհեմունդը խորհրդակցում է կնոջ՝ Սիբիլլայի հետ, որը հետաքրքիր պատասխան է տալիս. «Մի արա անիրավություն, քանի որ Լևոնն իմ փեսան է ու ամեն պահի կգա քեզ օգնության»<sup>402</sup>: Սիբիլլայից իմանալով դավադրության մասին՝ Լևոնը 1193 թ. առաջարկում է Բոհեմունդին ճաշել Բաղրասի ապարանքներից մեկում: Ոչինչ չկասկածող դքսին գերում են ու բերում Սիս<sup>403</sup>:

Լատին պատմագիրներ Էռնուլի ու Բեռնար Գանձապահի համաձայն<sup>404</sup> Անտիոքի դուքսը ծրագրել էր ձերբակալել Լևոնին Բաղրասի մոտակա

<sup>396</sup> Ալ-Կադի Բահաեդդին իբն Շադդադ, նշվ. աշխ., էջ 299-300, Bar Hebraeus, op. cit., pp. 336-337.

<sup>397</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 136-137 հմմտ. Իբն Ալ-Աթիր, Պատմություն, էջ 273, Vahram D'Edesse, op. cit., p. 512.

<sup>398</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., p. 137.

<sup>399</sup> Ալ-Կադի Բահաեդդին իբն Շադդադ, նշվ. աշխ., էջ 299-300, Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 274-276:

<sup>400</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 203, Bar Hebraeus, op. cit., p. 340.

<sup>401</sup> Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, p. 319, Les Gestes des Chiprois, op. cit., p. 661, Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 582, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 123-129, Микаелян Г., История Килик. Армянского государства, с. 156, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 171-172:

<sup>402</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 204:

<sup>403</sup> Նույն տեղում, էջ 204, Հեթում պատմիչի Ժամանկագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 60, Les Gestes des Chiprois, op. cit., pp. 661-662.

<sup>404</sup> Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, p. 319, Bernard le Trésorier, op. cit., pp. 236-240.

անտառում: Վստահություն չտաձելով դքսի նկատմամբ՝ Լևոնն իր հետ վերցրել էր 200 հայ մարտիկներ, որոնք և վերցրել են Բոհեմունդին:

Ի հակադրություն հիշատակված աղբյուրների, Տուրացու պատմության շարունակություններում<sup>405</sup> ու Բար Հեբրեոսի մոտ<sup>406</sup> Բոհեմունդին գերելու ողջ մտահաղացումը կապվում է Լևոնի և Սիբիլայի հետ: Դրանցում որպես Սիբիլայի գործողությունների դրդապատճառ է ներկայացվում.

- Դքսի գերությունից հետո նրան կնության առնելու Լևոնի խոստումը:

- Սիբիլան մտադիր էր հայ իշխանի օգնությամբ Անտիոքի գահին նստեցնել իր որդուն՝ Վիլհամին<sup>407</sup>:

Չնայած Բոհեմունդի գերության ժամանակը Սմբատի ու Հերակլեսի պատմություններում 1193 թ., Էռնուլփի մոտ 1194-ը, իսկ Բար Հեբրեոսը իրադարձությունը նակարագրում է 1193-1194 թթ., ավելի հավանական է 1193 թ. աշունը<sup>408</sup>:

Լևոնը դքսից պահանջում է սահմանամերձ Զահան գետից մինչև Բաղրաս ընկած հողերը, Աստվուց դրունք կոչվող հանգույցն ու Սսի վերահսկողությանը հանձնել Անտիոքի ղեկավարությունը: Բարդուղեմիոս Մարկելացու, Ռիշար Էրմինացու ուղեկցությամբ և Ռուբեն III-ի դուստր Ալիսայի ամուսին Հեթում Սասունցու գլխավորությամբ հայկական զորաշուկատն ուղղվում է Անտիոք, որտեղ քաղաքի լատին բնակչությունը նրանց դուրս է հանում: Այնուհետև պատրիարք Էմերի Լիմոժացու գլխավորությամբ որոշվում է դքսության խնամակալ ճանաչել Բոհեմունդի որդի Ռայմունդին: Սենտ Ժուլիեն արվարձանում տեղակայված Հեթում Սասունցին հետ է քաշվում Բաղրաս և Լևոնի հետ հեռանում Սիս<sup>409</sup>:

Բոհեմունդի ազատման ու Կիլիկիայի հետ հարաբերությունների կարգավորման հարցով նրա որդիները և պատրիարք Էմերին դիմում են Երուսաղեմի թագավոր Հենրի

<sup>405</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 207-208, La continuation de Guillaume de Tyr (1184-1197), pp. 164-167.

<sup>406</sup> Bar Hebraeus, op. cit., pp. 343-344.

<sup>407</sup> Runciman S., A history of the Crusades, t. 3, p. 87.

<sup>408</sup> Cahen C., La Syrie du Nord à l'Époque des Croisades et la Principauté Franque d'Antioche, p. 583.

<sup>409</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 208-209, La continuation de Guillaume de Tyr (1184-1197), pp. 167-170 հմմտ. Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 454-456, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, T. 3, pp. 129-133.

Շամպայնացու (1192-1197 թթ.) միջնորդությանը: Նա 1194 թ.<sup>410</sup> ժամանում է Կիլիկիա ու կողմերի միջև հաստատում համաձայնություն, որը մեծ զիջումներ էր նախատեսում Բոհեմունդի համար<sup>411</sup>: Ազատության դիմաց դուքսը պարտավորվում էր Կիլիկիային հանձնել Բաղրասից ու Պորտելայից մինչև Այաս ընկած տարածքները, ընդունել Լևոնի գերիշխանությունը<sup>412</sup>: Հաշտությունն ամրագրվում էր Բոհեմունդի որդի Ռայմունդի և Լևոնի զարմուհի Ալիսայի ամուսնությամբ, որոնք ապրելու էին հայոց արքունիքում, իսկ ծնված արու զավակը պետք է ժառանգեր և՛ Անտիոքը, և՛ Կիլիկիան<sup>413</sup>:

Եթե պայմանագրի կետերի վերաբերյալ տարակարծություններ չկան ապա դրան հետևած ամուսնության տարեթվի վերաբերյալ տվյալները տատանվում են 1194-95 թթ. միջև<sup>414</sup>: Այս պարագայում դա կարևոր է ոչ այնքան կոնկրետ պայմանագրի կնքման, որքան այդ պահին Ալիսայի կարգավիճակի առումով, որոնք մանրամասն կքննարկվեն ստորև:

Այսպիսով, կարծում ենք Բոհեմունդ III-ի գերությանը և դրան հետևած պայմանագրով Լևոնը ձգտում էր.

- Ազդեցություն տարածել Անտիոքի և Կիլիկիայի սահմանային ռազմավարական նշանակության տարածքների վրա:

- Պատժել Բոհեմունդին Ռուբեն III-ին հասցրած վիրավորանքի համար:

- Սսի պայմանագրով հնարավորություն ու իրավաբանական հիմք ստեղծել հետագայում Անտիոքը Կիլիկիային միավորելու համար:

- Ապահովել Կիլիկյան Հայաստանի ավագությունն Անտիոքի նկատմամբ:

---

<sup>410</sup> Cahen C., *La Syrie du Nord à l'Epoque des Croisades et la Principauté Franque d'Antioche*, p. 585.

<sup>411</sup> Պայմանագրի վերլուծությունը տե՛ս Տեր-Պետրոսյան Լ. Հ., *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, էջ 174-175:

<sup>412</sup> *Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier*, pp. 320-321, *Les Gestes des Chiprois*, op. cit., p. 662.

<sup>413</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 206-207, *Смѣст Спасапет, указ. соч.*, с. 115, հմմտ. *L'estoire de Eracles empereur*, op. cit., pp. 209-215, *La continuation de Guillaume de Tyr (1184-1197)*, p. 170-171, 176-178, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 77, Հեթում պատմիչի ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 60:

<sup>414</sup> Միքայել Ասորին այն թվագրում է 1193/4 թ. (*Michel Le Syrien*, op. cit., pp. 404-405), Հերակլի պատմությունը՝ 1194 թ. (*L'estoire de Eracles empereur*, op. cit., pp. 207-208), իսկ մի շարք աղբյուրներ էլ ոչ հստակ այն հիշատակում են 1194-1195 թթ. իրադարձությունների համատեքստում (*Les Gestes des Chiprois*, op. cit., pp. 661-662, *La continuation de Guillaume de Tyr (1184-1197)*, p. 170, *Սմբատայ Սպարապետի Տարեգիրք*, էջ 205-207, *Chronique d'Ernoul et de Bernard le Trnsorie*, p. 320-321): Մանրամասներ տե՛ս Cahen C., *La Syrie du Nord du l'Epoque des Croisades et la Principautn Franque d'Antioche*, pp. 585-586.

Վերջին հանգամանքը Լևոնից պահանջում էր ունենալու ոչ պակաս տիտղոս, քան կրում էին Անտիոքի դքսերը: Այս կապակցությամբ Կ. Կաէնը կասկածի տակ դնելով Սսում Բոհեմունդի վասալական երդումը Լևոնին՝ շեշտում է, որ պրինցը չէր կարող հասարակ իշխանի ստորակա դառնալ<sup>415</sup>: Ճիշտ է, 1191-98 թթ. ընթացքում Լևոնը մի քանի տեղում նշվում է որպես թագավոր, արքա<sup>416</sup>, սակայն նրան այդպիսին չէին ճանաչում օտարերկրյա կառավարիչները: Ստեղծված իրավիճակում նա շարունակում է այդ հարցով բանակցությունները Շիկամորուսի ավագ որդի և հաջորդ Հենրիխ VI-ի (1190-1197 թթ.) ու պապի հետ<sup>417</sup>, թեև Հայոց իշխանը 1196 թ. Բյուզանդիայից արդեն ստացել էր թագ<sup>418</sup>: Դրա պատճառն այդ թագի իրական արժեքն էր: Դա ոչ թե թագավորական թագ պիտի համարել, այլ ընդհամենը՝ թագի համար նախատեսված դիադեմա (ապարոշ, որ փաթաթվում էր թագի վրա): Լևոն II-ին ուղարկված բյուզանդական թագը համապատասխանում էր «թիֆ-Rex»-ին՝ II կարգի թագավորին, շնորհված թագին: Կոստանդնուպոլսի արքունիքը և՛ Լևոնին, և՛ նրա հաջորդներին դիմեց սոսկ «Rex»-ով: Հունական աշխարհում, հետագայում Բյուզանդիայում, ճանաչում էին հայկական միայն մեկ արքայատուն՝ Արշակունիներին, նրանց էին անվանում Բասիլևս<sup>419</sup>:

Լևոնին գերմանական թագով օծելու գործն առավել շոշափելի դարձավ հատկապես Հենրիխ VI-ի օրոք, որի չիրագործված խաչակրության<sup>420</sup> փոխարեն Մերձավոր Արևելքի պատմության վրա մեծ ազդեցություն թողեց Մայնցի արքեպիսկոպոս և Սուրբ Սաբիայի կարդինալ Կոնրադ Վիտելսբախի, կայսեր կանցլեր Կոնրադ Հիլդեսհայմի և մարշալ Հայնրիխ Կալդենացու գլխավորությամբ Արևելք ուղարկված պատվիրակությունը: Կայսերական ներկայացուցիչներն իրենց հետ ունեին երկու արքայական թագ՝ նախատեսված Կիպրոսում հիմնված խաչակրաց պետության

<sup>415</sup> Cahen C., La Syrie du Nord à l'Epoque des Croisades et la Principauté Franque d'Antioche, p. 586.

<sup>416</sup> Յիշատակարանք ձեռագրաց, կազմ. Հովսեփեան Գ., հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 581-582, Ներսես Լամբրոնացի, Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք, Վենետիկ, 1865, էջ 93.

<sup>417</sup> Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 155-156:

<sup>418</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 207:

<sup>419</sup> Բարթիկյան Հ. Մ., Առաջին երեք Բագրատունի թագավորների այսպես կոչված «Բյուզանդական» թագի մասին, ՊԲՀ, № 3 (2001), էջ 148, 154 հմմտ. Բարթիկյան Հ. Մ., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորների խնդիրը, ՊԲՀ, № 1 (1984), էջ 216:

<sup>420</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 153, 464:



ու Կիլիկիայի համար<sup>421</sup>: 1197 թ. սեպտեմբերին կանցլեր Կոնրադը Նիկոզիայում թագադրում է Երուսաղեմի անվանական թագավոր Ամորի II դե Լուզինյանին, ապա ուղղվում է Ակրա: 1197 թ. աշնանը Կոնրադ Հիլդեսհայմը տեղեկանալով Հենրի VI-ի մահվան մասին Ակրայից շտապեց հայրենիք՝ Լևոնի թագադրման արարողությունը հանձնարարելով Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելսբախին: 1198 թ. հունվարի 6-ին, Տարսոնում, Լևոնը, հայկական և լատինական ծիսակարգերին համապատասխան պապական պատվիրակի ու գերմանական կայսեր ներկայացուցչի կողմից ստանում է արքայական թագ և հռչակվում Հայոց թագավոր Լևոն I անունով<sup>422</sup>:

Սա հեռագնա քայլ էր, քանի որ Լևոնը թագադրվում էր Կիլիկիայի նկատմամբ պատմականորեն ոչ մի հավակնություններ չունեցող գերմանական կայսեր թագով: Կաթոլիկ եկեղեցուն արված զիջումները կապված էին Անտիոքի դքսությունը հետագայում Կիլիկիային միավորելու հետ: Լևոնը, լավ հասկանալով Անտիոքի լատին բարոնների և եկեղեցու դիրքորոշման կարևորությունը և խուսափելու համար հետագայում խաչակրաց իշխանության միացման կապակցությամբ նրանց կողմից սպասվող հավանական անհամաձայնությունից, թագն ընդունում է նաև «Աստծո, հռոմեական եկեղեցու և հռոմեական կայսեր անունից»:

Այդ փոխհամաձայնությունը ենթադրում էր այնպիսի հարաբերություններ, որոնց դեպքում շփվող մշակույթների որոշ հատկանիշներ միավորվում էին, բայց որակական նոր միջավայր չէր ստեղծվում, քանզի նախասկզբնական գործընթացի մասնակիցները պահպանում էին իրենց նույնականությունը<sup>423</sup>: Լևոնն այդ դաշինքից ակնկալում էր քաղաքական առավելություններ և դա նրան հաջողվեց, քանի որ ի դեմս Անտիոքի լատին պատրիարքների ձեռք բերեց հավատարիմ դաշնակիցներ: Հայոց բարձրաստիճան հոգևորականության և քաղաքական գործիչների դիվանագիտական

<sup>421</sup> Setton Kenneth M., op. cit., pp. 118-120, Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 155.

<sup>422</sup> Սմբատյայ Սպարապետի Տարեգիրք, էջ 207-210, Vahram D'Edesse, op. cit., pp. 511-513, Սամուէլի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 144, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 77, Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 158, Chronique d'Ernoult et de Bernard le Trnsorier, p. 323: Մանրամասներ տե՛ս Setton Kenneth M., op. cit., p. 647, Տեր-Ներսեսյան Ս. Մ., նշվ. աշխ., հարված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 398-400, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 466-478, Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Ա, մաս Գ, էջ 1531-1536, 1545-1548:

<sup>423</sup> Հարությունյան Գ. Ս., Կիլիկյան Հայաստան-Ֆրանսիա. (զուգահեռներ կենտրոնական կառավարման համակարգերի միջև), էջ 80:

քայլերն ու խաղերը կաթոլիկ կամ հունադավան եկեղեցու հետ, հետապնդում էին քաղաքական նպատակներ, և ունեին առավալապես նրանցից քաղաքական ու ռազմական օգնություն ստանալու միտում<sup>424</sup>։ Ընդունելով պապի գերագահությունը՝ ավելի դյուրին էր դառնում Անտիոքի լատին իշխանների ու հոգևորականության հետ համագործակցությունը։ Այսպես ստեղծված քաղաքական-դավանաբանական պայքարում ի հայտ է գալիս «Դաշանց թուղթ» կոչվող աշխատությունը։ Դա սիրո և միաբանության մի դաշինք էր, որն իբր կնքել են Կոստանդինոս կայսրն (306-337 թթ.) ու Սեղբետրոս պապը (314-335 թթ.)՝ մի կողմից, Տրդատ թագավորը (298-330 թթ.) և Գրիգոր Լուսավորիչը (302-337 թթ.)՝ մյուս կողմից։ Դրանում շարադրված էր Տրդատի և Լուսավորչի Հռոմ գնալու առասպելն իբրև եղելություն, որտեղ Հռոմի պապը Կաթողիկոս է ձեռնադրել Լուսավորչին, տվել նրան Վրաց, Աղվանից եկեղեցիների կաթողիկոսների, Երուսաղեմի, Անտիոքի և Ալեքսանդրիայի պատրիարքների ձեռնադրության իրավունքն ու Հայոց հայրապետին կարգել նրանց գլխավոր<sup>425</sup>։ Ըստ Ա. Հովհաննիսյանի, «Հայերի ինքնասիրությունը շոյող այս լեգենդը կոչված էր վավերացնելու հայ-հռոմեական միությունը և նրա հետ առնչվող պահանջները։ Դաշանց թղթի Լուսավորիչ ու Տրդատ, Սեղբետրոս ու Կոստանդինոս անունների տակ բարդ չէր պարզապես նկատել Գրիգոր Ապիրատի (1194-1203 թթ.) և Լևոն I-ի (1198-1219 թթ.), Հռոմի պապի ու Գերմանիայի կայսեր կեղծանունները»<sup>426</sup>։

Այս տեսակետը շատ հարցերի պատասխան է տալիս, սակայն պետք է ենթադրել, որ այնուամենայնիվ, հորինվածքը հիմնված է որոշակի պատմական միջադեպի վրա։ Չի բացառվում, որ Կոստանդինոսի և Տրդատի միջև ժամանակին եղել է ինչ որ պայմանագիր, հարց է՝ դրանում եկեղեցականների մասնակցությունը։ Այս իրողության հիման վրա էլ, հավանաբար XIII դ. առաջին կեսին, հորինվել է փաստաթղթի հիմնական մասը և ներկայցվել անհրաժեշտ տարբերակով, որում ենթադրվում էր Սեղբետրոս պապի անվամբ ու հեղինակությամբ ամրագրել և

<sup>424</sup> Բարթիկյան Հ. Մ., Գվիդոն Լուսինյանը Բյուզանդիայում և Կիլիկիայի Հայաստանում, «Աշտանակ» 1998, հ. Բ, էջ 135-136 հմմտ. Dédéyan G., (dir.), Histoire du peuple arménien, pp. 352-353, Mahé Jean-Pierre, (dir.), L'Église arménienne entre Grecs et Latins fin XI milieu XV siècle, Paris, 2009, p. 8.

<sup>425</sup> Թուղթ սիրոյ և միաբանութեան, ի Վենետիկ քաղաքի, 1682, էջ 228-229 հմմտ. Շահնազարեանց Կ. Վ., Դաշանց Թղթոյ քննութիւնն ու հերքումը, Պարիս, 1862, էջ 25, Vernier D. R. P., op. cit., pp. 85-107.

<sup>426</sup> Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երևան, 1957, էջ 69-75, Сукиасян А. Г., указ. соч., с. 35-36.

տարածաշրջանի լատինների ոտնձգությունից գերծ պահել Սուրբ վայրերի հայոց շարժական և անշարժ գույքը<sup>427</sup>։ Վտանգն առավելապես բխում էր ասպետական միաբանություններից, որոնք կանգ չէին առնում անգամ Կիլիկիայում հայկական ամրոցների հափշտակման առաջ<sup>428</sup> փորձելով հասնել Անտիոքում ու Երուսաղեմում ունեցած կարգավիճակին։

Հոգևորասպետական միաբանությունների ներկայացուցիչները հաստատվելով Կիլիկյան Հայաստանում՝ որոշակի փոփոխությունների էին ենթարկում երկրում ձևավորված ավանդական հողային փոխհարաբերությունները, ընդերքին ու ջրային միջոցներին տիրելու սովորությունները։ Լևոն I-ի ժամանակներից Հիվանդախնամներին ու Տևտոնականներին շնորհվող գյուղերի հետ Հայոց թագավորները ստիպված էին նրանց տալ նաև մերձակա ջրամբարները, ջրաղացները, ցանքերը, արոտավայրերը, անտառները և այլն<sup>429</sup>։ Այդ տիպի շնորհները տարածված էին Եվրոպայում ու Լատին Արևելքում, մինչդեռ Կիլիկյում՝ հին հայկական սովորության համաձայն, հավանաբար տիրապետող էր ջրի նկատմամբ համայնքային սեփականության ձևը, որը բոլոր բացառություններով և վերափոխումներով հանդերձ հետագայում տեղ գտավ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում»։

Կիլիկիայի հայկական պետությունում սոցիալ-տնտեսական հարաբերությունները շատ բարդ ձևեր ընդունեցին, քան բուն Հայաստանում, որովհետև այստեղ միահյուսվում էին բյուզանդական, արևմտաեվրոպական ու հայկական ավատական ավանդույթները<sup>430</sup>։ Ֆրանսիայից ու Անգլիայից Արևելք եկող զանգվածներն իրենց հետ բերում էին տարբեր դասերի միջև հարաբերությունների կարգավորման եվրոպական նորմերը և հասարակության ֆեոդալական կառույցների արևմտյան չափանիշներ՝ ազդելով Կիլիկիայում ձևավորվող թագավորական, դատական, ռազմավարչական, ֆինանսական ու տնտեսական կառույցների վրա,

<sup>427</sup> Բարթիկյան Հ. Մ., «Դաշանց թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, ՊԲՀ, № 3 (2004), էջ 80-82, 109-112։

<sup>428</sup> Զուլալյան Մ. Կ., նշվ. աշխ., էջ 9-10։

<sup>429</sup> Le trésor des chartes d'Arménie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, pp. 120-125, 135, 141, Շեվալիե Մարի-Աննա, նշվ. աշխ., էջ 68-71։

<sup>430</sup> Дмитриев Г. А., Некоторые вопросы поземельных отношений и положения крестьян в Киликийском Армении XII-XIII вв., ՊԲՀ, № 2 (1970), էջ 111-112 հմմտ. Բոռնազյան Ս. Վ., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դդ., էջ 137։

որոնք շատ դեպքերում կրկնում էին արևմտաեվրոպական և հատկապես ֆրանսիական համակարգը<sup>431</sup>: Կիլիկիա ներմուծված կարգերը որոշակիորեն հակասում էին հայկական օրենքներին ու հաճախ առավելություն տալիս լատին ֆեոդալներին և միաբանություններին: Այս հանգամանքը ստիպում էր Հայոց արքունիքին խնդիրը լուծել ֆրանկերի հետ առկա կապերի պահպանման և հայ ազգաբնակչության ունեցվածքի ապահովագրման հարթությունում:

Կիլիկյան Հայաստանում XII դ. վերջի և XIII դ. սկիզբին ստեղծված քաղաքական իրավիճակը ևս ապացուցում է, որ Դաշանց թուղթն առավելապես արտացոլում է այդ շրջանի իրականությունը: Կիլիկյան արքունիքը օգտվելով ձեռք բերված հաջողություններից՝ փորձեց հանդես գալ Մերձավոր Արևելքում հաստատված լատին պետություններին ու երեք լատին պատրիարքություններին հավասար կարգավիճակում, իսկ հնարավորության դեպքում գերակայություն ստանալ նրանց նկատմամբ: Այս առումով հատկանշական է այն դիտողությունը, որ «թղթի» շարադրանքում օգտագործված *frère*, *offronde*, *demoiselle*, *chamber* և այլն բառեր ու հասկացություններ դիվանագիտության մեջ մտել են խաչակրաց արշավանքներից հետո<sup>432</sup>: Եթե նույնիսկ այն գրված լինի ոչ թե Լևոնի անմիջական հովանավորությամբ, ապա անկասկած դա Լևոնի վարած քաղաքական ուղու արդյունքն է, որի հիմնական նպատակը մնում էր Անտիոքի միացումը: Դրա համար նա բացի եկեղեցիների միությունից ֆրանկ բարոններին ներգրավում է նաև պետության կառավարման ոլորտ:

Փաստորեն, հաստատվելով Դաշտային Կիլիկիայում և փորձելով կյանքի կոչել քիչ ավելի ուշ «Դաշանց թղթով» ամրագրված գաղափարները, Լևոնը լուծում էր մի քանի խնդիրներ.

ա. Օրինականացնում էր Անտիոքի և Դաշտային Կիլիկիայի նկատմամբ նկրտումները,

բ. Հիմնավորում հայոց և լատին եկեղեցիների միությունը,

գ. Ֆրանկների հնարավոր հավակնություններից հեռու պահում Մերձավոր Արևելքում առկա հայկական միջավայրը:

<sup>431</sup> Հարությունյան Գ. Ս., Կիլիկյան Հայաստան-Ֆրանսիա. (զուգահեռներ կենտրոնական կառավարման համակարգերի միջև), էջ 87-94:

<sup>432</sup> Շահնազարեան Կ. Վ., նշվ. աշխ., էջ 72-73, 97:

## **§ 2. Անտիոքի համար մղված ռազմաքաղաքական և դիվանագիտական պայքարը 1198-1219 թթ.**

Անտիոքի ժառանգության համար 1201-1219 թթ. մղված պատերազմին նվիրված են և՛ ֆրանսիական, և՛ հայկական պատմագրության մեծարժեք աշխատություններ<sup>433</sup>, որոնցում հիմնականում քննարկվել են իրադարձությունների ընթացքը: Ուստի մենք կանդրադառնանք մի շարք հանգամանքների, որոնք լուրջ ազդեցություն են ունեցել պայքարի ընթացքի ու արդյունքերի վրա:

1201 թ. Բոհեմունդ III-ի մահից հետո Կիլիկիան շատ մոտ էր Անտիոքի դքսության վրա վերահսկողություն սահմանելուն: Սսի պայմանագրի համաձայն Անտիոքում գահը ժառանգելու էր Ռայմունդի ու Ալիսայի որդին, քանի որ Ռայմունդը արդեն մահացել էր: Մանուկը ծնվել էր Կիլիկիայում, որին նրա կնքահայր Լևոնը անվանեց Ռուբեն<sup>434</sup>: Այս իրավիճակում Անտիոքը Ռուբենի անունից Սսին ենթարկելու նոր հնարավորություն էր ընձեռնվում ևս I-ին, սակայն Անտիոքում կանգնում է չնախատեսված անակնկալի առջև: Քաղաքի ազնվականությունը, Բոհեմունդ III-ի մահամերձ վիճակը հաշվի առնելով, Տրիպոլիից հրավիրում է կրտսեր Բոհեմունդին և հոր մահվան օրն իսկ նրան հռչակում Անտիոքի դուքս<sup>435</sup>: Բոհեմունդ IV-ի (1201-1216, 1219-1233 թթ.) դեմ տրամադրված բարոնները անցան Լևոնի կողմը<sup>436</sup>, բայց հայերը հարկադրված էին վերադառնալ Կիլիկիա: Լևոնն արդեն առիթ ունեցել էր բախվելու կրտսեր Բոհեմունդի հետ, երբ 1198 թ. Մայնցի արքեպիսկոպոսի ներկայությամբ Բոհեմունդ III-ը վերահաստատում էր Սսի պայմանագիրը: Դրան ընդիմանում է

<sup>433</sup>Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, T. 3, pp. 246-266, Cahen C., La Syrie du Nord à l'Epoque des Croisades et la Principauté Franque d'Antioche, pp. 596-623, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 490-503, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 291-307, Микаелян Г., История Киликийского Армянского государства, с. 163-166.

<sup>434</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 207, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, p. 321, La continuation de Guillaume de Tyr (1184-1197), p. 176.

<sup>435</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 228-230, 313, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, p. 321 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 214, Les Gestes des Chiprois, op. cit., p. 663, Rey E., Résumé chronologique de l'histoire des princes d'Antioche ROL, № 4 (1896), p. 386.

<sup>436</sup> Սենեկապետ Օլիվերին, սպարապետ Ռոժեին, բարոններ Թոմաս Մալբրունին, Բայեն Պուդլերին, Գիյոմ Իլացուն (*Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 211, Смбат Чнапанет, указ. соч., с. 118*), հետագայում միացան պատրիարք Պետրոս Անգուլեմացին, սենեսկալ Աքարիան, իշխաններ Օթոն Տիբերիացին, Վիլյամ Ինսուլացին, Պոնս Լոմբարդացին և այլք: *Տե՛ս Le trésor des chartes d'Arménie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, p. 135-136 հմմտ. Dédéyan G., (dir.), Histoire du peuple arménien, p. 347.*

Տրիպոլիի կոմսն ու Տաճարական, Հիվանդախնամ ասպետների հետ գահընկեց անում հորը: Ծեր դուքսը միայն Լևոնի օգնությամբ է կարողանում վերականգնել իր աթոռը և վռնդել որդուն Անտիոքից<sup>437</sup>:

Այստեղ հարկ ենք համարում քննարկել այն հանգամանքների ձևավորումը, որոնք 1201 թ. Լևոնի համար ստեղծել էին Անտիոքն իր հսկողության տակ առնելու «օրինական» հնարավորությունը:

ա. Նախ հիշենք, որ հաշտության կնքման պահին Ալիսան հանդիսանում էր Հերթում Սասունցու այրին<sup>438</sup>: Վերջինս, սպանվել էր իրադարձությունների նախաշեմին, որում Սմբատ Սպարապետն ակնարկում է Լևոնի մասնակցությունը<sup>439</sup>:

բ. Մյուս դիտողությունը կապված է Ռայմունդի ու նրա որդու հետ: Հայտնի է, որ Ռայմունդը պայմանագրի կնքումից հետո որոշ ժամանակ ապրել է Լևոնի մոտ, ապա անհասկանալի հանգամանքներում մահացել<sup>440</sup>: Մահվան պատճառների մասին հստակ տեղեկությունների բացակայությունը ստիպում է մտածել նաև դավադրության մասին<sup>441</sup>: Այսպես, եթե ընդունենք, որ Ալիսայի և Ռայմունդի ամուսնությունը տեղի է ունեցել 1194 թ. վերջին 1195 թ. սկզբին, իսկ Հերթում Սասունցին մինչև 1194 թ. կեսերը ողջ է եղել, ապա չի բացառվում, որ Ալիսայի որդու հայրը լիներ նաև Հերթումը: Նման իրողությունն էլ դրդել է Լևոնին ազատվելու Ռայմունդից: Այս վարկածի հիմնավորմանը մասամբ ծառայում է երկու փաստ.

- Ալիսայի երեխան սկզբում ընկալվում էր սոսկ Ռուբեն, հաճախ ուղղակի Ռուբենի թոռ Ռուբեն<sup>442</sup>: Ռայմունդի որդի Ռայմունդ-Ռուբեն տարբերակը հայնտվում է

<sup>437</sup> Cahen C., *La Syrie du Nord à l'Epoque des Croisades et la Principauté Franque d'Antioche*, pp. 591-593, Տեր-Պետրոսյան Լ. Հ., *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, էջ 214, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 456:

<sup>438</sup> La continuation de Guillaume de Tyr (1184-1197), p. 167, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 207:

<sup>439</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 205:

<sup>440</sup> Նույն տեղում էջ 207 հմմտ. Bernard le Trésorier, op. cit., p. 242.

<sup>441</sup> Ռայմունդի ամուսնության ու մահվան դեպքերը թվագրվում են համապատասխանաբար 1194/5 և 1196/7 թթ.: Պետք է կարծել, որ նա Ստում թողնվել է որպես պատանդ պայմանագիրը չխախտելու դիմաց: Տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 456, 490, Տեր-Պետրոսյան Լ. Հ., *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, էջ 175, 210-211, Grousset R., *Histoire des croisades et du royaume franc de Jérusalem*, t. 3, pp. 132, 246, Cahen C., *La Syrie du Nord à l'Epoque des Croisades et la Principauté Franque d'Antioche*, p. 586.

<sup>442</sup> Հերթում Պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ, հ. 2, 95, 103, Հերթում Պատմիչի ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 63, Ներսես Պալինեցի, ժամանակագրություն, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 180, Վահրամյա Բարսեղ, Ոտանաւոր պատմութիւն, RHC, Doc. arméniens, t. 1, pp. 512, 514, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 207, 219, Chronique d'Ernoult et de Bernard le Trésorier, p. 321, L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 137, 213, 313, La continuation de Guillaume de Tyr (1184-1197), pp. 168, 169, Mutafian Claude, *L'Arménie du Levant (XIe – XIVe siècle)*, 1 vol., p. 97.

ավելի ուշ՝ 1210 թ. հետո<sup>443</sup> (մինչ այդ նա հիշատակվում է Ռուբեն անունով<sup>444</sup>), որը հավանաբար Անտիոքի դքսության օրինական ժառանգորդ Ռայմունդի որդի ներկայանալու պատրվակով է արվել և եղել է Լևոնի մտահղացումը<sup>445</sup>:

- Սսի պայմանագրով Ռայմունդ-Ռուբենին Կիլիկիայի գահը հանձնելու Լևոնի ցանկությունը ավելի շատ հարցեր է առաջացնում, քան տալիս պատասխաններ, քանի որ եթե հաշտության պահին Լևոնը անզավակ էր, չի նշանակում, թե նա հետագայում նույնպես չէր կարող երեխա ունենալ:

Լևոնը 1213/4 թ. համանման ծրագիր էր նախապատրաստել նաև Նիկեայի հունական կայսր Թեոդորոս I Լասկարիսի (1208-1222 թթ.) համար: Պահպանված փաստաթղթում, ուր մանրամասն խոսվում է հունական կայսեր և հայոց թագավորի դստեր ամուսնության պայմանների մասին, կայսեր հարսնացուն անվանվում է «րհջ... Κιλικίας-Կիլիկիայի թագավորի չղժία Յսϱατղρ-հարազատ աղջիկ»<sup>446</sup>, այնինչ Թեոդորոս Լասկարիսի հետ ամուսնացել է ոչ թե թագավոր Լևոնի, այլ իշխան Ռուբեն III-ի դուստր Ֆիլիպպան<sup>447</sup>: 1216/7 թ. Թեոդորոս Լասկարիսը հավանաբար բացահայտում է իրողությունն ու Ֆիլիպպային հետ ուղարկում Կիլիկիա, իսկ նրանց որդի Կոստանդինը զրկվում է թագաժառանգության իրավունքից<sup>448</sup>: Ֆիլիպպայի ու Կոստանդինի նմանօրինակ պատիժն այլ պատճառներով դժվար է բացատրել, թեև ինչպես Ա. Բոզոյանն է նշում, հարցը ոչ այնքան խաբկանքի, այլ հերձվածողի հետ ամուսնության փաստի առթիվ բյուզանդական եկեղեցական գործիչների միջավայրում եղած դժգոհությունն ու աշխարհաքաղաքական պայմանների փոփոխության հետ<sup>449</sup>:

գ. Ռուբենի՝ Ռայմունդի որդին չլինելու հանգամանքով կարող է պայմանավորված լինել նաև Բոհեմունդ Միականու կողմից նրա խնամակալությունը

<sup>443</sup> Le trésor des chartes d'Arménie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, pp. 112-113, 115, 129, 132-138.

<sup>444</sup> Նույն տեղում, էջ 130-131:

<sup>445</sup> Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 212-213:

<sup>446</sup> Павлов А., Синодальная грамота 1213 г. о браке греческого императора с дочерью армянского князя, ВВ, СПб, 1897, т. 4, с. 161, 164-165.

<sup>447</sup> Հերոն պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 103, Տմբատ Տարապետ, указ. соч., с. 125, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 221.

<sup>448</sup> Георгий Акрополит, Летопись, СПб, 1863, с. 31, 36-37, *Ֆիլիպպայի և Թեոդոր Լասկարիսի ամուսնության մանրամասներ տրե'ս, Жаворонков П. И., Из истории Нике́йско-Киликийских отношений в первой половине XIII в., АДСВ, вып. 30, Екатеринбург, 1999, с. 210-212.*

<sup>449</sup> Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, էջ 59-66:

երբեք չվիճարկելու փաստը: Սմբատ Սպարապետի խոսքերից դատելով՝ նա ուղղակի չէր ճանաչում այդ պայմանագրի վավերականությունը<sup>450</sup>: Մյուս կողմից մի քանի հանգամանք Լևոնի հովանավորությունը Ռուբենի նկատմամբ դարձնում էին ավելի օրինական: Նախ Ռայմունդի մահից հետո ողջ էր նրա կինը՝ Անտիոքի իշխանուհի Ալիսան: Բացի այդ, Ռայմունդ-Ռուբենը ծնվել էր Հայոց արքունիքում ու նրա կնքահայրը Լևոն I-ն էր, որը հեռատեսորեն Ռուբենի մկրտությունը կատարել էր նույն Կոնրադ Վիտելսբախի ձեռքով՝ լատինական ծեսին համապատասխան<sup>451</sup>:

Հետագա իրադարձությունների ամբողջական պատկերը ստանալու համար թուուցիկ անդրադառնանք Անտիոքի դեմ ձեռնարկված արշավանքների պատմությանը: Արդեն 1203 թ. նոյեմբերին Լևոնը նոր հարձակում է կազմակերպում Անտիոքի դեմ: Քաղաքի պարիսպների մոտ նրան է միանում Ժան դե Նելլացու գլխավորած ֆլամանդական մի զորաջոկատ, որը հրաժարվել էր մասնակցել Բյուզանդիայի դեմ ձեռնարկված խաչակրաց IV արշավանքին<sup>452</sup>: Նրա աջակցությամբ Լևոնը երեք օրով իրեն է ենթարկում Անտիոքը, բայց բախվելով Տաճարականների դիմադրությանը<sup>453</sup>, որոնց օգնության էին շտապում նաև Հալեպի սուլթան Ալ-Մելիք ալ-Զահիրի (1186-1216 թթ.) զորաբանակները, նահանջում է<sup>454</sup>: Չորրորդ խաչակրության այլ ջոկատներ Ռենո Դամպիերի, Վիլեն դե Նեյի, Ժան դե Վիլլերի գլխավորությամբ 1204 թ. սկզբին նավարկում են Ասորիք, նպատակ ունենալով օգնել Բոհեմունդին, սակայն Լաոդիկեայի մոտ սելջուկների կողմից ջարդվում ու գերվում են<sup>455</sup>: Վիլհարդուենի այս տեղեկությունը կարող է ստույգ չլինել և ծառայել խաչակիրների դեմքը փրկելուն<sup>456</sup>, որոնք 1204 թ. ապրիլի 12-ին վերցրեցին Կոստանդնուպոլիսը և ստեղծեցին

<sup>450</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 214:

<sup>451</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 456, 477:

<sup>452</sup> Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, pp. 352-354, Жоффруа де Виллардуэн, История завоевания Константинополя, с. 52-53, Bernard le Trésorier, op. cit., pp. 277-278.

<sup>453</sup> Les Gestes des Chiprois, op. cit., p. 663, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 78, Հեթում պատմիչի Ժամանկագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 61:

<sup>454</sup> Al-Dahabi, op. cit., p. 187, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, pp. 322, 342, Հեթում պատմիչի Ժամանկագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 86, Աբու-Լ-Ֆիդա, նշվ. աշխ., էջ 228: Sté u Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 247-248.

<sup>455</sup> Жоффруа де Виллардуэн, указ. соч., с. 85-86, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, p. 341.

<sup>456</sup> Մուրաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 408:



Լատինական կայսրություն: Բյուզանդիան այլևս երբեք չկարողացավ ուշքի գալ լատինական արշավանքի հետևանքներից<sup>457</sup>: Կնք

Անտիոքի հպատակեցման հարցում Լևոն I-ինը փորձում էր օգտագործել նաև Տրիպոլիում և Անտիոքում Բոհեմունդի դեմ ծագած դժգոհությունները: Նեֆինի իշխանի 1204-1205 թթ. ապստամբությանը խոռվություններ հաջորդեցին բուն Անտիոքում: Լատին պատրիարք Պետրոս Անգուլեմացու (1196-1208 թթ.) գլխավորությամբ Անտիոքում տեղի ունեցող շարժմանը 1208 թ. օգնության հասան հայկական ուժերը: Ապստամբները Լևոնի առաջ բացում են դարպասները, Պետրոս Անգուլեմացին Ռայմունդ-Ռուբենին հռչակում է Անտիոքի իշխան, իսկ Ալիսան նշանակվում է նրա խնամակալ: Հաղթանակի արժեքը ընդգծելու համար Լևոն I-ի անունով հատվել է նաև լատինագիր դրամ<sup>458</sup>: Սակայն մի քանի օր անց, Բոհեմունդ Միականին Տաճարականների զորակցությամբ հայերին հեռացնում է քաղաքից՝ նորից հայցելով ալ-Ջահիրի ու Քեյ Խոսրով I-ի օգնությունը: Օղակում հայտնվելու վտանգը ստիպում է Լևոնին վերադառնալ Կիլիկիա: Թուրքերի հետ հարաբերությունները կարգավորվում է Այուբյան ալ-Ադիլ սուլթանի միջնորդությամբ<sup>459</sup>: Չկարողանալով գրավել Անտիոքը՝ Լևոնը 1209 թ.ավերում է քաղաքի շրջակայքում տարածված գյուղերն ու այգիները<sup>460</sup>, սակայն այս գործողությունները նույնպես չեն ընկճում Բոհեմունդին:

Ի մի բերելով 1203 և 1208 թվականներին Անտիոքի վրա տեղի ունեցած ռազմական ձեռնարկների մասին տեղեկությունները՝ կարելի է նկատել հետևյալը.

- Այն աղբյուրները, որոնք ներկայացնում են 1203 թ. արշավանքը<sup>461</sup>, համառությամբ լռում են 1208-1209 թվականների հարձակման մասին և հակառակը<sup>462</sup>:

<sup>457</sup> Заборов М. А., Крестоносцы на Востоке, с. 250-252 հմմտ. Васильев А. А., Латинское владычество на Востоке. Эпоха Никейской и Латинской империй (1204-1261 гг.), с. 9-11, 37-38.

<sup>458</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 494, 497, Պետրոս Անգուլեմացու մասին տե՛ս Rey E., *Les dignitaires de la principauté d'Antioche*, ROL, N° 8 (1900—1901), p. 138.

<sup>459</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 313-314, René Grousset, Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 255-257, Պապիկեան Ս., Հայերը և խաչակիրները, ՀԱ, N° 10-12 (1965 թ.) էջ 506 հմմտ. Անանուն Եղեսացի, նշվ. աշխ., էջ 171-172:

<sup>460</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 217:

<sup>461</sup> Chronique d'Ernoult et de Bernard le Trésorier, pp. 322, 342, 352-354, Bernard le Trésorier, op. cit., pp. 277-278, Les Gestes des Chiprois, op. cit., p. 663, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 78, Հեթում պատմիչի Ժամանկագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 61, 86, Al-Dahabi, op. cit., p. 187, Աբու-Լ-Ֆիդա, նշվ. աշխ., էջ 228:

<sup>462</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 313-314, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 217:

Դեպքերի նման զարգացումը ստիպում է Լևոն I-ին վերանայել քաղաքականությունը Տաճարականների հետ ու նոր մակարդակի վրա բարձրացնել Ռայմունդ-Ռուբենի իրավունքները: Դրանցում Հայոց թագավորն ամեն կերպ փորձում էր ընդգծել սեփական գերակայությունն ու հայրական հոգածությունը նրա նկատմամբ, ի ցույց դնել նրա օրինական, վասալական կախվածությունն իրենից: Այսպես, նա 1209 թ. Ռայմունդ-Ռուբենին հռչակում է իր թագաժառանգ, իսկ 1210 թ. Հռոմի պապի և Գերմանիայի կայսեր կողմից ստանում նրա համար խնդրած թագը<sup>463</sup>, ապա ամուսնացնում նրան Կիպրոսի թագավոր Ամորի II-ի դստեր՝ Հելվիսի (Էլուիզա) հետ<sup>464</sup>: Սրանով Արևմուտքը ոչ թե շեշտում էր Լևոնի և Ռայմունդ-Ռուբենի իրավունքների ավելի օրինական լինելը, այլ ընդամենը փորձում էր հավասարակշռել ու ձգձգել կողմերից մեկի լիակատար հաղթանակը՝ հնարավորություն ստանալով վերահսկելու և միջամտելու նրանց գործերին:

Ռայմունդ-Ռուբենի նկատմամբ Լևոնի գերակայության մասին վկայող ցայտուն արտահայտություններից է նաև 1207-1215 թթ. Անտիոքի դքսի անունից հրապարակված Ռայմունդ-Ռուբենի հրովարտակաները, որոնք հիմնականում վերահաստատում են Հայոց թագավորի արդեն կայացրած շնորհները ու վերջնականապես վավերացվել են Լևոնի կողմից<sup>465</sup>:

Ավելի բարդ էր հարաբերությունների խաղաղեցումը Տաճարականների հետ: Բաղրասի կապակցությամբ ծագած վեճը հատկապես սրվեց Լևոնի կողմում հանդես գալու առաջարկի մերժումից հետո: Անտիոքի հարցում իրեն պաշտպանելու պարագայում Լևոնը պատրաստակամություն հայտնեց հետ վերադարձնել բոլոր ամրոցները և անգամ Տաճարականներին վստահել Ռայմունդ-Ռուբենի հովանավորությունը, բայց միաբանները հրաժարվեցին ստանձնել վարձկանների դեր, որի դիմաց Լևոն I-ը պատրաստվում էր Դարպասկն ու Բաղրասը հանձնել

<sup>463</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 217:

<sup>464</sup> Քաղաքական ամուսնությունների մասին տե՛ս Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 217, 218, 221, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 103-104, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 223, Բարթիկյան Հ. Մ., Հայ-Բյուզանդական նոթեր, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տեղեկագիր, Հասարակական գիտություններ, Երևան, № 7-8 (1960), էջ 133-137:

<sup>465</sup> Le trésor des chartes d'Arménie, ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, pp. 129-136, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 223:

Հիվանդախնամաներին: 1203 թ. հետո նա Տաճարականներին նույնիսկ վտարեց Կիլիկիայից, իսկ ավելի ուշ պաշարեց Հյուսիսային Ասորիքում գտնվող նրանց ամրոցներ Ռոշե դե Ռուսելը և Ռոշե դե Գիյոմը<sup>466</sup>: Ի հակադրություն Տաճարականների, Հայոց թագավորը Կիլիկիայում սկսում է վարել նրանց մրցակից մյուս ասպետական միաբանություններին սիրաշահելու քաղաքականություն: Այսպես, նա 1210 թ. Հիվանդախնամաներին տալիս է Սելևկիան, Նորբերդը, Կամարդիասը, Ճկերը, Հարուն, Գմբեթփորը, խոստանում է գրավելու դեպքում նրանց հանձնել նաև Լարանդան ու Զիբելը: Տևտոնական միաբանությունը 1212 թ. հաստատվում է Ամուդայում և հարևան բերդերում<sup>467</sup>:

1211 թ. գարնանը Լևոնը վերսկսեց ռազմական գործողությունները Տաճարականների դեմ: Նրանց մի զորախումբ ընկավ հայերի պատրաստած դարանն ու մեծ կորուստներ կրեց, զոհվեց մագիստրոս Ֆիլիպ դ'Պլեզիսը, որի համար Ինոկենտիոս III (1198-1216 թթ.) պապը բանադրեց Լևոնին ու կոչ արեց Երուսաղեմի թագավորին օգնել Անտիոքի դքսին<sup>468</sup>: Երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրիենացին (1210-1225 թթ.), ըստ էության միաբանությունների միջև հավասարակշռությունը վերականգնելու մտադրությամբ, 1211 թ. Ժոֆրուա դե Կաֆրանի ու Էյման դ'Էյսի գլխավորությամբ Անտիոք է ուղարկում 50 ասպետների, որոնք Տաճարականների հետ միասին Լևոնից վերցրեցին Բաղրասը<sup>469</sup>: Գիտակցաբար՝ Լևոնը քայլեր չձեռնարկեց այն հետ բերելու համար:

Անտիոքի ժառանգության համար պայքարում շրջադարձային եղավ 1216 թ.: 1216 թ. սկզբին Կիպրոսի թագավոր Հուգո I-ի (1205-1218 թթ.) և Իկոնիայի սուլթան Քեյ

<sup>466</sup> Мелвиль М., История ордена тамплиеров, перев, с фр. Цыбулько Г. Ф., СПб, 2003, с. 153-154 հմմտ. Շեվալիե Մարի-Աննա, նշվ. աշխ., էջ 70:

<sup>467</sup> Հոգևորասպետական միաբանությունների ու Կիլիկիայի առնչությունների վերաբերյալ տե՛ս Le trésor des chartes d'Arménie, ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, pp. 74-82, 112-126, Շեվալիե Մարի-Աննա, նշվ. աշխ., Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 285, 444-445, 494-495, 514, Delaville Le Roulx J., Les Hospitaliers en Terre Sainte et à Chypre (1100-1310), Paris, 1904, pp. 139-141, Микаелян Г. Г., указ. соч., с. 159, Boase T.S., The Cilician kingdom of Armenia, Edinburgh-London, 1978, pp. 102-103.

<sup>468</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 500-501, Setton Kenneth M., op. cit., p. 537, Boase T. S., op. cit., p. 106.

<sup>469</sup> L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 317-318, Տաճարականների կողմից ամրոցի վերադարձման մասին հաղորդող միակ աղբյուրը Հերակլեսի պատմությունն է, որի վրա հենվելով Գրուսեն այն թվագրում է 1211 թ. (Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 259-260), Ալիշանը մոտ 1213 թ-ով (Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 428): Անկախ արդյունքից՝ 1213 թ-ից հետո էլ Լևոնի վասալ Ադանը կրել է Բաղրասի տեր տիրոջը (Le trésor des chartes d'Arménie, ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, pp. 123, 126).

Քաուզ I-ի (1211-1219 թթ.) միջև կնքվեց առևտրի ու բարեկամության մասին համաձայնագիր, որի հետևանքով փլուզվեց Իկոնիայի դեմ ձևավորված կոալիցիան: Սուլթան Քեյ Քաուզը հնարավորություն ստացավ իր ուժերն ուղղելու Նիկեայի կայսրության և Կիլիկիայի դեմ: Վերջիններս 1213 թ. գտնվում էին դաշնակցային հարաբարությունների մեջ, բայց 1216 թ. մոտերքին Կիպրոսի թագավորի և սուլթանի հորդորներով, հնարավոր է նաև նրանց մասնակցությամբ Թեդորոս I-ը բացահայտեց իրողությունն ու թողեց Լևոն I-ի դուստր ներկայացած Ֆիլիպպային<sup>470</sup>: Օգտվելով իրավիճակից՝ թուրքական զորքերը մտան Կիլիկիա ու ստիպեցին Լևոնին որոշ զիջումների գնով խաղաղություն կնքել<sup>471</sup>:

Հյուսիս-արևելյան հարևանի հետ առկա լարվածության ժամանակավոր թուլացումը հնարավորություն տվեց Լևոն I-ն կենտրոնանալու Անտիոքի հարցի վերջնական լուծման վրա: Նա նոր միջոցներ է ձեռք առնում, որի ժամանակ նրան իրենց աջակցությունն են հայտնում Անտիոքի սենեսկալ Աքարիան (1216-1219 թթ.) և պատրիարք Պետրոս Լաչեդոնացին (1208/9-1217 թթ.): Հավանաբար նրանցից տեղեկանալով Բոհեմունդի Տրիպոլիում գտնվելու մասին՝ նա 1216 թ. փետրվարին շարժվում է Անտիոք<sup>472</sup>: Ըստ Սմբատ Սպարապետի, չկարողանալով ուժով վերցնել քաղաքը, Հայոց թագավորը նվերներով իր կողմն է գրավում մի շարք իշխանների, որոնք գիշերով բացում են դարպասներն ու ներս թողնում հայերին: Մի քանի օր անց հանձնվում են նաև միջնաբերդում փակվածները և պատրիարք Պետրոս Լաչեդոնացին Ռայմունդ-Ռուբենին կրկին հռչակում է դուքս<sup>473</sup>:

Լևոնի հաջողության պատճառը պետք է համարել ոչ թե Բոհեմունդի թուլությունն, այլ նրա կողմից Տրիպոլիի կոմսությունում կենտրոնանալն ու խաչակրաց ներքին անցուդարձերին ավելի մեծ ուշադրություն դարձնելը: Մասնավորապես նա ակտիվ մասնակցություն ունեցավ 1217-1221 թթ. ձեռնարկված հինգերորդ խաչակրաց

<sup>470</sup> Жаворонков П. И., Никейско-Латинские и Никейско-Сельджукские отношения в 1211-1216 гг., ВВ, т. 37, Москва, 1976, с. 60 հմմտ. Жаворонков П. И., Из истории Никейско-Киликийских отношений в первой половине XIII в., АДСВ, вып. 30, 1999, с. 212.

<sup>471</sup> Смбат Спарамет, указ. соч., с. 125, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 221-222.

<sup>472</sup> Les Gestes des Chiprois, op. cit., p. 665.

<sup>473</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 219, L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 318, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 79, Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 63:

արշավանքին: Բավական նշանակալի ուժերով Բոհեմունդ IV-ը 1217 թ. սեպտեմբերին միացավ Ակրայի տակ հավաքված հունգարական, գերմանական, ֆլամանդական և կիպրոսյան զորքերին: Մոտ 2 հազար ասպետներ և 20 հազար հետևակ հաշվով այդ բանակը նոյեմբերին արշավեց Պաղեստին, ապա առաջացավ Ֆավորի վրա: Պաշարումը ջլատեց խաչակրաց ուժերը՝ դրդելով Հունգարիայի թագավոր Անդրաշ II-ին (1205-1235 թթ.) շտապել հայրենիք: Նրան Տրիպոլի ու Տարսոն ուղեկցում էին Բոհեմունդը և Կիպրոսի թագավոր Հուգո I-ը<sup>474</sup>:

Թվում է՝ Լևոնին վերջապես հաջողվեց միավորել Կիլիկիան և Անտիոքը, սակայն նստելով դքսության գահին, Ռայմունդ-Ռուբենը փորձում է ընդհանրապես ազատվել նրա խնամակալությունից ու Հայոց արքային վանում Անտիոքից<sup>475</sup>: Այս իրադարձությունը կարելի է համարել Լևոնի ծրագրի ավարտ, քանի որ Ռայմունդ-Ռուբենն արդեն չափահաս էր և նրա անունից Անտիոքը կառավարելու ոչ մի օրինական հիմք չէր այլևս չունեց, իսկ նրան ուղղակիորեն ղեկավարելու ջանքերը չարդարացան: Հատկանշական է, որ մի շարք հայկական ձեռագրեր երկրորդելով Ռայմունդ-Ռուբենի իշխան հռչակվելը՝ 1216 թ. տակ ընդամենը նշում են Անտիոքը Լևոնի կողմից գրավելու փաստը<sup>476</sup>: Հասկանալի էր, որ ամբողջ կյանքում որպես ապագա դուքս դաստիարակված անձը չէր կարող դառնալ Հայոց արժանի թագավոր, առավել ևս, որ նա երբեք չէր փայլել իր տաղանդով: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ Լևոնը չեղյալ է հայտարարում նախկին որոշումն ու Հայոց թագաժառանգ հռչակում իր երկրորդ կնոջից ծնված Զաբելին<sup>477</sup>: Նրա խնամակալ է կարգվում Սելևկիայից մինչև Կալոնոռոս ընկած բազմաթիվ բերդերի տեր Ադան Պայլը, խորհրդականներ են նշանակվում Կոստանդին Գունդստաբլը (Պապեռոնցի), Հովհաննես Զ Սսեցի (1203-1221 թթ.) կաթողիկոսը և մյուս իշխանները:

Ռայմունդ-Ռուբենի ապաշնորհությունն ամբողջությամբ երևաց Անտիոքում կառավարելու տարիներին, երբ հեղինակություն չվայելող խորհրդականների շնորհիվ սնանկացավ, ապա վարած քաղաքականության արդյունքում իր դեմ տրամադրեց

<sup>474</sup> Ришар Ж., указ. соч., с. 209-210.

<sup>475</sup> Bar Hebraeus, op. cit., p. 370, L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 347. Մանրամասներ տե՛ս Լևոն Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 225-227:

<sup>476</sup> Մաշտոց, գրիչ Սյրեփանոս, ՀՁՀ ԺԳ դ., էջ 96, Նոր Կտակարան, գրիչ Վարդան, ՀՁՀ ԺԳ դ., էջ 103:

<sup>477</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 220, 222 հմմտ. Bar Hebraeus, op. cit., p. 376.

նաև դաշնակիցներին<sup>478</sup>: Դժգոհությունը նրանից այնքան մեծ էր, որ 1219 թ. կեսերին Բոհեմունդ IV-ի կողմնակից, Պյուի սենյորական ընտանիքի ասպետներից մեկը՝ Վիլյամ Ֆարաբելը, խռովություն է կազմակերպում և վերականգնում Բոհեմունդ IV-ի իշխանությունը: Ռայմունդ-Ռուբենը Հիվանդախնամների օգնությամբ մի կերպ հասցնում է փակվել քաղաքի միջնաբերդում և մի քանի օր անց գիշերային գաղտնի երթով ճողոպրում Կիլիկիա<sup>479</sup>: Մահվան մահճում գտնվող Լևոնը ոչ միայն չցանկացավ նրան ներել, այլ պատրասվում էր իր դստեր հետ ամուսնության միջոցով Հայոց գահը հանձնել Հունգարիայի թագավոր Անդրաշ II-ի (որը հինգերորդ խաչակրաց արշավանքից տուն դառնալու ճանապարհին հյուրընկալվել էր Լևոնի մոտ) որդի արքայազն Անդրաշին<sup>480</sup>:

Այսպիսով, Լևոնի I-ի ծրագիրը հենվում էր 1194 թ. պայմանագրի վրա: Այն անհրաժեշտ էր խաչակրաց պետությունների կողմից զավթիչ չդիտվելու և մեկուսացման չդատապարտվելու հարցում: Նրա սխալը Ռայմունդ-Ռուբենի հնազանդության մեջ համոզվածությունն էր, որը 1216 թ. ձգտում էր թոթափել Սսի խնամակալությունը: Ծրագրի կյանքի կոչման նպատակով հայտնի ռազմաքաղաքական միջոցառումները կարելի է բաժանել երկու փուլի.

ա. 1194-1201 թթ., որի ընթացքում Անտիոքի վրա ազդեցություն տարածելու բոլոր հույսերը կապվում էին Բոհեմունդ III-ի զիջողական կեցվածքի, առկա պայմանագրի և հետևաբար հարցի խաղաղ լուծման հետ:

բ. 1201 թ. մինչև 1216 թ., երբ հայոց արքունիքը խնդրի հանգուցալուծման նպատակով առավելապես ընտրեց արտաքին ճնշման ու ռազմական տարբերակը, քանզի ի դեմս Բոհեմունդ IV-ի Անտիոքում բախվեց ֆրանկյան ամուր ընդդիմության:

Ինչ վերաբերվում է պայքարում ներգրավված ուժերի դասավորությանն ու դրանց նպատակներին՝ նշենք.

<sup>478</sup> Նա լավ չհասկանալով քաղաքում տիրող իրականությունը՝ հարկահանության նպատակով արտոնություններ էր շնորհում իրար դեմ մրցակցող խմբավորումներին: St'us *L'Estoire de Eracles empereur*, op. cit., p. 318, *Le trésor des chartes d'Arménie, ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniens*, pp. 136-139.

<sup>479</sup> *Les Gestes des Chiprois*, op. cit., pp. 665, 670 հմմտ. *L'Estoire de Eracles empereur*, op. cit., pp. 318, 348-349, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 79, Հեթում պատմիչի Ժամանկագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 63:

<sup>480</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 221, 223, *Chronique d'Ernoul et de Bernard le Trnsorier*, p. 411.

ա. Բոհեմունդի ճամբարում էին.

- Կիլիկիայի նկատմամբ հավակնություններ ցուցաբերող Սալահ ադ-Դինի որդին՝ Հալեպի սուլթան Ալ-Մելիք ալ-Զահիրը:

- Ռումի սուլթանը, որից Լևոնը 1192-1195 թթ. գրավել էր Իսավրիան, Լուլուան, Կոկիսոնը, Կապանը, Բերդուսը և ուներ այլ հավակնություններ ևս<sup>481</sup>, ուստի Սսի դեմ պայքարում նա համագործակցում էր Հալեպի ամիրա ալ-Զահիրի ու Բոհեմունդ IV-ի հետ:

- Ուղղափառ պատրիարքի աթոռը վերականգնել տենչացող Անտիոքի հույն համայնքը:

- Տաճարականները, որոնց թշնամության պատճառը Լևոնի հետ Բաղրասի պատկանելության հարցն էր:

բ. Անտիոքի դքսի խնդիրը պետության անկախության պահպանումն էր: Մինչ այդ դքսությունը մի քանի անգամ արդեն ղեկավարվել էր խնամակալների միջոցով, սակայն դրանք Լատին Արևելքից ելած թեկնածուներ էին: Նման կարգավիճակին համապատասխանելը Լևոն I-ին մղում էր առերևույթ լատինական ընտանիքի մաս կազմելու: Եվ չնայած Անտիոքում բազմաթիվ ասպետներ անցան նրա կողմը, այնուամենայնիվ ֆրանկ բնակչության մեծ մասն աջակցեց Բոհեմունդ IV-ին:

գ. Լևոնի դաշնակիցներն էին հանդիսանում.

- Սալահ ադ-Դինի եղբայր ալ-Ադիլը, նույն Սաֆ ադ-Դինը՝ Եգիպտոսի և Դամասկոսի սուլթանը (1196-1218 թթ.), որի նպատակն էր սանձել Ալ-Զահիրի նկրտումները: Այսպես, եթե Լևոնը մինչև 1208 թ. հաջողությամբ պայքարում էր Ռումի և Հալեպի դեմ, ապա 1208 թ. սելջուկների հակահարվածներից ու նրանց կողմից որոշ ամրոցներ հետ բերելուց հետո<sup>482</sup>, Հայոց արքան ստիպված էր դիմելու Ալ-Ադիլի միջամտությանը՝ սելջուկների առաջխաղացումը կանխելու համար:

- Հիվանդախնամները, որոնք գլխավորապես դուրս էին եկել Տաճարականների դեմ՝ նրանց հետ Սուրբ հողերում առաջնության հասնելու հարցերում ունեցած տարաձայնությունների հետևանքով: Բոհեմունդ Միականուն աջակցելու պատճառով,

<sup>481</sup> Տէր-Ղազարեան Յ., նշվ. աշխ., էջ 279:

<sup>482</sup> Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 78, Mahé Jean-Pierre et Anne Mahé, Histoire du l'Arménie des origines à nos jours, p. 227.

Տաճարականների տիրույթները Կիլիկիայում հանձնվեցին Հիվանդախնամներին: Վերջիններիս աջակցությունը կարևորվում էր այնքանով, որ նրանք Անտիոքում ևս մեծ ազդեցություն ունեին: Մասնավորապես 1142/45 թ. միաբանությանը հանձնված Կրակ դե Շեվալյե ու Մարգատ ամրոցները<sup>483</sup> Հիվանդախնամների գործոնն Ասորիքում դարձնում էին բավական շոշափելի:

- Անտիոքի հայերը և ասորիները: Վերջիններս Լևոնի կազմակերպած հարձակումների ժամանակ աջակցում էին կիլիկյան բանակին՝ նրա մեջ տեսնելով իրենց ազգային, կրոնական շահերի մարմնավորումը:

- Լատին հոգևորականությունը, որը ժամանակավորապես բռնել էր Լևոնի ու Ռայմունդ-Ռուբենի կողմը՝ հուսալով նրանց միջոցով վերականգնել կորցրած դիրքերն Անտիոքում:

### ***§ 3. Լատինական եկեղեցու դիրքորոշումը կիլիկիա-անտիոքյան հակամարտության հարցում***

Համեմատաբար ավելի քիչ է ուսումնասիրված կիլիկիա-անտիոքյան հակամարտության մեջ տեղ գտած եկեղեցական պայքարը, առանց որի միջնադարյան իրողության քաղաքական կողմը պատկերացնել անհնար է: Կրոնն ու քաղաքականությանը միջնադարում այնքան կապված են եղել իրար հետ, որ «ճշմարտապես եկեղեցին,- գրում է Ն. Ադոնցը,- բարոյական խոշոր հաստատություն է, որի պատմությունը և կյանքը իր սեփական անիվներն ունեն, բայց անուրանալի է, որ նրանց պտույտները գրեթե միշտ կատարվել են քաղաքական ելևէջների շրջանակի մեջ...»<sup>484</sup>: Հարցի պարզաբանման գործում եզակի ու անփոխարինելի են Ղ. Ալիշանի, Մ. Օրմանյանի, Ռ. Գրուսեի և Մ. Մելվիլի աշխատությունները: Հետևելով հակամարտության ընթացքին՝ հստակ կարելի է նկատել, որ դաշնակիցներ շահելու

<sup>483</sup> Перну Р., Крестоносцы, с. 13, 90, 160-165 հմմտ. URL://<http://www.templiers.net/orient-latin/index.php?page=Rey-Krak-des-Chevaliers>, (09.08.2014), URL://<http://www.templiers.net/orient-latin/index.php?page=chateau-de-margat>, (09.08.2014), Chevalier Marie-Anna, L'ordre de l'Hôpital en Arménie Cilicienne du début du XII siècle à la fin du règne de Het'om I-er: Aspects généraux de la Question, L'Eglise arménienne entre Grecs et Latins fin XI milieu XV siècle, pp. 80-81.

<sup>484</sup> Ադոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 153:



համար կողմերը ստիպված էին հաշվի նստել կրոնական և դավանաբանական այս կամ այն համայնքի հետ: Դեռևս մինչև թագավոր հռչակվելը, Լևոնն, ասորիների վրա ազդելու ակնկալիքով, հովանավորում էր Անտիոքում նստող Միքայել Մեծ կաթողիկոսի (1166-1199 թթ.) դեմ ընդվզած եպիսկոպոս Թեոդորոս Բար-Վեհեբունին: 1192/3 թ. նա Կիլիկիայում ստանալով Գրիգոր Տղայի ու Լևոնի օժանդակությունն՝ ի հակաթոռություն Միքայել Մեծի հռչակվում է ասորիների կաթողիկոս Հովհաննես անունով: Սակայն Գրիգոր Տղայի մահից (1193 թ.) շատ չանցած, նա ևս մահանում է և փոփոխված իրավիճակում նպատակահարմար է դառնում համագործակցությունը կաթողիկոս Միքայելի հետ<sup>485</sup>:

Կիլիկիա-անտիոքյան պատերազմի կրոնական բաղկացուցիչը հատկապես սրում էր Անտիոքի մեծ ու ազդեցիկ հունական համայնքի առկայությունը, որն ինչպես կտեսնենք, քաղաքի ուղղափառ պատրիարքության աթոռը վերականգնելու հույսով անցել էր Բոհեմունդ IV-ի կողմը: Նրանց համագործակցության խորացումը պայմանավորում էր նաև Անտիոքի լատին հոգևորականության հավակնություններն ու ինքնուրույնության ձգտումը: Այսպես, Անտիոքի պատրիարք Պետրոս Անգուլեմացին բացահայտ փորձում էր խառնվել աշխարհիկ իշխանության գործերին ոչ միայն Անտիոքում, այլ նաև Տրիպոլիում, որտեղ առանց Հռոմի հաստատման եպիսկոպոս կարգեց Լորանին<sup>486</sup>: Չնայած պատրիարքը 1201 թ. ճանաչել էր Բոհեմունդի իշխանությունը, սակայն հույների աջակցությունը ստանալու նպատակով դքսի ու համայնքի միջև տեղի ունեցող մերձեցումը Պետրոս Անգուլեմացուն մղում էր ընդդիմանալու և անցնելու նրա հակառակորդների կողմը<sup>487</sup>:

Պետրոս Անգուլեմացու հայկական կողմնորոշումն արտահայտում էր լատին եկեղեցու ընդանուր տրամադրվածությունը, որը չէր կարող հանդուրժել ուղղափառ հոգևորականության դիրքերի որևէ վերականգնում Անտիոքում: Պապականության ազդեցության աճի պայմաններում Լևոնն Անտիոքի ժառանգության չլուծված հարցի իրավարարությունը մի կողմից վստահել էր Հռոմին: Այդ մասին վկայում են պապի հետ

<sup>485</sup> Անանուն Եղեսացի, նշվ. աշխ., էջ 154-155, 193: *Բար-Վեհեբունի մասին տե՛ս Տէր-Մինասեանց Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 2009, էջ 216-222:*

<sup>486</sup> L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 187, 313.

<sup>487</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 214, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 250-252.

փոխանակված նամակագրությունն ու պատվիրակների գործունեությունը: Անտիոքի խնդրի վերաբերյալ Իննոկենտիոս III (1198-1216 թթ.) պապին Լևոնի առաջին հաղորդումներից մեկը թվագրվում է 1199/1200 թ., որում Հայոց թագավորը մանրամասն ներկայացնում է, թե ինչպես է Տրիպոլիի կոմս Բոհեմունդը Ռոմի սելջուկների, Տաճարականների օգնությամբ ապստամբություն բարձրացրել Անտիոքում փորձելով բռնագրավել գահին ու չեղյալ հայտարարել հոր՝ Բոհեմունդ III-ի և Լևոնի միջև կնքված պայմանագիրը: Բայց Լևոնին հաջողվել է ճնշել ելույթը, քաղաքում վերականգնել օրինական իշխանությունը՝ Բոհեմունդ III-ի կողմից ստանալով Ռայմունդի որդու ժառանգական իրավունքների հաստատումը: Պատասխանում (դեկտեմբերի 17) պապը մտադրություն է հայտնում արդարությունը վերականգնել հակամարտ կողմերին հավասարապես լսելու միջոցով և այդ նպատակով պատրաստվում Արևելք ուղարկել երկու նվիրակ: Բոհեմունդ Միականու համար պապի նպաստավոր դիրքորոշումն առավելապես կապված էր Մարգատը Հիվանդախնամներին վաճառելու հարցում խոչընդոտներ չհարուցելու հետ<sup>488</sup>:

Պապի առաջին երկու նվիրակները՝ կարդինալներ Սոփրետոս Պրակսիդին ու Պետրոս Մարակելան (հռոմեական եկեղեցու յուրաքանչյուր կարդինալ պայմանականորեն ամրագրվում էր Հռոմի եկեղեցիներից մեկին և անվանվում դրա հովանավոր սրբի անունով) Արևելք ժամանեցին 1202 թ. վերջերին՝ սկզբնապես հանգրվանելով Ակրայում<sup>489</sup>: Կողմերի միջև հաշտություն հաստատելու նվիրակների բոլոր ջանքերը որևէ դրական արդյունք չտվեցին, քանի որ նրանց միջև նույնպես առկա էին տարաձայնություններ:

Սոփրետոսը նախ փորձեց համաձայնության բերել իրար դեմ պայքարող Հիվանդախնամներին ու Տաճարականներին, բայց միաբանությունների մագիստրոսների մասնակցությամբ գումարված ժողովն ապարդյուն անցավ: Դրանից հետո նա անցավ Տրիպոլի, որտեղից Կիլիկիա ու Անտիոք առաքեց Բեթղեհեմի և Անտարատոսի եպիսկոպոսներին: 1203 թ. փետրվարին Տրիպոլի է ժամանում Բոհեմունդ IV-ը, որը հակված չէր Սոփրետոսին հաշիվ տալու իր ձեռնարկումներում ու

<sup>488</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 490-491:

<sup>489</sup> Мелвиль М., указ. соч., с. 154, Бойчук Б. В., Амори II де Лузиньян, Одесса, 2005, URL://http://www.templiersinfo.ru/amori2deluzinyan/, (18.05.2012), Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 493.

բավական ինքնուրույն էր գործում: Նման դիրքորոշումը ստիպեց պապի նվիրակին հեռանալ Անտիոք, ուր նրան 1203 թ. վերջին կամ 1204 թ. սկզբին միանում է Պետրոս Մարակելան:

Կարդինալ Պետրոսի առաջարկները նույնպես անընդունելի էին հակամարտ կողմերի համար, քանի որ Լևոնը պահանջում էր հեռացնել Բոհեմունդին Անտիոքի դքսության սահմաններից ու ենթարկել դատի, մինչդեռ Պետրոս Մարակելան չէր պատրաստվում բավարարել այն: Ի վերջո նվիրակները կոչ արեցին պահպանել հանգստությունը և ժամանակ տալ դատավճիռ կայացնելու համար<sup>490</sup>:

Ավելի ուշ, Ակրայում, նվիրակները մեծ ժողով են գումարում արդեն Երուսաղեմի թագավորի ու Կոստանդնուպոլսի լատին կայսեր ներկայացուցիչների մասնակցությամբ, և հարցը վերջնականապես լուծելու առաքելությամբ 1204 թ. Ասորիք ուղարկում եպիսկոպոս Սիկարտ Կրեմոնացուն: Նա գլխավորապես կողմերից պահանջում էր.

- Զինադադարի կնքում:

- Խաղաղությունը հաստատող պատանդների փոխանակում մինչև վեճի հանգուցալուծումը:

Լևոնը համաձայն էր բավարարել դրված պայմանները և նույնիսկ գոհացնել Տաճարականներին, իսկ Տրիպոլիի կոմսը, միաբանության հետ դաշնակցության վրա հենված, միտված չէր զիջումների գնալու: Բոհեմունդի նման պահվածքը ստիպեց Սոփրետոսին ավելի հակվել դեպի Լևոնը: Հայոց թագավորի պատվիրակ Կոստանդին Կամարտիասի կողմից հակառակորդի անզիջողականության մշտական մատնանշումը Սոփրետոսին ստիպեց համաձայնվելու դքսին բանադրելու անհրաժեշտության հետ, եթե այդ քայլին հավանություն տա նաև մյուս նվիրակը: Սակայն Պետրոս Մարակելան հակված էր պաշտպանելու Բոհեմունդի ու Տաճարականների շահերը, որն անհնար դարձրեց դիվանագիտական ճանապարհով հարթելու բավական խրթին հարցը<sup>491</sup>:

Տաճարական միաբաններն, այսպիսով, ուղղակիորեն ներգրավված էին Անտիոքի ու Կիլիկիայի պայքարում և հանդես էին գալիս որպես Բոհեմունդի դաշնակիցներ: Հռոմը ոչ մի դեպքում չէր խառնում այս երկու գործերն իրար ու

<sup>490</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 493-494:

<sup>491</sup> Նույն տեղում:

միաբանների հակասությունները Լևոնի հետ հարթելու համար պապն առանձին դատավորներ կարգեց ի դեմս Վալանսի և Բիբլուսի եպիսկոպոսների: Վերջիններս համագործակցում էին Սոփրետոսի ու Պետրոսի հետ, որոնց նախապատվություններն աստիճանաբար հստակեցվում էին: Պետրոս Մարակելան արդեն բացահայտ անցել էր Բոհեմունդի կողմը՝ Անտիոքում հրավիրելով նրան նպաստավոր ժողովներ, իսկ Սոփրետոսը հայերի համար համանման որոշումների հասնում էր Ակրայում: Արդյունքում այդ վճիռների ու պատվիրակների դեմ Հռոմին գանգատվում էին երկուստեք: Հիասթափության մեջ գտնվող Սոփրետոս Պրակսիդին ու նրա կողմնակիցները մեկնեցին Կոստանդնուպոլիս<sup>492</sup>:

Պետրոս Մարակելան ևս գործն անավարտ թողեց: 1205 թ. սկզբին, խաչակրության ակտիվ քարոզով զբաղվելու մղումով, որի առաքելությունն ի դեպ չէր ստացել պապից, բազմաթիվ ասպետների հետ նա հեռացավ Կոստանդնուպոլիս<sup>493</sup> լատին եկեղեցու միջնորդությունը հայ-անտիոքյան վեճի շուրջ դնելով կասկածի տակ: Պատահական չէ, որ Բոհեմունդ IV-ը հետևեց կարդինալին և Կոստանդնուպոլիսում նորաստեղծ Լատին կայսրության մերձեցումը Կիլիկիայի հետ կանխելու մտադրությամբ հպատակություն հայտնեց լատին կայսր Բալդուին Ֆլանդրացուն (1204-1206 թթ.)<sup>494</sup>: Բացի այդ, այս քայլով նա փորձում էր ի ցույց դնել իր անկախությունը Հռոմից ու Երուսաղեմից: Ավելին, Պետրոս Մարակելան 1205 թ. Բաղրասը տաճարականներին վերադարձնելու պահանջի մերժումից հետո բանադրեց Լևոնին և նրա թագավորությունը<sup>495</sup>:

Հայոց թագավորը կրկին դիմեց Հռոմի պապին՝ մեղադրելով կարդինալին Հալեպի մահմեդականներից կաշառվելու և միակողմանիորեն Տաճարականներին պաշտպանելու մեջ: Իրադրությունը հատկապես սրվեց, երբ Հիվանդախնամների ջանքերով եկեղեցուց վտարվեց նաև Տրիպոլիի կոմսը: Պապը ստիպված էր 1205 թ.

<sup>492</sup> Мелвиль М., указ. соч., с. 153-154, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 495.

<sup>493</sup> Жоффруа де Виллардуэн, указ. соч., с. 108, 123, L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 287, Պետրոս Մարակելացու մասին տե՛ս Mas Latrie de L., Les patriarches latins d'Antioche, pp. 194-196.

<sup>494</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 496:

<sup>495</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 253, Мелвиль М., указ. соч., с. 154.

մարտին նշանակելու նոր քննիչների, ի դեմս բարոններ Բերտոլդի ու Ֆորավալլեի և Լուչետտոյի ու Թաբոր լեռան վանահայրերի: Նրանց հրամայված էր<sup>496</sup>.

- Զինադադարի կոչ անել դիմակայող կողմերին և նրանում ընդգրկված բոլոր շահագրգիռ ուժերին:

- Ժամանակ չափել քննության լիակատար ու համակողմանի իրականացման համար:

- Նրանք պարտավոր էին ամբողջը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո միայն հրապարակել կայացված որոշումը:

Այդ նույն հորդորներով նամակներ հանձնվեցին Հայոց ու Երուսաղեմի թագավորներին, ասպետական միաբանությունների մագիստրոսներին, որոնցում պատվիրվում էր առավելապես աջակցել Հռոմին հնազանդություն ցուցաբերած կողմին: Սակայն Արևելքի քրիստոնյաների միջև անջրպետը միայն խորանում է, ու թեև նոր նվիրականների գործունեության մասին մեզ գրեթե ոչինչ հայտնի չէ, բայց դատելով Անտիոքի ու Կիլիկիայի հետագա զինված բախումներից կարելի է եզրակացնել, որ նրանք ևս խաղաղություն չհաստատեցին նրանց միջև:

Այդ նույն ժամանակ Անտիոքի լատին պատրիարք Պետրոս Անգուլեմացին, հավատարիմ մնալով Հռոմեական կուրիայի քաղաքականությանը, գնալով ավելի կոշտ դիրքորոշում էր որդեգրում Բոհեմունդի դեմ: Դուքսը դրան հակադարձում էր հունական տարրի ազատությունների ընդարձակմամբ: 1206/07 թ. նա պատրիարքի աթոռը նույնիսկ հանձնում է հույն Սիմեոն II-ին: Իննոկենտիոս III պապը 1207 թ. փետրվարի 6-ով և 1207/8 թ. մարտի 4-ով թվագրվող նամակներում սպառնում է բանադրել իշխանին և նրա կողմնակիցներին, եթե վերջիններս շարունակեն լատին հոգևորականության դեմ ուղղված ճնշումներն ու սատարեն ուղղափառ պատրիարքին<sup>497</sup>: Հասկանալով, որ նման միջոցները չեն կարող լուծել իրենց միջև եղած հակասությունները՝ Պետրոս Անգուլեմացին 1208 թ. ապստամբեց դքսի դեմ և ինչպես տեսանք քաղաքը հանձնեց իր հայ դաշնակիցներին:

<sup>496</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 496:

<sup>497</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 255 հմմտ. Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 498:

Ապստամբության ճնշումից ու Անտիոքից Լևոնին հեռացնելուց հետո, Բոհեմունդ IV-ը Պետրոս Անգուլեմացուն նետում է բանտ: Դուքսն իր մարդկանց ուղարկում է նրա մոտ և ազատ արձակելու դիմաց առաջարկում իրեն ճանաչել որպես Անտիոքի միակ տեր: Պատրիարքը մերժում է դրված պայմանները և 1208 թ. հուլիսին մահանում ծարավից ու սովից<sup>498</sup>: Հերակլեսի պատմության համաձայն Անտիոքի դուքսը պատրիարքին ձերբակալել ու պահում էր քաղաքի միջնաբերդի աշտարակներից մեկում, որտեղ նրան կերակրում էին ըստ պահանջի, բայց բավարար ջուր չէին տալիս: Ծարավից դրդված՝ Պետրոս Անգուլեմացին խմում է ճրագի յուղը և մահանում<sup>499</sup>:

Անտիոքի պատրիարքի սպանությունը Կիլիկիայի համար միանգամայն նոր իրադրություն էր ստեղծում: Իննոկենտիոս պապը խորհուրդ էր տալիս Լևոնին հաշտվել Տաճարականների հետ, պատրաստակամություն էր հայտնում ճանաչելու Ռայմունդ-Ռուբենի իրավունքները: Բայց Լևոնը շարունակում էր համառել ու չկարողացավ օգտվել ստեղծված հանգամանքներից: Միաբաններն, իրենց հերթին, կարողացան զերծ մնալ Բոհեմունդի և նրա կողմնակիցների վրա դրված բանադրանքից: 1209 թ. հունիսին պապը կրկին Լևոնին գրեց իր զգուշացումները. «...Տաճարականները կդադարեցնեն անարգանքները, որոնք դուք նշում եք, երբ ինքներդ դադարեք նրանց վիրավորել ու խոչընդոտել Գաստոնի (Բաղրասի) վրա նրանց իրավունքների տարածմանը: Հենց դրանում է նրանց ատելության պատճառն ու էությունը: ...Այս բանը մենք ասում եք ոչ թե Տրիպոլիի կոմսի և Տաճարականների օգտից ելնելով, այլ ցանկանում ենք տեսնել նրանց իրենց պարտավորությունների մեջ, քան ձեզ հետ մարտնչելիս...»<sup>500</sup>:

1210 թ. հունիսի 4-ով թվագրվող մի այլ նամակում պապը հակասությանը վերջ դնելու նպատակով առաջարկում էր Անտիոքի պահպանությունը վստահել նոր պատրիարքին, որի դիրքորոշումը կասկած չէր հարուցի երկուստեք, իսկ քաղաքի

<sup>498</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 214 հմմտ. Les Gestes des Chiprois, op. cit., p. 664, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 78, Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 62:

<sup>499</sup> L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 313-314.

<sup>500</sup> Мелвиль М., указ. соч., с. 154, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 258, հմմտ. Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 499:

պաշտպանության համակարգում ներգրավել նաև Հիվանդախնամներին<sup>501</sup>: Սրանով միաբանությունների միջև կհաստատվեր հավասարություն ու կարելի կլիներ ապահովել վերջիններիս չեզոքությունը, սակայն Լևոնը հրաժարվում էր օգնությունից և չէր պատրաստվում հանձնել Բաղրասը: Տաճարականների հետ բանակցությունների վերսկսման համար Իննոկենտիոս III պապը Հայոց թագավորի խնդրանքով Սիկարտ Կրեմոնացուն նորից նշանակում է խնդրի իրավարար՝ նրան վճռական հրահանգներ ցուցանելով:

- Ամեն գնով հասնել վերջնական և անդառնալի որոշման:

- Անհրաժեշտության դեպքում քննությանը ներգրավել Երուսաղեմի ու Անտիոքի պատրիարքներին:

- Անհամաձայնություն հայտնաձևել կողմին անհապաղ բանադրել: Դրան ի պատասխան, Հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Մեծաբարոն (1203-1221 թթ.) հուշում էր, որ պապի բանադրանքն ուժ չունի հայոց եկեղեցու հետևորդների վրա<sup>502</sup>:

Կաթողիկոսի մտավախություններն անհիմն չէին, քանի որ Հռոմի վերջին միջոցառումներն ապացուցում էին Բաղրասի հարցը Տաճարականների օգտին լուծելու պապի ցանկությունը: 1210 թ. Հռոմի պապը վերահաստատեց Ռայմունդ-Ռուբենի իրավունքները, բայց Տաճարականներին պատկանող ամրոցների վերադարձման հարցում նա 1210 թ. հանդես էր գալիս Լևոնի դեմ: 1211 թ. մայիս-հունիսին Երուսաղեմի թագավորի աջակցությամբ հետ բերված Բաղրասն Ինոկենտիոս III-ը ամրագրեց միաբանության օգտին: Հայոց թագավորն այդ ընթացքում սկսեց հետապնդել լատինական եկեղեցուն, զրկեց նրան Կիլիկյան մի շարք տիրույթներից և պաշտպանության տակ առավ Անտիոքի քաղկեդոնական պատրիարքին: Այդ միջոցառումները նոր հիմքեր ստեղծեցին Լևոն I-ին բանադրելու համար, որը Իննոկենտիոս III-ը պատրաստվում էր իրագործել Երուսաղեմի ու Անտիոքի պատրիարքների, Տյուրոսի արքեպիսկոպոսի, Տրիպոլիի, Լիմասոլի եպիսկոպոսների և

<sup>501</sup> Мелвилъ М., указ. соч., с. 154 և Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 258.

<sup>502</sup> Ալիշան Դ., նշվ. աշխ., էջ 499-500 հմմտ. Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Ա, մաս Գ, էջ 1585:

Արևելքի մյուս բարձրաստիճան հոգևորականության ձեռքով, այլ ոչ անձամբ պապական կոնդակով<sup>503</sup>: Սրանով դրությունն ինչ-որ առումով կարծես մեղմացվում էր:

Հռոմի և Սսի վերջին հակասությունները նպաստեցին հույն ուղղափառ հոգևորականության հետ հայերի ունեցած տարաձայնությունների որոշակի կարգավորմանը: Այս ընթացքում Լևոնի ընդունելությանն է արժանանում Անտիոքի հունական պատրիարքը<sup>504</sup>, ամրապնդվում են հարաբերությունները Նիկեայի Հունական կայսրության հետ՝ արդյունք հանդիսանալով Ռուբեն III-ի դուստր Ֆիլիպայի ու Կայսր Թեոդորոս I-ի Լասկարիսի ամուսնության համար:

Անտիոքում նույնպես Իննոկենտիոս III-ը ձգտում էր հաստատել հնազանդ կառավարություն, բայց դրա հետ համամիտ չէր Բոհեմունդ IV-ը, որը շարունակում էր արհամարհել պապի սպառնալիքները: Նա ոչ միայն չի ճանաչում Հռոմի կողմից նոր նշանակված պատրիարք Պետրոս II Լաչեդոնացուն (1209-1217 թթ.) այլև նրա պարտականությունների իրականացմանը չխանգարելու պապի հորդորներին պատասխանում է ուղղափառ պատրիարք Սիմեոն II-ի ներկայության եկարաձգմամբ մինչև 1213 թ.: Բոհեմունդ IV-ը գնալով ավելի կոշտ դիքորոշում էր որդեգրում և հիշեցնելով Կոմնենոսների գերիշխանությունը հայտարարում էր, որ Անտիոքի դքսությունը ենթարկվում է միայն Կոստանդնուպոլսին, չէր արձագանքում պապի նվիրականների ջանքերին: Անտիոքի դուքսը չխորշեց նաև ձեռք գցել քաղաքից հարավ գտնվող Կոսայր ամրոցը, որտեղ ապաստանել էին լատին հոգևորականության մի մասը և գտնվում էր եպիսկոպոսական հասույթը: Անտիոքի եկեղեցու հունականացումը խոչընդոտելու ու նրա լատինական դեմքը վերականգնելու համար Իննոկենտիոսը 1211 թ. հունիսի 7-ին բարեկամական նամակ հղեց անգամ Հալեպի սուլթան Մելիք ալ-Զահիրին՝ հայցելով վերջինիս բարեհաճությունը լատին պատրիարքության հանդեպ<sup>505</sup>: Այս ժամանակներում գրված մի փաստաթուղթ արտացոլում է հունական հոգևորականության ու հույն համայնքի ազդեցության աճը Բոհեմունդի կառավարած Անտիոքում: Նրանում արաբերենով ձևակերպված են Անտիոքի մի քանի սուրբ

<sup>503</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 500-501:

<sup>504</sup> Мутафян К. З., Последнее королевство Армении, с. 47-48.

<sup>505</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 258-259, հմմտ. Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 500-501, Rey E., Les dignitaires de la principauté d'Antioche, ROL, N° 8 (1900—1901), pp. 139-140.



վայրերի վերականգնման, դրանցից եկող ֆինանսական միջոցների տնօրինության հարցեր: Թեև այն գրված է արաբերենով և հստակեցված չեն եկեղեցականների դավանաբանական պատկանելությունը, սակայն նշված հոգևորականների անունները հուշում են, որ խոսքը վերաբերվում է հույն ու լատին կրոնավորներին, ընդ որում առաջիններին հատկացվում է մեծ իրավունքներ<sup>506</sup>: Նման կոնդակ կարող էր հայտնվել միայն հույն պատրիարքին Անտիոքի կառավարչի բացահայտ պաշտպանության դեպքում: Այս առումով հատկանշական է, որ վերը հիշատակված 1207/8 թ. մարտի 4-ի կոնդակում, պապն, ի թիվս բազմաթիվ ցուցումների, հրամայում էր իր ներկայացուցչին մերժելու այդ գավառից հույն հոգևորականների ապօրինի եկամուտներ հավաքելու իրավունքներն ու բանդրել Անտիոքի դքսին:

Անտիոքը Հռոմի լիակատար ենթակայությանը վերադարձնելու համար պապը զգում էր Կիլիկյան Հայաստանի կարիքը և չէր կարող երկար գժտված մնալ Լևոնի հետ: 1213 թ. մարտի 27-ին Իննոկենտիոս III-ը Կիլիկիայում Տևտոնական միաբանության շնորհումները վավերացնող կոնդակում Լևոնին դիմում էր «Ամենասիրելի որդի», «Բարեպաշտ ու Առատաձեռն», «Պայծառափայլ թագավոր Հայոց» մակդիրներով: Նախկին բանադրանքի վերացման կոչ էր ուղղում Երուսաղեմի, Անտիոքի պատրիարքներին: Իր հերթին Լևոնը վերականգնեց լատին եկեղեցու տիրույթները Կիլիկիայում, խոստումներ տվեց Անտիոքի հոգևորականներին և բարոններին: Մյուս կողմից պապը որևէ հստակ վճռով Անտիոքը չէր հանձնում Սսի հովանավորությանն ու բավարավում էր Բոհեմունդի վրա դրված բանադրանքի վերահաստատումով, որի արգելման խնդրանքով Հռոմին գրել էր Կոստանդնուպոլսի կայսրը<sup>507</sup>:

Ստեղծված իրավիճակում Անտիոքի նոր պատրիարքը նույնպես պետք է անցներ Լևոնի կողմը և հարեր 1216 թ. Բոհեմունդի դեմ կազմակերպվող հերթական դավադրությանը: Իր նախորդի օրինակով Պետրոս Լաչեդոնացին Անտիոքի դարպասները բացում է Լևոնի առաջ, ու ապստամբության «հաջող» ավարտն՝ ամրագրում երկրորդ անգամ Ռայմունդ-Ռուբենին իշխան ձեռնադրելով: Ինչպես 1203 և

<sup>506</sup> Cahen C., Un document concernant les Melkites et les Latin d'Antioche au temps des Croisades, *Revue des études byzantines*, 1971, t. 29, p. 290.

<sup>507</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 501 հմմտ. Setton Kenneth M., op. cit., p. 538.

1208 թթ. ռազմական արշավանքների ժամանակ, այնպես էլ Պետրոս Անգուլեմացու և Պետրոս Լաչեդոնացու գործողություններում բախվում ենք աղբյուրագիտական տվյալների անբավարար համապատասխանության հետ: Եթե Պետրոս Անգուլեմացու դեպքում մենք գործ ունենք առավելապես չիրապարակված պապական կոնդակների հետ, որոնց հղում են ֆրանսիացի պատմաբանները<sup>508</sup>, ապա Ռայմունդ-Ռուբենին պատրիարք Պետրոս Լաչեդոնացու կողմից թագադրելու արարողությանը տեղյակ են նաև հայկական աղբյուրները<sup>509</sup>: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Ռայմունդ-Ռուբենի ծիսակարգային թագադրությունն իրականացրել է Պետրոս Լաչեդոնացին՝ ունենալով հանդիսությունը կազմակերպելու և՛ ժամանակ, և՛ հնարավորություն:

Իննոկենտիոսին III-ին փոխարինած Հոնորիոս III պապը (1216-1227 թթ.) չփոխեց Հռոմի քաղաքականությունը և 1217 թ. հուլիսի 25-ի հրովարտակով կոչ արեց հնազանդվել ու հարգել Ռայմունդ-Ռուբենին: Նման բովանդակությամբ նամակներ նա գրեց նաև ամսի 27-ին լեգատ Պելագիոսին և 29-ին Անտիոքի համայնքապետին: Հռոմն, այսպիսով, հույս ուներ Անտիոքի երիտասարդ իշխանի, Լևոն I-ի, Հիվանդախնամների միջոցով վերջնականապես վերականգնել իր կորցրած դիրքերն Անտիոքի դքսությունում<sup>510</sup>, սակայն 1219 թ. վերականգնվեց Բոհեմունդ Միականու իշխանությունը: Վերջինս չէր շտապում հաշտվել թշնամիների հետ, հետևաբար նոր ուժով պայքարը բորբոքվեց Հիվանդախնամների հետ: Միաբանության միակ դաշնակիցը Լևոնի մահից հետո մնացել էր Հռոմը, որին էլ դիմում էին ասպետները:

1230 թ. Գրիգորիոս IX պապը (1227-1241 թթ.) դքսին փորձեց սանձել բանադրանքի ենթարկելով: Լարված պայքարը ջլատում էր նաև Անտիոքի ուժերը, ուստի Բոհեմունդը հետևություններ անելով նախկին փորձից, համաձայնվեց ընդունել Երուսաղեմի պատրիարք Զերուլդ Լոզանցու (1225/6-1239 թթ.)<sup>511</sup> միջնորդությունն ու 1231 թ. խաղաղության եզրեր գտնել Հիվանդախնամների հետ: Մինչ այդ, պատրիարք Ռենե Տոսկանացու (1219-1226 թթ.) հայրապետության շրջանում Անտիոքում հանգուցալուծվեց նաև հակասությունները լատին հոգևորականության հետ: Ռենեին

<sup>508</sup> L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 313.

<sup>509</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 219:

<sup>510</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 262-263 հմմտ. Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 502-503:

<sup>511</sup> Mas Latrie de D., Les patriarches latins de Jerusalem, ROL, Paris, N° 1 (1893), p. 22.

պատրիարքության աթոռը հանձնվեց 1219 թ. նոյեմբերին, այն բանից հետո, երբ 1219 թ. ապրիլին այդ պաշտոնում նշանակված Պետրոս III Կապուացին չժամանեց Արևելք<sup>512</sup>: Ունենալով ներքին ու արտաքին բազմաթիվ խնդիրներ՝ Անտիոքի դուքսը ստիպված էր ճանաչել նրա իրավունքները, քանի որ Լատին եկեղեցին XIII դ-ի սկզբին Արևելքում ներկայանում էր ոչ միայն կոռ համակարգով, ամենահաս բանադրանքներով, այլ արդեն կայացած հոգևորասպետական միաբանություններով, որոնց լուրջ զինական ուժն իրենց նախաձեռնություններում չէին վարանում ստանալ տարածաշրջանի բոլոր քրիստոնյա առաջնորդները:

Իրավիճակի փոփոխությունն աստիճանաբար ավելի հավակնոտ դարձրեց լատինական կողմին և Լևոն արքայի մահից շատ չանցած՝ XIII դ. 20-30-ական թթ., արդեն Անտիոքի պատրիարքն էր ցանկանում կախման մեջ գցել Հայոց կաթողիկոսությունը: Վկայակոչելով Անտիոքի լատին պատրիարքությանը ենթակա տարածքներում բնակվող մեծաքանակ հայ ազգաբնակչության առկայությունն ու նախկինում Կիլիկիայում կաթողիկոսության բացակայությունը՝ լատին հոգևորականությունը պահանջում էր մետրոպոլիտի աստիճանի իջեցնել Հայոց կաթողիկոսին և ենթարկել Անտիոքի պատրիարքին: Գրիգորիոս IX-ը 1238 թ. իր երկու նվիրակներին հանձնարարում է պարզաբանել հարցը կողմերի միջև: Հայոց եկեղեցին Անտիոքի իրավասությունից հեռու պահելու համար կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրաբերդցին (1221-1267 թթ.) արքունիքի պաշտպանությամբ նորից հիշեցրեց Դաշանց թղթում տեղ գտած ավանդույթը, որի համաձայն Գրիգոր Լուսավորիչը Սեդեքտրոս պապից ստացել է ոչ միայն Հայոց կաթողիկոսի ձեռնադրման ինքնուրույն իրավունքն, այլ նաև Երուսաղեմի, Անտիոքի և Ալեքսանդրիայի պատրիարքներին ընտրելու լիազորությունը: Պապ Գրիգորիոս IX-ը բավարարվելով Հռոմից ստացած շնորհով հայկական եկեղեցու անկախությունը պահելու փաստով՝ խաղաղեցնում է Անտիոքի լատին պատրիարքին ու ի նշան դրա Կոստանդին Ա-ին ուղարկում արժեքավոր նվերներ<sup>513</sup>: Փաստորեն միևնույն ավանդույթը Լևոն I-ի ժամանակներում կարող էր ծառայել Անտիոքի վրա հսկողություն սահմանելու Կիլիկյան թագավորության

<sup>512</sup> Լատին հոգևորականության հետ Բոհեմունդի հարաբերությունների մասին տե՛ս Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 263-265, Rey E., Les dignitaires de la principauté d'Antioche, ROL, N° 8 (1900—1901), pp. 140-141.

<sup>513</sup> Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, մաս Ա, էջ 1614-1615:

նկրտումներն արդարացնելու, իսկ նրանից հետո անկախությունը պահպանելու և ֆրանկների հավակնություններից հայկական պետությունն անձեռնմխելի պահելու համար:

XIII դ. երկրորդ կեսին Հայոց կաթողիկոսներն օգտագործելով Անտիոքի ծանր դրությունը՝ նոր փորձեր էր ձեռնարկում Անտիոքի պատրիարքի տիտղոսը յուրացնելու ուղղությամբ: Բացի Դաշանց թղթով Հայոց եկեղեցուն տրված բացառիկ իրավունքների մասին ավանդության ամրապնդումից, հայ իրականության մեջ հիշյալ ժամանակաշրջանում ձևավորվել էին պատրիարքական աթոռները որոշակի աստիճանակարգով դասակարգելու տրամադրություններ, որում առանձնակի դեր էր հատկացվում Անտիոքի պատրիարքությանը: Ուստի հայ հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչների մոտ շարունակ հնչում էին Անտիոքի աթոռն իրենց հանձնելու «խնդրանք-պահանջներ»<sup>514</sup>: Սա Անտիոքի նկատմամբ ձևավորված քաղաքականության արտահայտությունն է, որն իր արմատներն էր գցում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Անդրադառնալով հակամարտության մեջ ներգրավված եկեղեցականների հետապնդած նպատակներին ու կազմած դաշինքներին՝ կարելի է եզրակացնել.

ա. Լատինական եկեղեցու դիրքորոշումը կիլիկիա-անտիոքյան հակամարտության հարցում ընկալվում էր բացառապես սեփական դիրքերը տարածաշրջանում ամրապնդելու տեսանկյունից: Պապերը հավասարապես պաշտպանում էին թե այս, թե մյուս կողմին՝ հենվելով գլխավորապես հոգևորասպետական միաբանությունների վրա: Պատահական չէ, որ միաբանություններից և ոչ մեկը բանադրանքի չենթարկվեց հակամարտության ողջ ընթացքում, իսկ Կիլիկիայում և Անտիոքում նրանց արված շնորհներն ու զիջումներն արագ վերահաստատվում էին պապական կոնդակներով:

բ. Անտիոքում վաղուց գոյություն ունեին հակասություններ աշխարհիկ իշխանության և լատին հոգևորականության միջև, Բոհեմունդ Միականու օրոք դրանք ընդամենը սրվեցին: Հիշենք, օրինակ, որ

- Տանկրեդի սպանության մեջ կասկածվում էր պատրիարք Բեռնարդոսը,

<sup>514</sup> Հարությունյան Գ. Ս., Եկեղեցական աթոռների գահերեցության խնդիրը Աքքայի ժողովում (1263 թ.), էջ 255-256:

- Ռենո դե Շատիյոնը բռնություններ էր գործադրում պատրիարքի վրա

- Բոհեմունդ III-ի կառավարման շրջանում նախ ժամանակավորապես վերականգնվեց քաղաքի ուղղափառ եկեղեցու ամբիոնն, ապա ճնշումներ սկսեց կաթոլիկ կղերականների հանդեպ, որոնք հրաժարվում էին օրինականացնել դքսի ամուսնական դավաճանությունը:

գ. Հայոց թագավորության վերաբերմունքը լատին հոգևորականության նկատմամբ առավելապես ծառայում էր Անտիոքը Կիլիկիային միացնելու մտադրությանն, այնինչ Իննոկենտիոս III-ը ձգտում էր նրա օգնությամբ իրագործել պապերի ծավալապաշտական նկրտումները և Անտիոքի դքսությունում հաստատել հռոմեական կուրիային հնազանդ Ռայմունդ-Ռուբենի կառավարությունը:

ԳԼՈՒԽ Գ. ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ  
ԲԱՐԴ ԸՆԹԱՑՔԸ

**§ 1. Անտիոքի հավակնությունները հայոց գահի նկատմամբ  
և նոր աշխարհաքաղաքական իրադրության  
ձևավորումը Մերձավոր Արևելքում**

Լևոն I-ը վախճանվեց 1219 թ. մայիսին: Դրանից առաջ թագավորության գահը նա առաջարկել էր իր դստեր հնարավոր ամուսին Հունգարիայի արքայազն Անդրաշին, որը սակայն, չժամանեց Կիլիկիա<sup>515</sup>: Իշխանությունն ամբողջությամբ կենտրոնանացավ գահի խնամակալ Ադան Պայլի ձեռքում<sup>516</sup>: Նրա, մոտ երկու տարվա կառավարման ընթացքում, Կիլիկյան գահի համար ի հայտ եկան բազմաթիվ հավակնորդներ, որոնց թվում Միքայել Ասորու հայերեն թարգմանության մեջ նշված է նաև հենց Ադան Պայլը<sup>517</sup>: 1221 թ. Սսում իսմայիլյանների ձեռքով իշխան Ադանի սպանությունը<sup>518</sup> Կիլիկիայի գահին տիրանալու հնարավորություն էր ընձեռում Ռայմունդ-Ռուբենին: 1219 թ. նա ընդունելություն չգտնելով Լևոնի կողմից անցել էր Եգիպտոս, որտեղ հինգերորդ խաչակրության (1217-1221 թթ.) մասնակիցները, պապի լեգատ Պելագիոսի և Երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրիենացու գլխավորությամբ պաշարել էին Դամիետա քաղաքը: Ռազմական գործողությունների ձգձգումը թույլ չտվեց բավարարել Ռայմունդ-Ռուբենի օգնության խնդրանքը<sup>519</sup>: Բացի այդ, Երուսաղեմի թագավորը ևս ուներ անձնական շահագրգռվածություն, որպես Լևոն արքայի դուստր Ստեֆանիայի ամուսին: 1220 թ. մարտի 29-ին նա թողել էր Դամիետայի պաշարումը, որպեսզի զբաղվի մի կողմից Հայաստանի գահի

<sup>515</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225:

<sup>516</sup> Bar Hebraeus, op. cit., p. 376.

<sup>517</sup> Գահակալական անցուղարձերի, թագավորության խնամակալության հարցերի շուրջ տե՛ս Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 236-246, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 525-529:

<sup>518</sup> Bar Hebraeus, op. cit., pp. 376, 379, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104:

<sup>519</sup> Bar Hebraeus, op. cit., p. 371, Les Gestes des Chiprois, op. cit., pp. 665, 671. Մանրամասներ տե՛ս Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, pp. 628-632, Runciman S., A history of the Crusades, t. 2, pp. 171-172.

ժառանգությամբ, մյուս կողմից՝ կարգավորի պալատական խարդավանքները: Չնայած զենքի ուժով Սսի գահին նստելու ծրագիրը կանխվեց Հռոմի պապ Հոնորիոս III-ի կողմից, բայց միայն Ստեֆանիայի անսպասելի մահը խանգարեց Հովհաննես Բրենացուն հրաժարվելու բոլոր հավակնություններից<sup>520</sup>:

Ռայմունդ-Ռուբենն իր հերթին, մոր՝ Ալիսայի հետ, ափ է իջնում Կոռինթոսում, որտեղ Վահրամ Մարաջախտն<sup>521</sup> օգնության դիմաց խնդրեց Ալիսայի ձեռքը: Ալիսան վերջ ի վերջո ընկրկեց որդու շահերի առաջ ու ամուսնացավ Մարաջախտի հետ<sup>522</sup>: Ապստամբ իշանների մոտ 5 հազարանոց բանակը գրավեց Տարսոնը, Ադանան և պաշարեցին Մամեստիան<sup>523</sup>: Կիլիկիայի պայլությունը ստանձնած Կոստանդին Գունդստաբլն իր փոքրաթիվ գնդով ուղղվում է ապստամբների դեմ, Սիս քաղաքի մոտ հաղթում է Ռայմունդ-Ռուբենին ու տանում Տարսոն<sup>524</sup>: Դեպքերը պատմող մյուս աղբյուրների տվյալներով պայլի զորքը Ադանայի ու Մամեստիայի միջև ընկած հատվածում կանգնեցնում է նրանց՝ ստիպելով հետ քաշվել Տարսոն: Ռայմունդ-Ռուբենին Այմարի գլխավորությամբ օգնության շտապող Հիվանդախնամների ջոկատը չհասցրեց փրկել նրան: Կոստանդինը բանակցությունների մեջ է մտնում Վասիլ իշխանի հետ և ծածուկ մտնում քաղաք: Ընդդիմադիր իշխանները հանձնվում են պայլին<sup>525</sup>: Գերված Վահրամ Մարաջախտին, Ռայմունդ-Ռուբենին ու նրա մորը մյուս իշխանների հետ զցում են Տարսոնի բերդ<sup>526</sup>, որտեղից ապստամբների մի մասը հետագայում ազատվում է, իսկ մի մասն էլ արժանանում է Ռայմունդ-Ռուբենի ճակատագրին և սպանվում բանտում<sup>527</sup>:

Տարսոնից, ապա Կոռինթոսի հնազանդեցումից հետո հրավիրված հոգևորականների ու աշխարհիկ իշխանների ընդհանուր ժողովում Կոստանդին

<sup>520</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 511, 525-529, Ринар Ж., указ. соч., с. 215, 326.

<sup>521</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 223-224, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104:

<sup>522</sup> Bar Hebraeus, op. cit., p. 379, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104:

<sup>523</sup> Bar Hebraeus, op. cit., p. 380 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 223-224:

<sup>524</sup> Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. I, էջ 79:

<sup>525</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 224, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 266-267.

<sup>526</sup> Bar Hebraeus, op. cit., p. 380.

<sup>527</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 224, Les Gestes des Chiprois, op. cit., pp. 665, 671. Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104:

Գունդստաբլը պահանջում է արագ կարգավորել գահաժառանգության հարցը<sup>528</sup> և սպասում էր, որ հավաքվածները Լևոն I-ի դստերը կնության կտան իր որդիներից որևէ մեկին<sup>529</sup>, սակայն երկար վիճաբանություններից հետո նրանք վճռում են արքայադստերը կնության տալ Բոհեմունդ Միականու կրտսեր որդուն՝ Ֆիլիպին<sup>530</sup>:

Այս որոշումը կարող է ունենալ հետևյալ պատճառաբանությունները.

- Օտարերկրյա արքայազնի միջոցով փորձվում էր երկիրը խաղաղեցնել, քանի որ կիլիկյան իշխաններից շատերի մոտ դեռ պահպանվում էին թագի նկատմամբ հավակնությունները: Այդ միտքը կիլիկյան իշխաններին կարող էր հուշել նման կերպ գահակալական պայքարն Անտիոքի դքսությունում լուծված Ռայմունդ Պուատյեի և Ռենո դե Շատիյոնի որոշակիորեն հաջողված օրինակները:

- Ակտիվացած մահմեդական պետությունների, մասնավորապես Իկոնիայի սուլթանության դեմ պայքարում Կիլիկիան պատրաստվում էր Անտիոքի դքսության հետ կազմել ընդհանուր ճակատ: Այս առումով Սմբատ Սպարապետը գրում է<sup>531</sup>. «...Անտիոքը հարևան էր ու անհրաժեշտության պահին շուտ օգնության կգար...»:

- Այս ամուսնությամբ Կիլիկյան իշխանները ձգտում էին վերջ դնել Անտիոքի դքսության հետ շարունակվող հակամարտությանը<sup>532</sup>, լուծել քաղաքական և ռազմական այն խնդիրների մի մասը, որոնք ստեղծվել էին երկրի ներսում ծագած գահակալական պայքարի ընթացքում:

- Ֆիլիպի ընտրությունը բացատրվում է նույնիսկ Ռայմունդ-Ռուբենի սպանության հետևանքով ֆրանկների մոտ առաջացած վրեժխնդրության զսպման հավանականությամբ<sup>533</sup>:

- Որոշման վրա ազդել են Լևոն I-ի օրոք Կիլիկիա անցած բազմաթիվ ֆրանկ իշխանները, որոնք Կիլիկիայում իրենց դիրքերը փորձում էին պահպանել Կոստանդինի հովանավորությունից ազատված, անփորձ երիտասարդի կառավարման

<sup>528</sup> Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104-105, Смбат Спарапет, указ. соч., с. 127.

<sup>529</sup> Bar Hebraeus, op. cit., p. 380.

<sup>530</sup> Смбат Спарапет, указ. соч., с. 127 հմմտ. Bar Hebraeus, op. cit., p. 380, Michel Le Syrien, op. cit., pp. 407-408, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 247:

<sup>531</sup> Смбат Спарапет, указ. соч., с. 127.

<sup>532</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 527:

<sup>533</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 268.



միջոցով: Կոստանդին Գունդստաբլի իշխանության գալը վտանգում էր նրանց դրությունը: Միգուցե նման մտավախությամբ էր պայմանավորված որոշ ֆրանկ բարոնների հարումը Ռայմունդ-Ռուբենի կողմը<sup>534</sup>:

Առաջին հայացքից միասնական պետության գաղափարն այդ ամուսնությամբ մոտ էր իրագործվելուն, սակայն իրականությունը միանգամայն այլ էր: Նախ երկու երկրները չունեին մեկ ընդհանուր կառավարիչ, ապագայում ևս, դժվար նման հավակնորդ հանդես գար, քանի որ Ֆիլիպը Բոհեմունդի կրտսեր որդին էր և Անտիոքի գահի նկատմամբ ոչ մի իրավունք չունեւ: Ի հակադրություն սրան, Ֆիլիպի միջոցով Կիլիկիային տիրանալու Անտիոքի դքսերի նկրտումներն ավելի հավանական էին դառնում, քան երբևէ: Պատահական չէ, որ ամուսնական պայմանագիրը հատուկ նշում էր հետևյալ պայմանները.

ա. Ֆիլիպը պետք է ապրեր ու կենցաղավարեր Հայաստանում՝ հայկական բարքերի համաձայն<sup>535</sup>.

բ. Հետևեր հայկական կրոնին<sup>536</sup>, որի տակ պետք է հասկանալ ոչ թե հայ առաքելականության անցնելը (նման արարողության մասին հաղորդումն իսպառ բացակայում է), այլ հարգել Հայոց եկեղեցու ավանդույթները, իրավունքները.

գ. Պաշտպաներ և թույլատրեր յուրաքանչյուրին օգտվելու իր իրավունքներից<sup>537</sup>.

դ. Պայմանագիրը վավերացվում էր Բոհեմունդի ստորագրությունից հետո<sup>538</sup>:

Ֆիլիպին «հայացնելու» փորձը տարօրինակ է թվում, եթե նկատենք, որ հայոց ավագանին ինքն էր աստիճանաբար լատինականացվում:

Այսպես, կողմերը եկան համաձայնության և 1222 թ. հունիսին<sup>539</sup> Ֆիլիպը ամուսնացավ Զաբելի հետ՝ կարգվելով Հայոց թագավոր: Իրականում նրա

<sup>534</sup> Նրանցից հիշատակելի է օրինակ Ժոսլին մարաշախտը, տե՛ս *Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 228*:

<sup>535</sup> Смбат Спарапет, указ. соч., с. 127-128, Վարդանայ Վարդապետ, նշվ. աշխ., էջ 143, Michel Le Syrien, op. cit., p. 407.

<sup>536</sup> Смбат Спарапет, указ. соч., с. 128, Վարդանայ Վարդապետ, նշվ. աշխ., էջ 143, Michel Le Syrien, op. cit., p. 407.

<sup>537</sup> Смбат Спарапет, указ. соч., с. 127-128.

<sup>538</sup> Նույն տեղում:

<sup>539</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 80, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 105, Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 64 հմմտ. Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 632.

կարգավիճակը համապատասխանում էր ոչ թե լիարժեք թագավորին, այլ թագակիր գործակցին: Ուստի նրա կառավարումը երբեմն հիշատակվում է որպես Ջաբելի հետ միասնաբար իրականացվող թագավորում<sup>540</sup>: Չնայած Բոհեմունդ IV-ի օգնությամբ հայերը 1122/23 թ. հաղթանակ տարան սելջուկների դեմ<sup>541</sup>, բայց դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ ո՛չ Ֆիլիպը, և ո՛չ էլ նրա հայրը մտադիր չէին հետ կանգնելու Անտիոքի դքսերի ավանդական քաղաքականությունից ու հրաժարվել Կիլիկիայի նկատմամբ իրենց հավակնություններից: Այս պատճառով երբեմն Ֆիլիպի հաստատվելը Հայոց գահին անվանվում է դրա «գրավում»<sup>542</sup>, որն ուղեկցվում էր արքունի գանձերի կողոպուտով:

Կառավարման ընդամենը երկու տարվա ընթացքում, հասնելով քսան տարեկան հասակին<sup>543</sup>, Ֆիլիպը խախտում է բոլոր պայմանավորվածությունները:

Նա Բոհեմունդ IV-ի խորհրդով պաշտոնանկ է անում հայ իշխաններին ու նրանց փոխարինում Անտիոքից հրավիրված ու Տաճարական իր դրածոներով<sup>544</sup>.

Լևոնի ու նրա նախնյաց հարստությունը յուրացնում և մաս-մաս ուղարկում է Անտիոք<sup>545</sup>.

Պատրաստվում էր ընդհանրապես ջնջել տեղի մեծատուններին՝ նրանց փոխարինելով ֆրանկներով<sup>546</sup>: Նման քաղաքականությունը հայերի մոտ նույնիսկ իրենց երկիրը ֆրանկների կողմից գրավված տեսնելու վախ էր ներշնչում<sup>547</sup>.

Ֆիլիպի կառավարման ընթացքում Բոհեմունդը խորամանկությամբ կարողացել էր որդուց կորզել մեծ քանակությամբ արծաթ ու ոսկի, ինչպես նաև Լևոն II-ի

<sup>540</sup> Յովաննու Դարդել, Ժամանակագրութիւն Հայոց, թարգմ. Խօրէն արքեպիսկոպոս Նար-Պեյ, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 16, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 249:

<sup>541</sup> L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 348, 405 հմմտ. Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, p. 632

<sup>542</sup> Սապպաղեան Պ., Հեթում Ա-ի, Հեթում-Ջապել և երկլեզուեան դրամներու մասին, ՀՀՀ, Պէյրուֆ, 1980, էջ 233-234:

<sup>543</sup> Bar Hebraeus, op. cit., p. 380 հմմտ. Смбат Спарапет, указ., соч., с. 128.

<sup>544</sup> Смбат Спарапет, указ., соч., с. 128, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104-105, Bar Hebraeus, op. cit., p. 380, Michel Le Syrien, op. cit., p. 407.

<sup>545</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225, Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 189, Վարդանայ Վարդապետ, նշվ. աշխ., էջ 143:

<sup>546</sup> Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104:

<sup>547</sup> Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 332:

թագավորական թագն ու գահը, որն Անտիոքում դրվում էր միայն հանդիսավոր օրերին<sup>548</sup>.

Ծաղրի էր ենթարկում հայ ավագանուն և հայկական սովորույթները: Ըստ Բար Հեբրեոսի, Ֆիլիպը հայ իշխաններին անվանում էր գյուղացի-գեղջուկ, նրանց հետ սեղան չէր նստում, ներս էր թողնում միայն տաս անգամ դուռը թակելուց հետո<sup>549</sup>.

Հոր թելադրանքով նա պատրաստվում էր ձերբակալել Կոստանդին Պալլին և Կոստանդին Լամբրոնացուն<sup>550</sup>.

Երդմնագանց էր գտնվել հայադավանության հարգանքի մեջ<sup>551</sup>.

Ֆիլիպը փաստորեն գործում էր հոր թելադրանքով և գտնվում էր նրա հսկողության տակ: Միքայել Ասորու խոսքերով նա անգամ խաբվել է Բոհեմունդի կողմից<sup>552</sup>: Դուքսն առիթը բաց չէր թողնում որդու միջոցով իր ազդեցությունը տարածել Կիլիկիայում: Ի տարբերություն նախորդ շրջանի կիլիկիա-անտիոքյան հակամարտության, Ֆիլիպի կառավարման տարիներին անմիջական ռազմական միջամտությամբ այդ խնդիրը լուծելու դեպքեր չգրանցվեցին: Փոխարենը Բոհեմունդը փորձում էր օգտագործել նպատակահարմար իրադրությունը, Կիլիկիայում մեծացնել իր կողմնակիցների թիվն Անտիոքից տեղափոխված հավատարիմ իշխանների ու ասպետների հաշվին, դատարկել հայոց արքունական գանձարանն ու այդպիսով ապագայում հնարավորություն ստանալ յուրացնելու նաև թագավորական գահը Սսում: Կամա թե ականա նրան այդ գործում օգնում էր Ֆիլիպը, որի միջոցով Բոհեմունդին հաջողվել էր Անտիոք տեղափոխել Լևոն I-ի թագն ու գահը: Այսպիսով, լատինական միջավայրում մեծացած Ֆիլիպին խորթ էին հայկական սովորույթները, իսկ Կիլիկիայի լատին իշխանների շահերն Անտիոքի ոտնձգություններից պաշտպանելու անընդունակությունն ու անհեռատես քայլերն աստիճանաբար նրա նկատմամբ սերմանում էին ինչպես հայ, այնպես էլ մյուս իշխանների ատելությունը:

<sup>548</sup> Դավիթ Բաղիշեցու Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2 էջ 344, Կիրակոսի Գանձակեցույ, նշվ. աշխ., էջ 189, Վարդանայ Վարդապետ, նշվ. աշխ., էջ 143, De Vardan le Grand, op. cit., pp. 442-443. Կիրակոս Գանձակեցու մոտ նշված «պատրաշն» բառը վերծանվում է գահ կամ վրան: Стѣп Микаелян Г., указ. соч., с. 293, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 94:

<sup>549</sup> Bar Hebraeus, op. cit., p. 380, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225:

<sup>550</sup> Միխայել Ասորի, նշվ. աշխ., էջ 517-518, Michel Le Syrien, op. cit., pp. 407-408:

<sup>551</sup> De Vardan le Grand, op. cit., pp. 442-443 հմմտ. Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104:

<sup>552</sup> Michel Le Syrien, op. cit., p. 407.

Վերջ ի վերջո Ֆիլիպը հիասթափեցրեց բոլորին, քանի որ Կոստանդին Պալլի գլխավորությամբ<sup>553</sup> նրա դեմ կազմակերպված ընդվզմանը մասնակցում էին Կիլիկիայի իշխանների մեծ մասը և առաջին հերթին Անտիոքին սահմանակից բերդերի տերերը: Մասնավորապես նրանց թվում էին Սարվանդիքարի իշխան՝ Հեթումյան տան ներկայացուցիչ Ժոֆրին, ու Թիլ-Համդունի տերը<sup>554</sup> (ցավոք, 1225 թ. տակ անհայտ է մնում Թիլի իշխանի անունը, բայց հայտնի է, որ 1198 թ. դա Ռոբերտն էր, իսկ 1218-ին սենեկապետ Ժոսլենը<sup>555</sup>, երկուսն էլ ծագմամբ ֆրանկ): Ապստամբները լրտեսների միջոցով սկզբնապես հսկողություն են սահմանում թագավորի վրա: Ֆիլիպը, հնարավոր է կանխազգում էր հասունացող դավադրությունը և պատրաստվում փախչել Անտիոք, սակայն Թիլ-Համդունի ամրոցներից մեկում նրան հանկարծակիի են բերում և գիշերով կալանավորում հենց անկողնու մեջ: Ջաբել թագուհու աղաչանքներն ազդեցություն չեն թողնում, Ֆիլիպը շղթայակապ տարվում է Սիս<sup>556</sup> կամ Բարձրաբերդ<sup>557</sup>:

Չպետք է բացառել նաև, որ Ֆիլիպին վերագրվող անարգանքները չափազանցված են՝ ունենալով օծյալ թագավորի դեմ կազմակերպված ապստամբությունն արդարացնելու նպատակ: Դրանում հատկապես շահագրգռված պետք է լինեին Կոստանդին Պալլն ու նրա շառավիղները, որոնք Ֆիլիպի սպանությունից հետո տիրացան Հայոց թագին: Սրա մասին մասնակիորեն խոսում է այն փաստը, որ Ֆիլիպ թագավորի ժամանակներում գրված մի քանի հիշատակարաններում նա արժանացել է դրական գնահատականների, որն էապես տարբերվում է Հեթումյանների շրջանում ստեղծված պատմագրության որակումներից<sup>558</sup>:

<sup>553</sup> Les Gestes des Chiprois, op. cit., pp. 665-666, 671, Bar Hebraeus, op. cit., pp. 380-381.

<sup>554</sup> Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 105 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225: *Ժոֆրին Կոստանդին Պալլի եղբոր՝ Սմբատի որդին էր, և դեռևս 1220 թ. Կիլիկյան գահը զբաղեցնելու նպատակով ցանկանում էր ամուսնանալ Լևոն II-ի այրի Սիբիլլայի հետ: Ավելի ուշ նա ծառայության անցավ Կոստանդին Պալլի մոտ, իսկ մահվանից առաջ՝ 1261 թ-ին, որդուն ամուսնացրեց Հեթում I-ի դուստր Ռիտայի հետ: Տե՛ս Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 237, Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 526, Жаворонков П. И., Из истории Нике́йско-Киликийских отношений в первой половине XIII в., АДСВ, вып. 30, 1999, с. 214.*

<sup>555</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 210, 221:

<sup>556</sup> Bar Hebraeus, op. cit., pp. 380-381, Смбат Спарамет, указ. соч., с. 128.

<sup>557</sup> Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104:

<sup>558</sup> Մանրամասներ տե՛ս Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 253:

Որդուն ազատելու համար Բոհեմունդը սկզբում խաղաղ բանակցությունների մեջ է մտնում հայերի հետ՝ պահանջելով վերականգնել Ֆիլիպի իրավունքները: Հայերը նրա ազատության դիմաց պահանջում են հետ վերադարձնել ապօրինի զավթումները, թագավորական գանձերը: Բոհեմունդը հրաժարվում է դա անել<sup>559</sup> ու Կիլիկիայի դեմ ռազմական արշավանք սկսելու թույլտվություն խնդրում Հռոմի Հոնորիոս III պապից: Բոհեմունդի ոչ հատկանշական այս քայլը կարող է բացատրվել անհրաժեշտ ուժերի բացակայությամբ, որն Անտիոքի դուքսը փորձում էր լրացնել անմիջապես պապին ենթակա Տաճարականների ու Հիվանդախնամների մասնակցությամբ: Անկախ նրանից, որ պապն արգելում է հավատակիցների միջև պատերազմը, միաբանների մի մասը միանում է նրան: Բոհեմունդն օգնություն է խնդրում նաև Իկոնիայի սուլթան Ալա ալ-Դին Քեյ Կոբադից (1219-1237 թթ.): Դաշնակիցները 1225 թ. հյուսիսց ու հարավից մտնում են Կիլիկիա: Սելջուկներն ավերում են երկրի հյուսիսային շրջանները, գրավում որոշ բերդեր<sup>560</sup>, բայց ձմռան վրա հասնելուն պես հետ քաշվում: Հորդորները մերժելու դիմաց պապը նախ բանադրում է Բոհեմունդին, ապա ընդունում է նրա նոր միջնորդության խնդրանքը Ֆիլիպին ազատելու համար: Հոնորիոս III-ը հայերից պահանջում է ազատ արձակել և վերահաստատել Ֆիլիպի թագավորական իրավունքները, հակառակ դեպքում թույլ էր տալիս Բոհեմունդին արշավել Կիլիկիա: Կոստանդինը Պայլը չէր պատրաստվում ազատ արձակել նրան, որով և հրահրեց Բոհեմունդին ևս մեկ անգամ մտնելու Կիլիկիա: Նոր հարձակումը հետ մղվեց Հալեպի աթաբեկ Շիհաբ ալ-Դինի հետ զորակցության շնորհիվ<sup>561</sup>:

Հարցն ուսումնասիրող շատ գիտնականների կարծիքով Իբն Ալ-Ասիրի Կիլիկիայի դեմ նկարագրած այս արշավանքները հաջորդել են Ֆիլիպի մահվանը, որը տեղի է ունեցել իբր գերությունից մի քանի ամիս անց<sup>562</sup>: Այս տեսակետն առավելապես հենվում է Ֆիլիպի գերությանն ու սպանությանը հաջորդած կիլիկա-անտիոքյան

<sup>559</sup> Կիրակոսի Գանձակեցույ, նշվ. աշխ., էջ 189, Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, մաս Ա, էջ 1607:

<sup>560</sup> Միխայել Ասորի, նշվ. աշխ., էջ 518:

<sup>561</sup> Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 332-333:

<sup>562</sup> Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 251, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 269, Տեր-Ներսեսյան Ս. Մ., նշվ. աշխ., հատված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 403, Մութաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 413, Runciman S., A history of the Crusades, t. 3, pp. 172-173.

հերթական հակամարտության մասին հաղորդումների վրա<sup>563</sup>: Մինչդեռ Բար Հեբրեոսի համաձայն Ֆիլիպը բանտարկված մնացել է մոտ երկու տարի<sup>564</sup>: Հավանաբար նրա ֆիզիկական գոյությամբ է պայմանավորված նաև հանգուցալուծում չստացած գահաժառանգության հարցը Կիլիկիայում մինչև 1226 թ. գարուն<sup>565</sup>: Այս տվյալներն ավելի իրական են դարձնում անտիոքյան ներխուժումները կապել դեռևս կենդանի Ֆիլիպին ազատելու հետ: Իբն Ալ-Ասիրն այս կապակցությամբ հստակ շեշտում է. «...Դուքսը նորից դիմեց Հռոմի պապին և բողոքեց հայերի դեմ իր որդուն ազատ չարձակելու համար: Պապը դքսի որդուն բաց թողնելու և նրան նորեն թագավոր կարգելու հրաման ուղարկեց հայերին: Այդ պահանջները չկատարելու դեպքում նա թույլ էր տալիս Բոհեմունդին արշավել նրանց երկիր: Երբ պապի նամակը հայերին հասավ, նրանք ազատ չարձակեցին Ֆիլիպին, իսկ դուքսը զորք հավաքեց ու հարձակվեց հայերի վրա...»<sup>566</sup>:

Վերջապես հայտնի է, որ Կոստանդինը Ֆիլիպին թունավորելու հրաման է տվել գերությունից երկար ժամանակ անց, երբ Բոհեմունդն իր վերջին արշավանքի ժամանակ գրավել էր Ճկեր գավառը, հասել Թիլ-Համդուն<sup>567</sup> և հարցն Անտիոքի դքսության օգտին լուծելու լուրջ վտանգ ստեղծել: Այդ մասին Բար Հեբրեոսը գրում է. «...Դուքսը պատգամավորներ ուղարկեց Թիլ-Համդուն ու հայտնեց հայերին, որ որդու ազատության դիմաց նրանք պատրաստակամ են հրաժարվել Հայոց թագից: Նրան բերեցին Համդուն..., բայց երբ իշխանն ուզեց վերցնել իր որդուն, նրան ասացին, որ եթե նույնիսկ դա անի, միևնույնն է Ֆիլիպը չի ապրելու, քանի որ թույն է խմել ու մեռնելու է 10 օրվա ընթացքում: Դուքսն անիծելով ու սպառնալով հետ դարձավ: Մի քանի օր հետո նրա որդին մեռավ ու ոչ ոք չգիտե թե որտեղ է նա թաղված...»<sup>568</sup>:

Համադրելով բոլոր տեղեկությունները՝ կարելի է հանգել այն եզրակացության որ.

ա. Ֆիլիպը գերվել է 1224 թ. աշնանը կամ ծայրահեղ պարագայում 1225 թ. սկզբին:

<sup>563</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 104, *Les Gestes des Chiprois*, op. cit., pp. 665-666, 671.

<sup>564</sup> Bar Hebraeus, op. cit., p. 381.

<sup>565</sup> Նույն տեղում էջ 390 հմմտ. Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, մաս Ա, էջ 1606-1607:

<sup>566</sup> Իբն Ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 332-333:

<sup>567</sup> Միխայել Ասորի, նշվ. աշխ., էջ 518, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 251:

<sup>568</sup> Bar Hebraeus, op. cit., p. 381.

բ. Բոհեմունդ Միականու և սելջուկների առաջին արշավանքը Կիլիկիա տեղի է ունեցել 1225 թ. վերջերին:

գ. Երկրորդ անգամ Անտիոքի դուքսը հարձակվել է 1226 թ. վաղ գարնանը:

դ. Ֆիլիպը թունավորվել և մահացել է Բոհեմունդի վերջին արշավանքի ընթացքում:

Դեպքերի նման հերթականությունը հասկանալի և տրամաբանական է դարձնում նաև Բոհեմունդի քայլերը.

- Սկզբում նա փորձում է ամեն գնով վերականգնել Ֆիլիպի կորցրած դիրքերը:

- Կրելով անհաջողություններ ու համոզվելով դրա անհնարինությանը՝ Բոհեմունդը որդեգրում է զիջողական կեցվածք՝ որդու ազատությունն ավելի թանկ գնահատելով Հայոց գահից:

Ֆիլիպի գահազրկումը Կոստանդինի դիրքերը Կիլիկիայում անհամեմատ ուժեղացնում են, և ի տարբերություն 1222 թ., Տարսոնում գումարված նոր ժողովում նա կարողանում է համոզել կաթողիկոսին ու իշխաններին Զաբելի հետ ամուսնությամբ թագավոր կարգել իր որդի Հեթումին<sup>569</sup>: Սակայն արքայադուստրը Ֆիլիպի սպանությունից ի վեր ապաստանել էր Սելևկիայի Հիվանդախնամների մոտ և երկար ժամանակ հրաժարվում էր մեկնել Տարսոն: Կոստանդին Պայլը ստիպված միաբաններից գնեց քաղաքը, որպեսզի Զաբելին ու Հեթումին պսակադրի: 1230 թ. թագուհին կրկին փախչում է Սելևկիա, ուր Կիպրոսից ժամանած մոր հետ ապստամբություն է բարձրացնում Կոստանդինի դեմ: Չնայած խնդիրը մեծ իրարանցման չվերածվեց և հնարավոր եղավ լուծել, բայց դրանից հետո էլ Հեթում թագավորը բարդություններ ուներ Զաբելի հետ, որոնք հարթվեցին միայն 1236 թ. մոտերքին, երբ ծնվեց նրանց առաջնեկը<sup>570</sup>:

Հայոց գահի նկատմամբ ունեցած հավակնությունների հետևանքով Կիլիկիայի ու Անտիոքի միջև ծագած նոր հակամարտությունը, կարծես, դերերի փոփոխությամբ Բոհեմունդ Միականու հետ մղած Լևոն I-ի պայքարի կրկնությունն էր: Եթե Լևոնը

<sup>569</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 225, Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 189, Սամուէլի քահանայի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 148, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 105:

<sup>570</sup> Bar Hebraeus, op. cit., pp. 381, 389-390, Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 189 հմմտ. Աւետարան, գրիչ Յովաննէս, ՀԶՀ ԺԳ դ., էջ 166:

Անտիոքի գահին ցանկանում էր տիրել Ռայմունդ-Ռուբենի, ապա Բոհեմունդը Հայոց գահին՝ Ֆիլիպի միջոցով: Հետաքրքիր նմանությամբ Ռայմունդ-Ռուբենի Անտիոքյան և Ֆիլիպի Կիլիկյան կարճատև գահակալություններն ավարտվեցին նրանց քաղաքականությունից դժգոհ վասալների բարձրացրած ապստամբությամբ ու իշխանության տապալմամբ: Երկու կողմերն էլ իրենց չիրագործված նկրտումների հետևանքով լուրջ կորուստներ կրեցին և քաղաքական խնդիրները կարգավորելու համար ստիպված էին առժամանակ հրաժարվել բախումներից: Իհարկե սա չէր նշանակում, որ նրանք դաս են առել պատմությունից ու պատրաստ են ներել միմյանց: Նրանք վրեժխնդրությունը լուծելու հարմար պահի էին սպասում:

1233 թ. Անտիոքի ու Տրիպոլիի գահին հորը փոխարինած Բոհեմունդ V-ը (1233-1251 թթ.) բոլոր առումներով դարձավ իր նախնիների ավանդական գործը շարունակող արժանի հետևորդ: Դեռևս հոր կենդանության օրոք Կիպրոսի թագավոր Հուգո I-ի այրի Ալիսա Շամպայնացուն կնության վերցնելու պատճառով նա վեճի բռնվեց կաթոլիկ հոգևորականության հետ: Նրանց ամուսնությունը տեղի է ունեցել Տրիպոլիում մոտ 1225 թ., սակայն արյունակցական կապերի առկայությունը (չնայած Ալիսայի և Բոհեմունդ V-ի միջև անմիջական արյունակցությունը բացակայում էր, բայց Բոհեմունդը ծնվել էր Բոհեմունդ IV-ի առաջին կնոջից՝ Պլեզանս դե Ժիլբերից, իսկ տվյալ պահին Ալիսայի քույր Մելիզինդան հանդիսանում էր Բոհեմունդ IV-ի այրին, որոնց երեխաներն, այդպիսով, դառնում էին իրենց եղբոր ու մորաքրոջ միության ականատեսը) ու Ալիսայի միջոցով Կիպրոսի և Երուսաղեմի թագավորության խնամակալ դառնալու ձգտումը Բոհեմունդի դեմ հանեցին Կիպրոսի ու Երուսաղեմի ազդեցիկ շրջանները<sup>571</sup>:

Այնուհետև իր 60 ասպետներով ու զորաջոկատներով Անտիոքի թագաժառանգը մասնակցեց Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ II Շտաուֆենի (1212-1250 թթ.) 1228-1229 թթ. կազմակերպած VI խաչակրությանը<sup>572</sup>: Փոփոխություններ չկրեցին նաև ասպետական միաբանների հետ

<sup>571</sup> Les Gestes des Chiprois, op. cit., p. 673, L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 361, 403, 408, Bernard le Trnsorier, op. cit., p. 492, Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 64-65, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 109, Ринар Ж., указ. соч., с. 279, 284, Setton Kenneth M., op. cit., p. 474.

<sup>572</sup> L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 364, 368.



փոխհարաբերությունները: Հոր օրինակով Բոհեմունդ V-ը շարունակում է սերտ համագործակցությունը Տաճարականների հետ՝ միևնույն ժամանակ փորձում մերձենալ Հիվանդախնամ միաբանների հետ: Այս նպատակով նա 1233 թ. Տաճարականների ընկերակցությամբ օժանդակ ուժեր տրամադրեց և մասնակցեց Հալեպի ու Համայի դեմ Հիվանդախնամների, Երուսաղեմի ու Կիպրոսի թագավորությունների կազմակերպած համատեղ արշավանքին: Ութ օր տևած ավազակային հարձակումները նկատելի առավելության չհանգեցրին և խաչակիրները վերադարձան Կրակ դե Շեվալիե<sup>573</sup>:

Կիլիկիայի դեպքում ևս, նա որդեգրում է ավանդական հակամարտության ուղիին: Գահակալության հենց առաջին տարում դուքսը որոշում է վրեժ լուծել իր եղբայր Ֆիլիպի սպանության համար և պատերազմ սկսում Հայոց թագավորության դեմ: Ինչպես նախկինում, նրա դաշնակիցներն այդ պայքարում դառնում են Բաղրասի Տաճարականները, որոնց Հայոց թագավորն ու նրա հայրը մեծ անարգանք էին հասցրել՝ բռնելով ու տանջամահ անելով մի քանի միաբանների: Կոստանդինին պատժելու մոլուցքով բռնկված՝ Բոհեմունդը Տաճարականների հետ 1233 թ. արշավում է Կիլիկիա: Նրանց համատեղ գործողությունները, որոնք նպատակ էին հետապնդում շարժվել Տարսոնի ուղղությամբ, վախեցնում են Հայոց թագավորին ու նրա հորը՝ ստիպելով Կոստանդինին հրաժարվել Տաճարականների տիրույթների նկատմամբ իր հավակնություններից: Որոշ զիջումների գնով, նրանք կարողացան հանդարտեցնել միաբանների մագիստրոսին՝ համոզելով նրան անջատ խաղաղություն հաստատել Կիլիկիայի հետ: Այս համաձայնությունն ապահովեց միաբանների չեզոքությունն, իսկ Բոհեմունդին մեն մենակ կանգնեցրեց հայկական ուժերի դեմ: Անտիոքի դքսին մնում էր միայն հետ դառնալ<sup>574</sup> և հայերի հետ հակասությունների կարգավորումն անորոշ ժամանակով հետաձգել:

Անկախ Տաճարականների «դավադրությունից»՝ Բոհեմունդ V-ը հավատարիմ գտնվեց խաչակրաց գաղափարին և 1236 թ. փրկեց Բաղրասը Հալեպի բանակների վերահաս գրավումից: Նրա միջնորդությամբ հալեպցիները զինադադար կնքեցին միաբանների օգտին ու քաշվեցին Դարպասակ: 1237 թ. հունիսի վերջին

<sup>573</sup> Նույն տեղում, էջ 403-404:

<sup>574</sup> Bernard le Trésorier, op. cit., pp. 484-486 հմմտ. L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 402-403, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 363-364.

Տաճարականները խախտեցին զինադադարը՝ հուսալով գրավել Դարպասակը: Անտիոքի բարոն Վիլյամ Մոնֆերատցու հրամանատարությամբ միաբանները մտան ներքին քաղաք, բայց շուտով բախվեցին Հալեպից տեղ հասած հեծելազորին ու լիակատար պարտություն կրեցին: Բաղրասը կրկին կանգնած էր մահմեդականների ձեռքն ընկնելու վտանգի առջև, բայց ամրոցի ճակատագրիը ևս մեկ անգամ փրկեց Բոհեմունդի և Հալեպի միջև հաստատված պայմանավորվածությունը<sup>575</sup>:

Իր կառավարման երկրորդ շրջանը Բոհեմունդը հիմնականում անցկացրեց Տրիպոլիում: Անտիոքում նրա դիրքերը լրիվ խարխլվեցին 1235 թ. Հռոմի աջակցությունը ստանալու ակնկալիքով Իննոկենտիոս III-ի զարմուհի Լյուսիեն դե Կոնտիի հետ ամուսնությունից հետո<sup>576</sup>: Օգտվելով Բոհեմունդի հովանավորությունից՝ պապականության ներկայացուցիչներն Անտիոքում ապարդյուն փորձեցին իրենց ենթարկել հույն պատրիարք Սիմեոնին: Հունական եկեղեցին պապին ենթարկելու նպատակով՝ 1245 թ. Հռոմը պատրաստակամություն հայտնեց նույնիսկ զիջումներ անել Սիմեոնի հաջորդ Դավիթին, սակայն նման քայլերը հավանության չարժանացան Լատին եկեղեցու մի շարք սպասավորների կողմից: Մասնավորապես այն բողոքի տեղիք տվեց Անտիոքի լատին պատրիարք Ալբերտի (1226-1245 թթ.) մոտ: 1248 թ. Անտիոք ժամանած նոր պատրիարք Օպիզոնի (1247-1292 թթ.) ու Դավիթին փոխարինած Եվթիմիդոսի միջև հակասությունը միայն սրվեց: Եվթիմիդոսն ի վերջո ստպիված թողնեց քաղաքը<sup>577</sup>: Լյուսիենի ազգականների ու հայրենակիցների իրավունքներն ընդարձակող հրովարտակաները մի կողմից Բոհեմունդի դեմ տրամադրեցին Անտիոքում վաղուց հաստատված ֆրանկ հոգևորականներին ու ասպետներին, մյուս կողմից՝ քաղաքի հույներին, որոնք զրկվել էին Բոհեմունդ IV-ի օրոք վայելած արտոնություններից:

Լյուսիեն դե Կոնտիի հետ միությունն Իննոկենտիոս III-ի հաջորդների օրոք ևս, պապական աթոռին Կոնտի դինաստայի ամրապնդման պայմաններում, Բոհեմունդ V-

<sup>575</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, pp. 364-366, Runciman S., A history of the Crusades, t. 3, pp. 207-208, L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 416-417 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 226, Kenneth M. Setton, op. cit., p. 550.

<sup>576</sup> Les Gestes des Chiprois, op. cit., p. 748, L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 408, Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 65, Kenneth M. Setton, op. cit., pp. 565-566:

<sup>577</sup> Մանրամասներ տե՛ս Runciman S., A history of the Crusades, t. 3, pp. 207, 231-233, Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, pp. 650-652.

ի համար ապահովում էր Հռոմի բարյացկամ վերաբերմունքը: Այսպես, 1236 թ. Գրիգորիոս IX-ը (1227-1241 թթ.) Ֆրիդրիխ II-ին առաջարկում էր Անտիոքի դքսին համատեղության կարգով նշանակել Երուսաղեմի թագավորության խնամակալ<sup>578</sup>, սակայն այդ և մյուս պապական առաջարկները մերժվեցին Սրբազան Հռոմեական կայսրության կայսեր կողմից, որը նույապես հավակնություններն ուներ Երուսաղեմի ու անգամ Կոստանդնուպոլսի գահի նկատմամբ: Ֆրիդրիխ II-ը դրանց իրականացման նպատակով դաշինք էր կնքել Նիկեայի կայսեր Հովհաննես III Վատացի (1221-1254 թթ.) հետ, նրան կնության տվել իր դուստր Կոնստանցիային<sup>579</sup>:

Նշենք, որ այդ քաղաքական ամուսնություններն ունեին նաև հարաբերություններն այս կամ այն հարևանի հետ հարթելու միտում: Կիլիկիայի և Անտիոքի միջև նման դեր խաղացին Կիպրոսի արքայական տան հետ նրանց հաստատած կապերը: Կիպրոսի թագավոր Հենրի I-ը (1218-1253 թթ.) 1237 թ. ամուսնացել էր Հեթումի քույր Ստեֆանիայի, իսկ Հենրիի քույր Իզաբելլան՝ Բոհեմունդ V-ի եղբայր Հենրի Պուատյեի հետ<sup>580</sup>: Անտիոքի, Կիպրոսի ու Կիլիկիայի միջև եղած խնամիական կապերը գնալով միայն խորացան՝ մերձեցնելով նոր իրականության առաջ կանգնած Լատին Արևելքի քրիստոնեական արքունիքները:

XIII դ. 30-40-ական թթ. ուժերի դասավորությունը ոչ միայն Կիլիկիայի ու Անտիոքի միջև, այլ ողջ Մերձավոր Արևելքում արմատապես փոխվում է, կապված միանգամայն նոր ուժի՝ մոնղոլ-թաթարների ասպարեզ գալու հետ, որոնք սկզբնական շրջանում թշնամական վերաբերմունք ունեին առավելապես մահմեդականների նկատմամբ: Մոնղոլների մեջ նեստորական քրիստոնյաների ներկայությունը մեղմում էր հարաբերությունները քրիստոնյաների հանդեպ: Սա հույսեր էր ներշնչում Արևելքի քրիստոնյաներին նրանց միջոցով մահմեդականներին վերջնականապես հաղթելու գործում: Իննոկենտիոս IV պապը, (1243-1254 թթ.) Ֆրասնիայի թագավոր Լյուդովիկոս IX-ը (1226-1270 թթ.) և Կիլիկիայի թագավոր Հեթում I-ը փորձում են կապեր հաստատել նրանց հետ: Այս նպատակով 1245 թ. Իննոկենտիոս IV-ը

<sup>578</sup> Ришар Ж., указ. соч., с. 286-287.

<sup>579</sup> Schlumberger G., Byzance et croisades. Pages médiévales, Paris, Geuthner, 1927, pp. 57-58.

<sup>580</sup> Les Gestes des Chiprois, op. cit., p. 780, L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 408, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 109:

մոնղոլների մոտ է ուղարկում մի քանի պատվիրակություններ, որոնց երթուղիները տարբերվում էին միմյանցից:

Ֆրանցիսկյան միաբանության անդամ Պլանո Կարպինին 1245 թ. գարնանը պապի հանձնարարությամբ Լիոն քաղաքից ուղղվում է մոնղոլների խանի մոտ: Նա Չեխիայի, Կիևի, Վոլգայի ավազանի, Խորեզմի վրայով 1246 թ. հասնում է Կարակորում ու հանդիպում նորընտիր խան Գույուկին (1246-1249 թթ.): Բայց Կարպինի առաքելությունը հաջողության չհասավ, քանի որ Գույուկը հնազանդություն էր պահանջում արևմտյան բոլոր տիրակալներից ու պապից՝ հարցականի տակ դնելով վերջինիս Աստծո անունից խոսելու իրավունքը<sup>581</sup>: Կարպինից առաջ՝ 1245 թ. մարտ-ապրիլին, Իննոկենտիոս IV-ը Անդրե դը Լոնժյումոյի և Ասցելին Կրեմոնացու գլխավորությամբ պատվիրակություններ էր հղել Մերձավոր Արևելք, որտեղից նրանք պետք է անցնեին մոնղոլական կայսրության հարավ-արևմուտք: Լոնժյումոն երկար ժամանակ մնաց Ասորիոքում և Պաղեստինում՝ կատարելով Լյուդովիկոս IX-ի հանձնարարություններն, իսկ Ասցելին Կրեմոնացին Կիլիկիայի, Իկոնիայի, Սեբաստիայի ու Թիֆլիսի վրայով ժամանում է Սիսիանի մոտակայքում գտնվող մոնղոլական արևմտյան բանակների հրամանատար Բաթու (1243-1256 թթ.) նոյանի ճամբար: 1247 թ. աշնանը Լոնժյումոն, իսկ 1248 թ. ամռանն Ասցիլինը վերադառնում են Լիոն՝ որևէ նշանակալի առաջընթաց չգրանցելով<sup>582</sup>: 1248 թ. դեկտեմբերին Իրանում մոնղոլական բանակի զորավար Էլջիկդեյը երկու պատվիրակ է ուղարկում Կիպրոսում գտնվող Լյուդովիկոս IX-ի մոտ: Բանակցությունները վարում էր Լոնժյումոն, որը 1249 թ. հունվարին եղավ Էլջիկդեյի ճամբարում, ապա մեկնեց Մոնղոլիա, բայց ինչպես նախկինում, այնպես էլ այս հանդիպումներում օգնության դիմաց թաթարները դնում էին Ֆրանսիայի թագավորի և Արևմուտքի մյուս տիրակալների համար անընդունելի հպատակության պահանջ<sup>583</sup>, ի ճիճ դարձնելով դաշինքի բոլոր նախաձեռնությունները:

Մոնղոլների հետ երկխոսություն սկսելու ավելի հայտնի փորձ ձեռնարկեց Լյուդովիկոս IX-ի պատվիրակ Գիյոմ դե Ռուբրուկը: 1253 թ. գարնանից սկսված երկար ու զրկանքներով լի ճանապարհորդության ընթացքում նա հանդիպում է Բաթու նոյանի

<sup>581</sup> После Марко Поло, перев. с итал. и староитал., введение и прим., Я. М. Свет, Москва, 1968, с. 13-15.

<sup>582</sup> Նույն տեղում, էջ 15-16:

<sup>583</sup> Նույն տեղում, էջ 22-28, Մութաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 419:

հետ, որը քրիստոնյա վանականներին խորհուրդ է տալիս ուղղվելու Կարակորում և անձամբ հանդիպելու Մանգու խանին (1251-1259 թթ.): 1254 թ. հունվարին Ռուբրուկն արժանանում է խանի ընդունելությանը, սակայն այս առաքելությունը նույնպես արդյունք չբերեց<sup>584</sup>:

Որոշ տարածայնություններից հետո Կիլիկիան ևս սկսում է մոնղոլների հետ բանակցությունների նախապատրաստվել: Հայոց թագավորը պատրաստ լինելով իրական համագործակցության դիմաց ընդունել ոչինչ չնշանակող թաթարական գերակայությունը՝ ցնցեց Արևմուտքի քաղաքական ու կրոնական կարծիքը, և կարողացավ այդ ուղղու նպատակահարմարությունը հիմնավորել նաև Անտիոքի դքսության համար:

Դեպի մոնղոլներ Կիլիկիայի և Անտիոքի կողմնորոշման հարցում հսկայական նշանակություն ունեցավ 1243 թ. Չմանկատուկի ճակատամարտը: 1242 թ. մոնղոլական զորքերը Բաթու խանի հրամանատարությամբ առաջանում էին Փոքր Ասիա ու Մերձավոր Արևելք: Նրանց ճանապարհը փակող առաջին խոչընդոտը Իկոնիայի սուլթանությունն էր: 1242 թ. աշնանը, մեծ դժվարությամբ գրավելով Կարինը, Բաթուն ստիպված էր հետաձգել արշավանքը դեպի երկրի խորքերը<sup>585</sup>: Իկոնիայի սուլթան Քեյ Խոսրով II-ը (1237-1247 թթ.) սկսեց նախապատրաստություններ տեսնել մոնղոլներին դիմակայելու համար, որի ընթացքում նա մոտ 2 հազարի հասնող հեծելազունի հավաքագրեց նաև հարևան ֆրանկներից, օգնություն խնդրեց Կոստանդին Պալլից և ստացավ հուսադրող պատասխան<sup>586</sup>: Արդյունքում, Քեյ Խոսրովի բանակը մի քանի անգամ գերազանցեց Բաթուի զորքերին: 1243 թ. հունիսի 26-ին Չմանկատուկ գյուղի մոտ Իկոնիայի սուլթանը պարտություն կրեց մոնղոլներից, որոնց հաղթանակի գլխավոր ապահովողը դարձավ հայ-վրացական զորագունդը<sup>587</sup>: Հասկանալի է, որ սելջուկ-թյուրքերի ու մոնղոլների հակամարտությունն էր որոշելու

<sup>584</sup> Гильом де Рубрук, Путешествие в восточные страны, пер. Малеина А., Москва, 1957, с. 117-120, 170-172.

<sup>585</sup> Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 280:

<sup>586</sup> Hayton, La Flor des Estoires des parties d'Orient, RHC, Doc. arméniens, t. 2, p. 158 հմմտ. Գալստյան Ա. Գ., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, ՊԲՀ, № 1 (1964), էջ 93:

<sup>587</sup> Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 282-283, Hayton, La Flor des Estoires des parties d'Orient, RHC, Doc. arméniens, t. 2, p. 158, Գալստյան Ա. Գ., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, ՊԲՀ, № 1 (1964), էջ 95-96, Runciman S., A history of the Crusades, t. 3, p. 253.

Կիլիկիայի հայկական թագավորության և Անտիոքի դքսության հետագա ճակատագիրն, ուստի՝ նրանց պայքարի ողջ ընթացքում երկու քրիստոնյա տիրակալներն ուշի ուշով հետևում էին իրադարձությունների զարգացմանը:

Չմանկատուկից հետո օրակարգի խնդիր էր դառնում արագ կարգավորել հարաբերությունները Բաթուի հետ: Առանց վարանելու Հեթումը բանագնացներ ուղարկեց նրա ճամբար՝ հպատակության իր պատրաստակամությունը հայտնելով հաղթողներին: Մոնղոլների և Կիլիկիայի միջև սկսված բանակցություններն ընթանում էին առանց լուրջ դժվարությունների, քանի որ Կոստանդին Պալլի Իկոնիայի սուլթանին խոստացած օգնությունն այդպես էլ իրականություն չդարձավ: Համենայն դեպս, դրա մասին տեղեկություններ ուղղակի չկան: Փոխարենը, հայերը բավարարեցին մոնղոլների բոլոր պահանջներն ու երկուստեք շահավետ միություն կնքեցին Բաթուի հետ, որը խոստանում էր հարգել Հայոց թագավորի իրավունքները և երաշխավորել երկրի տարածքային ամբողջականությունը<sup>588</sup>:

Ձեռք բերված համաձայնությունն ամրապնդելու նպատակով՝ 1247/8 թ. Սսից Գույուկ խանի մոտ է ուղևորվում Հեթումի եղբայր Սմբատ Սպարապետի պատվիրակությունը<sup>589</sup>: Նա լինում է Կարակորումում և գրեթե երկու տարի մնում այնտեղ, հավաքում քրիստոնյաների համար կարևորություն ներկայացնող բազմաթիվ տեղեկություններ: Թեև Սմբատի առաքելությունը նույնպես մեծ հետևանքներ չունեցավ<sup>590</sup>, բայց հստակեցրեց մոնղոլների և հայերի դիրքորոշումը, նշանավորեց նրանց միջև դաշնակցային փոխհարաբերությունների սկիզբը:

Ինչ վեաբերվում է Անտիոքին, ապա այնտեղ հավանաբար որոշեցին սպասել մոնղոլների և Իկոնիայի միջև ծավալված պատերազմի վերջնական ավարտին, մի բան, որ իր թագավորության մատույցներին հասած Բաթուի ներկայության պայմաններում ոչ մի կերպ չէր կարող թույլ տալ Հեթում արքան: Բոհեմունդ V-ին աննախադեպ հնարավորություն ընդձեռնվեց տվյալ փուլում մերժելու մոնղոլների հպատակությունը: Բաթուն կենտրոնացավ Փոքր Ասիայի նվաճման վրա՝ միայն առանձին ջոկատներ ուղղարկելով հարավ: Դրանք Յասավուրի գլխավորությամբ

<sup>588</sup> Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 285:

<sup>589</sup> Նույն տեղում, էջ 317-318, 364, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 227-228:

<sup>590</sup> Մանրամասներ տե՛ս Մուրաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 422:

արշավեցին Հյուսիսային Ասորիք՝ Համա, Հալեպ, Դամասկոս ու Հոմա, որոնց էմիրները կարողացան փրկագին վճարելով զերծ մնալ ավերածություններից: Անտիոքից նույնպես հնազանդություն էին պահանջում, բայց ամուսն տալից մահացու զրկանքներ կրող Յասավուրի հեծելազորը դքսության սահմաններ մտնել չկամեցավ և նահանջեց<sup>591</sup>: Ավելի ուշ, երբ թյուրք սելջուկները գլխավին ջարդվեցին, իսկ Անտիոքում ակնհայտ դրածավ, որ Կիլիկիան որպես մոնղոլների դաշնակից կարող էր հենակետ ծառայել նաև դքսությունը նվաճելու համար, Բոհեմունդ V-ին փոխարինած իշխանությունը վերանայեց քաղաքականությունն ու ամուր կապերի մեջ մտավ նախ Հայոց թագավորության հետ, ապա վերջինիս խորհրդով ընդունեց մոնղոլական գերիշխանությունը՝ հետաձգելով Անտիոքի անկումը:

Ասորիքի ու Կիլիկիայի քրիստոնյաների մոնղոլական կողմնորոշմանը նպաստում էր նաև Արևմուտքի կազմակերպած մի քանի անհաջող խաչակրաց արշավանքների ձեռնարկները<sup>592</sup> և մահմեդականների նորանոր հարվածները, որոնցից առավել վտանգավոր էին դարձել Եգիպտոսում հաստատված մամլուքները: 1244 թ. սեպտեմբերին սուլթան Ալ-Մալիք ալ-Սախիլ II-ը (1240-1249 թթ.) ասիական խավարեզմեյների 10 հազարանոց հեծյալների օգնությամբ վերջնականապես գրավեց Երուսաղեմը, 1245 թ. Դամասկոսը՝ ավարտին հասցնելով Մերձավոր Արևելքի մահմեդականների միավորման գործընթացը<sup>593</sup>: Արևմուտքը լատինական պետությունների մնացորդների բնաջնջումը կանխելու անհրաժեշտությամբ՝ 1248 թ. Լյուդովիկոս IX-ի գլխավորությամբ կազմակերպում է VII խաչակրաց արշավանքը:

<sup>591</sup> Jackson P., *The Mongols and the West, 1221-1410*, New York, 2005, pp. 74-75.

<sup>592</sup> Դրանցից միայն Ֆրիդրիխ II-ի գլխավորած VI խաչակրաց արշավանքն ունեցավ որոշ հաջողություններ: Ֆրիդրիխը կարողացավ առանց մարտի 1229 թ. գարնանը մտնել Նազարեթ, Բեթլեհեմ, Երուսաղեմ և հռչակվել Երուսաղեմի թագավոր: Սակայն նրա նվաճումներն ավելի շատ պառակտեցին Արևելքի քրիստոնյաներին, քան միավորեցին, քանի որ Ֆրիդրիխը լուրջ հակասության մեջ էր ներքաշվել Հռոմի պապերի հետ ու բանադրանքի ենթարկվել: Դա Արևելքում խաչակիրներին բաժանեց նրա կողմնակիցների և հակառակորդների բանակների, որոնց մեջ ծավալված պայքարն ուղղակի քայքայում էր քրիստոնեական ուժը: Ֆրիդրիխը շատ դեպքերում ուղղակի ստիպում էր իր հակառակորդներին հավատարմության երդում տալ իրեն և իր որդի Կոնրադին: Նման մի փորձ նա ձեռնարկեց նաև Բոհեմունդ IV-ի նկատմամբ: Սակայն ձեր իշխանը իրեն ձևացրեց խուլ ու համր և առաջին իսկ հնարավորության ժամանակ Կիպրոսից փախավ Անտիոք: *St' u Domanih A. A., ykaz. soch., c. 342, Kenneth M. Setton, op. cit., p. 544, Kaupar Я., ykaz. soch., c. 140-148.*

<sup>593</sup> Sydney Jones J., *op. cit.*, pp. 48-54, Mutaftian Cloude, *L'Arménie du Levant (XIe – XIVe siècle)*, 1 vol., p. 135.

Այսպիսով, XIII դ. 20-40-ական թվականներին հայ-անտիոքյան փոխհարաբերություններում արձանագրված տեղաշարժերը ներկայացնում են հետևյալ պատկերը.

ա. Ռայմունդ-Ռուբենն օգտվելով Լևոն I-ի մահվան հետևանքով Կիլիկիայում տեղի ունեցող գահակալական խժժություններից՝ մի շարք խռովարար նախարարների աջակցությամբ ցանկանում էր հաստատվել Հայոց գահին:

բ. Անտիոքի դքսությունն արքայազն Ֆիլիպի միջոցով նախ փորձում էր տիրանալ կամ վերահսկողություն սահմանել Սսի նկատմամբ, ապա պատժել հայերին նրան հասցված անարգանքի համար:

գ. Բոհեմունդ V-ը, Տաճարականների հետ միավորված, նոր հարձակումներ է սկսում Կիլիկիայի վրա:

դ. Մոնղոլների հայտնվելը փոխեց արշխարհակարգը ողջ Մերձավո Արևելքում՝ սառեցնելով հայ-անտիոքյան հակամարտությունը, բայց կողմերի միջև կուտակված լարվածությունն առայժմ թույլ չէր տալիս ուղղակի բանակցություններ սկսելու համար:

## ***§ 2. Դաշնակցային համագործակցության կարճատև փուլը դքսության անկման նախաշեմին***

Լյուդովիկոս IX-ի ձեռնարկած խաչակրությունը նախկիններից էապես տարբերվում էր Արևելքի քրիստոնեական բոլոր ուժերը համախմբելու Ֆրանսիայի թագավորի բուռն գործունեությամբ: 1248 թ. աշնանը 1249 թ. ձմռանը Կիպրոսում եղած ժամանակ Լյուդովիկոսը մի շարք միջոցառումներ անցկացրեց հակասությունների մեջ գտնվող բարոնների տարաձայնությունները հարթելու ուղղությամբ: Հատկանշական է, որ հետագայում Լյուդովիկոսն արժանացավ «խաղաղության հրեշտակ» մականվանը<sup>594</sup>: Համընդհանուր հաշտեցման այս գործընթացից անմասն չմնացին նաև Կիլիկիան ու Անտիոքը:

Երկու պետությունների առաջնորդները Նիկոսիա են ուղարկում իրենց պատգամավորներին՝ ողջունելու Լյուդովիկոսի գալուստն ու հայտնելու սրբազան

---

<sup>594</sup> Мишо Г., указ. соч., с. 252.



պատերազմին մասնակցելու իրենց պատրաստակամությունը: Թագավորը նրանց հորդորեց վերջ տալ նախկին հակամարտությանը և պայքարել ընդհանուր թշնամու դեմ: Մահմեդականների դեմ միասնական ճակատ կազմելու համար Ֆրանսիայի թագավորը 600 նետաձիգներ է ուղարկում Անտիոք<sup>595</sup>: Նվերներով ու օժանդակ զինական ուժով Կիլիկիա են դառնում նաև հայերը<sup>596</sup>:

Միայն կառավարման վերջում հայերի հետ հաշտված Բոհեմունդը՝ չհասցրեց իրական միություն ստեղծել Կիլիկիայի հետ: Դրա անհրաժեշտությունն ամբողջությամբ ընկալեց նրա որդի ու հաջորդ Բոհեմունդ VI Գեղեցիկը (1251-1268 թթ.): Գահակալության պահին ընդհամենը 14 տարեկան լինելու հետևանքով՝ դքսության խնամակալությունը ստանձնել էր նրա մայր Լյուսինեն դե Կոնտին<sup>597</sup>, որը ժամանակի մեծ մասն անցկացնում էր Տրիպոլիում: Անտիոքում գլուխ էին բարձրացրել անջատողական տարրերը, ուստի Բոհեմունդը 1252 թ. մեկնում է Յաֆֆա ու անձամբ հանդիպում Լյուդովիկոս թագավորին: Տեսակցության ընթացքում նա նշում է, որ մոր առնվազն չորս տարվա խնամակալությունը կբերի Անտիոքի մեկուսացման: Այդ պատճառով խնդրում է իրեն ազատել մոր հովանավորությունից ու թույլ տալ Անտիոքի կարիքների համար Տրիպոլիի գանձարանից միջոցներ հայթայթել: Լյուդովիկոսը բավարարում է դքսի բոլոր խնդրանքները և հանդիսավորությամբ ճանապարհում նրան Անտիոք<sup>598</sup>:

Անտիոքի հետ խաղաղ հարաբերությունների հաստատումը կարևոր էր նաև Կիլիկիայի համար, ուստի՝ չի բացառվում, որ Բոհեմունդի գործողությունների մեջ մասնակցություն ունենային նաև Հայոց արքունիքին մոտ կանգնած մարդիկ: Համենայն դեպս փաստ է, որ հայերն ուղեկցում էին Բոհեմունդին Յաֆֆայում եղած ժամանակ<sup>599</sup>: Անտիոքի ու Կիլիկիայի միջև ծավալված երկխոսությունը վերջնականապես ամրապնդվում է Բոհեմունդի և Հերթումի դուստր Սիբիլայի

<sup>595</sup> Jauna D., op. cit., p. 592, L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 402-403.

<sup>596</sup> Жан де Жуанвиль, указ. соч., с. 196.

<sup>597</sup> Bernard le Trésorier, op. cit., p. 552, L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 440.

<sup>598</sup> Жан де Жуанвиль, указ. соч., с. 289-290, L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 440, Kenneth M. Setton, op. cit., p. 507.

<sup>599</sup> Жан де Жуанвиль, указ. соч., с. 289-290.

ամուսնությամբ<sup>600</sup>: Հարցին անդրադարձած մի շարք պատմաբանների կարծիքով ամուսնությունը կազմակերպել է Լյուդովիկոսը և դրան հաջորդել են հետևյալ փոփոխությունները Կիլիկիա-Անտիոք հարաբերություններում<sup>601</sup>.

ա. Ամուսնությունից հետո Բոհեմունդը դարձել է Հերթում արքայի վասալը:

բ. Հայերը համաձայնել են կիսել Անտիոքի պաշտպանության պատասխանատվությունը:

գ. Այնուհետ դքսությունն ամբողջությամբ գործել է Կիլիկյան Հայաստանի քաղաքական համակարգում ու որպես այդ ազդեցության իրական արտացոլում համարում են.

- Բոհեմունդի և Հիվանդախնամ միաբանների միջև ձեռք բերված պայմանավորվածության գործում Հերթումի միջամտությունը,

- 1259 թ. Անտիոքի դքսի դեմ Տրիպոլիում ծագած ապստամբության ճնշման հարցում Հերթումի խաղացած դերը,

- Դքսությունը մոնղոլների հետ եռակողմ դաշինքի մեջ ներքաշելու փաստերը:

Կարևորելով հանդերձ մեծանուն գիտնականների եզրակացությունները՝ փորձենք առանձին-առանձին անդրադառնալ նշված հանգամանքներին, որոնք բացահայտում են հայ-անտիոքյան հարաբերությունների իրական պատկերը դքսության գոյության վերջին երկու տասնամյակում:

Այսպես, եթե Բոհեմունդի ու Սիբիլայի միության կապակցությամբ Լյուդովիկոսի միջնորդության հնարավորության մասին խոսում են Անտիոքի դքսի և Ֆրանսիայի թագավորի հաճախակի տեսակցությունները<sup>602</sup>, ապա Կիլիկիայի ազդեցության տարածումն Անտիոքի վրա թվում է կասկածելի: Աղբյուրների տեղեկություններից ավելի շատ հիմք ենք ստանում խոսելու փոխադարձ այցելություններով ամրապնդված ֆրանկո-հայկական կայուն դաշինքի<sup>603</sup>, քան փաստացի վասալության մասին:

<sup>600</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 230, 231, Bernard le Trésorier, op. cit., p. 553, L'Estoire de Eracles empereur, op. cit., p. 442, Հերթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 81, Հերթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 105:

<sup>601</sup> Runciman S., A history of the Crusades, t. 3, p. 287, Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 70-71, Grousset R., Histoire des croisades et du royaume Franc de Jérusalem, t. 3, pp. 515-516.

<sup>602</sup> Жан де Жуанвиль, указ. соч., с. 309, Հերթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 68, L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 439, 441-442.

<sup>603</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 231:

Քննարկելով Անտիոքի դքսի ու նրա հակառակորդների միջև Հեթում թագավորին վերագրվող միջամտությունների դեպքերը՝ նշենք.

ա. Հիվանդախնամների մագիստրոս Գիյոմ դե Շատոնյոֆը (1243-1258 թթ.), դեռևս 1256 թ. Բոհեմունդի հետ եկել էր նախնական համաձայնության: 1258 թ. հոկտեմբերին նոր պայմանագիր է կնքվում ասպետական միաբանությունների միջև՝ Երուսաղեմի թագավորությունում, Կիպրոսում, Անտիոքում, Կիլիկիայում և Տրիպոլիում իրենց ազդեցության շրջանների հարցը լուծելու վերաբերյալ<sup>604</sup>: 1259 թ. Անտիոքի դքսի և միաբանների նոր մագիստրոս Հյուգո դե Ռևելի (1258-1277 թթ.) միջև ստորագրվում է մեկ այլ համաձայնագրություն, որը կոչված էր դադարեցնելու Երուսաղեմի գահաժառանգության համար մղվող քաղաքացիական պատերազմը: Ավելացնենք նաև, որ այսքանով Բոհեմունդ VI-ի ու Հիվանդախնամների միջև հակասությունները վերջնական լուծում չստացան: Քիչ ուշ՝ 1262 թ., հրապարակվեց Անտիոքի դքսի հրովարտակը, որում նա և Հիվանդախնամների մագիստրոսը համաձայնություն էին հայտնում նոր վիճաբանությունների դեպքում դիմել այսպես կոչված եռակողմ (третейский) դատարանին<sup>605</sup>: Բերված փաստերը չեն խոսում Անտիոքի ու Հիվանդախնամների հաշտեցման ընթացքում Հեթումի որևէ լուրջ դերակատարության մասին:

բ. 1259 թ. Հեթումը 200 մարտիկներով նավարկում է Տրիպոլիի կոմսություն և օգնում Բոհեմունդին ապստամբությունը ճնշելու գործում<sup>606</sup>: Այնուամենայնիվ, Հեթումի ցույց տված օգնությունը դժվար է դիտել որպես “սյուզերենի պարտավորությունների” կատարում, քանի որ այդ ապստամբությունը ծագել էր Բոհեմունդի այնպիսի հավակնոտ ծրագրի արդյունքում, որը հերքում է նրա փաստացի կախումը որևէ թագավորից:

Այսպես, դեռևս 1258 թ. սկզբից Բոհեմունդը պայքարում էր Երուսաղեմի ու Կիպրոսի թագավորությունների խնամակալ հռչակվելու համար: Նա 1258 թ. փետրվարի 1-ին իր քրոջ՝ Կիպրոսի թագուհի Պլեզանցիայի, և նրա անչափահաս որդի՝

<sup>604</sup> Մանրամասներ տե՛ս Delaville Le Roulx J., op. cit., pp. 207, 213-214, URL://<http://www.hospitaliers-de-saint-jean-de-jerusalem.org/Genealogies-des-Maitres/index.php?page=Hugues-Revel>, (19.10.2013).

<sup>605</sup> Додю Г., указ. соч., с. 255-256 հմմտ. Rey E., Résumé chronologique de l'histoire des princes d'Antioche ROL, 4 (1896), p. 403.

<sup>606</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 234, Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 70, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 82:

Կիպրոսի թագավոր ու Երուսաղեմի թագավորության խնամակալ հռչակված Հուգո II-ի (1253-1267 թթ.) ուղեկցությամբ, ժամանեց Ակրա: Անտիոքի դքսին հրավիրել էին Տաճարականները, Յաֆֆայի իշխան Ժան դ'Իբելինը և նրանց պաշտպանող վենետիկյան ճամբարը: Բոհեմունդը պահանջում է իր զարմիկի անչափահասության ընթացքում իրեն ճանաչել թագավորության սենյոր, սակայն բարոնների հիմնական հատվածը հրաժարվեց ենթարկվել Բոհեմունդին: Դուքսը Ակրայում գտնվող իր կողմնակիցներին հրամայեց ամեն գնով հպատակեցնել նրանց, որի նպատակով իր գանձարանից գումար հատկացրեց ու Ակրայում թողեց մոտ 800 ֆրանսիական վարձկանների զորաջոկատ<sup>607</sup>: Բայց հնարավորությունների սղությունը ստիպեց Բոհեմունդ VI-ին վերանայելու իր ծրագիրը և հաշտվելու իր հակառակորդ ջենովացիների հետ<sup>608</sup>:

Ինչպես տեսնում ենք, Հեթումի օգնությունը հետապնդում էր ոչ թե Բոհեմունդին փրկելու, այլև վերջինիս կողմից իր իշխանատենչական նկրտումների հետևանքները հաղթահարելու նպատակ: Ուստի դժվար է այն համարել միջամտություն Անտիոքի ներքին գործերին:

գ. Անտիոքի հետ Կիլիկիայի ռազմաքաղաքական դաշինքի ավելի ցայտուն օրինակ է նրանց դաշինքը մոնղոլների հետ: Այստեղ Հեթումի դերը միանշանակ ընդգծվում է, սակայն Բոհեմունդի որոշումը պետք է դիտարկել ոչ թե Հայոց թագավորի ազդեցության, այլ սեփական շահերի պաշտպանության տեսանկյունից:

Հեթում I-ը 1254 թ. անձամբ էր ուղղվևորվել Կարակորում, որտեղ հանդիպել էր Մանգու խանին և բավական նպաստավոր պայմաններով ընդունել նրա գերիշխանությունը<sup>609</sup>: Մոնղոլներին արված զիջումների դիմաց, Հայոց թագավորը հասնում է կարևորին. խանի եղբայր՝ մոնղոլական Իրանի տիրակալ Հուլավուն (1256-1265 թթ.), հանձնարարություն է ստանում հարձակվել Ասորիքի մահմեդական տիրույթների վրա, որոնց նվաճումից հետո մոնղոլների դաշնակից քրիստոնյա

<sup>607</sup> L'Estoire de Eracles empereur, op. cit., pp. 439, 443, 634-635, Bernard le Trésorier, նշվ. աշխ., էջ 555, Les Gestes des Chiprois, op. cit., pp. 742-744, 780, Հեթում պատմիչի ժամանակագրությունը, ՄԺ, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 68, Kenneth M. Setton, op. cit., pp. 569-570.

<sup>608</sup> Ринар Ж., указ. соч., с. 332-333, 369.

<sup>609</sup> Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 364-372, Հեթում I-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. I, էջ 81-82:

կառավարիչները հետ պետք է ստանային նախկինում նրանց պատկանած տիրույթները<sup>610</sup>: 1255 թ. գարնանը Սսի և Այասի վրայով Մոնղոլիայից Եվրոպա վերադարձող Գիյոմ դե Ռուբրուկը տեղեկացնում է, որ Սսում Կոստանդին Պալլը մեծ տոնախմբություն էր կազմակերպել, երբ Հեթումի պատվիրակները տեղեկացրել էին խանի կողմից հարկերը թեթևացնելու, նրա երկիր այլևս դեսպաններ չառաքելու ու որդու խաղաղ վերադարձի մասին<sup>611</sup>:

Մոնղոլների հետ դաշինքը կարևորվում էր նրանով, որ այդ նոր ուժի ի հայտ գալուց հետո Կիլիկիան և Անտիոքի միայն միասնական գործողությունների շնորհիվ կարող էին գոյատևել: Բացի այդ, մոնղոլները ունեին հակամահմեդական դիրքորոշում, և օգտվելով նրանց հովանավորությունից, Արևելքի քրիստոնյանները հնարավորություն էին ստանում վերադարձնել կորցրած տարածքները: Կիլիկյան թագավորությունը Մերձավոր Արևելքում դարձավ առաջին պետությունը, որը զինվորական ու տնտեսական միություն կապեց մոնղոլների հետ: Այդ դաշինքի նպատակահարմարության մեջ նա կարողացավ համոզել նաև Անտիոքի դքսությանը: Չնայած Բոհեմունդ VI-ը 15 տարի առաջ մերժել էր մոնղոլների պայմանները, բայց Բաղդադի Խարրանի, Եդեսիայի ու Սրուճի հպատակեցումից հետո<sup>612</sup>, Անտիոքի սահմաններին հասած Հուլավուն այլ ընտրության չէր թողնում Բոհեմունդին, քան ընդունել մոնղոլական հովանավորությունը<sup>613</sup>:

Հալեպի ու Դամասկոսի վրա արշավանքից առաջ Հուլավուին մնում էր միայն ճշտել Ասորիքում իր դաշնակիցների անունները, ուստի՝ Հայոց արքան ու Անտիոքի դուքսը շտապում են ներկայանալ նրա ճամբար: Գործք Կիպրացոցն այս առնչությամբ նշում է. «Չքնաղ իշխան Բոհեմունդը մեծ ընդունելության արժանացավ հզոր արքա Հուլավուի կողմից, քանի որ իշխանը հայոց արքայի փեսան էր...: Նրանք պետք է միանային թաթարներին և առաջանային սարացիների ձեռքում գտնվող Դամասկոս»<sup>614</sup>: Այս տեղեկությունը հանդիսանում է այն առանցքը, որի հիման վրա Բոհեմունդի ներքաշումը հակամամլության կոալիցիայի մեջ դիտվում է որպես

<sup>610</sup> Յովաննու Դարդել, նշվ. աշխ., էջ 17-19:

<sup>611</sup> Гильом де Рубрук, указ. соч., с. 188-189.

<sup>612</sup> Bar Hebraeus, op. cit., pp. 509.

<sup>613</sup> Доманин А. А., указ. соч., с. 352 հմմտ. Ришар Ж., указ. соч., с. 349, 350.

<sup>614</sup> Les Gestes des Chiprois, op. cit., pp. 751.

Անտիոքի վրա Կիլիկիայի քաղաքական ազդեցության հետևանք: Բայց սա ավելի շատ ընդգծում է Հեթումի լավ փոխհարաբերությունները Հուլավուի հետ, քան Անտիոքի դքսի կախվածությունը նրանից: Բացի այդ, Բոհեմունդը դաշինքի դիմաց մոնղոլներից այնպիսի առաջարկներ ստացավ, որ դժվար է պատկերացնել, թե որևէ մեկը կարող էր դրանցից հրաժարվել:

Հուլավուն խոստացավ հաջողության դեպքում Անտիոքին վերադարձնել անդրորոնտյան բոլոր տարածքները, որոնք մահմեդականների ձեռքում էին<sup>615</sup>:

Վրդովված այդ «ամոթալի հպատակությունից»՝ Բեթղեհեմի եպիսկոպոս Թոմասը բանադրանքի ենթարկեց Բոհեմունդ V-ին: Նրան հատկապես զայրացրել էր Հուլավուի պահանջով Անտիոքում հույն պատրիարք Եվթիմիդոսին վերականգնելու դքսի համաձայնությունից: Իսանը, բացի Անտիոքի դքսությունից ու Կիլիկյան թագավորությունից, Արևելքում ձեռք էր բերել մեկ այլ քրիստոնեական դաշնակից՝ Նիկեայի հզորացող հունական կայսրությունը: Այն իրեն համարելով Բյուզանդիայի միակ ժառանգորդ՝ որդեգրել էր Անտիոքի հունական պատրիարքության հովանավորության առաքելությունը և խանի հետ բանակցություններում ստացել նրա միջոցով Եվթիմիդոսին վերականգնելու հնարավորություն: Հուլավուն կարևորելով հույների դերն Անտիոքում կարողացավ այդ հարցում ազդել Բոհեմունդի վրա<sup>616</sup>:

Բերված փաստերն ավելի շատ խոսում են այն մասին, որ Բոհեմունդը ամբողջությամբ գործում էր իր հայեցողությամբ՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

Անտիոքա-կիլիկյան միացյալ բանակը մոնղոլների հետ միասին 1259 թ. վերջերին սկսեց ասորական արշավանքը: 1260 թ. սկզբին նրանք գրավում են Հալեպը<sup>617</sup>, Հարիմը ապրիլին Դամասկոսը, որից հետո հեշտությամբ ենթարկվեցին Հոման ու Համան<sup>618</sup>: Դամասկոսի մզկիթում Բոհեմունդ VI-ի հրամանով մատուցվեց լատինական ծիսակարգին համապատասխան ժամերգություն:

<sup>615</sup> Haytonus, Flos historiarum terre Orientis, RHC, Doc. arméniens, t. 2, p. 302.

<sup>616</sup> Տե՛ս, Hayton, La Flor des Estoires des parties d'Orient, RHC, Doc. arméniens, t. 2, p. 171, Les Gestes des Chiprois, op. cit., pp. 751, Ринар Ж., указ. соч., с. 350-351, 353, Runciman S., A history of the Crusades, t. 3, pp. 306-307.

<sup>617</sup> Hayton, La Flor des Estoires des parties d'Orient, RHC, Doc. arméniens, t. 2, pp. 170-171, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 235-236:

<sup>618</sup> Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 387-388, Հեթում Բ-ի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 82, Ринар Ж., указ. соч., с. 352.

Ձեռք բերված շլացուցիչ հաղթանակներն ապահովեցին բոլոր պայմանավորվածությունների կատարումը<sup>619</sup>.

- Ցույց տրված օգնության դիմաց Անտիոքը հետ ստացավ Սալահ ադ-Դինի օրոք նվաճված անդրորոնտյան հողերը և Լաոդիկեա նավահանգիստը,

- Հերթում I-ին վերադարձվեցին նախկինում Կիլիկյան իշխանության մեջ մտնող Պեհեսին և Մարաշը:

Հուլավուին վերագրում են նույնիսկ մտադրություն ֆրանկներին վերադարձնել Երուսաղեմն իր հողերով<sup>620</sup>, սակայն Պաղեստինի խաչակիրները Կիլիկիայի ու Անտիոքի իրենց հավատակիցների օրինակին չհետևեցին և մոնղոլների հետ միության չգացին<sup>621</sup>: Ասորիքի մոնղոլական նվաճումից հետո Երուսաղեմի և Եգիպտոսի վրա հարձակում էր նախատեսվում, որի հաջող ընթացքը պետք է ամբողջապես ոչնչացներ Մերձավոր Արևելքի մահմեդական իշխանությունները: Բայց երկու կարևոր իրադարձություն փրկում է նրանց:

ա. Այդ ժամանակ ստացվում է Մանգու խանի մահվան լուրը, որի հետևանքով Հուլավուն ստիպած է լինում վերադառնալ Մոնղոլիա՝ Մերձավոր Արևելքում Քիտ Բուղայի հրամանատարությամբ թողնելով հայկական ստորաբաժանում ընդգրկող ոչ մեծ զորաբանակ<sup>622</sup>: Քիտ Բուղան մտադիր էր շարունակել մոնղոլական հաղթարշավն ու պատժել Ակրայի ասպետներին: Դրա մասին վկայում է 1260 թ. կեսերով թվագրվող Սիդոնի ավերումը, որին հնարավոր է մասնակցել է նաև Բոհեմունդը<sup>623</sup>: Այնուամենայնիվ, Հուլավուի բացակայությունն աստիճանաբար գցում էր դաշնակիցների մարտունակությունը:

<sup>619</sup> Vahram D'Edesse, op. cit., pp. 519-520, Hayton, La Flor des Estoires des parties d'Orient, RHC, Doc. arméniens, t. 2, p. 170-171, Richard J., La papauté et missions d'Orient au Moyen Age (XIII-XV siècle), p. 99, հմմտ. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, ծանոթ. Նալբանդյան Հ., էջ 147, 199, Ринар Ж., указ. соч., с. 352, Runciman S., A history of the Crusades, t. 3, p. 306.

<sup>620</sup> Hayton, La Flor des Estoires des parties d'Orient, RHC, Doc. arméniens, t. 2, pp. 170-171.

<sup>621</sup> 1260 թ. գրված նամակները վկայում են ֆրանկներին պատած սարսափի մասին. նրանք հասնում են այտեղ, որ նույնիսկ ողբում են իրենց երբեմնի մահմեդական թշնամիների վախճանը: Չինգիզ խանի վայրի հորդաները գրեթե հասել էին թագավորության սահմաններին, և Անտիոքի դքսության միությունը մոնղոլների հետ, որոնց այրուծին մահմեդական գյուղերին հավասար թալանում էր նաև անտիոքյան ավանները՝ ընկալվում էր որպես դավաճանություն ու հանդիսանում մոնղոլների նկատմամբ Ակրայի ֆրանկների ատելության հիմնական պատճառը: Տե՛ս Ринар Ж., указ. соч., с. 351, 353.

<sup>622</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 236:

<sup>623</sup> Ринар Ж., указ. соч., с. 354.

բ. Մյուս իրադարձությունը կապված էր Կահիրեում իշխանության եկած մամլուքների հետ: Գահ բարձացած Կուտուզը (1259-1260 թթ.) մոնղոլների առաջխաղացումը կասեցնելու համար դիմում է Ակրայի ֆրանկներին, որոնք թույլ են տալիս մամլուքներին առանց խոչընդոտի անցնել իրենց տարածքներով և թակարդի մեջ առնել դաշնակիցներին<sup>624</sup>: 1260 թ. սեպտեմբերի 3-ին Գալիլիեայի Այն-Ջալուդ բնակավայրի մոտ մամլուքների և մոնղոլների միջև տեղի ունեցած ճակատամարտում Բեյբարսը Քիտ Բուղիայի բանակների ու հայ-վրացական միացյալ զորաջոկատների նկատմամբ կատարյալ հաղթանակ է տանում<sup>625</sup>:

Ճակատամարտի արդյունքում Կուտուզի իշխանությունը տարածվում է ամբողջ Ասորիքում, առավել ևս, որ զորավար Իլկա նոյանը հավաքեց Ասորիքում մնացած մոնղոլներին և անցավ Կիլիկիա: Բայց միանգամից ոչնչացնել Հուլավուի մերձավորարևելյան բոլոր նվաճումները մամլուքներին չհաջողվեց: Հատկապես համառ էր Հալեպի համար մղված պայքարը, որը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ ու մամլուքներին հանձնվեց միայն 1260 թ. վերջերին՝ Հոմսի մոտ գրացված նոր պարտությունից հետո<sup>626</sup>:

Վերստին մահմեդականացված Դամասկոսը և Հալեպը հենակետ են դառնում մոնղոլների դաշնակից Կիլիկիայի ու Անտիոքի վրա հարձակվելու համար: Այս ծրագիրը շոշոփելի է դառնում, երբ Կուտուզին փոխարինում է Բեյբարսը (1260-1277 թթ.): Նա մտադիր էր ոչ միայն պատժել մոնղոլների դաշնակիցներին, այլ Արևելքից վերջնականապես վտարել ֆրանկներին: 1261 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Բեյբարսը ուղղվում է դեպի Բալաբեկ, ասպատակում Անտիոքի տարածքները և մեծ ավարով վերադառնում Եգիպտոս<sup>627</sup>: Մամեյլոքյան պատժիչ արշավանքները սկզբում հնարավոր եղավ կանխել կիլիկիա-անտիոքյան համագործակցության շնորհիվ: Նման փայլուն օրինակ արձանագրվեց 1262 թ., երբ Անտիոքը նվաճելու նպատակով Բեյբարսը դքսության տարածք էր ուղարկել Սոնկուր ալ-Ռումիի բանակը, որին օգնում էին Համայի և Հոմսի մելիքներ Մանսուր II-ն ու Մուսան: Մահմեդականները հասան

<sup>624</sup> Մուֆաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 427, Ринар Ж., указ. соч., с. 354-355.

<sup>625</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 236, Կիրակոսի Գանձակեցոյ, նշվ. աշխ., էջ 388-389:

<sup>626</sup> Ринар Ж., указ. соч., с. 355.

<sup>627</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 611.



ընդհուպ մինչև Սելևկիա, հրկիզեցին խարիսխ գցած նավերը, թալանեցին Անտիոքի մատույցները և շարձապատեցին քաղաքը: Պաշարված Անտիոքը փրկվեց Հեթումի շնորհիվ, որը շտապեց հայ-մոնղոլական օգնական ուժեր ուղղել մամլուքների դեմ: Գործք Կիարացոցից հետևում է, որ Հայոց թագավորն անձամբ է գնացել Եդեսիայի կամ Իկոնիայի մոտակայքում տեղավորված մոնղոլական ճամբար՝ նրանց աջակցությունը ստանալու համար: Փաստն այն է, որ հայ-մոնղոլական զորքերի երևալը վախեցրեց մամլուքներին և նրանք հարկադրված թողեցին դքսության մայրաքաղաքի մատույցները<sup>628</sup>:

Սա ցույց է տալիս, որ ի դեմս Բեյբարսի Քրիստոնեական Արևելքը ձեռք էր բերել հզոր ախոյանի: Սակայն նույնիսկ այս վտանգը չկարողացավ համախմբել Լատին Արևելքի քրիստոնեական ուժերը: Այս առումով բացառություն էին հանդիսանում Հեթում I-ի և Բոհեմունդ VI-ի միջև ձևավորված հարաբերությունները: Հայոց արքան բացի իր դաշնակցային պարտականությունների կատարումը, գիտակցում էր, որ Անտիոքի գրավումը Բեյբարսի առաջ ուղղակի բացում է Կիլիկիա տանող ճանապարհը և այն դարձնում հաջորդ թիրախը:

Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունների և Կիլիկիայի գլխին կախված վտանգն ավելի էր մերձեցնում Սսի ու Անտիոքի արքունիքները: Մոնղոլների բացակայության պայմաններում նրանք պետք է փորձեին ի մի բերել սեփական ուժերը և համակարգեին գործողությունները լատինական մյուս պետությունների հետ, քանի որ 1263 թ. Անտիոքը հարձակման էր ենթարկվել արդեն Ակրայի շրջանից<sup>629</sup>: Հավանաբար սրան էր ուղղված նույն թվականին Հեթումի և Անարզաբայի արքեպիսկոպոս Տեր-Հակոբի գլխավորած հոգևորականների ժամանումը Անտիոք<sup>630</sup>: Քաղաքում գտնվելու ընթացքում Հեթումն օգնում է Բոհեմունդին ազտվելու հույն պատրիարք Եվթիմիդոսից, որի առթիվ Հռոմի պապ Ուրբանոս IV-ը (1261-1264 թթ.) 1263 թ. մայիսի 26-ին չեղյալ է հայտարարում նրա վրա դրված բանադրանքը<sup>631</sup>: Այս

<sup>628</sup> Հեթում պատմիչի ժամանակագրությունը, ՄԺ, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 71, *Les Gestes des Chiprois*, op. cit., p. 755, Bernard le Trésorier, op. cit., p. 562, Grousset R., *Histoire des croisades et du royaume franc de Jérusalem*, t. 3, p. 611.

<sup>629</sup> Հեթում պատմիչի ժամանակագրությունը, ՄԺ, XIII-XVIII դդ., հ. 2, էջ 71:

<sup>630</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 241:

<sup>631</sup> Ринар Ж., указ. соч., с. 350-351, Runciman S., *A history of the Crusades*, t. 3, p. 319.

քայլը պետք է ունենար նաև Լատին հոգևորականության բայրացկամ վերաբերմունքն ապահովելու միտում: Վերջինս այդ ժամանակ նոր թափով էր սկսել Կաթոլիկ եկեղեցու գերակայության միջոցով մամլուքների դեմ քրիստոնեական ճակատ կազմելու գործընթացը: 1263 թ. Ուրբանոս IV-ի նվիրակ Տյուրոսի արքեպիսկոպոս Գուլիելմոս II-ի նախաձեռնությամբ Ակրայում կազմակերպվում է եկեղեցաժողով, որին մասնակցում էին Ակրայի քաղաքագլուխը, Տաճարականների ու Հիվանդախնամների մագիստրոսները, խաչակրաց իշխանների հիմնական մասը, բարձրաստիճան պատվիրակներ Կիպրոսից, Կիլիկիայից և Անտիոքից: Բայց դավանաբանական հարցերում հայ եկեղեցու անզիջում դիրքավորումը ցանկալի արդյունքի չհանգեցրեց<sup>632</sup>: Զարգացումները գնալով պարզ էին դարձնում համաքրիստոնեական միություն կազմելու անհնարինությունը և Կիլիկիան ու Անտիոքը կրկին դատապարտում մոնղոլական կողմնորոշման:

Հուլավուի հետ համատեղ արշավանք մշակելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 1263 թ. հուլիսին Հեթումը մեկնում է մոնղոլական ճամբար և խանի խորհրդով համաձայնության գալիս Իկոնիայի սուլթանության հետ<sup>633</sup>, որն ապահովվում էր Հայոց թագավորության թիկունքն ու Ասորիքում մամլուքների դեմ հարձակումներ սկսելու բարենպաստ պայմաններ ստեղծում:

Բեյբարսի հետ դիմակայությունում կարևոր էր դառնում նրան ստրատեգիական նախաձեռնությունից զրկելը, ուստի Կիլիկիա վերադառնալով՝ Հեթումն արշավանք է կազմակերպում Հալեպի շրջակայք: Սկզբնական որոշ հաղթանակները հետո նա բախվում է մահմեդականների հեծյալ ջակատներին ու հետ քաշվում: 1264 թ. սկզբին Հեթումն, ի պատասխան Անտիոքի ու Տրիպոլիի վրա Բեյբարսի ձեռնարկած արշավանքի, փորձում է գրավել ռազմական մեծ նշանակություն ունեցող Այնթափը: Տեղեկանալով այդ մասին՝ Բեյբարսն Ասորիքի իր զորքերին հրամայում է հարձակվել հայոց բանակի վրա, որոնց Հեթումը ծանր հարվածներ է հասցնում ու ստիպում

<sup>632</sup> Հետաքրքիր է, որ Ակրայի ժողովին Հեթումն ու Բոհեմունդը անձամբ ներկա չէին, իսկ Կիլիկիայի շահերն արտահայտում էին միանգամից երկու պատվիրակություններ՝ առաքված թագավորի ու կաթողիկոսի կողմից: *Մանրամասներ տե՛ս Relation de la conference, Entre le docteur Mekhithar de Daschir, RHC, Doc. armeniens, t. 1, pp. 691-698, Հարությունյան Գ. Ս., Ակրայի 1263 թ. ժողովի հարցի շուրջ, էջ 5-22, Հարությունյան Գ. Ս., Եկեղեցական աթոռների գահերեցության խնդիրը Արքայի ժողովում (1263 թ.), էջ 252-260:*

<sup>633</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 241:

նահանջել: Հաջողությամբ սկսված արշավանքի շարունակությունը պահանջում էր դաշնակիցների արագ օգնությունը, սակայն Փոքի Ասիայի մոնղոլական զորքերը Հերոմին կարողացան տրամադրել ընդհամենը 700 զինվոր, իսկ Անտիոքից ժամանած ասպետների թիվը չէր գերազանցում 150-ը: Այնուամենայնիվ, Հերոմը որոշում է շարժվել Այնթափ ու ամրանալ այնտեղ: Անբավարար նախապատրաստությունները զգալ տվեցին արդեն Հարիմի դաշտում. մեծ կորուստներ կրելով ցուրտ եղանակային պայմաններից, չունենալով մամլուքներին հետ շարտելու, հետապնդելու միջոցներ՝ Հայոց արքայի հրամանատարությամբ գործող ուժերը պարտության են մատնվում՝ հնարավորություն ընձեռելով հակառակորդին շարունակել առաջխաղացումը և ներխուժել Անտիոքի դքսության տարածք<sup>634</sup>:

Հերոմի այս փոքրիկ ռազմական ձեռնարկներն ունեցան որոշակի դրական արդյունք, քանի որ Բեյբարսի բանակները բաժանվելով մի քանի մասի չկարողացան գրավել Անտիոքն ու կանգնեցնել Հուլավուի զորքերի առաջխաղացումը դեպի Էլ-Պիր ամրոց: Պիրը գտնվելով Եդեսիայից մոտ 80, իսկ Հալեպից 135 կմ հեռավորության վրա՝ հանդիսանում էր հյուսիսային Ասորիքի և Կիլիկիայի սահմանագլխին եղած կարևոր հանգույցներից մեկը: 1264 թ. հուլիսին խանն այդ ամրոցի մոտ անցկացնում է իր վերջին կուրուլթայը, որին կանչված էին նաև Հերոմն ու Բոհեմունդը: Վերջիններս լուրջ քննադատության արժանացան Անտիոքի հույն պատրիարք Եվթիմիդոսի դեմ բռնություն գործածելու համար, սակայն Պիրի պաշարման նախապատրաստության կարևորությունը հարցը երկրորդ պլան մղեց: 1264 թ. վերջին Հուլավուի հրամանով ամրոցը վերցվեց օղակի մեջ<sup>635</sup>:

Հայ-անտիոքյան զորաջոկատները մինչև վերջ մասնակցեցին մոնղոլների ռազմական գործողությանը, որը խաղում էր Բեյբարսին զսպելու դեր: Պիրում մամլուքյան սուլթանի անունից կառավարում էր Ջեմալ ադ-Դին Ակուշը: Տիրող իրավիճակի կարգավորման նպատակով՝ Բեյբարսն անհապաղ 4 հազարանոց հեծելազոր ուղարկեց պաշարվածներին: Շատ չանցած դրանց հետևեց գրեթե նույն

<sup>634</sup> Ibn' Abd-al-Zahir, *Life of Baybars*, ed. and trans. S. F. Sadeque, Dacca, 1956, pp. 209-212, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 242-243 հմմտ. Микаелян Г. Г., указ. соч., с. 334, Grousset R., *Histoire des croisades et du royaume franc de Jérusalem*, t. 3, p. 634.

<sup>635</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 243-244, Վարդանայ Վարդապետ, նշվ. աշխ., էջ 157 հմմտ. Runciman S., *A history of the Crusades*, t. 3, pp. 319-320.

թվաքանակից բաղկացած նոր ուժեր: 1265 թ. հունվարի վերջին սուլթանն անձամբ էր պատրաստվում շարժվել մարտի դաշտ, բայց մամլուքյան բանակների մոտենալու լուրն արդեն ստիպել էր մոնղոլներին թողնել ամրոցի մատույցները: Հուլավուի նահանջն ապացուցեց, որ մամլուքների համար Պիրն ունի հսկայական նշանակություն: Այն ավելի ամրապնդվեց ու կարգի բերվեց՝ դառնալով Անտիոքի ու Կիլիկիայի վրա հարձակումներ ձեռնարկելու հարմար հենակետ: Մի քանի ամիս անց, սուլթանը դուրս եկավ արշավանքի: Նա իր հսկայական այրուծիի գլուխ անցած մտավ Անտիոքի տարածքներ և ճամբար խփեց դքսության հյուսիսով հոսող Սև գետի ափին: Հեթումը նրա դեմ դուրս է բերում մեծաթիվ զորք ու դիրքավորվում Անտիոքի Դռներ կոչվող վայրում: Պատրաստ չլինելով բախվել այդ ուժերի հետ՝ Բեյբարսը հրաժարվում է առճակատումից ու վերադառնում Եգիպտոս<sup>636</sup>:

Բոհեմունդն օգտվելով Բեյբարսի նահանջից՝ 1265 թ. նոյեմբերին Հիվանդախնամների ու Տաճարականների հետ հարձակում է իրականացնում Հոմսի դեմ, բայց քաղաքի կառավարիչը կանխում է նրանց: Բեյբարսը լուրջ էր վերաբերվում Հայոց թագավորի և Անտիոքի դքսի սերտ դաշնությանը<sup>637</sup>, որը վերջնականապես փլուզելու նպատակով 1266 թ. արշավում է Կիլիկիա: Եթե մինչ այդ հարևանների դաշնությունն ինչ որ չափով գոյատևում էր Հուլավուից եկող սպառնալիքի պայմաններում, ապա խանի մահը 1265 թ. և մոնղոլների թուլացումը, Բեյբարսի համար ստեղծում էր բոլոր հնարավորությունները նրանց առանձին ջարդելու համար:

1266 թ. արշավանքը Բեյբարսը սկսում է Դամասկոսի և Հալեպի ճանապարհով: Սկզբում նա գրավում է ասպետական միաբաններին պատկանող Արսուֆ, Սաֆեդ և ուրիշ այլ բերդեր, ապա մտնում Դամասկոս: Այնտեղից նա պատվիրակություն է հղում Կիլիկիա և Հեթումին առաջարկում իրեն հանձնել սահմանային մի քանի ամրոցներ: Անկասկած այստեղ խոսքն Ամանոսի ու Անտիտավրոսի արևելյան մուտքերը հսկող վայրերի մասին է, որոնց մեջ պետք է հասկանալ նաև Տաճարականներին պատկանող բերդերը: Բացի դրանցից, մամլուքները պահանջում էին հանձնել առևտրական կարևոր հանգույց հանդիսացող ավերված Շեխ կոչվող վայրը: Հեթումը մերժում է այդ առաջարկները, և բանակը թողնելով Մադի դաշտում, ինքը շտապում է օգնություն

<sup>636</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 244-245, Микаелян Г. Г., указ. соч., с. 335.

<sup>637</sup> Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 3, p. 634.

խնդրել մոնղոլներից: Բեյբարսը դեմ դիմաց կանգնելով մասնատված հայկական բանակի առաջ՝ օգոստոսի 23-ին ջախջախիչ պարտության է մատնում նրան: Հեթումի որդիներից Թորոսը սպանվում է, իսկ Լևոնը գերվում: Այնուհետև մամլուքները հարձակվում են Սսի վրա, թալանում քաղաքը, հասնում մինչև Ադանա<sup>638</sup>:

Այս նվաճումները լուրջ հետևանքներ ունեցան նաև Անտիոքի դքսության համար, քանի որ մամլուքյան զորքն ավարով ու գերիներով հետ է դառնում Անտիոքի տարածքով<sup>639</sup>: Մառի աղետի պատճառներից մեկը կարելի է համարել ֆրանկների հետ դաշինքի բացակայությունը<sup>640</sup>: Անտիոքի դքսի պասիվությունը, միգուցե, պայմանավորել էր 1265 թ. անհաջող արշավանքը և դրդել նրան ավելի մեծ ուշադրություն դարձնել Տրիպոլիի կոմսության պաշտպանությանը:

Իրադարձությունների նման զարգացումը կարծես որոշում է Անտիոքի հետագա ճակատագիրը՝ հայ-անտիոքյան հետագա համագործակցությունը դնելով կասկածի տակ: Հեթումը որդուն ազատելու դիմաց բանակցությունների մեջ է մտնում Բեյբարսի հետ և պատրաստակամություն հայտնում բավարարելու սուլթանի կողմից նախկինում դրված պահանջները<sup>641</sup>: Արդյուքում, առավել շատ տուժում էին Կիլիկիայի ու Անտիոքի սահմանային գոտում գտնվող ռազմավարական նշանակության ամրոցներում փակված ասպետական միաբանությունները, որոնք հայտնվում են անօգնական վիճակում. դրանք ինքնակամ մամլուքներին հանձնել նրանք պատրաստ չէին, իսկ Կիլիկիայից ակնկալվող օժանդակությունը դառնում էր գրեթե անհնար:

Հարավային ուղղությամբ Անտիոքի դքսության վիճակն էլ ավելի բարդ էր: Բեյբարսը 1267 թ. մայիսից մինչև 1268 թ. ապրիլը գրավեց Յաֆֆան, Տորոնը, Շատոնեֆը, Բոֆորը և այլ փոքր իշխանություններ, որոնք ինչ որ կերպ պատնեշում էին մամլուքների ճանապարհը: Հասնելով Անտիոքի լիակատար մեկուսացմանը՝ Բեյբարսը սրընթաց արշավով մտնում է հյուսիսային Ասորիք և 1268 թ. մայիսի սկզբներին կանգնում Անտիոքի մատույցների տակ: Չորս օր տևած գրոհն ավարտվում է մայիսի 6-

<sup>638</sup> Ստեփաննոս Եպիսկոպոսի տարեգրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 1, էջ 43, Աստվածաշունչ, ՀՁՀ, ԺԳ դ., էջ 342-343, Վարդանայ Վարդապետ, նշվ. աշխ., էջ 162-163, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 246-247, Vahram D'Edesse, op. cit., pp. 522-523, Bar Hebraeus, op. cit., pp. 445-446.

<sup>639</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 247:

<sup>640</sup> Մութաֆյան Կ. Զ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 435:

<sup>641</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 248:

ին՝ քաղաքի առումով<sup>642</sup>: Այսօր ավելի հաճախ Անտիոքի անկումը թվագրվում է մայիսի 19-ին կամ 20-ին<sup>643</sup>:

Բռնեմունդը, հավանաբար, կանխազգալով Անտիոքի անխուսափելի անկումը՝ քաղաքում թողել էր շատ սահմանափակ թվով մի կայազոր, իսկ ինքը հաստատվել Տրիպոլիում, որտեղ էլ ստացավ դքսության մայրաքաղաքի գրավման լուրը: Հայկական աղբյուրներում Անտիոքի գունդստաբլ Սիմոն դե Բոյլունի պահվածքը գնահատվում է որպես թողտվություն, անգամ դավաճանություն, քանի որ Բեյբարսը նրան իր ընտանիքի հետ թույլատրեց հեռանալ Կիլիկիա, այն դեպքում, երբ սրի քաշվեցին ու Եգիպտոս տեղահանվեցին քաղաքում բանակվող ֆրանկների գրակշիռ մասը<sup>644</sup>: Այս պայմաններում Հեթում I-ը ստիպված էր մամլուքների հետ նախատեսված պայմանագիրը կնքել հենց նոր գրավված Անտիոքում: Նա մամլուքներին զիջեց Պեհեսին, Դարպասակը, Մարգբանը, Ռապանն ու մի շարք այլ ամրոցներ, կատարեց սուլթանի բոլոր պահանջները, որի դիմաց նա ազատեց թագաժառանգ Լևոնին, թույլ տվեց Կիլիկիա տեղափոխվել Անտիոքի Գունդստաբլին, քաղաքի հայերին և եվրոպական վաճառական բնակչության մի հատվածին<sup>645</sup>:

Անտիոքի նախկին դքսությունից ֆրանկներին մնացին միայն Լաոդիկեա նավահանգիստը և Տաճարականներին պատկանող Բաղրաս ու Լա Ռոշ Գիյոմ բերդամրոցները: Բաղրասը հայտնվում է անելանելի դրության մեջ: Չունենալով ամենափոքրիկ հույսն անգամ՝ Տաճարականների մի մասը հեռանում է բերդից, իսկ ասպետներից մեկն ամրոցի բանալիները հանձնում է Բեյբարսին՝ հուսալով սուլթանի մեծահոգությանը: Նման պայմաններում ասպետների շարքերում տարակարծություն է սկսվում հետագա դիմադրության նպատակահարմարության վերաբերյալ: Ի վերջո,

<sup>642</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 250, Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 74, Ավետարան Հեթում Արքայորդու, ՀԶՀ, ԺԳ դ., էջ 359-360, Bar Hebraeus, op. cit., p. 448, L'estoire de Eracles empereur, op. cit., pp. 725-726, Bernard le Trésorier, op. cit., pp. 581-582, Ринар Ж., указ. соч., с. 359-360, Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, pp. 713-718.

<sup>643</sup> Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, ծանոթություններ, էջ 90, Kenneth M. Setton, op. cit., pp. 577-578.

<sup>644</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 250 հմմտ. Հեթում պատմիչի Ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 74:

<sup>645</sup> Աբու-Լ-Ֆիդա, նշվ. աշխ., էջ 237 հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 250-251, Mutaftian Cloude, L'Arménie du Levant (XIe – XIVe siècle), 1 vol., p. 158, Микаелян Г. Г., указ. соч., с. 344, Գևորգյան Զ. Հ., նշվ. աշխ., էջ 135:

հաղթահարելով մինչև վերջ մամլուքների դեմ պայքարելու պատրաստ մի խումբ միաբանների համառությունը, Բաղրասի Տաճարականները որոշում են անցնել մոտակա մյուս ամրոց՝ Լա Ռոշ Գիյոմ<sup>646</sup>, որը դարձավ մինչև 1299 թ. Կիլիկիայի ու Անտիոքի շրջանում պահպանված միակ Տաճարական ամրոցը<sup>647</sup>:

Մամելյուքները հատուկ դաժանությամբ Անտիոքը վերածում են ավերակի, կոտորվեցին ու գերվեցին տեղի քրիստոնյաների մեծ մասը (Հեթում պատմիչի ժամանակագրությունում նրանց թիվը հասցվում է մինչև 100 հազարի<sup>648</sup>), իսկ Ասորիքի մայրաքաղաքի տիտղոսն անցավ մահմեդական Հալեպին: Բեյբարսի հաղթանակները կարելի է բացատրել նրանով, որ սուլթանը ոչ մի անգամ իր դիմաց չունեցավ քրիստոնյաների միասնական բանակ: Դժվար է գտնել Արևելքի քրիստոնյաների բարոյական ու քաղաքական վիճակն ավելի ցայտուն արտահայտող բնութագիր, քան Բեյբարսի պատասխանն է Կառլ Անժուացու բարեխոսությանը. «Ինձանից կախված չէ ֆրանկների վախճանը, նրանք իրենք են իրենց նախապատրաստում մահվան, նրանցից ամենավերջինները քանդում են այն, ինչը ստեղծել են ամենամեծերը»<sup>649</sup>:

Անտիոքի գրավումով թեև դադարում է դքսության հետ 170 տարի տևած ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, բայց Բոհեմունդ VI-ի հետ հաստատված դինաստիական կապերը հնարավորություն տվեցին շարունակելու առնչությունները:

1275 թ. մարտի 11-ին Տրիպոլիում մահացավ Բոհեմունդ VI-ը և կոմսության գահը Անտիոքի դքսի անվանական տիտղոսի հետ միասին ժառանգեց նրա անչափահաս որդի Բոհեմունդ VII-ը (1275-1287 թթ.): Մանկահասակության ընթացքում կոմսության խնամակալությունը հանձնվեց նրա մորը՝ Հեթում I-ի դուստր Սիբիլլային: Տրիպոլիում այդ ժամանակ դրությունը բավական անկայուն էր, քաղաքը բաժանված էր իրար դեմ պայքարող մի քանի կուսակցությունների: Ստեղծված իրավիճակում՝ Սիբիլլան իրականացրեց քաղաքական տեսանկյունից հաշվենկատ մի ծրագիր, որն ամրապնդում էր որդու դիրքերն ու ընդգծում նրա՝ Բոհեմունդ VI-ի նախընտրած ուղին

<sup>646</sup> Հեթում պատմիչի ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 74, Աբու-Լ-Ֆիդա, նշվ. աշխ., էջ 237, Мелвиль М., указ. соч., с. 260-261.

<sup>647</sup> Ամրոցի մասին տե՛ս Շեվալիե Մարի-Աննա, նշվ. աշխ., էջ 9, 12, 89:

<sup>648</sup> Հեթում պատմիչի ժամանակագրությունը, ՄԺ XIII-XVIII դդ., հ. 2, էջ 74:

<sup>649</sup> Успенский Ф. И., История крестовых походов, с. 434.

շարունակելու կամքը: Սիբիլյան եպիսկոպոս Բարդուղեմիոսի ուղեկցությամբ անցնում է Կիլիկիա, որտեղ նրա եղբայրը՝ Հայոց թագավոր Լևոն II-ը (1269-1289 թթ.) Բոհեմունդ VII-ին կարգում է ասպետ: Սա հայ-անտիոքյան նախկին կապերը պահպանելու, Կիլիկիայի օգնությունն անհրաժեշտության պահին ստանալու փորձ էր, սակայն Բոհեմունդ VII-ի կառավարումն առավելապես աչքի ընկավ ներքին խռովություններով ու պատերազմներով: Մինչ նա ստիպված էր Տաճարականների, ջենովացիների, պիզացիների, Ջիբելի ապստամբ իշխանների հանդարտեցման համար Տրիպոլիում կենտրոնացնել ուժերի մեծ մասը՝ մամլուքները քայլ առ քայլ սեղմեցին օղակը, 1285 թ. գրավեցին հյուսիսային ծովափի պաշտպանական գծի առանցքը հանդիսացող Մարգատ և Մարակլեա ամրոցները, ապա 1287 թ. տիրացան Անտիոքի դքսության վերջին մնացորդին՝ Լաոդիկեա նավահանգստին<sup>650</sup>:

Անժառանգ մահացած Բոհեմունդ VII-ից հետո Տրիպոլիում սրվեց նաև գահակալական պայքարը: Այս անառողջ մթնոլորտը թույլ չտվեց պատշաճ մակարդակով կազմակերպել քաղաքի պաշտպանությունը և այն 1289 թ. ապրիլի 26-ին ընկավ<sup>651</sup>՝ վերջ դնելով Անտիոքի դքսության հետ ուղղակիորեն կապված կամ նրա մաս կազմած որևէ տարածքի գոյությանը:

Ի մի բերելով XIII դ-ի 50-60-ական թթ. Անտիոքի դքսության և Կիլիկյան թագավորության փոխհարաբերությունների բնույթը՝ կարելի է հանգել նրան, որ.

ա. Անտիոքի ու Կիլիկիայի միջև ձևավորվել է սերտ դաշինք, որն ամրապնդվել է ամուսնական կապերով:

բ. Դեպի մոնղոլներ երկու երկրների արտաքին կողմնորոշումը թելադրված էր աշխարհաքաղաքական նոր համակարգում գոյատևելու անհրաժեշտությամբ ու թեև Հայոց պետականությունն այդ ժամանակ առավելություն ուներ Անտիոքի նկատմամբ, սակայն Հեթումից Բոհեմունդի փաստացի կախումն ապացուցող լուրջ հիմքեր չկան:

գ. Միասնական ճակատ ստեղծելու համատեքստում կարելի է խոսել նույնիսկ պետաիրավական դաշտում ընդհանուր համակարգի վերաճող փոխհարաբերությունների մասին:

<sup>650</sup> L'estoire de Eracles empereur, op. cit., p. 466 հմմտ. Les Gestes des Chiprois, op. cit., pp. 780, 791-792, Ринар Ж., указ. соч., с. 385, Kenneth M. Setton, op. cit., pp. 586-587, 590-593.

<sup>651</sup> Les Gestes des Chiprois, op. cit., pp. 800-805, Ринар Ж., указ. соч., с. 385.



Վերջին ձգտումը նկատելի է Սմբատ Սպարապետի կողմից «Անտիոքի Ասիզների» հայերեն թարգմանության և Կիլիկիայում գործածության մեջ դնելու ցանկության մեջ: Ըստ Գ. Միքայելյանի նա թարգմանությունը սկսել է Մառի ճակատամարտից հետո, որը կարող է կապված լինել ֆեոդալների զինվորական պարտավորությունները խստացնելու հետ<sup>652</sup>: Սակայն, եթե դա պետք է ծառայեր զուտ Կիլիկիայի ներքին խնդիրներին, ապա ինչու՞ էր Սմբատը թարգմանությունից հետո Ասիզների բնագիրը և հայերեն տարբերակը մեծ ջանքերի գնով ուղարկում Անտիոքի “դատարան”, որպեսզի այնտեղ համեմատեն ու ստորագրություններով հաստատեն դրանց բառ առ բառ համընկնելու փաստը, ինչպես նշում է ինքը՝ Սմբատ Սպարապետը<sup>653</sup>: Ավելի հավանական պետք է համարել այն տեսակետը, որ Ասիզների թարգմանությունը Սմբատ Սպարապետը կատարել է մինչև Մառի ճակատամարտը և իր «Դատաստանագրքի» կազմումը 1265 թ.’ նպատակ հետապնդելով կարգավորել երկու երկրների միջև առկա իրավական նորմերը. Կիլիկիայի և Անտիոքի միջև ձևավորվել էին աշխույժ առևտրական կապեր, որն իր հերթին կազմում էր միջերկրածովյան մեծ առևտրի մի մասը<sup>654</sup>:

Այս հանգամանքները ստիպում են կարծել, որ և՛ կիլիկյան, և՛ անտիոքյան արքունիքներում հասունացել էր փոխօգնության ու դատաիրավական միևնույն սկզբունքներով կարգավորվող դաշինք կազմելու ձգտումը: Դրան մասնավորապես նպաստեցին Լյուդովիկոս IX-ի գործունեությունն ու նրա անհաջող խաչակրաց արշավանքը, լատին պետությունների ճակատագրի նկատմամբ Արևմուտքում աճող անտարբերությունը և հատկապես հարևան մահմեդականների հաղթանակները: Այնպիսի քաղաքական գործիչների համար, ինչպիսիք էին Հեթումն ու Բոհենունդը, դժվար չէր կռահել, որ ստեղծված իրավիճակում քրիստոնեական տարրը տարածաշրջանում միասնաբար կարելի է փրկել, սակայն այդ վերջին ճիգերն արդեն անգոր էին դա անելու:

<sup>652</sup> Микаелян Г. Г., указ. соч., с. 284.

<sup>653</sup> Assises d'Antioche, Reproduites en français et par la société Mekhithariste de Saint-Lazare (Alishan G.), Venise, 1876, p. 2, Ассизы Антиохийские, с. 334:

<sup>654</sup> Assises d'Antioche, p. XIX-XX, Cahen C., La Syrie du Nord à l'Epoque des Croisades et la Principauté Franque d'Antioche, pp. 29-30, Сукиасян А. Г., указ. соч., с. 172-173, Дмитриев Г. А., Некоторые вопросы поземельных отношений и положения крестьян в Киликийском Армении XII-XIII вв., ՊԲՀ, 1970, № 2, էջ 108, Գևորգյան Զ. Հ., նշվ. աշխ., էջ 109, 203:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Անտիոքի դքսության և Կիլիկյան Հայաստանի կազմավորմանը նախորդեցին որոշակի գործընթացներ, որոնք փոխակերպման ենթարկեցին Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական դրությունը՝ հող նախապատրաստելով նոր քրիստոնեական պետությունների առաջացման համար: Վերջիններս ձևավորվեցին էթնիկական, քաղաքական, կրոնական ու տնտեսական այնպիսի տեղաշարժերի արդյունքում, ինչպիսիք են՝ թյուրքական նվաճումները և խաչակրաց արշավանքները:

Կիլիկիայում հայկական ազգաբնակչության համախմբման և Անտիոքում առանձին խաչակրաց իշխանության ի հայտ գալու կարևոր նախադրյալ հանդիսացավ բյուզանդական վարչական կառույցի փլուզումը կայսրության արևելյան նահանգներում: Թյուրքական նվաճումների հետևանքով Կոստանդնուպոլիսը կորցրեց Անտիոքն ու Կիլիկիայի խոշոր քաղաքները: Երկրորդ կարևոր նախադրյալն առաջին խաչակրաց արշավանքի հաջողությունն էր, որի արդյունքում հնարավոր եղավ առժամանակ պահպանել ազատագրված հողերի քրիստոնեական դեմքը: Դրված խնդրի լուծման միակ միջոցը դարձավ սեփական պետական միավորների շուրջ ինքնակազմակերպումը:

Ժամանակային առումով Անտիոքի դքսության կազմավորումը (1098 թ.) գրեթե համընկավ Կիլիկիայում հայկական պետության ձևավորման շրջանին: Լատինական թագավորության մաս հանդիսացող այս պետությունը ստեղծվեց առաջին խաչակրաց արշավանքի ընթացքում, գոյատևեց մոտ 170 տարի և վերջնական անկում ապրեց մամլուքների հասցրած ծանր հարվածներից հետո:

Հարկ է նշել, որ Ե՛վ Անտիոքի դքսությունը, և՛ Կիլիկյան Հայաստանը զբաղեցնում էին նախկին բյուզանդական տարածքներ, ուստի իրենց գոյության սկզբնական փուլում մշտական հակասությունների մեջ էին կայսրության հետ: Բյուզանդական վերանվաճմանը դիմակայելու գործում Անտիոքը հաճախ ստանում էր Կիլիկիայում հաստատված հայկական որոշ իշխանական տների օգնությունը, որոնք XI դ. վերջին ցուցաբերում էին ինքնիշխանության հասնելու ձգտում:

Վերջիններս ձևականորեն ընդունելով հանդերձ Կոստանդնուպոլսի գերակայությունը, չէին խորշում կապերի մեջ մտնել ընդգծված հակաբյուզանդական քաղաքականություն վարող խաչակրաց պետությունների հետ: Իրավիճակի վրա սկզբունքային ազդեցություն ունեին այն հանգամանքները, որ հայ ավատների շարքում մեծ թիվ էին կազմում Բյուզանդիային հավատարմորեն ծառայող բազմաթիվ իշխանական տներ (Հեթումյաններ, Օշինյաններ, Նաթանայեյաններ և այլն), ինչպես նաև Անտիոքի դքսության նկատմամբ հայերի շրջանում առկա հակասական դիրքորոշումը: Այս առումով կարելի է նշել, որ Լևոն Ռուբինյանը ռազմավարական հարաբերություններ էր հաստատել Ռոմեր Անտիոքացու, իսկ նրա եղբայր Թորոս I-ը դաշնակցում էր տարածաշրջանում հավակնություններ ցուցաբերող մեկ այլ ուժի՝ Եդեսիայի կոմս Բալդուին II դե Բուրգի հետ: Նշված ժամանակաշրջանում Անտիոքում ու Կիլիկիայում հաստատված պետությունները լուծեցին տարածաշրջանում քրիստոնեության պահպանության տեսանկյունից մեծ կարևորություն ներկայացնող խնդիրներ: Նախ, նրանց հաջողվեց թյուրքական ոչնչացումից առժամանակ փրկել Արևելյան Միջերկրածովի տեղաբնիկ ժողովուրդներին, ապա ֆրանկ տարրի օգնությամբ ամրապնդվեցին երկրամասում՝ իրենց հատուկ տեղը գրավելով Մերձավոր Արևելքի երկրների շարքում:

Կիլիկիա-անտիոքյան փոխհարաբերությունների պատմությունը շարադրելու համար անհրաժեշտաբար կանգ ենք առել արմատական նշանակություն ունեցող իրադարձությունների ու հանգամանքների վրա: Ատենախոսության հիմնական բովանդակությունից կարելի է եզրակացնել.

. Նորաստեղծ Անտիոքի դքսությունը և Կիլիկյան Հայաստանը կարողացան կազմակերպել ուրույն պետաիրավական, ռազմաքաղաքական համակարգեր: Ընդ որում, եթե Անտիոքում սկզբից ևեթ հաստատվեց հստակ կենտրոնաձիգ կառավարման համակարգ, ապա Կիլիկիայում դրա համար երկար ժամանակ պահանջվեց: Անտիոքի դքսերը մինչև XII դ. 70-ական թթ. Կիլիկիայի հետ փոխհարաբերությունների կարգավորման խնդրում հիմնականում գործ ունեին մի քանի հայ իշխանական տների հետ:

